

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԺԻՇԿ ԳՐԻԳՈՐ ԴԱԲԻԹԵԱՆԷՆ

ԹՈՒՐԹԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱՅՈՒԹԵԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԱԿԱՆՆԵՐՈՒ
ԵՒ ԹՈՒՐԹ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ
(1919–1920)

Խմբագրեց եւ ծանոթագրեց
ԴՈԿՏ. ՎԱԶԷՆ ԴԱԶԱՐԵԱՆ

Փորթսմութ, Ռոտ Այլընտ
2024

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԺԻՇԿ ԳՐԻԳՈՐ ԴԱԲԻԹԵԱՆԷՆ
ԹՈՒՐԷԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱՑՈՒԹԵԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԱԿԱՆՆԵՐՈՒ
ԵՒ ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ (1919–1920)

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԺԻՇԿ ԳՐԻԳՈՐ ԴԱԴԻԹԵԱՆԷՆ

ԹՈՒՐԹԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱՅՈՒԹԵԱՆ,
ՀԱՄԱՁԱՅՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ
ԹՈՒՐԹ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ
(1919–1920)

Խմբագրեց եւ ծանօթագրեց
ԴՈԿՏ. ՎԱԶԷՂԱԶԱՐԵԱՆ

Փորթամուրթ, Ռոստ Այլընտ
2024

Library of Congress Control Number: 2024901391

Editor and annotator: Vatche Ghazarian, PhD

Title: *Letters from Doctor Krikor Tavitian: On the Situation of Armenians in Turkey, the Allies, and the Turkish Nationalist Movement (1919–1920)*
[*Namakner Bzhishk Grigor Dawit'eanēn : T'urk'ioy Hayots' Kats'ut'ean, Hamadzaynakanneru Ew T'urk' Azk'aynakan Sharzhman Masin (1919–1920)*]

Language: Armenian

Subjects:

Armenian Genocide
Armenian Question
Armenian Cilicia
Allies in Ottoman Turkey
Persecution of Armenians in Turkey
Kemalism
Turkish Nationalist Movement

Copyright © 2024 by Vatche Ghazarian

All Rights reserved under International and Pan-American Copyright Conventions.

Printed in the United States of America

ISBN: 978-1-931834-52-0

Mayreni Publishing, 2024

Բովանդակություն

Ներածական

7

Նամակներ

10 Մարտ 1919	33
17 Մարտ 1919	46
18 Մարտ 1919	49
28 Մարտ 1919	55
11 Ապրիլ 1919	64
18 Ապրիլ 1919	73
5 Մայիս 1919	81
11 Մայիս 1919	86
16 Յունիս 1919	89
29 Յունիս 1919	101
30 Յունիս 1919	106
5 Յուլիս 1919	108
1 Օգոստոս 1919	116
26 Օգոստոս 1919	123
7 Հոկտեմբեր 1919	131
16 Նոյեմբեր 1919	137
12 Յունվար 1920	148
11 Փետրվար 1920	155

Յառլուած

Ա. Գրիգոր Դաւիթեանի 8 Հոկտեմբեր 1919 թուակիրը Աբրահամ Տէր Յակոբեանին	165
Բ. Զաւէն Պատրիարքի 3 Դեկտեմբեր 1919 թուակիրը Գրիգոր Դաւիթեանին	167
Գ. Գաբրիէլ Նորատունկեանի 20 Նոյեմբեր 1918 թուակիրը Պատրիարքական Փոխանորդ Ճէվահիրճեանին	168
Դ. Ազգային Կեդրոնական Վարչութեան 31 Դեկտեմբեր 1918 թուակիր նամակը Պօղոս Նուպարին	169

Ե.	Գրիգոր Դաւիթեանի 13 Յուլիս 1920 թուակիր նամակ-տեղեկագիրը Չաւէն Պատրիարքին	173
Չ.	Եղիշէ Արք. Դուրեանի եւ Աբրահամ Տէր Յակոբեանի 28 Յունվար եւ 7 Փետրվար թուակիր նամակները Գրիգոր Դաւիթեանին	187
Է.	Գրիգոր Դաւիթեանի 13 Ապրիլ 1921 թուակիրը Չաւէն Պատրիարքին	191
Ը.	Հայաստանի մասին Տօքթ. Կէյթսի տեսութեան բացատրականը երկու տարբերակով	193
Թ.	Կիլիկիոյ մասին Վ. Գ. Քաջբերունիի 17 Յունիս 1919 թուակիր տեղեկագիրը Չաւէն Պատրիարքին	197
Ժ.	Հայ հոգեւոր պետերու եւ Դաւիթեանի հանդիպումը 1 Օգոստոս 1919-ին Բինկի եւ Քրէյնի գլխաւորած յանձնաժողովէն անդամներու հետ	202
ԺԱ.	Ազգապետ Փրոֆ. Չենոբ Պէզնեանի տեղեկատուութիւնը Ծովակալ Պրիսթոլի հետ հանդիպման մասին	207
ԺԲ.	Միհրան Տամատեանի 30 Յուլիս 1919 թուակիր խիստ գաղտնի նամակը Չաւէն Պատրիարքին	209
ԺԳ.	Չաւէն Պատրիարքի Նոյեմբեր 1919 թուակիրը Հայկական Անկախութեան Ամերիկեան Քոմիթէի նախագահ Ճէրարտին	220
ԺԴ.	Վեր. Յովհաննէս Գրիգորեանի 13 Փետրուար 1920 թուակիր նամակը Չաւէն Պատրիարքին	232
	Օգտագործուած գիրքերու ցանկ	235
	Ցանկ	237

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Այստեղ ներկայացուող նամակներուն բնագրերը մաս կը կազմեն Պոլսոյ Տեղեկատու Դիւանին (ՊՏԴ) կողմէ հաւաքուած եւ հետագային Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան գուրգուրանքին յանձնուած վաւերագրերու¹: Անոնք կը պատկանին գրչին քիչ անգամ յիշուող երախտաւորի մը՝ Գրիգոր Դաւիթեանի: Թէեւ ասպարէզով բժիշկ, ան եղած է հանրային գործիչի ընդոծին մղումով եւ օտար լեզուներու տիրապետումով օժտուած ազգային կարեւոր դերակատար մը յատկապէս 1914–1922 տարիներուն:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Դաւիթեան (1866, Սեբաստիա – 1924, Քլամար, Ֆրանսա), գաւակը՝ Ստեփան անուն դատական պաշտօնեայ հօր եւ Ակնայ ամիրայական Միսաքեան ընտանիքէն սերած մօր մը², իր նախնական հայեցի կրթութիւնն ստացած է ծննդավայրին մէջ: Անգլերէնին տիրապետած էր Ռոպերթ Գոլէնի աշակերտած երեք տարիներու ընթացքին՝ 1885–1888, իսկ իր ուսումնառութիւնն այնտեղ թերի ձգելով Փարիզի մէջ համալսարանական ուսման հետեւելու շրջանին՝ մինչեւ 1894, ձեռք բերած է տիրապետումը ֆրանսերէնի:

1895-ին, արդէն որպէս վկայեալ բժիշկ, Պոլիս է ան:

Վահրամ Յ. Թորգոմեան, որ այլազան բնագաւառներ շօշափող գրութիւններով աշխատակցած է հայ մամուլին, Պոլսոյ վարժարաններու առողջապահական դրութեան վերաբերող յուշագրութեան մը մէջ կը յիշատակէ անունը Դաւիթեանի իբրեւ անդամ յանձնախումբի մը, որ 1897-ին ընտրուած էր զբաղելու համար ազգային վարժարաններու առողջապահութիւնը կանոնաւորելու միջոցներով: Ըստ այդ յիշատակութեան,

¹ ՊՏԴ, տրցակ 2, թղթապանակ MD11-Դ, Դ771–Դ1000:

² Այս տուեալները, ինչպէս նաեւ կարգ մը այլ կենսագրական տեղեկութիւններ քաղուած են հետեւեալ աղբիւրէն՝ Հայ Հանրագիտակ, Գիրք Դ., խմբագրեց Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեան Պարտիզակցի, տպ. Պուքրէշ, 1939, էջ 607–609): Պոտուրեան իր տեղեկութիւնները հաւաքելու համար օգտուած է ժամանակակից մամուլէն:

հարցը հետևեալն էր. «մեր վարժարաններու մէջ առողջապահական անհրաժեշտ կանոնները ճմրդի գործադրելու համար, հրահանգներ՝ գրի առնել պէտք էր, եթէ ոչ բժիշկներ կարել. Կամ թե՛ վարժարաններու մէջ առողջապահութիւնը Ուսումնական Խորհուրդին կողմանէ խմբագրուած հրահանգներով կարելի է կանոնաւորել, եթէ ոչ՝ բժշկական հսկողութեամբ»: Դաւիթեան իր տեսակետը Թորգոմեանի յայտնած է 25 Փետրուար/2 Մարտ 1897 թուակիրով մը, յայտնելով թէ ինք մանաւանդ «թաղերու անձուկ ու կղզիացեալ վիճակի մը մէջ գտնուիլը» նկատի ունենալով, կը խորհի թէ տուեալ շրջանին որպէս մասնակի լուծում վարժարանները պէտք է դնել այցելու բժիշկներու հսկողութեան ներքեւ եւ անոնց յանձնել պատշաճին տնօրինումը, ապագային ձգելով կանոններու կիրարկումը³:

1902-ին Դաւիթեան կրկին մեկնած է Փարիզ՝ հաւանաբար սննդական առողջապահութեան մարզին մէջ մասնագիտանալու նպատակով, եւ հոն հրատարակած է *Hygiène Culinaire* անուն թերթ մը⁴, երկու տարուան կեցութենէ ետք Պոլիս վերադառնալէ առաջ:

Իր մասնագիտացած մարզին մէջ ցուցաբերած հմտութեան եւ վարչական կարողութիւններուն համար Դաւիթեան 1908-ին նշանակուած է բժշկապետ Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի ներքին հիւանդութիւններու բաժնին⁵ եւ այդ պաշտօնը վարած է մինչեւ 1921⁶:

³ Թորգոմեան, Վ. Յ., «Դպրոցական Առողջապահութիւն», *Բազմալէւ, Վենետիկ*, ԿԶ. տարի թիւ 7, Յուլիս 1908, էջ 323–326:

⁴ *Ընդարձակ Տարեցոյց 1925*, նոր շրջան Ա. տարի, Սեփականութիւն Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի, տպ. Յ. Մ. Սէթեան, Կ. Պոլիս, 1925, էջ 383–384:

⁵ *Եօթնամեայ Տեղեկագիր Հոգաբարձութեան Ա. Փ. Ազգային Հիւանդանոցի Եւտի-Գուլէ 1907–1912 եւ 1913*, Տպագր. Օ. Արգումանեան, Կոստանդնուպոլիս, 1914, էջ 19: Հարկ է նշել թէ Դաւիթեան մինչ այդ կէսօրէ ետքերը հիւանդներ կ'ընդունէր Բերայի Միսք Փողոց թիւ 36-ի իր սեփական դարմանատան մէջ («Հասցէներ» բաժին, *1901 Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի*, Կոստանդնուպոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1900, չհամարակալուած էջ):

⁶ Դաւիթեան իր ազգային-քաղաքական գրադոմներուն պատճառով 1919-ի Հոկտեմբերին Արբահամ Տէր Յակոբեանի գրած նամակին մէջ նշած է. «Ես այլևս հիւանդանոց զացած չունիմ, փոխանորդ մը դրած եմ տեղս» (տես Յաւելուած Ա.): Մոռացութեան փոշին Դաւիթեանէն հեռացնելու ճիգով մը անոր յիշատակը վերաբարձած Փայլակ Սանասարի համաձայն, Դաւիթեան իր բժշկապետի պաշտօնը վարած է 1908-էն մինչեւ 1921, այդ միջոցին «ջանալով Ազգին Տունը օժտել կարելիին չափով բժշկական տիպար սպա-

1912-ին, բժիշկներ Հ. Պ. Մատթեոսեանի (ատենապետ) եւ Վահրամ Յ. Թորգոմեանի (դեր-ատենապետ՝ առաջին շրջանին) հետ հիմնադրած է Պոլսոյ Հայ Բժշկական Միութիւնն ու առաջին երկու տարեշրջաններուն վարած անոր դիւանին ատենադպրութիւնը (1912–1914)՝:

Եղած է նաեւ ատենադպիրը Բերայի Թաղական Խորհուրդին, որ իր մէջ կ'ընդգրկէր Ս. Երրորդութիւն, Ս. Յարութիւն եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներն ու Էսսեան, Նարեկեան, Լուսաւորչեան եւ Արշակունեան վարժարանները⁸:

Հայ պատանիներու առողջ կազմաւորումով մտահոգ եւ անոնց ազգային հիմնաւոր դաստիարակութեամբ շահագրգիռ՝ Դաւիթեան մասնակից դարձած է Ազգային Կեդրոնական Վարժարանի խնամակալութեան, վարելով անոր ատենապետութիւնը 1908–1914 տարիներուն:

Հանրային գործունէութեան տեսակէտով, իր ամենակարեւոր պաշտօններն եղած են Ազգային Սահմանադրութեամբ նախատեսուած Քաղաքական Ժողովի ատենապետութիւնը երկու յաջորդական շրջաններ՝ 1914-էն 1920⁹, Մեծն Բրիտանիոյ Պոլսոյ բարձր յանձնակատարին

սարկութեամբ» (*Կեանք եւ Արուեստ* տարեգիրք, Դ. տարի, Փարիզ, 1933, էջ 73–4): Եւ արդէն Դաւիթեան ալ իր նշեալ նամակին մէջ փոխանորդ մը դրած ըլլալու մասին արտայայտուելով, հաստատած կ'ըլլայ թէ կը շարունակէր մնալ բժշկապետի պաշտօնին մէջ:

⁷ Հայ Բժշկական Միութիւն Դ. Տեղեկագիր, պատրաստուած ատենապետ [կարդալ՝ ատենադպիր- Վ. Դ.] Տօթք. Եդ. Շահպազէ, կարդացուած Թոդ տարեշրջանի սկիզբը 4 Յունուար 1920ին, տպ. Ֆ. Ճարեան, 1920, էջ 2: Տեսորին մէջ կը յիշատակուի թէ Չաւէն Պատրիարքի յանձնարարութեամբ Միութեան դիւանը հրաւիրուած է Ամերիկեան Առաքելութեան եւ Հայաստանի վերին յանձնակատար Գնդապետ Հէսթլի կողմէ, հանդիպման հրաւիրելով նաեւ Դաւիթեանը (էջ 15):

⁸ Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի 1902, տպ. Յ. Մատթեոսեան, Կոստանդնուպոլիս, 1901, էջ 518:

⁹ Կարգ մը աղբիւրներու մէջ գտնուող անճիշտ տեղեկութիւններու պատճառով հարկ է յստակացնել թէ Դաւիթեան առաջին անգամ Քաղաքական Ժողովի ատենապետ ընտրուած էր Ազգային Երեսփոխանական Ժողովի 27 Մարտ 1914-ի նիստին եւ առաջին աշխարհամարտի ընթացքին այդ հանգամանքը պահած՝ հակառակ օսմանեան կառավարութեան կողմէ Ազգային Սահմանադրութիւնը լուծարեալ հռչակուելուն: Իր կազմին հրաժարականը ներկայացուցած էր Ազգային Երեսփոխանական Ժողովի 15 Մարտ 1919-ի նիստին, ուր պահանջի մը պատասխանելով յայտարարած էր թէ նախորդ

նախաձեռնությամբ ստեղծուած Հայեւյունական Բաժնին (Armenian-Greek Section) մէջ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան գլխաւոր ներկայացուցչի դերը՝ գործակից ունենալով առաւելաբար ինամատարական եւ որբահաւաքական աշխատանքներով զբաղող քիմիագէտ Դոկտ. Առաքել Չաքրեանը, ապա նաեւ Քաղաքական Ժողովի ատենապետութեան օրերուն Պոլսոյ Տեղեկատու Դիւանին հիմնադրումն ու ղեկավարումը¹⁰ մինչեւ հոգեւին լծուիլը Հաւուրրտ Գարակէօգեան Տան հաստատման եւ վարչական տնօրինման¹¹:

Վարչութեան համարատուութիւնը, «որ ստուար եւ կարեւոր աշխատութիւն մը պիտի ըլլայ ժամանակակից պատմութեան տեսակետով, պիտի պատրաստուի եւ ներկայացուի Ժողովին» (1914–18 տարիներուն վերաբերող այդ կարեւոր համարատուութեան չենք հանդիպած մեր պրպտումներու ընթացքին): Յետ քննարկումներու, կրկին այդ դերն իրեն վստահուած էր 4 Յուլիս 1919-ին, Չաւեն պատրիարքի կողմէ առաջադրուելով եւ Ազգային Երեսփոխանական Ժողովի 11 Յուլիս 1919-ի նիստին իր ներկայացուցած ցանկը վաւերացուելով: 1920-ի Ապրիլին հրաժարական ներկայացնելով հանդերձ, Դաւիթեանի վարչութիւնը շարունակած էր իր առօրեայ գործունէութիւնը մինչեւ յաջորդին առաջադրումը 29 Յունիս 1920-ին եւ վաւերացումը 2 Յուլիս 1920-ին (*Համահաւաք ատենագրութիւններ Թուրքիոյ հայոց ազգային երեսփոխանական Ժողովի, համագումար ազգային Ժողովի եւ համազգային խորհուրդի (1919–1922)*, խմբ. եւ ծանօթ.՝ Վաչէ Ղազարեան, Գիրք Ա., *Ատենագրութիւններ*, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 2021, էջ 6–9, 34–40, 230–240):

¹⁰ Դիւանը կազմուած էր Դաւիթեանի գլխաւորած Քաղաքական Ժողովին 17 Օգոստոս 1919-ի նիստին որոշումով (*Համահաւաք Ա.*, էջ xxi-xxxi եւ *Համահաւաք Բ.*, էջ 1388–93):

¹¹ 1918-ին Նիւ Եորքի մէջ թոքաբորբէ մահացած Հաւուրրտ Գարակէօգեանի գորգավաճառ հայրը՝ Միհրան, իր կողակցին՝ Չապէի հետ համախորհուրդ, կ'որոշէր հիմնել Հաւուրրտ Գարակէօգեան Յիշատակի Հաստատութիւնը, որուն պաշտօնական ձեւակերպութիւններն ամբողջանալէ ետք, 1921-ի Նոյեմբերին Պոլսոյ մէջ հաստատութեան տեղական մասնաճիւղի ատենապետ բժիշկ Դաւիթեանի տնօրինութեան ներքեւ որբերու առջեւ իր դուռները կը բանար Հաւուրրտ Գարակէօգեան Տունը: Տարին հազիւ բոլորած, Չմիւռնիոյ անկման եւ քեմալական ուժերու յառաջխաղացքին առջեւ Պոլսէն Համաձայնականներու հեռացման հետեւանքով, անհրաժեշտ կը նկատուի Տունը փոխադրել այլուր: Երկար փնտռութիւններէ ետք, Դաւիթեան, Գարակէօգեաններու համաձայնութեամբ, կը ձեռնարկէ Տունը Փրանսայի մէջ հաստատելու աշխատանքին եւ միայն Դաւիթեանի մահէն ետք Լա

ՀԱԿԻՐՃ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԴԱԻԹԵԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Իբրեւ Քաղաքական ժողովի ատենապետ կամ՝ այլապես՝ «վարչապետ», Դաւիթեան 1918-ի զինադադարէն ետք հսկայ աշխատանք կատարած է Թուրքիոյ մէջ վերապրող հայութեան ազգային կեանքի կազմակերպման մարզին մէջ, զբաղելով վերապրողներու տեղաւորման, որբերու եւ այրիներու հաւաքման եւ պատսպարման, Համաձայնական պետութիւններու ներկայացուցիչներուն հետ յարաբերութեան, Ազգային Խնամատարութեան գործունէութեան կարգաւորման, Հայրենիքի Տուրքի դրութեան հաստատման հարցերով: Ան նաեւ մասնակցած է հայ երեք յարանուանութիւններու հոգեւոր պետերուն գլխաւորութեամբ եւ այդ յարանուանութիւններու աշխարհիկ վերին մարմիններու ներկայացուցիչներուն մասնակցութեամբ կազմուած Համազգային Խորհուրդի նիստերուն¹²:

1919–1922 տարիներուն եղած է անդամ՝

Համազգային Խորհուրդի կողմէ ստեղծուած մասնաժողովի մը, որ պարտականութիւն ունէր Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարի հասցնելու հարկ եղած տեղեկութիւններն ու վաւերագրերը՝ պատուիրակութեան աշխատանքներուն սատարելու համար¹³.

Որբերու, այրիներու, ինչպէս նաեւ գաղթականներու հարցերով զբաղող Ազգային Խնամատարութեան վարչութեան՝ օրուան Քաղաքական ժողովին որոշումով¹⁴.

Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ առաւելագոյն քուէներով ընտրուած Յարաբերութեանց Դիւանին¹⁵, որուն պարտա-

Կոտիկէի մէջ կը վերաբացուի Տունը 1924 Հոկտեմբերին, Պոլսէն հոն փոխադրուած եօթանասունհինգ որբերով, վարչական պատասխանատուութեամբը անոր զաւկին՝ Նուպարի (*75 Years of Service, the Howard Karagheusian Commemorative Corporation, [Mayreni Publishing], New York, 1996, էջ 23–28*):

¹² Համահաւաք Ա., էջ xxxiii, 3:

¹³ Անդ, 420:

¹⁴ Անդ, 484: Անհամաձայնութիւն մը վարչութեան այլ անդամներու հետ պատճառ պիտի դառնար Դաւիթեանի եւ ատենապետ Կէօզլուպէօյիքեանի համատեղ հրաժարման Յուլիս կամ Օգոստոս 1921-ին (անդ, 577):

¹⁵ Անդ, 499:

կանութիւնն էր գրադիլ թաղական եւ գաւառական խնդիրներու եւ ատերսագրերու քննութեամբ¹⁶.

Իսլամացած հայ որբերու հաւաքման եւ խնամատարութեան լծուած Չէգոք Տան հետ կապուած խնդիրներու քննութեան համար Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ կազմուած Խորհրդարանական Յանձնաժողովին¹⁷.

Օտար քաղաքական-դիւանագիտական շրջանակներու հետ ազգային շահերու պաշտպանութեան նպատակով շփում հաստատելու կոչուած Յարաբերութեանց Խորհրդարանական Յանձնաժողովին, գործակից ունենալով Գէորգ Ծ. Վ. Ալանեանը (երբեմնի առաջնորդ Ատանայի հայոց եւ հետագային պահ մը Պատրիարքական Տեղապահ՝ Զաւէն Պատրիարքի հրաժարումէն ետք), Արամ Հալանեանը, Վահան Թէքէեանն ու Փրոֆ. Աստուածատուր Խաչատրեանը¹⁸:

Ազգային Երեսփոխանական Ժողովն իր 12 Մայիս 1922-ի նիստին Դաւիթեանն ընտրած էր դիւանի փոխ ատենապետ¹⁹:

Քաղաքական Ժողովի ատենապետութիւնը վրած եւ այնուհետեւ զանազան մարմիններու իբրեւ անդամ գործունէութեան շրջանին, Դաւիթեան ֆրանսերէնի եւ անգլերէնի տիրապետման շնորհիւ հեղինակած էր պաշտօնական տեղեկագրեր եւ յուշագրեր, որոնք նոյնութեամբ կամ բարեփոխութիւններով վաւերացուելէ ետք ներկայացուած էին օտար դիւանագիտական շրջանակներու:

Այս ծիրին մէջ, հիմք ունինք ենթադրելու թէ 17 Հոկտեմբեր 1919-ին Անատոլիոյ կացութեան կապակցութեամբ յանուն ազգին Պոլսոյ Բարձր Յանձնակատարներուն մօտ կատարուած ձեռնարկը իրագործուած էր նկատառումովը Դաւիթեանի պատրաստած նախագիծին²⁰:

Դաւիթեան պատրաստած էր սեւագրերը նաեւ երկու բողոքագրերու, որոնք ուղղուած էին ֆրանսացի Բարձր Զոմիսէրին եւ Ընդհանուր Հրամանատարին Ատանայի դէպքերուն եւ Գոնիայի կողմէրէն չեղէնը զինուելով Ատանա դրկուելու դէմ: Երեք հայ հոգեւոր պետերը ստորագրած էին

¹⁶ *Կանոնադրութիւն Ազգային Ժողովի*, Տպ. «Շանթ», Կ. Պոլիս, 1914, էջ 2:

¹⁷ *Համահաւաք Ա.*, էջ 601: Յանձնաժողովին տեղեկագրին համար տեսնել՝ *Համահաւաք Բ.*, էջ 1335–83:

¹⁸ *Համահաւաք Ա.*, էջ 633:

¹⁹ Անդ, էջ 803–4:

²⁰ Անդ, էջ 92: Տեսնել նաեւ *Համահաւաք Բ.*, էջ 926–929:

այդ բողոքագրերը²¹:

Ինք էր որ Համագգային Խորհուրդի 26 Նոյեմբեր 1919-ի նիստի ընթացքին յանձն առած էր պատրաստել թուրք պետութենէն հայոց ունեցած կարգ մը պահանջներուն ի հաշիւ Համաձայնական պետութիւններէն կանխավճար մը խնդրելու համար անհրաժեշտ տեղեկագիր մը, ուր հայ ազգային պահանջներու կարգին պիտի ցոյց տրուէր,

1. Որբերու անունով ժողովուրդէն գանձուած գումարներէն հայոց բաժինը
2. Հայ եկեղեցիներու եւ վանքերու գոյքերը, հնութիւնները, արձաթեղէն եւ ոսկեղէն առարկաները, գրչագիրները եւայլն, որոնք գրաւուած եւ ծախուած, հալեցուցուած եւայլն են:
3. Անծանօթ (կամ անհետ կորսուած) անձերու լքեալ գոյքերուն վաճառումէն առաջ եկած գումարը, որ իբր աւանդ կը մնայ գանձային նախարարութեան քով²²:

Եւ վերջապէս, ինք էր որ յաջորդ՝ 3 Դեկտեմբեր 1919-ի նիստին ներկայացուցած էր Համաձայնական պետութեանց մատուցանելի գիրը 2 միլիոն Սթերլինի փոխառութեան մը մասին եւ երեք հայ հոգեւոր պետերը զայն նպատակայարմար նկատելով՝ ստորագրած էին²³:

Նոյն թուականին, Չաւէն Պատրիարք Դաիթեանի ղեկավարութեամբ քանի մը գործակիցներու վստահած էր Renaissance թերթին²⁴ հրատարա-

²¹ Անդ, էջ 100:

²² Անդ, էջ 115:

²³ Անդ, էջ 123:

²⁴ Թէոդիկ կը տեղեկացնէ թէ 1918-ի Նոյեմբերի սկիզբը պոլսահայ ազգային «սմբած կեանք»ը նոր օրերու պահանջներուն համաձայն բոլոր տարրերու եւ հոսանքներու համերաշխութեամբը վարելու նպատակով կազմուեցաւ Հայկական «Լիկ»ը, անոր վերագրելով «Ռընէսանս» թերթին հիմնադրութիւնը Տիգրան Չայեանի խմբագրապետութեամբ («Պօլսահայ «Լիկ»ը», *Ամէնուն Տարեցոյցը*, 1916–1920, Ժ.-Ժ.Դ. Տարի, տպ. Կ. Քէշիշեան, Կ. Պօլիս, 1919, էջ 177): Այլուր կը նշէ թէ Renaissance ֆրանսերէն այգայթերթը հիմնուած է 9 Դեկտ. 1918-ին Հայկական «Լիկ»ին նախաձեռնութեամբ իբրեւ օտկան Հայ Դատի եւ թէ խմբագրապետ Չայեան «ամէն օր իր կուռ ու առաջնորդող յօդուածներն ունի անստորագիր», պատասխանատու տնօրէնն ըլլալով Տ. Յակոբեան (նոյն, էջ 275): Ֆրանսերէն մեքենագիր տեղեկագրէ մը կը պարզուի թէ 24 Ապրիլ 1920-ին դադրած այս թերթը զինադադարէն անմիջապէս ետք կեանքի կոչուած էր որպէսզի պոռթկայ ազգին ցաւը, պատմէ անհաւատալին, պահանջէ արդարութիւն եւ հանրային խղճի առջեւ մերկացնէ

կույթեան հսկողութիւնը (տես Յաւելուած Բ.):

Տեղին պիտի ըլլայ ներկայացնել, պատմութեան համար եւ որպէս նմոյշ, Ազգային Երեսփոխանական Ժողովի երկու նիստերու ընթացքին Դաւիթեանի կատարած կարգ մը հաստատումներ:

27 Փետրուար 1920-ի դռնփակ նիստ.-

Կիլիկիոյ մէջ ժամանակէ մը ի վեր անցած դարձած դէպքերու վրայ տեղեկութիւն տալէ առաջ, պէտք կը զգամ ըսելու որ վերադարձող հայերու մասին առեւանգութիւններ, թալաններ կը պատահէին արդէն: Հոկտեմբեր ամիսէն վերջն էր որ երեւոյթները փոխուած են եւ մինչեւ այն ատեն պատահածներէն տարբեր դէպքեր երեւան եկած են եւ քաղաքական բնոյթ ունեցող իրադարձութիւններու առջեւ գտնուած ենք: Ասոնք մեկնելու եւ հասկնալու համար, պէտք է գիտնանք թէ այս շարժումներուն գաղտնիքը կը գտնուի «Միլլի» կազմակերպութիւններու մէջ եւ հոն պէտք է փնտռել: Մէկ խօսքով,

զարհուրելի պատերազմի ընթացքին հայոց կրած չարչարանքը, անհրաժեշտ նկատելով դիմակագրեծումը ոճիրներու հեղինակներուն, յուսալով հայոց ազատագրումով կանխումը նման ոճիրներու վերադարձին: Նախաձեռնող յանձնախումբին մաս կազմած են Մ. Եազընեան, Կիւպենկ, Ա. Խուպեսեր, Ա. Մնտիկեան, Ա. Ասատուրեան, Թ. Սարգիսեան, Թօփալեան եղբայրներ եւ Պ. Տէյրմենճեան, որոնք հաւաքաբար տրամադրած էին 2500 թրքական ոսկի եւ հանգանակութեամբ գոյացուցած՝ 7000 թրքական ոսկի: Նախաձեռնողները ուզած են զայն անուանել *La vérité* [= Ճշմարտութիւն], բայց մետասաներորդ պահուն թերթը մկրտուած է *Renaissance* [= Վերածնունդ] անունով: Թերթին կարելոր բաժիններէն «Իրողութիւններ եւ Փաստաթուղթեր»-ու ներքեւ մանրամասն նկարագրութեամբ բացայայտուած է «տարագրութեան» պատրուակով մէկ միլիոն մարդկային արարածներու կոտորածը (ՊՏԴ, տրցակ 6, թղթապանակ MD903, Ծ752–776, ֆրանսերէն մեքենագիր): Դիտել տանք թէ կարգ մը աղբիւրներու մէջ սխալմամբ նշուած է թէ Պոլսոյ Հայ Պատրիարքութիւնը հիմնած է թերթը եւ թէ անոր վերջին համարը լոյս տեսած է 10 Փետրուար 1920-ին (տեսնել, օրինակ, Hervé Georgelin-ի *La Renaissance and the Aftermath of World War I* աշխատութիւնը հետեւեալ ժողովածոյին մէջ՝ *Armenian Constantinople*, edited by Richard G. Hovannisian and Simon Payasian, Mazda Publisher, Costa Mesa, California, 2010), էջ 401–430): Պատրիարքարանը թերթին վրայ իր հովանաւորութիւնը տարածած եւ նիւթական յատկացում կատարել սկսած էր ամիսներ ետք:

Մուսթաֆա Քեմալի²⁵ գործունեության մեջ է ատոր արմատը, որ Թուրքիոյ գրաւեալ մասերու մէջ իր կազմակերպութիւնը ընդարձակելով, ոճիրներ եւ չարիքներ կը գործէ: Հոս պիտի խօսինք մասնաւորապէս Մարաշի մասին: Անցեալ Հոկտեմբերին ընդհանրապէս Գոնիայի եւ Գարամանի կողմերէն եկող 40ի չափ հայեր սպաննուեցան: Վարչութիւնը դիմեց կտրուկ միջոցներու եւ 29 Հոկտեմբերին Վարչութիւնը *նօթ* մը տուաւ ֆրանսական իշխանութեան եւ պատասխան ստացաւ թէ նմանօրինակ դէպքեր չպիտի կրկնուին: Հակառակ այս ապահովութեան, Ատանայի ազգ. մարմինները եւ պատրիարքարանը վստահութիւն չունեցան ասոնց վրայ եւ անցուղարձէն տեղեակ պահեցինք ֆրանսական իշխանութիւնները եւ յայտնեցինք իրենց թէ մեր մատնանշած աղէտները պիտի պատահին: Պատրիարքարանի այս զեկուցման կարեւորութիւն չտրուեցաւ ու Մարաշի դէպքը եկաւ ապացուցանելու թէ պատրիարքարանի իմացածները ստուգութիւն են: Մարաշի մէջ եղածներուն բուն երեւոյթը միլի շարժման մէջ պէտք է փնտռել: Այս ծանօթութիւնը կը կրկնեմ, հասկցնելու համար որ այդ ոճիրները եւ աղէտները անձնական [բնոյթ] չեն [կրեր]²⁶:

Նոյն նիստին, աւելի ուշ, Դաւիթեան հարցումի մը պատասխանելով կը յայտարարէ.

... պիտի խօսինք վերջին շարժուման մէջ տեղի ունեցած անցքերու վրայ: Չանագան քաղաքներու մէջ յունաց վրայ ալ

²⁵ Մուսթաֆա կամ Մուստաֆա Քեմալ Աթաթիւրք (1881–1938), որ հետագային իր անուան պիտի կցեր Աթաթիւրք յորջորջումն ու 1923-ին դառնար արդի Թուրքիոյ առաջին նախագահը, 1919-ի Մայիսին Սամսոն հաստատուած էր բանակի քննիչի հանգամանքով եւ արդէն սկսած էր ցանել հունտերը ազգայնական շարժումի մը: Ան շարք մը համաժողովներով յաջողած էր իր շուրջ բոլորել Համաձայնական տերութիւններու ներկայութեան ընդդիմացող ազգայնական տարրեր, ձեւաւորել Միլի կամ Ազգայնական շարժումը եւ հռչակել Ազգային Ուխտ մը, որ չընդունելով հեղինակութիւնը Պոլիս գտնուող եւ Համաձայնականներու կողմէ ճանչցուած պաշտօնական թրքական կառավարութեան եւ բոլորքեղով թուրք ազգայնական ոգին, պիտի կազմէր հայոց համար աղիտաբեր հետեւանքներ ունեցող զուգահեռ կառավարութիւն մը:

²⁶ Համահաւաք Ա., էջ 130–131:

յարձակում գործուած ըլլալով, անոնց կողմէ յունաց պատրիարքարանն ալ դիմում եղած էր ու փափաք յայտնած էին իրենք որ միասին դիմում ընենք: Փետրուար 12ին Պ. Գազանովա եւ ես *նօթ* մը տուինք 4 Բարձր Քոմիսէրներու եւ բերանացի ներկայացուցինք մեր պահանջը:

Այս անգամ խօսեցանք [ան]ապահովութեան մասին, որ գոյութիւն ունի նոյնիսկ Պոլսոյ մէջ կեդրոնէն հեռաւոր թաղերու մէջ, ուր ոստիկանութիւն եւն. չկայ եւ առաջարկեցինք որ պատրիարքարաններու իրաւունք տրուի որպէսզի կարգ մը երիտասարդներ պատրաստ[են], ի դէպ պահու պաշտպանողական դեր կատարելու համար, մինչեւ որ պաշտպանողները հասնին: Այս թաղերու կարգէն են Խապէօյ, Թորգաբու, Իսկիւտար: Բարձրագոյն Քոմիսէրներէ չորսն ալ տարակարծիք գտնուեցան մեր այս առաջարկին եւ հակառակ մեր պնդումներուն, ըսին թէ քաղաքացիները զինելու խնդիրը նոր ջարդերու պատճառ կ'ըլլայ ու աւելցուցին որ երբ ժողովուրդը զինաթափ ընելու կ'աշխատուի, կարելի չէ անոնց զենք տալ: Այս առթիւ հարցուցինք թէ դուք կը ստանձնէ՞ք ի հարկին ոեւէ պատասխանատուութիւն, իրենց պատասխանը որոշ չէր²⁷:

Այս առիթով Դաւիթեան նաեւ ժողովականներուն կը յայտնէ թէ Տեղեկատու Դիւանն իր հիմնադրութեան օրէն (19 Օգոստոս 1919) մինչեւ տուեալ պահը, այսինքն՝ շուրջ վեց ամսուան միջոցին, 350 ծանուցագիր (note) տուած է օրը օրին՝ Համաձայնական պետութիւններու ներկայացուցիչներուն տեղեկացնելու համար հայոց վիճակին վերաբերեալ ուշադրութիւն պահանջող տեղեկութիւնները:

23 Ապրիլ 1920-ի նիստի ընթացքին Դաւիթեան կը ներկայացնէ իր գլխաւորած Զաղաքական Ժողովին հրաժարականը եւ այդ առիթով կատարուած հարցումներու պատասխանելով կը տեղեկացնէ.

Երբ Սուրիայէ եւ ուրիշ տեղերէ հայերը Կիլիկիա փոխադրեցին, հաւաստեցին մեզ թէ հոն վտանգ չկայ: Հիմա այս վիճակին առջեւ հարկադրուեցանք յիշեցնել իրենց որ զինուորական պատուի վրայ տրուած խոստում մը կայ եւ կիլիկեցիներու հետ ոչ կիլիկեցիներն ալ այդ խոստման վրայ մեկնած էին անկէ» ու կը յայտնէ թէ իրողութիւնը նկատի ունենալով, հեռագիր մը դրկուած էր Սան Ռեմօ, զգացնելու համար թէ,

²⁷ Անդ, էջ 142

եթե հայերը ձգուէին իրենց գտնուած տեղերը, «աւելի ապահով կ'ըլլային»²⁸:

ԿԱՐԾԻՔՆԵՐ ԴԱԻԹԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Արտայայտուելով Դաւիթեանի մասին, Արշակ Զօպանեան կը գրէր.

Տօքթ. Դաւիթեան արեւմտեան Հայոց ամենէն ծանօթ, կարեւոր ու յարգուած հանրային գործիչներէն մին էր: Պոլսոյ ազգ. մարմիններուն եւ հաստատութեանց մէջ՝ այլ եւ այլ պաշտօններով, բայց մանաւանդ իբր քաղաքական ժողովոյ ատենապետ, ան երկար ատեն անձնուիրութեամբ ծառայած էր ազգին. դժուար ու փափուկ օրերու մէջ, ան երեւան բերած էր լրջախոհ, ծանրաբարոյ, ողջամիտ ազգասէրի խորունկ յատկութիւններ: Իր վեհոգի նկարագիրը, սիրալիր ու անկեղծ բնաւորութիւնը, իր եւրոպական ամուր ու առողջ կրթութեամբ մը ճոխացած հարազատ հայու բնագոյական տոհմիկ կենցաղագիտութիւնը՝ այնքան բնական որքան շնորհալի, միացած իր պայծառատես մտքի թանկագին բարեմասնութիւններուն, զինքը կը կացուցանէին մին այն հատընտիր մարդկային տիպարներէն որոնք ազգի մը կազմածքին մէջ բարոյական առողջութեան էական տարրը կը ներկայացնեն:

²⁸ Համահաւաք Ա., էջ 166–7: 19–26 Ապրիլ 1920-ին Սան Ռեմօ, Իտալիա, գումարուած խորհրդաժողովի ընթացքին, Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ վարչապետներն ու Ճափոնի, Յունաստանի եւ Պելճիքայի ներկայացուցիչները պիտի յանգէին որոշումներու, որոնք հիմը պիտի կազմէին նոյն տարուան Օգոստոսին կնքուած Սեւրի Դաշնագրին: Ակնարկուած հեռագիրը, 22 Ապրիլ 1920 թուակիր, կը կրէր ստորագրութիւնը հայ աւետարանական Ազգապետ Պէգնեանի, հայ կաթողիկէ Պատրիարքական Տեղապահ Սայեղեանի եւ հայ առաքելական Պատրիարքական Տեղապահ Նարոյեանի: Երեք հոգեւոր պետերը հոն կը յայտնէին. «Ամօրեայ նոր ջարդերով վերահաստատուած մեր համոգումն այն է թէ հայերը շուտով ամբողջովին պիտի բնաջնջուին Կիլիկիոյ մէջ: Հայ տարագրեալները Կիլիկիա տեղափոխուելու ընթացքին ուրախ էին իրենց կեանքերը երաշխաւորելու մասին հայրենադարձութեան հարցերու պատասխանատու Համաձայնական պաշտօնատարներու յանձնառութեամբ: Այս երաշխիքը իրողապէս պատրանք դարձած ըլլալով, Համաձայնական բարձր իշխանութիւններէն կը հայցենք երաշխաւորել հայերու վերադարձը իրենց տարագրութեան կեդրոնները կամ անոնց տեղափոխումը ուրիշ աւելի ապահով վայրեր»:

Համեստ, հակառակ այն բարձր պաշտոններուն զոր ազգը իրեն յանձնած էր, ան եղբայրական վարմունք մը ունէր ամէն անոնց հանդէպ, որ իրեն հետ գործ կ'ունենային ... ռեւէ մէկը որ իրեն հետ յարաբերութիւն ունեցած է, համախոհ կամ տարախոհ, անոր նկատմամբ անդիմադրելի յարգանքի զգացումով մը կը տոգորուէր: Յեղին հոգեկան ազնուագոյն յատկութեանց մէկ մարմնացումն է[ր ան]:

Ապա կ'աւելցնէր թէ Դաւիթեան «կ'ուզէր Ֆրանսայի մէջ շարունակել որբախնամ աշխատանքը, եւ ան՝ բացի այն կարելոր մասնակցութենէն զոր կրնար ունենալ ֆրանսահայ գաղութին մտաւորական եւ ազգային կեանքին, հայ հայրենիքին համար առողջ ոգւով դաստիարակուած քաղաքացիներ պատրաստելու նուիրական գործին մէջ դեռ երկարատեւ կարող էր բազմօգուտ դեր մը կատարել»²⁹:

Իսկ Փարիզի Հայ Բժշկական Միութեան ատենապետ բժիշկ Քօլօլեան իր դամբանական ճառին մէջ անդրադառնալով Պոլսոյ մէջ Դաւիթեանի «գիտական, ընկերային ու ազգային չափազանց գնահատելի գործունէութեան», կ'աւելցնէր.

Աշխատութիւնը քեզի համար մտքի զբօսանք մըն էր. աշխատութեան յարատեւ ու համբերատար աշխատութեան մէջ կը գտնէիր կեանքի սփոփանքը: Մեր մտահոգութեան եւ յուսահատութեան օրերուն, դուն կուտայիր մեզի անխոնջ աշխատաւորի օրինակը ու քու անուշ բառերովդ կուտայիր մեզի աշխատելու եռանդը³⁰:

²⁹ Զօպանեան, Ա., «Տեօքթօր Դաւիթեան, Լեւոն Քիւրքճեան», *Ապագայ*, 3 Մայիս 1924, թիւ 25, Ա. էջ:

³⁰ *Ապագայ* շաբաթաթերթ, Փարիզ, 10 Մայիս 1924, թիւ 26, Բ. եւ Գ. էջ եւ *Հայ Բուժակ*, բժշկական եւ առողջապահական ամսաթերթ, Պոլիս, Դ. տարի, թիւ 10, Յունիս 1924, էջ 158–159: *Ապագայ* իր կողմէ կը նշէր թէ Դաւիթեան «աւելի քան տասնեակ մը տարիներ Պոլսոյ ազգային Պատրիարքարանին մէջ առաջնակարգ դեր մը կատարած է, իբրեւ ազգ. կեդր. վարչութեան քաղք. ժողովոյ ատենապետ» եւ Փարիզի մէջ բժշկական ուսումն աւարտելէ ետք «Պոլիս վերադարձին իր առաջին ազգային պաշտօնը եղած է բժշկապետութիւնը ազգային հիւանդանոցի [ներքին հիւանդութեանց բաժնի]՝ որուն կազմակերպութեան եւ բարեկարգութեան մէջ մեծ դեր ունեցած է»: Իսկ «Հայ Բուժակ» կը տեղեկացնէր թէ Չատկի առաւօտուն մահացած եւ Փարիզի Փէր Լաշէզ գերեզմանատան մէջ թաղուած բժիշկին յուղարկւորութեան

Բժիշկին մահէն տասնամեակ մը ետք, Փայլակ Սանասար կը կատարէր հետեւեալ նշումը.

Տօքթօրը ... զինք ճանչցողներուն թողած է յիշատակը՝ ազնիւ ու անձնուէր մարդու մը, ոչ միայն ... իբրեւ կարող ու ազգօգուտ բժիշկ, այլ անոր համար մանաւանդ, որ իր անունը սերտօրէն կապուած է թրքահայ ժողովուրդին կեանքին փոթորկայոյզ մէկ շրջանին:

Ապա, յայտնելէ ետք թէ Դաւիթեանի շնորհիւ փորձարկութեան դաշտի մը վերածուած էր Ազգային Հիւանդանոցը հայ բժշկական ուսանողներու համար, զանազան պարբերութիւններու մէջ կը թուարկէ անոր բարեմասնութիւնները, որոնց ընդմէջէն այս երախտաւորը կը յայտնուի որպէս խղճամիտ, խելացի ինչպէս նաեւ ողջամիտ որքան կորովի գործունէութեան եւ անշահախնդիր ուղիղ նկարագրի տէր անձ. հազուագիւտ դէմք մը, որ կըրցած էր ըմբռնել թուրքին՝ ազգային վարչական մեքենան անմիջապէս վերակազմելու պահանջը զինադադարի վաղորդայնին. շրջահայեաց եւ փափկանկատ գործիչ մը, որ իր վարած մարմիններուն կը բերէր բարեխիղճ այլ մեթոտիկ դրական մտքի մը առաջնորդութիւնը. խոհական բայց յամառ գործիչ մը՝ միշտ պատրաստ իր բովանդակ բարի կամեցողութիւնը ի սպաս դնելու հանրային գործին, անձնական շահերը անտեսելու աստիճան իւրացնելով հանրային ծառայութիւնը:

Ու դեռ կը շարունակէր.

... իբրեւ ժամանակի հետ քալող մարդ, իր բոլոր աշխատանքներուն կը բերէր գիտական միտքի մը յատկութիւնները. մեթոտ, բժախնդրութիւն ու հետեւողականութիւն:

Առանց ծայծայեղ գաղափարներու անձնատուր լինելու, կը յարգէր կարծիքի ազատութիւնը. Հակընդդէմ հոսանքներու միջեւ կը պահէր միշտ իր հաւասարակշռութիւնը. ահա թէ ինչո՞ւ անհաշտ տարրերէ գործակիցներ ունենալով հանդերձ, յաջողած էր միշտ անոնց միջեւ փնտռելու եւ գտնելու միութեան գիծը³¹:

մասնակիցներուն մէջ գտնուած են Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ Գաբրիէլ Նորատունկեան, Հայաստանի Ա. Հանրապետութեան վարչապետներէն Այ. Խատիսեան եւ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեան:

³¹ Փայլակ Սանասար, «Տքթ. Գրիգոր Դաւիթեան (1865–1924)», *Կեանք եւ Արուեստ* տարեգիրք, Դ. տարի, 1934, տպ. Նավար, Փարիզ, 1933, էջ 73–8:

ՃԱՃԱԿ ՄԸ ԴԱԽԻԹԵԱՆԻ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԷՆ

Դաւիթեան բժշկական գրութիւններով աշխատակցած է պոլսահայ մամուլին՝ ջանալով լուսաւորել ու կրթել հանրութիւնը: Յատկանշական է, օրինակ, իր յառաջադէմ մտածողութիւնը դրսեւորող «Բնաշրջման Օրէնքը» խորագրեալ գրութիւնը, ուր նախ կը յայտարարէ.

Բնութեան մէջ ամէն բան յարատեւ փոփոխութեան մը ենթարկուած է. բայց այդ փոփոխումը ջնջում կամ անէացում մը չէ, այլ մշտնջենական ձեւափոխումը՝ բնութիւնը կազմող սկզբնական ու էական տարրերուն: ... Տիեզերք կոչուած այս մեծ աշխատանոցին մէջ, բնալուծական գործողութիւններ են ուրեմն որ կը կատարուին շարունակ ու ԿԵԱՆՔ կոչուած խորհրդաւոր «Ք»ն ուրիշ բան չէ հետեւաբար, եթէ ոչ նախնական պարզ տարրերուն, զանազան պայմաններու տակ, այլ եւ այլ ձեւերով իրարու ձուլումը կամ համախմբումը:

Ապա ընդհանրական հաստատումով մը յարատեւ կերպարանափոխութեան այդ երեւոյթը «բնութեան ամենէն վսեմ ու ամենէն սրբազան խորհուրդը» նկատելով, կը թելադրէ.

... մարդն ալ, իբր բնութեան մէկ մասը, անոր օրէնքներուն ու պայմաններուն համաձայն պարտի ապրիլ, եւ թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական կեանքի պահանջները պետք է նոյն ուղղութիւնը ստանան, որովհետեւ այդ բնական օրէնքներուն հետ համերաշխ ընթացքով մը միայն, մարդկութիւնը իր բոլոր ստորաբաժանումներովը միասին, կրնայ յաջողիլ կատարելու իր կանոնաւոր ու անդորր շրջանը³²:

Գրութեան երկրորդ մասով կը պարզուի թէ Դաւիթեանի բո՛ւն նպատակն եղած է բարեշրջութեան օրէնքի լոյսին տակ քննել հայ ցեղն իր ամբողջութեամբ՝ բարքերով, կրօնքով, վարժարաններով, արհեստներով, վաճառականութեամբ, ազատական ասպարէզներով, զգացնելով, օրինակ, թէ եկեղեցիին սրբազան սկզբունքները պահելով հանդերձ հարկ է կատարել դարու ոգիին համապատասխան ձեւափոխութիւններ, քանի որ

³² Տօքթ. Դաւիթեան, «Բնաշրջման Օրէնքը», *Մասիս* կիսամսեայ հանդէս, Պոլիս, 10 Յուլիս 1890, 48րդ տարի թիւ 13–14, էջ 398–401: Դաւիթեանի գրութիւնը կը թուի թէ շարունակած է ներշնչել ընթերցողները աւելի քան դար մը ետք, ինչպէս ի յայտ կու գայ Մաշտոց քահանայ Գալփաքեանի «Բնաշրջման Օրէնքը» խորագրով գրութենէն (*Ժամանակ* օրաթերթ, Պոլիս, 9 Նոյեմբեր 2017):

ժողովուրդը իր հոգեւորականներէն կ'ակնկալէ աղօթքէն ու պատարագէն աւելի՛ն, թե՛ հայ արհեստաւորները նորարար արտադրողներ պէտք է ըլլան՝ փոխանակ եւրոպական ապրանքներով բաւարարուելու, թե՛ հայ վարժարանները պէտք է բարեկարգուին, եւ այլն:

ՆԱՄԱԿՆԵՐՈՒՆ ԴՐՎԱԳԱՏՃԱՌԸ

Առաջին Աշխարհամարտի աւարտն աւետող զինադադարը, Փարիզ գումարուող Հաշտութեան Վեհաժողովին մօտ հայ ժողովուրդի իրաւունքներուն եւ շահերուն պաշտպանութեան անհրաժեշտութիւնն ու Հայաստանի Հանրապետութեան հռչակումը գործօններ էին, որոնք համագաղութային չափանիշով ներկայացուցչական համագումարի մը պէտքը զգալի դարձուցած էին Հայ Ազգային Պատուիրակութեան: Հետեւաբար, ինչպէս զանազան գաղութներու ներկայացուցչական մարմիններու, այնպէս ալ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան հրաւեր դրկուած էր ներկայացուցիչներ նշանակելու Հայ Ազգային [Առաջին] Համագումարին մասնակցելու նպատակով³³:

Պոլսոյ պատրիարքարան հասած նամակը կը կրէր 19 Նոյեմբեր 1918 թուականն ու Պօղոս Նուպարի ստորագրութիւնը: Հոն կ'ըսուէր.

Պատմական այս խիստ կարեւոր ու բացառիկ վայրկեանին, երբ մեր ժողովուրդի ու մեր հայրենիքի բաղդը պիտի վնճուի հիմնապէս, Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեանս վրայ ահագին պատասխանատւութիւն եւ բազմակողմանի բարդ աշխատանք կը ծանրանայ, որ եւ անհրաժեշտ կը դարձնէ աւելի բազմաթիւ պատուիրակներու խմբական աշխատակցութիւնը:

Հայ Ազգային Պատուիրակութիւնը դիմած է արդէն ամէն կողմ գտնուող մեր ազգայիններուն եւ առաջարկած է [որ] իսկոյն որոշ թուով ներկայացուցիչներ ընտրեն եւ ուղարկեն Փարիզ՝ պատուիրակութեանս գործունէութեան մասնակցելու:

³³ Նիստերուն մասնակից պատգամաւորները 8 Մարտ 1919-ի նիստի ընթացքին պաշտօնապէս պիտի որդեգրէին Հայ Ազգային Համագումար (Congrès national arménien) անուանումը, նշելով թէ ան «բաղկացած է թրքահայերու, պարսկահայոց եւ գաղութներու ներկայացուցիչներէն եւ կը գործէ Կովկասի Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան խորհրդակցական մասնակցութեամբ» (*Համահայկական Խորհրդակցություններ (1912–1920ԹԹ.)*. Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, պտսխ. Խմբ. Ամատունի Վիրաբյան, հրատ. Հայաստանի Ազգային Արխիւի, Երեւան 2004, էջ 381):

Դաշնակից պետություններու Պոլիս մուտքը հիմա հնար կու տայ մեզի ունենալու նաեւ հայաշատ մայրաքաղաքիդ ներկայացուցիչները: Կը խնդրենք ուրեմն, սրբազա՛ն հայր, որ կարելի եղածին չափ շուտ ընտրել տաք երկու պատուիրակ ու փութացնէք Փարիզ՝ Պոլսի հայութեան տրամադրութիւններն ու իրենց աշխատակցութիւնը բերելու մեզի:

Յուսալից որ շատ հեռու չէ հայութեան ամենէն արդար պահանջներուն ու ամենէն թանկ գնուած իրաւունքներուն իրականացման օրը, կը յայտնենք Ձեզի, սրբազա՛ն հայր, մեր անձնուէր զգացումներուն հաւաստիքը եւ կը խնդրենք Ձեր օրհնութիւնը մեր աշխատանքին վրայ]³⁴:

Նուպարի նամակը ներփակուած էր Պատրիարքական Տեղապահին օր մը ետք, 20 Նոյեմբերին, հասցեագրուած ծրարի մը մէջ, առաքուած՝ Գաբրիէլ Նորատունկեանի կողմէ, որ պիտի նախագահէր Ազգային Համագումարի նիստերուն:³⁵

Ի պատասխան Պօղոս Նուպարի նամակին, Պատրիարքական Փոխանորդ Ծէվահիրճեան 18 Դեկտեմբեր 1918 թուակիրով կը յայտնէր. «... Ազգ. Կեդր. Վարչութիւնն իր խորհրդակցական ժողովներուն հետ լրջօրէն նկատի առնելով իրաց փափուկ եւ անյետաձգելի հանգամանքը՝ գրեթէ միաձայն հաւանութեամբ ընտրեց իր պատուիրակութիւնը յանձին Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանի եւ Պրօֆ. Աբրահամ Տէր Յակոբեանի, տալով անոնց լիազօր իրաւունք ընտրելու նաեւ իրենց օգնականները ի հարկին»³⁶:

Ըիշդ է թէ Դուրեան եւ Տէր Յակոբեան ընտրուած էին պատուիրակ,

³⁴ ՊՏԴ, տրցակ 2, թղթապանակ M100_Ժ, Ժ496–Ժ497, հայերէն ձեռագիր:

³⁵ ՊՏԴ, տրցակ 1, թղթապանակ MD150_Ձ-L, 2705, հայերէն ձեռագիր (տես Յաւելուած Գ.):

³⁶ Անդ, Ժ501, հայերէն ձեռագիր: Ձեռագրէն դատելով, նամակը գրած է Դաւիթեանն ինք՝ նաեւ նշելով. «Մեր պատուիրակութիւնը առաջին առթիւ պիտի փութայ ճամբայ ելլել դէպի քաղաքդ, եւ քաջայոյս ենք որ Ձեր վսեմութեան ցարդ այնքան անձնուէր ոգով եւ արժանավայել հետապնդումներով կատարած ազգօգուտ ձեռնարկին պիտի կրնան ընծայել իրենց աջակցութիւնը»: Դաւիթեան կը մաղթէր որ «մեր տառապեալ ազգին անսահման ցաւերը վերջ մը գտնեն իր դարաւոր իրաւունքներուն արդար ճանաչումովը մօտաւոր ապագայի մը մէջ եւ նոր հայրենիքի մը վերածնունդն ողջունելու երջանկութիւնը ունենայ բովանդակ հայութիւնը»:

բայց անոնց կողքին ընտրուած էր նաեւ փոխ անդամ մը՝ Արմենակ Բարսեղեան, որուն Ազգային Համագումարի 24 Փետրուար 1919-ի նախապատրաստական նիստը պիտի որոշէր «ձայնի եւ քուէի հաւասար իրաւունք տալ ... այս կերպով յարգած ըլլալու համար Պոլսոյ Ազգ. Մարմիններու ընտրութիւնը, որով Ազգ. Պատուիրակութեան կողմէ որոշուած երկու պատգամաւորներու տեղ երեք հոգի դրկած էին»³⁷:

Յիշեալ պատգամաւորներն ընտրած ժողովը նաեւ բանաձեւած էր բաղձանքներ ու պայմաններ, որոնք իբրեւ ուղեցոյց պիտի ծառայէին Փարիզ ուղղուողներուն (տես Յաւելում Դ.):

Պատգամաւորութիւնը անգլիական կառավարութեան թոյլտուութեամբ գաղտնաբար կը մեկնի Պոլսէն, «որպէսզի ատիկա պատճառ մը չըլլայ թիւրքերուն համար վերստին հայոց դէմ լարուելու», եւ երբ պատուիրակները փոխադրող նաւը կը հասնի Մալթա, տեղւոյն զինուորական իշխանութիւնը կ'արժեկով թէ Խաղաղութեան Վեհաժողովին մասնակցելու համար Փարիզ կ'երթային անոնք, «իսկոյն արագընթաց գրահաւոր մը կը դնեն անոնց տրամադրութեան տակ, ու այս իմաստով կը հեռագրուի Մարսէլ, ուր ծովային, զինուորական եւ քաղաքական իշխանութիւնք պաշտօնապէս դիմաւորելու կ'երթան»: Այս շփոթանքը պատճառ կ'ըլլայ որ ֆրանսական եւ անգլիական թերթեր հաղորդեն թէ Պոլսէն հայ պատգամաւորներ հասած էին Խաղաղութեան Վեհաժողովին մասնակցելու համար»³⁸:

Համագումարը Փետրուար 24-էն մինչեւ Ապրիլ 22 կը գումարէ 38 նիստ (ընդամէնը 43 նիստ՝ Փետրուար 18-ին սկսած նախապատրաստական նիստերն ալ նկատի ունենալով): Դիւանը կը բաղկացնեն Գաբրիէլ Նորատունկեան՝ նախագահ, Փրոֆ. Ա. Տէր Յակոբեան եւ Արշակ Զօպանեան՝ դեր-նախագահներ, Վահան Թէքէեան եւ Նշան Տէր Ստեփանեան (իր հրաժարումէն ետք փոխարինուած Գառնիկ Ֆընտրգլեանով)՝ ատենադպիրներ:

Պոլսէն ուղարկուած պատուիրակներէն բնականաբար կ'ակնկալուէր պատրիարքարանը պարբերական գրութիւններով տեղեկակ պահել համագումարի աշխատանքներուն եւ որդեգրուած որոշումներուն մասին, ինչպէս նաեւ ուղղութիւն ստանալ իրենց արժարժելիք հարցերուն եւ պաշտպանելիք տեսակէտներուն վերաբերեալ: Եւ քանի որ անհրաժեշտ

³⁷ Համահայկական Ա., էջ 333:

³⁸ Երուանդ Ծիւիէրեան, «Փարիզեան Սուրիանդակ», *Կոչնակ Հայաստանի*, 22 Փետրուար 1919, ԺԹ. տարի, թիւ 8, էջ 242:

էր ըլլալ շրջահայեաց եւ խուսափիլ թրքական գրաքննութենէ, Դաւիթեան նախ Բաղաքական Ժողովի ատենապետի, ապա Տեղեկատու Դիւանի պատասխանատուի հանգամանքներով կը թղթակցէր պատուիրակներուն հետ նախընտրաբար ճամբորդներու միջոցով եւ պատուիրակներէն կը ստանար իր գործակիցներուն հետ կիսուելիք նամակներ:

31 Մարտ 1919-ին, Համագումարը կ'ընդունէր հրահանգներ, որոնք մշակուած էին Եղիշէ Արք. Դուրեանի նախագահութեամբ գործող յանձնախումբի մը կողմէ, որուն անդամներն էին Վահան Փափագեան, Մ. Համբարձումեան, Վահան Թէքէեան, Տոքթ. Նելսոն, Լեւոն Շանթ եւ Արշակ Զօպանեան (որպէս տեղեկաբեր):

Այդ հրահանգներով, ի միջի այլոց, կը նախատեսուէր որ Հայ Ազգային Պատուիրակութիւնը հետապնդէ Համագումարին անունով Խաղաղութեան Վեհաժողովին տրուած հայկական պահանջներու յիշատակագրին ամբողջական իրականացումը, նպաստէ Միացեալ Հայաստանի միակ կառավարութեան իրականացման, հետապնդէ չազատագրուած հայկական հողերու գրաւումը դաշնակից ոյժերով, Համաձայնականներէն պահանջէ թուրք իշխանութիւններու անմիջական վտարումը հայկական հողերէն, ջանայ ստուարացնել հայ զինուժի ստուարացման եւ զօրացման, հետապնդէ վնասուց հատուցյան խնդիրը եւայլն:

Նոյն հրահանգներով պիտի կանոնակարգուէր նաեւ ներքին կազմակերպութիւնը Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան, որ ըստ էութեան կը նշանակէր Հայ Ազգային Պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան համատեղ նիստերու գումարումով համագործակցութիւն՝ իւրաքանչիւրը պահելով իր իրաւական տիտղոսը մինչեւ Ամբողջական Հայաստանի կառավարութեան կազմուիլը:

Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան հրահանգներուն պատրաստութեան մասնակցած էին, ի շարս վերը նշուած անդամներուն, Գարեգին Փաստրմաճեան, Նշան Տէր Ստեփանեան, Միհրան Տամատեան եւ Աւետիս Թերզիպաշեան³⁹:

Դաւիթեանի Հիմնական Աւանդը՝ Տեղեկատու Դիւանը

Դաւիթեանի գլխաւոր աւանդը պիտի մնայ իր ղեկավարած Բաղաքական Ժողովին որոշումով 17 Օգոստոս 1919-ին կազմուած Տեղեկատու Դիւանը, որուն մասին Դաւիթեան ստորագրած էր 13 Յուլիս 1920

³⁹ Համահայկական, էջ 463–465:

թուակիր համարատուութիւն մը՝ շրջանաւարտ Քաղաքական Ժողովէն նորընտիր մարմնին փոխանցելու համար Դիւանին դերին շուրջ անհրաժեշտ տեղեկութիւնները (տես Յաւելուած Ե.):

Կարապետ Նուրեան, որմէ որպէս նոր Քաղաքական Ժողովի անդամ եւ դիւանի տնօրէն խնդրուած էր քննական տեղեկագրի մը պատրաստութիւնը, ակնարկելէ ետք Դաւիթեանի համարատուութեան, հետեւեալ գլուխներուն տակ կ'ամփոփէր դիւանին գործունէութեան համար սահմանուած դաշտը.-

Փաստագրել Թուրքիոյ ընթացքը հանդէպ հայոց՝ զինադադարէն սկսեալ:

Հրատարակելու նպատակով հաւաքել Ա. Աշխարհամարտի ընթացքին գործադրուած ջարդերու եւ տեղահանութիւններու վերաբերող տեղեկութիւնները:

Պատրաստել վիճակագրական հաւաքածոյ մը, որ ներկայացնէ պատկերը թեմերու նախապատերազմական վիճակին՝ իրենց եկեղեցիներով, վանքերով, ազգային ստացուածքներով եւ բնակչութեան թիւերով:

Հրատարակութեան համար հաւաքել Հայաստանի մասին տեղագրական, հանքային հարստութիւններու վերաբերող եւ հայոց քաղաքակրթական դերը բնութագրող տեղեկութիւններ:

Ուսումնասիրական նպատակով պահպանել Հայաստանի եւ հայոց վերաբերող հրատարակութիւններով լի մատենադարան մը եւ մէկտեղել հայոց ընկերային ու քաղաքական կեանքին վերաբերող վաւերագրեր:

Դասաւորել Պատրիարքարանին դարակուտակ «գէշ վիճակի մէջ պահուած եւ վտանգի ու կորուստի ենթակա» վաւերագրերու արխիւը⁴⁰:

⁴⁰ Համահաւաք Բ., էջ 1388–1391: Դիւանի կազմութեան նպատակին, կառուցուածքին եւ երախտաշատ աշխատանքին մասին կարդալ՝ Զաւէն Պատրիարքի յուշերը (էջ 301–305). նաեւ՝ Տէր Մաթոսեան, Պետրոս, *The Genocide Archives of the Armenian Patriarchate of Jerusalem* (Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ցեղասպանութեան Դիւանաթուղթերը), *Armenian Review* ամսագիր, 52-րդ տարի, թիւ 3–4 (աշուն-ձմեռ 2011), 17–39. Սահակեան, Լուսինէ, «Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանում Պահուող «Տեղեկատու Դիւանի»՝ Հայկական Հարցի Եւ Հայոց Ցեղասպանութեան Արխիւի Պատմութիւնը Եւ «Բովանդակութիւնը»», *Միոն* ամսագիր, Ապրիլ-

Ապա կ'ըսեր. «Իմ քննությունս ինձ պարտք կը դնէ անվերապահ յայտարարել թէ մեծ արժանեօք կիրարկած է Տօք. Դաւիթեան իր փափուկ եւ դժուար պաշտօնը» եւ կ'առաջարկէր որ Դաւիթեան շարունակէ պահել իր պաշտօնները թէ՛ Տեղեկատու Դիւանին եւ թէ՛ անգլիական դեսպանատան Հայեւոյն Բաժանմունքին մէջ: Այնուհետեւ, նոր Քաղաքական Ժողովին կողմէ իրեն վստահուած դիւանի վերահսկիչի դերը ընդունած ըլլալով հանդերձ, կ'աւելցնէր. «Դիւանին աշխատութիւնները այնքան ընդարձակուած են որ անժխտելի աշխատանքին իմ մասնակցիս Տօք. Դաւիթեանին հետ կրնայ միայն առաջ բերել լաւ արդիւնք մը» ու շեշտելով Դաւիթեանի «ապացուցեալ կարողութիւնները», կը խնդրէր որ ան պահէ «վերին տնօրէնութիւնը» դիւանին⁴¹:

Այս Դիւանին հաւաքած վաւերագրերուն շնորհիւ կարելի կը դառնայ անառարկելիօրէն հաստատել՝ Քեմալի գլխաւորած թուրք ազգայնական կամ Միլլի շարժման անքակտելի աղերսը իթթիհատականներուն հետ, այդ շարժման կողմէ շարունակումը կրճատեալ օսմանեան Թուրքիոյ մէջ հայոց բնաջնջման քաղաքականութեան, եւ, հետեւաբար, Քեմալի գլխաւորութեամբ կազմուած արդի կամ հանրապետական Թուրքիոյ հիմնուած ըլլալը ինչպէս հայոց, այնպէս ալ յոյներու եւ այլ ոչ-թուրքերու ստացուածքներուն եւ աճիւններուն վրայ:

ՅԱՐԱԿԻՑ ՆՇՈՒՄՆԵՐ

Նամակները վկայութիւնն են Դաւիթեանի սթափ, իրատես, վերլուծող միտքին: Անոնք կը պատկերեն 1918-ի զինադադարէն ետք Թուրքիոյ հայոց բաժին ինկած բազմազան մարտահրաւերներն ու անչափելի կարիքները: Անոնք նաեւ կը բացայայտեն թէ նամակագիրը գիտակից էր Քեմալական շարժման հայաջինջ դիտաւորութիւններուն եւ վերապահ՝ պատահելիք աղետները կանխելու համար մեծ պետութիւններու ազդու միջամտութեան հաւանականութեան մը նկատմամբ:

Նամակներու հասցեատէրն է Պոլսոյ ամերիկեան Ռոպերթ Գոլէճէն շրջանաւարտ, ապա Էտինպուրկի եւ Օքսֆորտի համալսարաններուն մէջ բարձրագոյն ուսումը շարունակած եւ որպէս իմաստասիրութեան դոկտոր Պոլիս վերադառնալէ ետք նոյն գոլէճին մէջ հայերէն եւ իմաստասիրութիւն

Յուլիս 2022, էջ 259–284, ինչպէս նաեւ *Հայագիտութեան Հարցեր* հանդէս, Երեւանի Պետական Համալսարան, թիւ 1(25), Երեւան, 2022, էջ 3–32). *Համահաւաք Ա.*, էջ xxi–xxiii եւ *Համահաւաք Բ.*, էջ 1388–1393:

⁴¹ Անդ, էջ 1392–1393:

դասաւանդած Փրոֆ. Աբրահամ Տէր Յակոբեան (1855–1938)՝ Թուրքիոյ հայոց ընտրեալ պատուիրակ Փարիզի Հայ Ազգային Համագումարին մօտ: Ի տարբերութիւն Թուրքիոյ հայոց միւս ընտրեալ պատուիրակին՝ Եղիշէ Արք. Դուրեանի, որ համագումարի 8 Ապրիլ 1919-ի աւարտական նիստէն վերադարձած էր Պոլիս, Տէր Յակոբեան պիտի շարունակէր շրջան մը Փարիզ մնալ զբաղեցնելով Հայ Ազգային Պատուիրակութեան փոխնախագահի դերն ու այդ հանգամանքով ալ պիտի կատարէր ամերիկեան շրջապտոյտ մը, իսկ Պոլիս վերադարձէն ետք պիտի ընտրուէր Ազգային Երեսփոխանական Ժողովի ղեկանի ատենապետ:

«Յաւելուած» բաժնով նուագագոյն ծանօթագրութիւններով ներկայացնող կամ այլապէս Դաւիթեանի ժամանակակից մամուլին կամ վաւերագրերու մէջ գտնուող տեղեկութիւններ կու գան հաստատելու այս աշխատութեան մէջ ընդգրկուած նամակներով Դաւիթեանի արտայայտած միտքերուն եւ յայտնած մանրամասնութիւններուն ճշգրտութիւնն ու ճշմարտացիութիւնը, կազմելով անառարկելի վկայութիւն մը թուրք ազգայնական շարժման մասնաւորապէս հայասպանական եւ ընդհանրապէս ցեղասպանական նկարագրին շուրջ:

Միաժամանակ, անոնք կը պարունակեն պատմական արժէք ներկայացնող տուեալներ զինադադարի վաղորդայնին Թուրքիոյ մէջ տիրած տնտեսական, կենցաղային եւ ապահովական պայմաններուն, ինչպէս նաեւ օտար ղեկանագիտական շրջանակներու կեցուածքներուն կամ գործունէութեան մասին:

Նամակներու աւարտական այն հատուածները, որոնք կը վերաբերին Տէր Յակոբեանի ընտանեկան կամ բարեկամական պարագաներուն, փոխարինած ենք բազմակէտերով: Կատարած ենք նուագագոյն լեզուական միջամտութիւն: Նոյնութեամբ պահպանած ենք յատուկ անունները իրենց տարբերակներով (ինչպէս, օրինակ, Քիւրտիստան եւ Քիւրտիսթան)՝ առանց զանոնք միօրինականացնելու ճիգի:

Ուղիղ փակագիծերու մէջ կատարած ենք կարգ մը անհրաժեշտ ուղղագրա-քերականական նշումներ եւ տուած՝ օտար բառերու հայերէն համագործնէր:

Դոկտ. Վաչէ Ղազարեան

Մեր առած վերջին տեղեկութեանց համաձայն ...
[թրքական ուժերը] Երեւան պիտի արշաւեն, հոնտեղի
հայութիւնն ալ փնացնելու ու Հայաստանի մը
կազմութիւնը անկարելի դարձնելու նպատակաւ: ... երէ
մինչեւ հիմա անցած դարձածներէն ու
Համաձայնականներու բռնած դիրքէն պիտի դատենք,
չպիտի զարմանամ որ թուրքերը այդպիսի յանդուգն
փորձ մը ընելու վարանին:
... մեր [Համաձայնական] բարեկամները, փոխանակ
սկիզբէն իսկ զսպողական ու կտրուկ միջոցներու
դիմելու, ձգեցին որ իրերը այսպէս կնճռոտին ու
վտանգաւոր հանգամանք մը ստանան, եւ մենք
ջարդուեցանք մեր թշնամիներէն, եւ այսօր ալ պիտի
ջարդուինք մեր բարեկամներու անտարբերութեան ու
ներքին մրցակցութեան շնորհիւ: ... զինուորական
գրաւում ... պէտք է որ ժամ առաջ տեղի ունենայ: Ջարդը
անխուսափելի է. այս է մեր անխախտ համոզումը որպէս
գիտակ տեղւոյն հանգամանքներուն եւ իրազեկ մեզի
հասած տեղեկագիրներուն:

Գրիգոր Դաւիթեան

5 Յուլիս 1919



Բժիշկ Գրիգոր Ղաւիթեան

ՆԱՄԱԿՆԵՐ

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 10 Մարտ 1919

Յարգելի բարեկամ,

Ձեր մաղթանքն, ինչպես նաև Բարիզեն խրկած 5 եւ 16 Փետրվար թուական նամակները ստացայ⁴²: Ձեր յիշած միւս նամակները ստացած չեմ: Իսկ ես կանոնաւոր նամակ գրած չունիմ. ճամբորդներու հետ խրկելու չհամարձակեցայ, կասկածելով թէ կրնայ խուզարկուիլ, իսկ պաշտօնական աղբիւրով խրկած նամակներս չեմ գիտեր թէ հասա՞ն թէ ոչ:

Այսօր Պր. Մանթաշօֆին⁴³ հետ Դուրեան Սրբազանին⁴⁴ նամակ մը խրկեցի որուն մէջ ներփակ կար յոյներուն հետ միասին խմբագրուած գրութիւն մը. պարունակութենէն պիտի հասկնաք եղելութիւնը: Փաշային⁴⁵

⁴² Նամակները չեն պահպանուած դիւանին մէջ: Այսուհետեւ առանձնաբար նշումներ չենք կատարեր Դաւիթեանի ստացած բայց դիւանաթուղթերուն մէջ չպահպանուած կամ չգտնուած նամակներուն համար: Տեղին կը գտնենք, սակայն, իբրեւ Յաւելուած տալ պատճենները Տէր Յակոբեանի եւ Դուրեանի համատեղ ստորագրութիւնը կրող երկու նամակներու՝ իրենց անմիջական աղերսին համար մեր նիւթին հետ (տես Յաւելուած Զ.):

⁴³ Նշեալը կը թուի թէ Լեւոն անուն որդին էր նաւթարդիւնաբերող եւ բարերար Աղեքսանդր Մանթաշեանցի (1842–1911), որ օտար շրջանակներու մէջ ծանօթ էր Մանթաշոֆ մականուամբ: Իր կենսագրին համաձայն, Աղեքսանդր ունեցած էր չորս արու գաւակ,- աւագութեան կարգով՝ Յովհաննէս, Լեւոն, Յովսէփ եւ Գէորգ,- որոնցմէ միայն մին՝ Լեւոնը, *«հետեւած է հօրը շաղին եւ լրջօրէն ու հմտութեամբ զբաղած արդիւնաբերական-առեւտրական գործերով»* (Մարութիւն Ա[ռաքել], *Աղեքսանդր Մանթաշեանց մեծ վանատականն եւ բարեգործը. յիշողութիւններ իր մահուան 20ամեակի առթիւ*, Ազգային Մատենադարան, հատոր ՃԼԱ, Միսիրեանի տպարան, Վիեննա, 1931, էջ 193, 206):

⁴⁴ Եղիշէ Արք. Դուրեան (1860–1930), նախկին Պատրիարք Թուրքիոյ Հայոց եւ հետագային Պատրիարք Հայ Երուսաղէմի: Փարիզ մեկած պահուն, Դուրեան Արք. տակաւին կը վարէր Կրօնական Ժողովին ատենապետութիւնը:

⁴⁵ Ակնարկութիւն 1912-ին Գէորգ Ե. Սուրենեանց Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ նշանակուած Պօղոս Նուպարի (1851–1930), որ պիտի շարունակէր պատուիրակութիւնը զլիաւորել մինչեւ 1921-ի Յուլիս ամիսը:

ուղղում է, եւ համաձայնած ենք որ չափտի հրապարակուի եւ պիտի գործածուի եթէ պէտք մը ներկայանայ⁴⁶: Յոյներուն հետ մեր սիրալիր յարաբերութիւնները կը շարունակուին, սգահանդէսներ, թէյասեղաններ, միասին դիմումներ զինուորագրութեան եւ այլ խնդիրներու մասին. շատ յառաջ գացած չունինք, բայց մեր յարաբերութիւնները մտերմական ըլլալու ալ ջանադիր կ'ըլլանք⁴⁷:

⁴⁶ Դիւանաթուղթերուն մէջ չենք հանդիպած յոյներու հետ պատրաստուած գրութեան մը, որ յուշէ միայն *պէտք մը ներկայանալու պարագային գործածուելու* սահմանումը ըլլալը: Կայ, սակայն, Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուելիք 24 Փետրուար 1919 թուակիր յուշագիրը: Չայն ստորագրած էին Կոստանդնուպոլսոյ Տիեզերական Պատրիարքութեան Տեղապահ Տորոթեոսն ու Չաւէն Պատրիարքը, որուն յուշերուն մէջ ընդգրկուած է հայերէն թարգմանութիւնը ֆրանսերէն բնագրին, ուր երկու կողմերը կը նշեն իրենց ճակատագրակից ըլլալը, ապա նաեւ թուրքերու վարմունքին անփոփոխ մնացած ըլլալը՝ անոնց Անատոլիա եւ Եւրոպա հաստատուելէն ի վեր: Մատնանշելէ ետք երկու ազգերու կոտորակեալ թիւին արագ աճելու ներուժը՝ թրքական լուծէն ազատագրուելու պարագային, յուշագրին հեղինակները կը պահանջեն որ չպարտաւորուին աւելի երկար ապրիլ թրքական լուծի ներքեւ, յայտարարելով թէ ինչպիսի վերահսկողութեան տակ ալ դրուի թրքական կառավարութիւն մը, իրենք երբեք պիտի չհպատակին անոր, այլ՝ պիտի ուզեն ապրիլ յունական կամ հայկական կառավարութեան մը տակ՝ պարագային համաձայն: Մանրամասնելով իրենց պահանջը, երկու հոգեւոր պետերը կը գրեն.

Մենք կը խնդրենք մեծ Հայաստան մը ունենալ եւ ազատ ու լայն ելք մը Սեւ եւ Միջերկրական ծովերու վրայ, եւ մենք յոյներս կը յայտարարենք որ երջանիկ պիտի ըլլանք եթէ տեսնենք Կիլիկիան ամբողջովին կցուած Հայաստանի վեց նահանգներուն:

Կը խնդրենք Յունաստանի վերադարձնել բոլոր այն երկիրները, որ բռնի առնուած են իրմէ եւ իրապէս իրեն կը պատկանին: Եւ մենք հայերս կը յայտարարենք որ մեր փափաքն է որ Թրակիա, Կ. Պոլիս, Այտըն եւ Պրուսա նահանգները եւ Պիդայի ու Նիկոմիդիոյ գաւառները Յունաստանի կցուին...» ([Տէր-Եղիայեան] Չաւէն Արքեպս., *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ*, հրատ.՝ Թ. 7 Մտաւորական սպասարկութեանց գրասենեակի, տպ. Նոր Աստղ, Գահիրէ, 1947, էջ 313–315): Անգլերէն բնագրին մեր թարգմանութեամբ տարբերակին համար տեսնել՝ *Հանսհաւաք*, Բ., էջ 886–888):

⁴⁷ Զինուորագրութեան խնդրով եւ այլապէս ալ յոյներու հետ յարաբերութիւններու մասին ակնարկութեան կը հանդիպինք նաեւ Դաւիթեանի 13 Ապրիլ

Ձեր մեկնելն ի վեր իրերը քիչ շատ փոփոխություն կրած են հոս:

Համաձայնականներու⁴⁸ ազդեցությունը օր քան զօր աւելնալու վրայ է. հիմա սկսան ամեն բանի միջամուխ ըլլալ: Police [= ոստիկանություն] եւ gendarmerie [= քաղաքապահ զօրք] գրեթէ ձեռք անցուցած են⁴⁹, այնպէս որ գէթ Պոլսոյ մէջ, ապահովությունը պիտի կրնայ վերահաստատուիլ բոլորովին: Ասկից ամիս մը առաջ գիշեր ատեն Բերայի մէջ փողոց ելլել անկարելի էր. ամէն գիշեր սպանություններ տեղի կ'ունենային: Միւս կողմէ սակայն սղությունը աւելնալու վրայ է: Ձեր մեկնելն ի վեր ամէն բան շատ սղած է. կեանքը շատ դժուարութեան մատնուած է եւ ասոր իբր բնական հետեւանք, հիւանդություններն ալ աւելցած են: Այս վերջերս typhus [= բժաւոր տենդ] ալ մէջտեղ ելած է: Այս պարագան պատճառ մըն է որ Համաձայնականները միջամտել ստիպուին, եւ արդարեւ պարենաւորման պաշտօնատան մէջ contrôleur [= վերահսկիչ] նշանակած են, որով կը յուսացուի ու այդ գործն ալ ի մօտոյ պիտի կանոնաւորուի: Երկաթուղիները արդէն ձեռք անցուցած են, թէ՛ Հայտար փաշայինը եւ թէ՛ միւսը. նոյնիսկ Եալօվա-Պրուսա գիծը գրաւած են:

Աստիճանաբար թափանցելու այս քաղաքականությունը կը յուսամ որ մեր գաւառներուն մէջ ալ պիտի իրագործուի, ի մեծ սփոփանք մերայիններու որ դարձեալ միշտ նոյն աննպաստ ու դժբաղդ դրութեան մէջ կը գտնուին: Մեր ստացած տեղեկությունները շատ ցաւալի են, մօտակայ գաւառի ժողովուրդը ամէն բանէ զուրկ է, մանաւանդ գիւղերը. ապահովու-

1921 թուակիր նամակին մէջ, զոր կը ներկայացնենք իբրեւ Յաւելուած Է.:

⁴⁸ Ակնարկությունը մասնաւորաբար կը վերաբերի Անգլիոյ, Փրանսայի, Իտալիոյ եւ Յունաստանի, որոնք Կոստանդնուպոլսոյ գրաւումէն ետք (1918-ի Նոյեմբերին), հոն հաստատած էին Բարձր Յանձնակատարներ: Միացեալ Նահանգները Բարձր Յանձնակատար պիտի նշանակէր 1919-ի Օգոստոսին:

⁴⁹ Պոլսոյ գրաւումէն ետք բրիտանացի, ֆրանսացի եւ իտալացի Բարձր Յանձնակատարները ի շարս այլ վերահսկիչ մարմիններու կազմած էին ոստիկանական յանձնաժողով մը: Սկզբնական շրջանին, այս Միջ-Համաձայնական Ոստիկանությունը,- որուն օտար թէ հայկական արձանագրություններու մէջ յղում կը կատարուի որպէս ինթերայի,- կը բաղկանար 30 սպաներէ եւ 351 ոստիկաններէ: Երեք երկիրներէն իւրաքանչիւրը մէկ երրորդ չափով կը մասնակցէր այդ ոստիկանական ուժին (Johnson, էջ 113–114): Յանձնաժողովը 10 Փետրուար 1919-ին համաձայնած էր ոստիկանական հարցերով Պոլիսը բաժնել երեք գօտիներու՝ հին քաղաքին պատասխանատվությունը յանձնելով ֆրանսացիներու, Բերա-Կալաթայի շրջանը՝ բրիտանացիներուն, իսկ Գատըքէօյի եւ Սկիւտարի շրջանները՝ իտալացիներուն:

թիւնը այնքան վատ է որ գիւղէ գիւղ երթալը վտանգաւոր է, իսկ կարօտութիւնը չափ ու սահման չունի: Խարբերդէն, Մալաթիայէն նամակներ ստացանք այս օրերս որ շատ ցաւալի է: Մալաթիա 500ի մօտ որբեր կառավարութիւնը հայերուն յանձնել ուզած է, մինչդէռ մենք որեւէ կազմակերպութիւն չունինք զանոնք խնամելու եւ դժբաղդ արարածները այս ձմեռ եղանակին փողոցները մնացեր են: Անմիջապէս դրամ խրկեցինք, բայց ի՞նչ օգուտ: Կարօտութիւնը ու պէտքը այնքան մեծ [են] որ մեր խրկած 1000 ոսկին կաթիլ մը ջուր է միայն: Կառավարութենէն պահանջած էինք որ կազմակերպութիւն չեղած տեղերը իրենք մասնաւոր շէնքերու մէջ իրենց ծախքովը պահել պարտաւոր ըլլան, բայց դէռ դրական արդիւնք մը չտեսնուեցաւ⁵⁰:

Կառավարութիւնը շարաթէ մը ի վեր փոխուած է: Տամատ Ֆերիտ Փաշայի նախագահութեամբ կազմուած է ներկայ դահլիճը, գրեթէ ամբողջովին իթիլաֆական⁵¹: Կ'ըսուի թէ մտադիր է խստիւ պատժել պատասխա-

⁵⁰ Հայկական պատկան մարմինները 31 Հոկտեմբեր 1918-ին կնքուած զինադադարէն ետք դիմած էին թրքական իշխանութիւններուն, խնդրելով որ հայ որբերն ու այրիները պահ մը եւս պահուին այնտեղ եւ անոնց մօտ ուր կը գտնուին, մինչեւ որ իրենք կարենային զանոնք պատսպարելու եւ հոգալու համար կատարել համապատասխան կարգադրութիւններ: Թրքական իշխանութիւններն իրենց հերթին տրամադրութիւն յայտնած էին նիւթապէս օժանդակելու անոնց: Վաւերագրական նիւթերը, սակայն, կը յուշեն թէ ոչ միայն այդպիսի յատկացումներ չէին կատարուած, այլեւ՝ կա՛մ որբերն ու այրիները վերադարձուած էին հայոց քաջ գիտնալով թէ ստանձնող կողմը ի վիճակի պիտի չըլլար պատսպարելու զանոնք եւ բաւարարելու անոնց կարիքները, կա՛մ անյաղթահարելի դժուարութիւններ ստեղծած էին՝ խափանելու վերադարձի ամէն հնարաւորութիւն: Մալաթիոյ պարագային, օրինակ, 17 Ապրիլ 1919 թուակիր տեղեկութիւն մը կը յայտնէր որբեր յանձնելու դժկամակութեան, տրուած որբերը ճամբուն վրայ զանոնք բերող քաղաքապահ զօրքերու կողմէ փախցուելու եւ նիւթականի չգոյութեան պատճառով հաւաքուած 200 որբերէն զատ այլ որբեր հաւաքելու անկարելիութեան մասին (*The Post-WWI Rise of Turkish Nationalism and Resumption of Genocidal Policies. A Collection of Prime Sources Documenting the Treatment of Armenians and Greeks in Turkey*, compiled and translated by Vatche Ghazarian, Mayreni Publishing, Portsmouth-Rhode Island, 2023, էջ 3):

⁵¹ Թրքական Միութիւն Եւ Յառաջդիմութիւն (Իթթիհատ Վէ Թերաքքի) կուսակցութեան տիրապետութենէն դժգոհ տարրեր զայն հակակշռելու կամ իշխանութեան տիրանալու նպատակով 21 Նոյեմբեր 1911-ին կազմած էին

նատուները եւ արդարեւ այսօր շատ մը նախկին նախարարներ ձերբակալուեցան, ընդ որս Սաիտ Հալիմ Փաշա ու Խալիլ Պէյ⁵²: Ներկայ կառավարութեան բարի տրամադրութիւններէն օգտուելով կը յուսանք որ գաւառներու մէջ քանի մը չարագործներու պատժուելովը, գէթ կարելի ըլլայ քիչ մը ապահովութիւն ներմուծել ներքին գաւառները ուր դեռ տեղի ունեցած փոփոխութիւններու նշանակութիւնը չեն հասկցած: Այս ապահովութեան տեսակէտով Համաձայնականներն ալ կարելոր քայլ մը առնելու վրայ են: Գաւառներու համար այս օրերս մեզմէ երիտասարդներ կ'ուզեն ժանտարմա ըլլալու համար: Կարծեմ քանի մը հարիւրի պէտք ունին: Լաւ քայլ մըն է այս ըստ իս, թէ՛ ներքին գաւառներու ապահովութեանը համար եւ թէ՛ հոս հոն արքայութեան շատ մը հայ ցրուած զինուորներու գործ հայթայթուած կ'ըլլայ գէթ առ այժմ:

*

Մեր ներքին ազգային խնդիրները աւելի գոհացուցիչ վիճակի մը մէջ չեն: Ձեր մեկնելէն վերջ, երբ Պր. Ահարոնեան⁵³ եւ Փափագեան⁵⁴ Պօլիսէն

Ազատութիւն եւ Համաձայնութիւն (Հիւրիյէթ Վէ Իթիլաֆ) կուսակցութիւնը: Երբ Տամատ Փերիտ (1853–1923), վարչապետ նշանակուելով 3 Մարտ 1919-ին կը կազմէր իր դահլիճը, նկատի ունենալով Տամատի նախկին յարումը կուսակցութեան, որուն նախագահութիւնը վարած էր ան պահ մը, տպաւորութիւն կը ստեղծուէր թէ կառավարութիւնը կը գտնուէր իթիլաֆականներու ձեռքը:

⁵² 1921-ին Արշալիր Շիրակեանի կողմէ Հռոմի մէջ սպաննուած ալպանացի Մեհմետ Սաիտ Հալիմ եպարքոս 1913–1917 տարիներուն եւ Խալիլ Մենթէշէ՛ արտաքին գործերու նախարար 1915–1917 շրջանին, Հայկական Յեղասպանութեան գործադրութեան մէջ իրենց դերակատարութեան համար ձերբակալուելով Մալթա դրկուելէ ետք, 1921-ին ազատ պիտի արձակուէին Մեծն Բրիտանիոյ կողմէ՝ ի փոխարէն բրիտանացի ռազմագերիներու ազատ արձակման, Մուսթաֆա Քեմալի հետ կնքուած համաձայնութեամբ մը:

⁵³ Գրող եւ պետական գործիչ Աւետիս Ահարոնեան (1866–1948), որ 10 Օգոստոս 1920-ին պիտի ստորագրէր Սեւրի Հաշտութեան Դաշնագիրը, Փարիզ կը մեկնէր իբրեւ նախագահը Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան:

⁵⁴ Վահան Փափագեան (1876–1973), դաշնակցական գործիչ եւ յուշագրական հատորներու հեղինակ, որ 1912–1913-ին եղած էր գործավարը Հայկական Նահանգներու բարենորոգման հարցով զբաղող Ապահովական Յանձնաժողովին, Ահարոնեանի հետ Փարիզ կը մեկնէր աշխատակցելու անոր գլխաւորած պատուիրակութեան:

անցան, շատ հաւանականաբար անոնց քաջալերութեամբը, Ազգային Խորհուրդ մը կազմակերպելու հարցը նորէն մէջտեղ ելաւ եւ այս անգամ աւելի յամառօրէն հետապնդուեցաւ: Շատ մը վիճաբանութիւններէ վերջ, որոշուեցաւ որ երեք յարանուանութեանց երեսփոխանական Ժողովները միանալով մարմին մը ընտրեն, որ ան ալ իր կարգին եւ իր մէջէն Ազգային Խորհուրդ մը պիտի նշանակէր: Այս ծրագիրը սակայն չյաջողեցաւ: Բողոքականները եւ հայ հռովմէականներ ընդդիմացան եւ առաջարկեցին երեք յարանուանութեանց վարչութիւններէն մարմին մը կազմել ինչ որ տեղի ունեցաւ եւ այսօր ալ առաջին նիստը գումարեց⁵⁵: Բայց մեր պարունները⁵⁶ գոհ չեն, որովհետեւ երեսփոխանականէն չեն ընտրուած, այլ՝ վարչութիւններէն նշանակուած. այնպէս որ ըստ առաջնոյն պայքարը շարունակուելու վրայ է: Հիմա ալ նոր վարչութիւն⁵⁷ մը ընտրելու հարցը մէջտեղ ելած է: Անուններու վրայ համաձայնութիւն մը գոյացնելու կ'աշխատուի, բայց չգիտեմ թէ հոդ որքան պիտի յաջողինք: Վերջապէս չմանրամասնեմ, դուք լաւ գիտէք մեր մէջ տիրապետող մտայնութիւնը. ո՛չ կը գործեն, ո՛չ ալ կը թողուն որ ուրիշները գործեն եւ պարապ վիճաբանութիւններով ժամանակ կ'անցնի:

Ամերիկացիները ամբողջապէս եկած են: Շաբաթ օրը 240 հոգիւնոց

⁵⁵ Ազգային Խորհուրդի կազմութեան վերաբերեալ տեղեկութիւններու համար տեսնել *Համահաւաք* աշխատութեան Ա. հատորին xxxvii–xliv, իսկ առաջին նիստին ատենագրութեան համար՝ 3–5 էջերը:

⁵⁶ Դաւիթեան նկատի ունի Ազգային Երեսփոխանական Ժողովի յատկապէս դաշնակցական անդամները:

⁵⁷ Ա. Աշխարհամարտի օրերուն թրքական իշխանութիւններու կողմէ Մուսուլ, Իրաք արքայութեան Զաւէն Պատրիարք Պոլիս կը վերադառնար 19 Փետրուար 1919-ին եւ իր վերադարձը գետին յարդարած կ'ըլլար դա՛րձեալ թրքական իշխանութիւններու կողմէ Աշխարհամարտի ընթացքին կազմալուծած Ազգային Երեսփոխանական Ժողովի վերաբացման 15 Մարտ 1919-ին: Այդ նիստին իսկ նիւթ կը դառնար Ազգային Սահմանադրութեամբ նախատեսուած Բաղաքական եւ Կրօնական Ժողովներու անդամներով եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարքին նախագահութեամբ կազմուած Ազգային Երեսփոխանական Ժողովի Կեդրոնական Վարչութեան հրաժարման հարցը: Զաւէն Պատրիարք նախընթացներ նկատի ունենալով կ'առաջարկէ որ ինք նշանակէ գոյգ ժողովներու ատենապետները եւ Ժողովը կը վաւերացնէ Դաւիթեանի նշանակումը իբրեւ Բաղաքական Ժողովի (կամ Վարչութեան) ատենապետ (*Համահաւաք* Ա., էջ 6–9):

խումբ մը հոս հասա⁵⁸: Ա՛յ կը յուսամ որ մօտ օրէն պիտի գաւառները մեկնին եւ մեր դժբաղդ ազգակիցներուն իրական ձեռնտուութիւն մը ըլլայ: Հոս կազմակերպուելու վրայ են. Շաբաթ օրը Տօք.Վօշպըրն⁵⁹ պիտի մեկնի Գոնիա-Կեսարիա-Սեբաստիա եւ յետոյ պիտի վերադառնայ, անշուշտ տեղական ուսումնասիրութիւն մը ընելու համար, որուն պիտի հետեւի, կ'երեւի, բուն մնայուն խումբը, որ տեղւոյն վրայ նպաստի գործը ձեռք պիտի առնէ եւ հիւանդանոցներ պիտի բանայ: Այս խումբերուն պիտի ընկերանան Համաձայնական սպաներ՝ 10 ֆրանսացի եւ 10 անգղիացի: Մենք ալ մեր կողմէ պիտի խրկենք քահանաներ որպէս առաջնորդ եւ 1–2 անձեր տեղւոյն վրայ գործակցելու, կազմակերպելու եւ statistiqueներ [= վիճակագրութիւններ] պատրաստելու: Այս մասին յարմար անձեր որոշելու վրայ ենք: Կը յուսամ որ այս ամառ տարագրեալներու գործը արդէն որոշ փուլի մը մէջ մտնայ: Բայց ատոնց ամէնուն արմատն է մեր երկրի ճակատագրին միանգամ ընդ միշտ որոշուիլը. այն ատեն է միայն որ աւելի գիտակցաբար կարելի պիտի ըլլայ ներգաղթի հարցովը պարապիլ ու հոս հոն ցրուած ժողովուրդը տեղ մը կարենալ ամփոփել. մինչդեռ հիմա բոլորովին անստուգութեան մէջ ենք: Հոս Պօլիս շատ մը գաւառացիներ կան որ կը փափաքին իրենց հայրենիքը մեկնիլ, բայց այժմ անկարելի ըլլալուն հոս մնացած ու ազգին վրայ բեռ եղած են: Մաս մը դէպի Կիլիկիա մեկնեցան, բայց առնուած տեղեկութիւնները շատ նպաստաւոր չեն. հոն ալ այս պահուս խոնում ու խեղճութիւն կայ:

⁵⁸ Ակնարկութիւն Մերձաւոր Արեւելքի Նպաստաբաշխ (Near East Relief) կազմակերպութեան պատկանող անդամներու, որոնք նախնական ուսումնասիրութիւն մը կատարելէ ետք Անատոլիոյ եւ Կիլիկիոյ մէջ, նպատակադրած էին հիմնել հիւանդանոցներ եւ այլապէս ալ ծաւալել մարդասիրական գործունէութիւն զանազան նահանգներու մէջ: Խումբը իսկութեան մէջ կը բաղկանար 250 կամաւորներէ եւ ճամբայ ելած էր 16 Փետրուար 1919-ին Մարգուանի ամերիկեան Անաթոլիա Գոլէնի նախկին նախագահ Ճորճ Ուայթի (George White, 1861–1946) գլխաւորութեամբ: Բրիտանական բանակը իր հակակշռին ենթակայ երկաթուղագիծերուն միջոցով դիւրացուցած էր դեղերով եւ բժշկական պիտոյքներով ի հակերով անոնց երթը մինչեւ Հալէպ եւ Պէրսոյ, անցնելով Գոնիայէն, Ատանայէն, Ուրֆայէն եւ այլ վայրեր:

⁵⁹ Բժիշկ Ճորճ Հ. Ուոշպըրն (George Hamlin Washburn, 1860–1933)՝ Պոլիս ծնած գաւակը 1878–1903 տարիներուն Պոլսոյ ամերիկեան Ռոպերթ Գոլէնի տնօրէնի պաշտօնը վարած Ճորճ Ուոշպըրնի (Geroge Washburn, 1833–1915), կը գլխաւորէր բժշկական բաժինը:

Տօք. Կէյթս⁶⁰ գաւառ մեկնեցաւ քիչ օրուան համար իր որդւոյն հետ. կարծեմ մինչեւ Խարբերոյ պիտի երթայ ու վերադառնայ: Պ. Հընթինկըն⁶¹ փոխանորդաբար կը վարէ վարժարանին տնօրինութիւնը:

Վերջին նամակնիդ, 16 Փետրվար, բաւական յուսադրիչ էր: Ուիլսոնի հետ տեսնուելնիդ յաջողութիւն մըն է եւ շատ օգտակար⁶²: Հոս բարե-

⁶⁰ Իրաւաբանութեան դոկտոր եւ անտարանիչ (միսիոնար) Կէյց (Caleb Frank Gates, 1857–1946) ինն տարի Խարբերոյի Եփրատ Գոլէճի տնօրէնութիւնը վարելէ ետք կը տնօրինէր Ռոպերթ Գոլէճը 1903–էն ի վեր եւ այդ պաշտօնը պիտի վարէր մինչեւ 1932:

⁶¹ Երկարամեայ ուսուցիչ Ճորն Հ. Հանթինկըն (George H. Huntington, ?-1953) հետագային մինչեւ 1933 պիտի վարէր Գոլէճին փոխ-նախագահութիւնը:

⁶² Ալեքսանդրիոյ Միացեալ Նահանգներու նախագահ Վուոօր Ուիլսոնի (Woodrow Wilson, 1856–1924) հետ 12 Փետրուար 1919-ին Եդիշէ Արք. Դուրեանի եւ Փրոֆ. Արքահամ Տէր Յակոբեանի տեսակցութեան, որուն մասին Պոլիս վերադարձէն ետք Ազգային Ժողովի նիստի ընթացքին Դուրեան Արքեպիսկոպոս պիտի ըսէր.

«Մեր մեծ յոյսը դրուած է Ամերիկայի նախագահին վրայ եւ կը սպասենք որ իրականացնէ այն գաղափարը, որուն յարած է ինքը: Հայկական դատին նուիրուած հոգի մը տեսած ենք իր մէջ: Ինքն իսկ խօսելով իր ժողովուրդին՝ ամիսներ առաջ՝ հարցուցած էր որ պիտի թողո՞ւք որ հայ ժողովուրդը մնայ իր ողորմելի վիճակին մէջ, ներշնչելով այն միտքը, թէ Ամերիկա պէտք էր որ ընդունէր Հայաստանի մանտաթը:

Երբ պատուական նախագահին ունկնդրութեան արժանացանք Պ. Փրոֆ. Արքահամ Տ. Յակոբեանի հետ, նոյն հոգատարութեամբ խօսեցաւ մեզի ալ հայ ժողովուրդին ապագայ բարօրութեան մասին եւ մեր խօսակցութեան միջոցին՝ երբ դիտել տուինք՝ թէ պատմական սխալ մըն էր Կիլիկիան Սուրիոյ մաս նկատել, ինչպէս յայտարարած էր Մարսիլիոյ մէջ կազմուած Սուրիական Յանձնաժողովը, նախագահը, որ ազգին պահանջած Ամբողջական Հայաստանի գաղափարին համակիր էր եւ անհրաժեշտութիւն մը կը համարէր կիլիկեան հողամասին կցումը Հայաստանի հետ, պէտք տեսաւ սակայն զգացնելու թէ այդ նիւթին շուրջ կարելոր էր հաղորդել Ամերիկեան Յանձնաժողովին մեր հիմնական տեսութիւնները:

Այդ բարձր յանձնարարութեան համաձայն՝ Փրոֆ. Տէր Յակոբեան աշխատեցաւ Ամերիկեան Յանձնաժողովին կարելոր անդամներուն դիմելով, խօսելով ոչ միայն անգլիերէն լեզուն, այլեւ մտքի լեզուն, եւ ինչ որ հնար էր՝ բերանացի կամ գրաւոր՝ այդ ամէնը եղան շարունակաբար եւ նախագահ Ուիլսոնի տեղեկութիւն տալու գործը չմնաց թերի:

Զմոռնանք սակայն պահ մը անդրադառնալու նախագահին մեզի ըրած

կամներու հաղորդեցի եւ գոհ մնացին, իսկ թերթերու մէջ շատ համառօտ գրել տուի: Մաղթենք որ քիչ ատենէն յոյսերնիս իրականանայ: Հոս օրէ օր հեռագրի կը սպասեն. լուրեր տարածուած են] թէ անթել հեռագիրով Հայաստանի անկախ հռչակման լուրը դեսպանատուններուն եկած է եւ միշտ մեզմէ տեղեկութիւն կ'ուզեն: Անշուշտ անտեղի շշուկներ են, բայց կարծեմ այլեւս հեռի չէ որ մեր խնդրոյ մասին ալ որոշումը տրուի: Թերեւս Wilsonի վերադարձէն վերջ: Ամերիկայի հովանաւորութեանը մասին կ'արժէ պնդել, եւ ամէն ջանք թափել: Առանց այդ պայմաններուն կազմուելիք Հայաստանը բացարձակապէս անբնակելի պիտի ըլլայ եւ ժողովուրդը դարձեալ պիտի տանջուի եւ յիմար արկածախնդրութեանց մէջ միարճուի: Մեծագոյն բարիքը հայ ժողովուրդին հանդէպ՝ որ մեր Բարիզի ներկայացուցիչները կրնան ընել, Հայաստանի վրայ ուժով եւ արդար հովանաւորութիւն մը ապահովելն է: Անտանտի ու թերեւտլիկ տօն քիշօթներ⁶³ կան մեր մէջ որոնց հետ գործակցիլ անկարելի է: Անհամբեր ձեր նամակներուն կը սպասենք մեծայոյս ըլլալով որ բարի լուրեր պիտի հաղորդէք:

Ինչպէս վերը ըսի, երէկ համազգային առաջին ժողովը ըրինք: Հոն մասնաւորապէս ծեծուեցան indemnitéի [= վնասուց հատուցման] հարցերը. այդ մասին հոս դեսպանատունները շատ վերապահ են եւ Բարիզի Հաշտութեան Ժողովէն⁶⁴ կախում ունի կ'ըսեն. իսկ հոս պարզ արձանագրութիւն մը ընելով բաւականանալ կը յանձնարարեն. այսինքն՝ ողջ

ընդունելութեան վերաբերմամբ: Շատ խորունկ տպաւորութիւն մը թողուցին մեր վրայ իր բառերուն ջերմ ու անկեղծ շէշտերը, եւ կարելի չէ մէկ երկու բառով հաղորդել եւ ներկայացնել այն հզօր ու վեհ ազդեցութիւնը զոր կրեցինք» (*Համահասար* Ա., էջ 47–48):

⁶³ Սպանացի գրող Միկել Սերվանթեսի (Miguel de Cervantes Saavedra, 1547–1616) յայտնի «Տոն Զիշոթ» վէպի գլխաւոր հերոսին անուան յիշատակութեամբ Դաւիթեան կ'անկնարկէ իրենց խօսքերով ու գործերով ազգային գործերուն վնաս հասցնող երազատես ու արկածախնդիր անձերու:

⁶⁴ 18 Յունուար 1919-ին սկսած եւ տարի մը ամբողջ Փարիզի մէջ գումարումներ ունեցած վեհաժողովը, ուր Առաջին Աշխարհամարտէն յաղթական դուրս եկած տէրութիւններու ներկայացուցիչները կը զբաղէին պարտեալ պետութիւններու հետ կնքուելիք հաշտութեան կամ խաղաղութեան դաշնագրերու մշակումով, սահմանագծումներով, տուժած կողմերու կատարուելիք հատուցումներով եւ այլն: Կատարուող խորհրդակցութիւնները պիտի յանգեցնէին Ազգերու Համախմբման կամ Լիկային ստեղծման: Խորհրդաժողովը կը զբաղէր նաեւ հայ ժողովուրդի արեւելահայ եւ արեւմտահայ հատուածներուն իւրայատուկ խնդիրներով եւ ակնկալութիւններով:

մնացող հայերու վնասուց քանակը պաշտօնապես արձանագրել: Բայց ամբողջապես փնացած ընտանիքներու կրած վնասները ի՞նչ պիտի ըլլան. ազգը իբր անոնց ժառանգորդ պիտի նկատուի?: Այս մասին մեր juriste [= իրաւագետ] ընկերները ծրագիր մը պատրաստելով յառաջիկայ ժողովին պիտի ներկայացնեն: Այս տողերը կը գրեմ պարզապէս ձեզի իմացնելու թէ վնասուց հատուցման կարելոր խնդրոյն տեսակետով հոս բան մը ընել կարելի չպիտի ըլլայ: Միայն թէ հոս՝ գրաւուած ու ծախուած (էմլաքը մէթորութեւ [= լքեալ գոյքեր]) շարժուն թէ անշարժ գոյքերու մասին աշխատութիւն մը պատրաստելու վրայ ենք, որու համաձայն կը պահանջենք կոր որ այս վերջին չորս տարուան միջոցին տեղի ունեցած առուծախները, գրաւումները առ ոչինչ համարուելով, առանց դատաւարութեան տէրերուն վերադարձուի: Եթէ յաջողինք՝ բաւական գումար մը ետ առնուած պիտի ըլլայ: Մնացեալ վնասներն ալ ապագային տեսնանք ինչպէս կը կարգադրուին: Այս առթիւ Սանասարեան Խանը⁶⁵ ու ուրիշ ասոր նման ազգային կալուածներ դիւրութեամբ պիտի կրնանք վերստանալ:

Մեր պատրաստելիք այդ mémoiresներու [= յիշատակագիրներու] օրինակները յառաջիկային Ձեզի կը դրկեմ: Այսօր Որբախնամ[ի] ու Տարագրելոցի⁶⁶ հաշիւները կրնայի խրկել, բայց կարծեմ մեծ intérêt [=

⁶⁵ Մէկէ աւելի վարժարաններու հովանաւոր եւ բարերար՝ անգաւակ մահացած թիֆլիսեցի Մկրտիչ Սանասարեան (1818-1890) Կարնոյ մէջ 1881-ին իր անունը կրող վարժարանի հիմնադրութենէն ետք, վարժարանին յարատեւութիւնը ապահովելու նպատակով պատրաստած էր նաեւ կտակ մը, որուն գործադրութիւնը ի վերջոյ Պոլսոյ Պատրիարքին նախագահութեամբ գործող խնամակալութեան մը վստահուելով, յարմար տեսնուած էր Պոլսոյ Սիրքէնի շրջանին մէջ գնել կալուած մը, զայն մկրտել Սանասարեան Խան անունով եւ այդ կալուածին հասոյթներով մատակարարել վարժարանին ծախքերը: Առաջին Աշխարհամարտի ընթացքին կառավարութիւնը ձեռք դրած ըլլալով կալուածին վրայ, խնամակալութիւնը գրկուած կը մնար անոր եկամուտներէն: Այդ եկամուտները պիտի վերսկսէին հոսիլ դէպի պատրիարքարան 1919-ի վերջերուն: Ուրիշ հարց որ երկար դատերէ ետք թրքական կառավարութիւնը շարունակելով օսմանեան շրջանէն սկսած հայակործման քաղաքականութիւնը՝ 1935-ին պատրիարքարանը դարձեալ պիտի գրկեր անոր եկամուտներէն:

⁶⁶ Զինադադարի հռչակման նախօրեակին եւ հռչակումէն ետք Թուրքիոյ տարածքին սկսած էին գործել որբերով եւ տարագիրներով զբաղող իրարմէ անջատ մարմիններ՝ որբերու եւ տարագիրներու օգնութեան փութալու դիտաւորութեամբ: Անջատ նախաձեռնութիւններն աւելի արդիւնաւէտ դար-

օգուտ] մը չունի. այսուհանդերձ պիտի ջանամ օրինակ մը խրկել, թէեւ այդ հաշիւները մինչեւ 31 Դեկ. 1918 վերջացած են: Անկէ ի վեր բաւական որբեր հաւաքուած են: Այսօր 1500ի մօտ որբեր ունինք մեր խնամքին տակ եւ հետզհետէ ալ նորեր կու գան եւ յարմար շէնք չունինք զանոնք տեղաւորելու համար: Այս երկու մարմինները միացուցած եւ Ազգային Խնամատարութիւն⁶⁷ անուան տակ միակ մարմին մը կազմած ենք որ արդէն գործի ձեռնարկած է եւ կը յուսամ որ օգտակար պիտի ըլլայ: Արդէն Ամերիկեան Նպաստամատոյց⁶⁸ մարմնոյն հետ շփման մէջ են եւ իրարմէ պիտի կրնան

ձնելու նպատակով, Ազգային Կեդրոնական Վարչութիւնը 11 Դեկտեմբեր 1918-ին որոշած էր ստեղծել Տարագրելոց Կեդրոնական Յանձնաժողովը՝ անոր քով կեդրոնացնելու տարագրեալներու խնամատարութեան նպատակով կատարուած հանգանակութիւններու եւ նուիրատուութիւններու գումարներն ու ըստ այնմ տնօրինելու յատկացումները: Որբախնամ մարմինը իր սկզբնաւորութիւնը կը պարտէր 28 Հոկտեմբեր 1918-ին Օսմանեան Առեւտրական Դրամատան մէջ տեղի ունեցած ներկայացուցչական հաւաքի մը, որուն երկրորդ նիստին որոշումով ներքին գործերու նախարարութենէն ձեռք բերուած յատուկ արտօնագրով կը պաշտօնականացուէր Հայ Որբախնամը (*Համահաւաք Ա.*, էջ xxxviii, xxxix):

⁶⁷ Ազգային Խնամատարութեան պաշտօնական կազմութիւնը կը ծանուցուի Դաւիթեանի գլխաւորած Ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ Տարագրելոցի եւ Որբախնամի միաձուլման հարցով զբաղող նիստերէն երրորդի ընթացքին, 28 Փետրուար 1919-ին (*Ազգային Խնամատարութիւն – Ընդհանուր Տեղեկագիր – Առաջին Վեցամսեայ 1919 Մայիս 1-31 Հոկտեմբեր 1919*, Տպագր. Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1920, էջ 65):

⁶⁸ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցը հիմնուէր էր 1915-ին որպէս հետեւանք Օսմանեան Կայսրութեան մէջ հայերու դէմ գործադրուած ցեղասպանութեան կապակցութեամբ անմիջական օգնութիւն ցուցաբերելու խնդրանքին, զոր ներկայացուցեր էր Պոլսոյ ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթաւ: Միսիոնար Ճէյմս Պարթընի (կամ Պարթոնի [James Levi Barton, 1855–1936]) եւ բարերար Քլիվլենտ Տոճի (Cleveland Hoadley Dodge, 1860–1926) նախաձեռնութեամբ կազմուած էր Հայերու Եւ Սուրիացիներու Օգնութեան Ամերիկեան Յանձնաժողով (American Committee for Armenian and Syrian Relief) անուանակիր կազմակերպութիւն մը, օգնութեան հասնելու համար հայ եւ արաբ աղիտեալներու:

Այնուհետեւ, կարճ պահ մը, ան գործեր էր Մերձաւոր Արեւելքի Մէջ Նպաստի Ամերիկեան Յանձնաժողով (American Committee for Relief in the Near East) անուան տակ մինչեւ 1919-ի Օգոստոս ամիսը, երբ Միացեալ Նահանգներու

օգտուիլ:

Y.M.C.A.ի⁶⁹ կողմէ Messers. [= պարոնայք] Murray, Studer եւ Jacop հոս եկած են եւ գործը աւելի ընդարձակ հիման մը վրայ պիտի կազմակերպեն: Յառաջիկայ Ուրբաթ օրը՝ ի պատիւ անոնց սեղան մը պիտի տրուի Թօքսթերեանի պանդոկը: M. Huntington զիս ալ հրաւիրած է, պիտի երթամ: Տրամադիր են եղեր նոյնիսկ նոր շէնքեր կառուցանելու: Ջանալու ենք օգտուելու այս առիթէն ալ:

Նամակս բաւական երկար եղաւ: Կը խոստանամ աւելի կանոնաւոր կերպով գրել:

Ձերդ յարգանք
Դաւիթեան

Յ.Գ. - Դրամի մասին բան մը գրած չէիք Ձեր վերջին նամակին մէջ: Ձեր հետ ունեցածը մեծ բան մը չէր. այդ մասին շատ մտաւոյց եմ եւ պիտի խնդրէի որ գրէք: Շատ լաւ ըրած էիք 3000 ֆրանք առնելիդ: Թէեւ մինչեւ ցարդ չեկան մեզմէ ուզելու Ազատամարտէն⁷⁰: Հոս changeը [= դրամափոխութեան սակը] հետզհետէ կը բարձրանայ կոր. կէսառկէսէն աւելի վնաս կայ, բայց վերջապէս խնդիր չէ: Պետք է դրամ հասցնենք: Եթէ հող առիթը ներկայանայ մեր վրայ չէք քաշելու, առանց քաշուելու առէք դրամը: Մենք

Ներկայացուցիչներու Տունը պաշտօնապէս վաւերացնելով այս մարդասիրական կազմակերպութեան կանոնագիրը, անոր պաշտօնական անունը դարձեր է Near East Relief: 1930-ին, վերջին անուանափոխումով մը, ան իր գործունէութիւնը պիտի շարունակէր Մերձաւոր Արեւելքի Հիմնարկութիւն (Near East Foundation) անուան ներքեւ:

⁶⁹ Y.M.C.A.ի (Երիտասարդ Տղամարդոց Քրիստոնէական Ընկերակցութիւն) Պոլսոյ մասնաճիւղը հիմնուած կը թուի ըլլալ գերմանացի միսիոնարներու կողմէ 1881-ին (<https://archives.lib.umn.edu/repositories/7/resources/941>, 3 Յունիս 2023-ի դրութեամբ):

⁷⁰ Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան եւ Փրոֆ. Աբրահամ Տէր Յակոբեան Փարիզի իրենց առաքելութեան համար դրամի պետք ունենալով, *Ազատամարտ* օրաթերթին (այլ խօսքով՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պոլսոյ պատասխանատու մարմնին) դրամ դրկել փափաքող կողմէ մը ստացած էին 3000 ֆրանք այն հասկացողութեամբ որ Պատրիարքարանը *Ազատամարտի* վճարէր այդ գումարը: Երկուստեք յարմարաւէտ կարգադրութիւն (տես Յաւելուած 2.): Դիտել պետք է տալ թէ Հ.Յ.Դ.ի պաշտօնական խօսափող «Ազատամարտ»ը, դադարած Ա. աշխարհամարտի շրջանին, 1918-ին, սկսած էր վերահրատարակուիլ *Ճակատամարտ* անունով:

հոս կը վճարենք:

Նոյն

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Բշ.

Կոստանդնուպոլիս, 17 Մարտ 1919

Յարգելի բարեկամ,

Ձեզի 11 մարտ⁷¹ երկար նամակ մը գրեցի եւ Արիկեան անուն ֆրանսահայ ենթասայայի մը հետ խրկեցի: Յետոյ ստացայ Ձեր 26 Փետ. նամակը: Ստացայ նոյնպէս Հայ-Պատուիրակութեան ներկայացուցած *mémoire-dumort*⁷²: Ծատ շահեկան է եւ զոհ մնացի, որովհետեւ հոս մեզմէ նոր կազմուելիք Հայաստանի քարտէսը կը պահանջեն երբեմն. մենք ալ շատ

⁷¹ Կը թուի թէ յղում կը կատարուի 10 Մարտ թուակիրին, զոր Դաւիթեան սկսելով 10 Մարտին, թերեւս աւարտած էր 11-ին: Այս ենթադրութեան ուժ կու տայ նախորդ նամակին այն պարբերութիւնը, որ կը խօսի 16 Փետրուար թուակիր նամակի ստացման մասին: Այդ պարբերութենէն առաջ, Դաւիթեան գրած է Տէր Յակոբեանի հետ արեւակցական կապ ունեցող անձերու մասին (մեր կողմէ զանց առնուած): Այդ կարգի տեղեկութիւններ Դաւիթեան սովորաբար վերապահած է իր նամակներու վերջին պարբերութիւններուն:

⁷² Թէեւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը՝ կազմուած Հայ Ազգային եւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւններու անդամներով, իր պաշտօնական գործունէութեան պիտի ձեռնարկէր 1919-ի Ապրիլին, Դաւիթեան «Հայ-Պատուիրակութիւն» անուան տակ այստեղ վստահաբար նկատի ունէր զոյգ պատուիրակութիւնները, որոնց նախագահները՝ համապատասխանաբար Պօղոս Նուպար եւ Աւետիս Ահարոնեան, համատեղ ստորագրութեամբ Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուցած էին 12 Փետրուար 1919 թուակիր յուշագիր մը, որ իր մէջ կը խտացներ հայկական պահանջները՝ ճանաչումը հայկական անկախ պետութեան մը, որ բաղկանայ եօթ նահանգներու (ներառեալ՝ Տրապիզոնի նաւահանգիստը, նախկին Պոնտական Թագաւորութեան տարածքին վրայ յոյներու թիւը գերակշիռ ըլլալով հանդերձ), Կիլիկիոյ (Ալեքսանտրէթով միասին) եւ Կովկասի Հայկական Հանրապետութեան հողամասերուն միացումով. Դաշնակիցներու եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու կամ Ազգերու Ընկերութեան հաւաքական երաշխաւորութիւնը այդ միացեալ պետութեան համար եւայլն (յուշագրին հայերէն տարբերակին ամբողջութեան համար տեսնել՝ Լազեան, Գաբրիէլ, *Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր)*, տպգր. «Նոր Աստղ», Գահիրէ, 1946, էջ 218-էն):

կը զգուշանայինք, որպէսզի Բարիզի հետ անհամաձայն չգնուինք: Մենք հոս հատ մը շինել տուած ենք, որ վեր ի վերոյ նոյնն է, բայց քիչ մը աւելի ընդարձակ. Սամսոն-Ամասիա գիծը մէջը առած ենք, նոյնպէս՝ Պարսկահայաստանը:

Պատուիրակութեան կազմակերպչութիւնն ալ կ'երեւի իրեն յատուկ դժուարութիւնները ունի, բայց կը յուսամ համերաշխաբար կը գործէք սա փափուկ ժամանակներուն մէջ: Ուիլսոնի հոգ հասնիլը թերեւս քիչ մը փութացնէ գործերը: Մենք ալ հոս կազմակերպութեան երկունքներու մէջ ենք: Մեր վարչութիւնը ըստ օրինի իր հրաժարականը տուաւ⁷³: Նորին ընտրութեանը մասին դժուարութիւններ կային. վերջապէս անցեալ Ուրբաթ Ազգային Ժողով գումարուեցաւ եւ 52 երեսփոխաններու ներկայութեան շատ մը վիճաբանութիւններէ վերջ, Սրբազան Պատրիարքին⁷⁴ առաջարկին համաձայն փոխանակ Քաղաքականի եւ Կրօնականի Ժողովները ընտրելու, միայն ատենապետները նշանակուեցան, որոնք իրենց ընկերները պիտի որոշեն: Քաղ. Ժողովի ատենապետութիւնը նորէն գլուխս փաթեցին: Շատ յոգնած էի եւ չէի ուզեր ընդունիլ, բայց ուրիշ անուան շուրջ կարելի չեղաւ համաձայնիլ, այնպէս որ ստիպուեցայ տեղի տալ: Մանկունի⁷⁵ Սրբազանն ալ Կրօն. Ժողովոյ ատենապետ նշանակուեցաւ: Ընկերներս դեռ որոշած չեմ. դժուար խնդիր մըն է: Պէտք է գոհացնել ամենքն ալ⁷⁶, ինչ որ դիւրին խնդիր չէ: Ձեր պակասը շատ կը զգամ: Բոլորովին միմեկի մնացած եմ: Կը ճանչնաք միւս խորհրդականները: Ինչ որ է, ստիպեալ պիտի ջանամ մարմին մը ստեղծելու, թէւ վստահ եմ որ շատերը գոհ չպիտի ձգեն: Արդէն ընտրութեան այս եղանակին դէմ սկսած են գրել:

⁷³ Տեսնել թիւ 56 ծանօթագրութիւնը:

⁷⁴ Չաւէն Արքեպիսկոպոս Տէր Եղիայեան, որուն արքայութեան վերադարձի վաղորդայնին վերաբացուած էր Ազգային Երեսփոխանական Ժողովը:

⁷⁵ Պրոսա ծնած Վահրամ Եպիսկոպոս Մանկունի (1846–1920) քսանամեակ մը պաշտօնավարած էր Ս. Էջմիածնայ մէջ նախ իբր տեսուչ տպարանի 1868-ին, Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի հայրապետութեան շրջանին: Կաթողիկոսին մահէն ետք վերադարձած էր Պոլիս եւ անոր նուիրած աշխատութիւն մը, որուն մէկ մասը միայն յոյս պիտի տեսնէր Փարիզ 1933-ին: 1911-ին վարած էր Թուրքիոյ Հայոց Պատրիարքական Տեղապահի պաշտօնը:

⁷⁶ Այսինքն, հիմնականին մէջ, Ազգային Երեսփոխանական Ժողովի աջ, ձախ եւ կեդրոն խմբակցութիւնները եւ իրենց անդամներով ու համակիրներով զանոնք բաղկացնող կուսակցութիւնները:

Այս համառօտ նամակը կը գրեմ, որովհետեւ այսօր կը մեկնի Չարմայր Մերկերեան անուն երիտասարդը: Հիւանդանոցի⁷⁷ մեր գլխաւոր համարակալ Գարեգին Էֆենտիին որդին է: Ֆրանսա կու գայ երկրագործութիւն ուսանելու. շնորհքով տղայ մըն է եւ Ձեզի կը յանձնարարեմ որպէսզի իրեն օգտակար թելադրութիւններ ընէք եւ ի հարկին ուրիշ յանձնարարէք: Ես իրեն խորհուրդ տուի որ գաւառները երթայ. բարոյական աւելի լաւ պայմաններու մէջ կրնայ ուսանիլ եւ կեանքն ալ անշուշտ աւելի աժան է:

Վաղը ուրիշ ճամբորդ մը կայ. պիտի ջանամ անոր միջոցաւ ալ Ձեզի գրել եւ ուրիշ տեղեկութիւններ ուղարկել:

Դուրեան Սրբազանի նամակ մը գրած ու քանի մը documentsներ խրկած եմ Պր. Մանթաշէֆին⁷⁸ հետ. կը յուսամ ստացած կ'ըլլաք:

.....

Տօքթ. Ալէյթս գաւառ գացած է. կու գայ ի մօտոյ:

Յարգանօք

Տօք. Դաւիթեան

⁷⁷ Ակնարկութիւն 1832ին հիմնուած Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին:

⁷⁸ Նախապէս յիշուած որպէս Մանթաշոֆ: Տես թիւ 43 ծանօթագրութիւնը:

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 18 Մարտ 1919

Յարգելի Բարեկամ

Երեկ համառօտ նամակ մը գրեցի Ձեզի Պր. Չարմայր Մերկերեանի հետ որ Բարիզ կու գայ ուսանելու համար: Այսօր ալ կ'օգտուիմ [առիթ մը] դարձեալ Ձեզի գրելու, որովհետեւ Տեարք Պ. Մըսրըլը⁷⁹ եւ Գ. Սինապեան Բարիզ կու գան որպէս հայ պատուիրակ⁸⁰:

Դուք հոս էիք եւ բոլոր մանրամասնութիւնովը գիտէք մեր պատուիրակներու ընտրութեան խնդիրը: Ձեր մեկնելէն վերջ լսեցինք որ մեր Հռովմէական եղբայրներն ալ կը փափաքին պատուիրակ դրկել: Որոշ չեմ գիտեր թէ ո՞վ ունեցած է առաջինը այդ գաղափարը, բայց հարցը հոն է որ ֆրանսական դեսպանատունն ալ հակառակը չէ պնդած եւ որոշուած է երկու պատուիրակ դրկել: Մեր բողոքական եղբայրներն ալ շատ գոհ մնացած չէին պատուիրակի ընտրութեան մասին, բայց խնդիր հանած չունին:

Կարծեմ Ձեզի գրած եմ թէ համագործակցութիւնը ապահովելու նպատակաւ երեք յարանուանութեանց պետերու նախագահութեամբ հոս Համագգային Խորհուրդ անուան տակ ժողով մը ունինք՝ ընտրուած վարչութիւններէն: Երեկ երկրորդ անգամ ըլլալով հաւաքուեցանք եւ ժողովին ներկայացան Մսրըլ եւ Սինապեան էֆէնտիները եւ պաշտօնապէս հաղորդեցին իրենց մեկնումը եւ կաթողիկէ հայոց պատրիարքարանէն առած mandatին [= յանձնարարագիրն] ալ կարդացին: Դիտողութիւն

⁷⁹ Կաթողիկէ հայոց ղեկավար դեմքերէն Պօղոս Մըսրըլի անունը այս նամակին մէջ աւելի ուշ եւ այլ աղբիւրներու մէջ ալ արձանագրուած է երեք տարբերակով՝ Մըսրըլը, Մսրըլը եւ Մարլը: Վահրամ Թորգոմեանի, Աբրահամ Տէր Յակոբեանի, Յակոբ Թօփմեանի եւ քանի մը ուրիշներու հետ հիմնադիրներէն էր 1918-ի Նոյեմբերին Հակական Լիկին, որ կը նպատակադրէր համերաշխութիւն ստեղծել հայկական զանազան հոսանքներու եւ տարրերու միջեւ:

⁸⁰ Մըսրըլը եւ Գրիգոր Սինապեան Թուրքիոյ կաթողիկէ հայոց առաջարկով պատուիրակ կը նշանակուէին Փարիզի Առաջին Հայ Ազգային Համագումարին համար (Համահաւաք Ա., էջ 10): Սինապեան հետագային անդամ պիտի ընտրուէր Հայ Ազգային Պատուիրակութեան:

եղաւ որ իբր հայ կաթողիկ պատուիրակ մեկնիլը անպատեհ է եւ անհամաձայն ազգին մէջ տիրող համերաշխութեան ոգւոյն, ուստի առաջարկուեցաւ որ այդ mandat[ը] անհետեւանք թողով, Համագային Խորհուրդէն տրուի mandat եւ իրենք ներկայացունին ոչ թէ իբր կաթողիկ հայեր, այլ Պօլսէն ներկայացուցիչներ եւ իբր յաւելուածական պատուիրակ արդէն մեկնածներուն վրայ⁸¹. եւ այդպէս ալ գիր մը խմբագրուելով երեք կրօնապետներէն ստորագրուեցաւ որպէսզի իրենց յանձնուի: Իրենց հաղորդուեցաւ նաեւ Ձեր ունեցած mandathին մէկ օրինակը, որ ընդունած ու պաշտպանել յանձն առած են: Կը կարծեմ թէ լաւագոյն կարգադրութիւնն էր որ եղաւ. այդպէսով կրնան ձեզի գործակցիլ եւ տարբեր անուամբ պատուիրակութեան մ'ալ գոյութիւնը մէկդի թողուած եղաւ: Թէեւ իրենք ալ արդէն տարբեր կերպ խորհած չունէին եւ ըստ իրենց ունեցած mandathին ալ Հայկական Պատուիրակութեան⁸² պիտի գործակցէին. ուրիշ կերպ ալ ընել կարելի չէր:

Կարծեմ Ձեզի գրեցի թէ մեր վարչութիւնը հրաժարական տուած ըլլալով, նոր վարչութիւն մը կազմելու mandat ինծի տրուեցաւ: Այս օրերս ատով զբաղելու վրայ եմ եւ ինծի բաւական տաղտուկ կը պատճառէ: Աշխատելու տրամադիր մարդ գտած չունիմ. բոլորն ալ խորհրդատու՝ գործող չկայ. արդիւնքը Ձեզի կը հաղորդեմ:

Երէկ ցաւալի լուր մը առինք որուն մանրամասնութիւնները դեռ մեզի ծանօթ չեն: Հալէպի մէջ ջարդ տեղի ունեցած է. 50ի չափ մեռեալ, 800 անհետացած հայեր. չորս ժամ տեւած է. անգղիական զինուորական իշխանութիւնները վերջը միջամտած են⁸³: Կ'ըսուի թէ տեղւոյն մէջ

⁸¹ Արդէն մեկնած եւ Փարիզ գտնուող պատուիրակներն էին Եղիշէ Արք. Դուրեանն ու Փրոֆ. Աբրահամ Տէր Յակոբեանը իբրեւ լիիրաւ պատգամաւոր, ինչպէս նաեւ Դոկտ. Արմենակ Բարսեղեանը որպէս «Պոլսոյ պատգամաւորութեան խորհրդակցական անդամ»:

⁸² Ակնարկութիւն Պօղոս Նուպարի գլխաւորած Հայ Ազգային Պատուիրակութեան:

⁸³ 28 Փետրուար 1919-ին պատահած Հալէպի ջարդին մասին կան մէկէ աւելի զիրար ամբողջացնող տեղեկատուութիւններ: Կասկածը՝ թէ իթթիհատականներն էին պատասխանատու այդ ջարդին, իր հիմնաւորումը կը գտնէր նոյն օրը Կիլիկիոյ զանազան շրջաններու մէջ եւս կատարուած նման փորձերով, զորս հայ կամաւորներ յաջողած էին վիժեցնել (*Համահաւաք* Ա. էջ 11 եւ Բ. էջ 888-889): Հալէպի ջարդը արդէն նիւթ դարձած էր Փարիզ գումարուող Հայ Ազգային Համագումարի 9 Մարտ 1919-ի 13-րդ նիստին,

գտնուող իթթիհատականները⁸⁴ կազմակերպած են այդ գործը: Իսելք չի հասնիր թե՛ անգղիական գրաման տակ գտնուած տեղւոյ մը մէջ ինչպէս ջարդ կրնայ պատահիլ⁸⁵: Ուրեմն այլեւս ամէն բան կարելի է, եւ Համաձայնականներուն⁸⁶ յաղթանակն ու ներկայութիւնն ալ զմեզ ջարդէ չպիտի կրնայ փրկել: Յուսահատական է այս: Այս տողերը կը գրէի երբ Սրբազանը ինծի թելեֆօնէ ըրաւ [= հեռաձայնեց] թե՛ Հալէպի մասին տեղեկութիւն ստացած է. ուստի պիտի սպասեմ որ այդ տեղեկութիւնները ստանամ եւ նամակս շարունակեմ:

*

Ինչպէս գիտէք, երկրին ապահովութեան խնդիրը զմեզ մտահոգող գլխաւոր հարցերէն մին է: Ձեր մեկնելէն ի վեր կացութեան մէջ փոփոխութիւն մը չեղաւ, ընդհակառակը կառավարութեան վարանումները եւ յանցաւորները⁸⁷ պատժելու մէջ տեսնուած չկամութիւնն ու խաղցուած

ուր, սակայն, հաղորդուած լուրին համաձայն 50 հայերն սպաննուած էին անգլիացիները կամ ֆրանսացիները պաշտպանելու վճնի մի առթիւ տեղւոյն քրիստոնէայ եւ արաբ բնակչութեան միջեւ տեղի ունեցած կռիւի մը: Համագումարի նախագահ Նորատունկեան աւելցուցած էր թե՛ Էմիր Փայսալ իրագէլ դառնալով եղելութեան, հրամայած էր վերջ տալ վճնին եւ խստիւ պատժել յանցաւորները դատարանի միջոցով (*Համահայկական*, էջ 385–386):

⁸⁴ Իթթիհատականները անդամ էին 1889-ին Պոլսոյ մէջ խումբ մը երիտասարդ թուրք բժիշկներու կողմէ հիմնուած եւ Ա. Աշխարհամարտի շրջանին հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան պատասխանատու Իթթիհատ Վէժերաքքի (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) կուսակցութեան:

⁸⁵ Օսմանեան կայսրութեան անդամահատման առնչուած եւ 1916-ին ստորագրուած Սայքս-Փիքօ անունով համաձայնագրին տրամադրութիւններուն համաձայն, Հալէպ մաս պիտի կազմէր ֆրանսական ազդեցութեան գօտիին, բայց քաղաքը գրաւած անգլիական ուժերը տակաւին չէին ամբողջացուցած անոր փոխանցումը ֆրանսացիներուն:

⁸⁶ Այս պարագային՝ Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսան, որովհետեւ Ռուսաստան պոլշէիկեան յեղափոխութենէն ետք այլեւս մաս չէր կազմէր Համաձայնական տէրութեանց, իսկ Իտալիա յաւակնութիւններ չունէր հայկական նահանգներու եւ Կիլիկիոյ նկատմամբ:

⁸⁷ Ակնարկութիւն հայերու վրայ գործադրուած ցեղասպանութեան մէջ բաժին ունեցած թուրքերու, որոնց յանցապարտութիւնն ստուգուած էր եւ թղթածրարը փոխանցուած յանցապարտները դատելու նպատակով ստեղծուած ատեաններուն:

կատակերգությունը տեսակ մը քաջակերական եղան իթթիհատական մութ ուժերուն՝ աւելի համարձակ գործելու, եւ մանաւանդ գաւառներուն մէջ կը զինուին ու կը կազմակերպուին շարունակ: Մեր առած ստոյգ տեղեկությունները վրդովիչ են: Բոլոր չարագործները վախնալով որ կրնան պատժուիլ,- եւ տեղ տեղ ալ հարցաքննությունները,- զիրենք վրդոված են, որով շատ որոշ կերպով կը պատրաստուին յարմար առթիւ մը մնացած հայերն ալ ջարդելու, որով մէկ հարուածով անհետացուցած կ'ըլլան գոյություն ունեցող քանի մը վկաներն ու ամբաստանողները: Այս է մտայնությունը ամեն տեղ՝ Կեսարիա, Եօզկաթ, Մեքաստիա, Խարբերդ, Մալաթիա եւայլն: Ես շատ յուսահատ եմ այդ տեսակետով եւ չափտի զարմանամ եթէ այդպիսի վարմունք մը պատահի:

Եւ արդարեւ ինչո՞ւ զարմանալ, երբ Համաձայնութեան ջախջախիչ յաղթություններէն վերջ, դեռ այս երանելի երկրին մէջ, ոճիրի այս բոյնին մէջ, ամենայետին ոստիկան մը իսկ պատժուած չէ, դեռ կը թողուի որ Իթթիհատի պարագլուխներն ու գործիչները գաւառներու մէջ ինքնագլուխ գործեն, երբ զարհուրելի կոտորածներէն հազիւ ազատած քանի մը հայերու բեկորները գործնական պաշտպանություն մը վայելած չունին եւ խօսքերով ժամանակ կ'անցնի: Երբ շատ մը *management*ներ [= զգուշություններ] կը տրուին թուրք ժողովուրդին զգացումները չվիրաւորելու համար, ինչո՞ւ զարմանալ որ շատ աւելի մեծ աղետներ պատահին⁸⁸: Շնորհք մը կրնանք նկատել որ նոյնիսկ Պոլսոյ մէջ ողջ առողջ կրնանք կոր ապրիլ: Կը յիշէք թէ որչափ դիմումներ ըրինք որպէսզի գաւառներու մէջ զինուորական միջամտություն մը ըլլայ: Նոյնիմաստ դիմումները շարունակեցինք ձեր մեկնելէն վերջն ալ, բայց ի գուր: Հազիւ հազ մօտակայ գաւառները եւ երկաթուղոյ երկայնքը սպաներ խրկուեցան, եւ ատոնցմէ ոմանք ալ տեղացի եւրոպացիներ, որոնցմէ մէկուն քիթին տակը, ասկէ 15 օրեր առաջ Եալօվայի մօտերը 4 հայեր սպաննուեցան: Ինչպէս միշտ յանցաւորները դեռ չեն գտնուած:

Ահաւասիկ կացությունը, այս առաւօտ իսկ երկու սերաստացիներ եկան քովս, դեռ նոր հասած Պօլիս, եւ կը կրկնեն նոյն բանը որ ամէն գաւառներէ կը խնդրուի՝ ապահովություն, ապահովություն: Կ'ըսեն թէ բոլոր ոճրագործները ազատ համարձակ կը պտտին եւ ազդեցութեան տէր են: Եթէ, կ'ըսեն, ատոնցմէ գոնէ 5-6 հատը բանտարկուին, նոյնիսկ առանց դատապարտուելու, քաղաքը կը հանդարտի եւ կեանքը կը վերստանայ իր սովորական ընթացքը: Մարդ կ'ընդվզի մտածելով որ այժմ Մեքաստիա

⁸⁸ Բնագրին մէջ՝ չպատահին:

հաւաքուած 8000 հայերը կրնան վտանգէ գերծ մնալ, եթէ 5–6 սրիկայ ոճրագործներ բանտարկուին, ու այդ իսկ կը զլացուի մեզի եւ գործադրող չկայ: Տնտեսական տեսակէտով ալ վտանգաւոր է այս կացութիւնը: Նոյն այդ սեբաստացի պարոնները կ'ըսեն թէ՝ եթէ հոն գտնուողներս ապահով ըլլանք, մենք օգնութեան իսկ պէտք չենք ունենար, որովհետեւ գործերը լաւ են եղեր եւ կ'ըսեն որ թէ՛ կ'ապրինք եւ թէ՛ մեր որբերը ու այրիները կրնանք ոչ միայն ապրեցնել, այլ դրամագլուխ ալ հայթայթել: Ահաւասիկ շատ բանաւոր առաջարկ մը, բայց ինչ օգուտ որ գործադրութիւնը մեր ձեռքը չէ: Մեղք այս պատուական ժողովուրդին, որուն ճակատագիրը գազաններու ձեռք մնացած եւ ստիպուած է շարունակ պաշտպանութիւն ու ողորմութիւն հայցել անտարբեր պաշտպաններէ:

Հալէպի դէպքի մասին, ինչպէս վերը ըսի, հիմա բաւական տեղեկութիւններ քաղեցի: Խնդիրը բաւական լուրջ է եւ աւելի ընդարձակ տեղեկագիր մը պատրաստել պիտի տամ, բայց հոս Ձեզի ըսեմ թէ՛ ջարդը կը պատահի Փետր. 28, Ուրբաթ օր մը, Հալէպի Ճումա Բազարի ըսուած տեղը⁸⁹ եւ 3 ժամ կը տեւէ, ուրկէ յետոյ քաղաքէն կէս ժամ հեռու գտնուող անգղիական զինուորական իշխանութիւնները կու գան ու քաղաքը կը հանդարտի: Մեր կորուստներն են մինչեւ հիմա գիտցուածները՝ 47 մեռած, 53 անյայտ, 111 ծանր վիրաւոր եւ 150 թերեւ վիրաւորներ: Քաղաքին մէջ 200ի մօտ ձերբակալութիւններ կ'ըլլան եւ 2 անգղ. եւ 1 ֆրանսացի, 2 հայ եւ 3 արապներէ բաղկացած հարցաքննիչ մարմին մը կը կազմուի: Նախագահը արապ է: Ձերբակալուածները ամէնքն ալ արապ ու աւելի քաղաքին երեւելիներն են: Նոյնիսկ ֆրանսական ներկայացուցիչ Mr Pichonի տան վրայ ալ կը յարձակին: Խնդիրը շատ բարդ ու քաղաքական հանգամանք ունենալ կը կարծեմ. գէթ Անգղ[իոյ] եւ Ֆր[անսայի] միջեւ դժուարութիւններ կան, եւ կ'երեւի թէ օրեր առաջ տեղական թերթերու ու այլ միջոցներով պատրաստուած խնդիր մըն է: Մենք պիտի հետեւինք խնդրոյն. մանրամասնութիւնները հետզհետէ ձեզի կը տեղեկացնեմ:

Պիտի խնդրենք որ հող ձայներնիդ հասած տեղերը ըսէք որ ճար մը խորհին այս ջարդերու ու հալածանքներու առջեւը առնելու համար: Մենք հոս շարունակ կ'ըսենք, բայց դեռ արդիւնք մը չենք ունեցած: Թերեւս դուք աւելի բարեբաղդ ըլլաք:

.....

Դուրեան սրբազանի աջը կը համբուրեմ, կը յուսամ լաւ է: Բարեւներ

⁸⁹ Ուրբաթ օրերը միայն գործող առքուվանառքի վայր:

Տօք. Բարսեղեանի⁹⁰ եւ բարեկամներու:

Յարգանք
Տօք. Դաւիթեան

⁹⁰ Դոկտ. Արմենակ Բարսեղեան (1883–1949), շրջանաւարտ՝ Գէորգեան Ճեմարանէն, 1911-ին Պերլինէն Պոլիս վերադարձած էր իմաստասիրութեան դոկտորի վկայականով՝ մտնելու ուսուցչական ասպարէզ: Պաշտօնավարած ըլլալով ամերիկեան վարժարանին մէջ, դեսպան Մորկընթաուի միջամտութեամբ ազատած էր Այաշի արքայական վարչարանէն եւ յետ-գինադադարի շրջանին գլխաւորած էր Ազգային Երեսփոխանական Ժողովի դաշնակցական թելը: 1925-ին ԱՄՆ գաղթելէ ետք հեղինակած է հայերէն լեզուի դասագիրքեր եւ խմբագրած *Արփի* ամսաթերթը (*Պատմութիւն*, էջ 1727–29): Հեղինակն է *Ցեղակրօն Շարժումը* գրքոյկին (հրատ.՝ Հ.Յ.Դ. Ցեղակրօն Ուխտերու Կեդր. Վարչութեան, Պոստոն, 1935):

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 28 Մարտ 1919

Յարգելի բարեկամ,

Ձեր Փետրվար 26 թուական նամակը ստացած ըլլալս կարծեմ գրած եմ. յետոյ ստացայ Մարտ 3ի նամակնիդ, իսկ Յունվար 25ի նամակնիդ աւելի վերջը ստացայ: Նոյնպէս ստացած եմ Դուրեան Սրբազանի 28 Յունվարի նամակը, եւ Ձեր գրածին համաձայն *Ազատամարտի* վարչութեան 3000 ֆրանքը վճարուեցաւ: Եթէ առիթ ունիք հոդ կրնաք դրամ առնել ու վրանիս չէք խրկել: Այդ մասին կը յուսամ որ յառաջիկային Ձեզմէ աւելի տեղեկութիւն կը ստանամ եւ դրամի պէտքերնիդ կը յայտնէք: ...

Զմոռնամ ըսելու թէ Դուրեան Սրբազանի 28 Յնվր. նամակին մէջ դուք գրած էիք թէ ֆր[անսական] դեսպանատան նամակ յանձնած էք. տակաւին չենք ստացած:

Անցեալ օր Մարլը Պօղոս Պէյին հետ ալ երկայն նամակ մը որկեցի Ձեզի. ինքը իբր պատուիրակ կու գայ հոդ եւ որուն մասին երկարօրէն գրած եմ: Ապրիլի առաջին օրերը հոդ պիտի կրնայ հասնիլ, կը յուսամ թէ կը ստանաք:

Հոս կ'ացութեան մէջ փոփոխութիւն մը չկայ: Ամբողջ երկիրը սպասողական դիրքի մը մէջ է եւ օրէ օր Բարիզէն լուրի կը սպասուի: Պօղոս Պէյի հետ որկած նամակիս մէջ Հալէպի մէջ տեղի ունեցած հայոց ջարդի մասին գրած էի: Այդ մասին նոր տեղեկութիւն չստացանք դեռ, բայց ունեցածնիս ալ արդէն բաւական է եւ լիուրի կը ցցնէ թէ վտանգը դեռ հեռացած չէ մեր վրայէն: Գաւառներէն ստացած տեղեկագիրներնիս սարսափելի են. ամէն տեղ անապահովութիւն եւ ծայրայեղ թշուառութիւն: Շատ տեղեր ժողովուրդը (թուրք) կը զինուի եւ գիւղէ գիւղ երթալ անկարելի է: Մօտակայ գիւղերու մէջ, օրինակի համար Օվանքի ծովեզորը, անցեալ օր չորս հայեր սպաննած էին եւ ոճրագործները դեռ գտնուած չեն: Աւելի հեռուներէն ալ այդ կարգի սպանութեան լուրեր կը ստանաք: Իսկ անօթութիւնն ու թշուառութիւնը համատարած [են]: Ամէն տեղէ հարստահարութեան ու անօթութեան միեւնոյն աղաղակն է որ կը բարձրանայ: Դեռ երէկ Ակնէն նամակ կար թէ շատ մը այրիներ ու որբեր պարտէզներէն լորտու ու խոտ հաւաքելով կը սնանին:

Անապահովութիւնը այնքան սաստկացած է որ ներքին գաւառներուն մէջ որեւէ կազմակերպութիւն ընելու չենք յաջողիր: Մեծ դժուարութիւն-

ներով Սամսոն պիտի կրնանք առաջնորդ մը խրկել: Միայն մօտակայ գաւառները եւ Գոնիա կրցանք առաջնորդ դրկել: Աւելի հեռուները, ուր աւելի հարկաւոր է, կարելի չեղաւ դեռ: Ամերիկեան Նպաստամատոյց մարմինն ալ նոյն դժուարութիւններուն կը բաղխի. խոստացուած զինուորական ուժերը անոնց ալ դեռ տրամադրուած չեն. անոնք ալ Գոնիայէն առաջանալու կը վարանին: Սամսոն, Պրոուսա, Ատաբագար, Գոնիա եւ Կովկաս մեկնած են, իսկ Կեսարիա, Եօզկաթ, Մեքաստիա, Մալաթիա, Խարբերդ եւայլն եւայլն ուր այնքան անհրաժեշտ է իրենց ներկայութիւնը, դեռ չեն գացած:

Ապահովութեան խնդիրը զմեզ շատ վրդոված է: Ծանր վտանգներէ կը վախնանք: Գաւառի հայութեան դժբաղդ մնացորդները այս պահուս բոլորովին անպաշտպան մնացած են, եւ Իթթիհատի ոճրագործները, իրենց արարքներուն վերջին վկաներն ալ մէջտեղէն վերցնելու միտումներ ունենալ կ'երեւին. շարունակ այդ ուղղութեամբ ձեռնարկներ ու խլրտումներ կը նշմարենք: Կառավարութիւնը այժմ ամբողջովին իթիլաֆական [է] եւ թերեւս փափաքներ մը ունի երկիրը հանդարտեցնելու, բայց դժբաղդաբար զօրաւոր չէ եւ զուրկ [է] որեւէ լուրջ կազմակերպութենէ: Մանաւանդ գաւառները, կառավարական ամբողջ կազմը նոյնն է՝ իթթիհատական, որով տրուած հրամանները գործադրուած չունին. իսկ Համաձայնականներու մօտ մեր կատարած շարունակական դիմումները գործնական արդիւնք մը չտուին դեռ: Ինչպէս գիտէք, իրենց հետեւած ուղղութիւնը սա է՝ լսել ու հաւաքել եղած բոլոր տեղեկութիւններն ու զանգատները եւ կառավարութեան մատնանշելով ճնշում բանեցնել: Այս կերպով ես չեմ կարծեր թէ որեւէ արդիւնք կրնայ ստացուիլ: Մեր ամենուս փափաքն էր զինուորական առժամեայ գրաւումը. այդ միայն կրնայ զմեզ փրկել, բայց դժբաղդաբար այդ ալ բնաւ ընելիք չունին:

Ապահովութեան այս կարելոր հարցի մասին հոս ամենուս ալ փափաքը այն է որ Բարիզի մէջ Հայ Պատուիրակութիւնը ձեռք առնէ խնդիրը եւ լսելի ընել տայ մեր զանգատները: Այս տեղի դիմումները բոլորովին անօգուտ են. թերեւս հող աւելի բարձր շրջանակներու մէջ համոզուին խնդրոյն ստիպողականութեանը վրայ ու ճար մը խորհին եւ որոշ հրահանգներ տան իրենց ներկայացուցիչներուն. ապա թէ ոչ, կը վախնանք որ նոր աղէտներու կ'ենթարկուինք եւ այս անգամ բոլորովին անդարմանելի է: Ուստի պիտի խնդրեմ որ ապահովութեան այս խնդրոյն ստիպողականութիւն տալով միջոց մը խորհիք հող:

*

Հոս Չէրքէսներէն մեզի դիմում մը եղաւ (Ռուսիոյ ապագաներէն) եւ

խնդրուեցաւ որ միասին համաձայնութեան մը յանգինք շահերու փոխադարձ հասկացողութեան մը համաձայն⁹¹: Դեռ երկար բանակցութիւններ կատարած չենք, որոշ ալ յայտնի չէ թէ մեզի դիմողները ազդեցութիւն մը ունին թուրքաբնակ չերքէսներու վրայ: Մեր բանակցութեանց արդիւնքը կը հաղորդեն:

Մեզի ներշնչուեցաւ նաեւ որ քիւրտերու հետ բանակցելով համաձայնութիւն մը կնքենք. տեսակ մը գործակցութիւն երկրին մէջ. բայց հոս հեղինակաւոր ներկայացուցիչ մը չունին, իսկ գաւառ ալ մեր կողմանէ մարդ խրկելու ամ ալժմ հնարաւորութիւն չկայ: Պիտի ջանանք հոս փորձ մը ընել: Այս օրերս լսեցինք որ քիւրտերը հող իրենց ներկայացուցիչ ըրած են Շերիֆ Փաշան⁹². եթէ ստոյգ է, թերեւս հող դիւրութիւն ունենաք մօտենալու ու հասկացողութեան մը գալու⁹³: Այս տողերը գրել ուզեցի որովհե-

⁹¹ Չերքէզներու եւ արքիազներու հետ սերտ առնչութիւն ունեցող ապագաները հիւսիսարեւմտեան Կովկասի իրենց բնակավայրէն հեռանալով տարածուած էին Թուրքիոյ զանազան շրջաններ եւ այլուր: Դիւանաթուղթերուն մէջ չենք հանդիպած ապագաներու հետ բանակցային նիւթերու, բայց կան վկայութիւններ անոնց Միլի-ազգայնական շարժման դէմ տրամադրութիւններուն եւ կեղեքուող հայերու օգնութեան հասնելու մասին (*Post-WWI*, էջ 257, 379):

⁹² Մեհմետ Շերիֆ փաշա (1866–1951), գլխաւոր դեկավարներէն քիւրտ ազգայնական շարժման, թունդ հակաիթթիհատական մը ըլլալով՝ հարկադրուած էր փախուստ տալ Փարիզ եւ հոնկէ շարունակել իր պայքարը, որ զինք մերձեցուցած էր Պօղոս Նուպարի:

⁹³ Հայեւքրտական բանակցութիւններն ընդմէջ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան եւ Շերիֆ Փաշայի պիտի աւարտէին Պօղոս Նուպարի, Համազասպ Օհանջանեանի եւ Շերիֆի համատեղ ստորագրութիւնը կրող համաձայնագրով մը (*Համահաւաք* Բ., էջ 942–943), որ իր ատենին թեր ու դէմ վէճեր պիտի առաջացներ եւ Պօղոս Նուպար 1920-ի Յունիսին Ազգային Համագումարի նիստերէն մէկուն ընթացքին պիտի տար հետեւեալ ծանօթութիւնները. «Չանագան առիթներով, Դաշնակից եւ Գործակից Պատուիրակութիւնները, իրենց հետ ունեցած քննարկումներուս ընթացքին, ուշադրութիւնս հրաւիրած էին առաւելութիւններուն վրայ, զորս կրնային ըլլալ Հայկական Դատին համար՝ վերացնելով քրտական թշնամանքը եւ հաստատելով թէ հողերուն վրայ, որոնք կը պահանջուին Հայկական Պետութիւնը կազմելու համար, անդարմանելի թշնամանք չկար քիւրտերուն կողմէ՝ անոնք պարզապէս թուրքին գործիք եղած ըլլալով:

Չանագան կողմերէ երաշխիք ստացած էի թէ հայեւքրտական հասկացողութիւն մը պիտի յառաջացներ լաւագոյն տպաւորութիւն մը Խաղաղութեան

տեւ իթթիհատականները քրտական շարժում մը յառաջ բերելու վրայ են ներսերը: Մանաւանդ Տիարպէքիի կողմերը քիւպներ [= ակումբներ] կազմեր եւ բրօքականտ [= քարոզչութիւն] մը ընելու վրայ են, անշուշտ մեր դատը վիժեցնելու նպատակաւ: Գլխաւոր թելադրիչն է հոս Սիւլէյման

Վեհաժողովին մէջ: Այդ պատճառով, երբ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատ-
րիարքութիւնը մեզի իմացուց թէ արդէն բանակցութիւններու մէջ է քաղաքին
քիւրտ ներկայացուցիչներուն հետ, եւ խորհուրդ տուաւ որ մեր կողմէ անոնց
[բանակցութիւններու- Վ.Դ.] սկսինք Խաղաղութեան Վեհաժողովին մօտ
Քիւրտերու Պատուիրակ Ծերիֆ փաշայի հետ, մենք չվարանեցանք, Հանրա-
պետութեան Պատուիրակութեան մեր գործակիցներուն կատարեալ համա-
ձայնութեամբ, կապ հաստատել անոր հետ: Առաւել եւս, քանի որ գիտէինք
թէ Ծերիֆ փաշա ինք ալ մերինին նման խորհուրդ ստացած էր Դաշնակից
Պատուիրակութիւններէն: Հետեւաբար նախաձեռնուեցան բանակցութիւն-
ներ, որոնք յանգեցան համաձայնութեան մը, ստորագրուած մեր երկու
Պատուիրակութիւններուն կողմէ, այսօր քննադատուած, թէւ իր ատենին
ընդունուած էր մեծ գոհունակութեամբ բոլոր Դաշնակից Պատուիրակու-
թիւններուն եւ մեր հայրենակիցներու մեծամասնութեան կողմէ:

Ծերիֆ փաշան, զայն հաղորդելէ ետք Քրտական Ազգային Ակումբին,
պաշտօնական նամակով մը մեզի իմացուց թէ այս համաձայնութիւնը
մեծապէս գնահատուած եւ վաւերացուած էր Քրտական Ազգին կողմէ:

Պետք է նաեւ դիտել տամ թէ այս Համաձայնութիւնը չէր պարունակեր մեր
շահերը վտանգող որեւէ տրամադրութիւն: Ան պարզապէս կը յայտարարէր
թէ Հայերն ու քիւրտերը համաձայն էին հետապնդելու համանման նպատակ
մը,- այսինքն՝ իրենց ազատագրութիւնը օսմանեան լուծէն,- եւ թէ պայմա-
նադիր կողմերը ամբողջովին Խաղաղութեան Վեհաժողովին կը ձգէին
սահմաններու որոշումը, զոր մենք արդէն պահանջած էինք Խաղաղութեան
Վեհաժողովին ուղղուած մեր 12 Փետրուար 1919-ի Յիշատակագրով:

Պատուիրակութիւնը չի տեսներ թէ այս համաձայնութիւնը ինչպէս վնասա-
կար է Հայաստանի համար, ինչպէս վնասած է հայկական շահերուն եւ
նպաստած է քրտականներուն: Ընդհակառակը, ինծի կը թուի թէ Ծերիֆ
փաշայի դիմափոխութիւնն ինքնին,- որ հետագային կերպով մը պաշտօ-
նապէս դատապարտեց զայն,- լաւապէս կը փաստէ թէ իր դիւանագիտու-
թեան յաղթանակը չնկատեց զայն: Բաց աստի, սխալ է ըսել թէ այս
համաձայնութիւնն էր որ ծնունդ տուաւ անկախութեան գաղափարին քիւր-
տերու մտքին մէջ, որ երբեք միտքերնէն չէր անցած մինչ այդ: Անոնք
պահանջած էին զայն անկէ շատ առաջ, եւ պետք է զարմանալ թէ հայերն
ինչպէս կրնային անոնց արգիլել զայն պահանջելը կամ ստանալը» (*Համա-
խաւար* Բ., էջ 992-993):

Նագիֆ կոչումը խմբագիրը⁹⁴, բնիկ տիարալեքիրցի եւ երբեմն Պաղտատի ու Տրապիզոնի կուսակալ, ջերմ կուսակից մը համաթրքութեան⁹⁵:

*

Հոս Պոլսոյ մէջ մեր բռնելիք քաղաքական ուղղութեան մասին երբեմն վարանումներ կ'ունենանք. այսինքն՝ Համաձայնականներուն հետ ո՞ր աստիճանի յարաբերութիւն մշակելու ենք, եւ կամ որի՞ն հետ աւելի մօտեցնալ հարկ է: Այս մասին ընդհանրապէս Բարիզէն գալիք Ձեր հրահանգներուն ու *directif*ներուն [= ուղղութիւններուն] անհամբեր կը սպասենք: Անշուշտ հոդ դուք աւելի մօտէն տեղեակ կրնաք ըլլալ կացութեան, քանի որ բոլոր քաղաքական հարցերը հոդ են որ պիտի լուծուին: Համաձայնականներուն քանի մը հատ ըլլալը անշուշտ աւելի կը դժուարացնէ գործը: Այսպէս՝ ֆրանսացիները ասկէ 1½ ամիս առաջ որոշ կերպով բարեացակամ էին մեզի հանդէպ, զմեզ իբր *protégé spécial* [= յատուկ պաշտպանեալ] կը նկատէին եւ ըստ այնմ ալ պատրիարքարանէն տրուած ինքնութեան վկայագիրները բաւական նկատելով, հայերուն անցագիր կը տրուէր: 15 օրերէ ի վեր կացութիւնը փոխուած է. այդ վկայագիրները այլեւս չեն ընդունիր եւ իբր օսմանցի թուրք կառավարութեան կը դրկեն անցագիր առնելու համար, թէ [ալ] Ֆրանսա մեկնելու համար բացառիկ դժուարութիւններ կ'ընեն հայերու: Կացութեան այս փոփոխութեան բացատրութիւնը թերեւս հոդ կրնաք տալ, քանի որ հոս մեր կողմանէ որեւէ պատճառ տրուած չէ բնաւ: Իսկ անգլիացիներու հետ մեր յարաբերութիւնները ձեր

⁹⁴ Դաւիթեան կը ներկայացնէ բանաստեղծ, հրապարակագիր եւ շրջան մը կառավարական դիրքերու վրայ գտնուած թունդ իթթիհատական եւ ազգայնական Սիւլէյման Նագիֆի (1870–1927) գործունէութեան այն երեսը, որ ըստ էութեան կը սպառնար Հայկական Դատին եւ հայոց անվտանգութեան, թէեւ ան այլապէս յիշատակուած է որպէս հայ տարագիրներու պաշտպան եւ քննադատ: https://en.wikipedia.org/wiki/S%C3%BCleyman_Nazif կայքէջին վրայ, օրինակ (18 Յուլիս 2023-ի դրութեամբ), նշուած է Տիարալեքիրի կառավարիչին հայոց դէմ կիրարկած քաղաքականութեան դէմ Նագիֆի քննադատութեան մասին:

⁹⁵ Թուրք ազգայնական շրջանակներու մէջ տասնիններորդ դարու վերջերուն ձեւաւորուած Համաթրքութեան աշխարհակալական գաղափարը կը միտէր Օսմանեան Թուրքիոյ (աւելի ուշ՝ պարզապէս Թուրքիոյ) առաջնորդութեամբ կազմել թրքախօս կամ թրքալեզու ցեղերն ու ժողովուրդները համախմբող ընդարձակ պետութիւն մը: Գաղափարին իրագործումը կ'ենթադրէր ոչ-թրքախօսներու բռնի կրօնափոխում, ձուլում, տարագրութիւն եւ կոտորած որպէս նպատակին հասնելու միջոց:

գիտցածին պէս են միշտ, շարունակ շփման մէջ ենք շատ մը խնդիրներու համար եւ աւելի կամ նուազ գոհացում կը ստանանք⁹⁶։ Իտալացիներու հետ մեր յարաբերութիւնը բոլորովին պաշտօնական [է]։ Սրբազան Պատրիարքը այցելութեան գացած էր, իրենք ալ փոխադարձեցին։ Ամերիկացիներու եւ յոյներու հետ ալ յաճախ շփման մէջ կը գտնուինք։ Ամէն պարագայի մէջ այս խնդրոյն մասին եթէ հոս հրահանգներ մը կրնաք տալ, շատ գոհ կը մնանք եւ աւելի բանաւոր ու օգտակար ուղղութեան մը կը հետեւինք։

*

Գալով մեր ազգային ներքին խնդիրներուն, Ձեզի գրած եմ թէ հիմա Համագգային վարչութիւն մը ունինք որ գէշ չ'երթար կոր։ Անցեալ օր ալ երեսփոխանական ժողով գումարուեցաւ վարչութիւնը ընտրելու համար եւ Սրբազանին առաջարկին համաձայն միայն վարչութեան ատենապետը ընտրուեցաւ որ պիտի կազմէ իր քապինէն [= դահլիճը]։ Դարձեալ ինծի յանձնեցին այդ պաշտօնը եւ արդէն ընկերներս ալ որոշած [եմ] ու գործի սկսած ենք⁹⁷։

Այս օրերս մեր աշխատութեան գլխաւոր առարկան է դրամ հաւաքելու գործը, որովհետեւ գաւառներէն շարունակական պահանջք կայ դրամի։

⁹⁶ 1919-ի Փետրուարին Պոլսոյ Բրիտանական Բարձր Յանձնակատարը նախաձեռնարկ եղած էր հիմնադրութեանը Հայեւրոնական Բաժնի մը՝ հայ եւ յոյն ներկայացուցիչներու մասնակցութեամբ քննելու երկու ազգերը շահագրգռող եւ մտահոգող հարցերը՝ թուրք յանցագործներու ինքնութեան որոշում եւ պատժում, նպաստաբաշխ աշխատանք, տարագիրներու վերադարձ, բռնի իսլամացած կամ թուրքերու եւ քիւրտերու մօտ վար դրուած քրիստոնեաներու վերադարձ իրենց կրօնքին եւ ազատագրում, վնասուց հատուցում, եւայլն։ Բաժնին առաջին պաշտօնական նիստը տեղի կ'ունենար 5 Մարտ 1919-ին հայոց կողմէ Բաղաքական Ժողովի ատենապետ բժիշկ Դաւիթեանի եւ խնամատարական, յա՛տկապէս որբախնամ գործին լծուած քիմիագէտ Փրոֆ. Առաքել Չաքրեանի մասնակցութեամբ (Yeghiayan, Vartkes, Compiler. *British Reports on Ethnic Cleansing in Anatolia, 1919–1922: The Armenian-Greek Section*. Glendale, CA, 2007)։

⁹⁷ Դաւիթեան իբրեւ գործակից ընտրած էր Հմայեակ Խոսրովեանը, Տիրան Կիւմիւշկերտանը, Հայկ Խօճաաբեանը, Սարգիս Սրենցը, Եղուարդ Գարակէօզեանը, Տիգրան Չայեանը, Արամ Ֆնտրգլեանն ու Յովհաննէս Ամատունին («Վարչական Ժողովներու Կազմը», *Ժամանակ*, Պոլիս, 8/21 Մարտ 1919, Թիւ 3475)։

Իպրանոսեան Մարութ⁹⁸ էֆէնտին որ այս վերջերս դարձեալ իր քրիստոն-

⁹⁸ Ա. Աշխարհամարտի ընթացքին Կեսարիա բանտարկուած Մարութ, կարգ մը այլ հայերու նման, իր կեանքն ու հսկայ հարստութիւնը փրկելու համար դարձած էր դաւանափոխ: Չինադադարէն ետք վերադարձած էր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծոցը եւ ստանձնած էր գանձապահութիւնը Ազգային Վարչութեան Ելեւմտական Դիւանին, կատարած ու խոստացած էր կատարել նուիրատուութիւններ, բայց վերահաս մահը 1920-ին անկատար ձգած էր իր ծրագիրները: Ամասիա ծնած Մարութ որ հազիւ 55 տարեկան հասակին գոհ գացած էր Սերպիոյ մէջ շոգեկառքի արկածի, 1893-ին Պոլիս գաղթելէ ետք իր ձեռներէցութեան շնորհիւ տիրացած էր մեծ հարստութեան եւ հաստատած՝ բազմաճիւղ վաճառատուն մը: Ան «ծրագիր մը կը մշակէր ... շոգենաւային ընկերութիւն մը հաստատելու Հայաստանի համար եւ ուրիշ մէկ քանի ձեռնարկներու մասին...: Ինք մեծ բաղձանք մը ունէր որ հայութիւնը իր երկին մէջ զարգանայ եւ բարգաւաճի...»: Մինչեւ տարագրութիւն ան Ամասիոյ մէջ իր նիւթական միջոցներովը պահած էր առեւտրական վարժարան մը («Պ. Մարութ Իբրանոսեան Յաւայի Արկածի Մը Չոհ», *Արեւ* լրագիր, Գահիրէ, 6 Հոկտեմբեր 1920, թիւ 64):

Թէեւ իսլամանալով Մարութ կրցած էր պահպանել իր հարստութիւնն ու նահանգներու մէջ բանող քառասունէ աւելի խանութներ, ինչպէս նաեւ շարունակել իր առեւտրական գործարքները, ներառեալ՝ Իբրանոս Նաւային Ընկերութեան նաւերուն շահագործումը պատերազմի ընթացքին, ապա իր մահով թրքական կառավարութիւնը անոր հաւատաւորի դարձած ըլլալը հիմ բռնելով մերժած է հանգուցեալին հարստութեան փոխանցումը հաւատաւորի չդարձած ժառանգորդներուն եւ ազգականներուն: Պետութիւնը գրաւած է նաւերը եւ հարուածած՝ Իբրանոսեաններու առեւտրական ցանցը (Օյա Կեօզէ Տուրմազի հետ Վարդան Էսդուզեանի հարցազրոյցը, *Այոս*, Պոլիս, 12 Փետրուար 2016):

Յաւելուածաբար նշենք թէ Մարութ եղած է արտօնատէրը 1908-ին Պոլիս հրատարակուած *Առեւտուր* երեքլեզուեան պատկերազարդ լրագրին (անկախ պաշտօնաթերթ վաճառականութեան եւ ճարտարարուեստի): Խատիսեանի Պոլիս այցելութեան շրջանին ընդունած է նախագահութիւնը Հայաստանի Անկախութեան Փոխառութեան Յանձնախումբին եւ յայտարարած. «Ես բոլոր ձեռքէս եկածը պիտի ընեմ յաջողութեամբ պսակելու համար հայ կառավարութեան այս անդրանիկ փոխառութիւնը: Ու այս առթիւ ինչ դիմում որ հարկ ըլլայ պիտի ընեմ, ի հարկին պիտի խնդրեմ, պիտի աղաչեմ մինչեւ որ յաջողցնեմ» («Պ. Խատիսեանի Չեկոյցը Առեւտրական Դասուն...», *Ճակատամարտ*, Պոլիս, 3 Յուլիս 1920, 492/2313, «Պ. Խատիսեան Կը Պատասխանէ Հարցումներու Հայ Առեւտրականներու Ժողովին», *Հայրենիք* օրա-

եայ անունը վերստացած է, միանալով քանի մը պատուաւոր անձանց հետ ազգային ելեւմտական մարմին մը կազմեցին եւ Հայրենիքի Տուրք⁹⁹ անունով դրամ պիտի սկսին հաւաքել: Չեմ գիտեր թէ արդիւնքը ինչ պիտի ըլլայ, բայց կ'աշխատիմ որ գոհացուցիչ ըլլայ: Բայց Պոլսոյ եւ Չմիւռնիոյ մէջ հաւաքուած դրամներով կարելի չէ որ կարողանանք գաւառի անսահման պէտքերուն գոհացում տալ. որբերու թիւը հետզհետէ շատնալու վրայ է, քիչ օրէն գարնան մեղմ օդերուն հետ զաղթականներու հոսանքն ալ պիտի սկսի: Չեմ գիտեր թէ ինչպէս պիտի կարենանք հոգալ բոլոր այս պէտքերը: Աւելի մեծ ձեռնարկներու պէտք կայ՝ խոշոր փոխառութիւն եւ կամ վնասուց հատուցման կարելու գումարներ, որպէսզի հնարաւոր ըլլայ խնամել որբերը, տեղաւորել տարագիրները եւ սկսիլ վերաշինութեան մեծ գործին: Բայց բոլոր ասոնց հիմը անկախ Հայաստանի ճանաչումը¹⁰⁰ եւ զինուորական գրաւումն է. եւ մինչ այդ մենք պիտի ջանանք մերայիները փրկել ջարդի ու սովի վտանգներէն:

Գործելու անհրաժեշտ դիւրութեան համար Սրբազան Պատրիարքը Բերա փոխադրեցինք, Պրուսա Փողոց թիւ 21 տունը: Կը յիշէք անշուշտ. մերիներուն նստած տունն է՝ Աղաւնի հանրմինը: Վարչական դիւանն ալ միասին փոխադրած է, իսկ փոխանորդարանը կը մնայ Գում-Գարու:

Այս նամակը յոյն Commissariatի [= Յանձնակատարութեան] միջոցաւ կը դրկեմ: Ներփակ պիտի գտնաք Արտաշէս Էֆէնտիի մէկ նամակը.

թերթ, Պոսթոն, 4 Օգոստոս 1920, 2513):

⁹⁹ Հայրենիքի Տուրք հաստատելու այս նախափորձը պէտք չէ շփոթել 1919-ի Սեպտեմբերին հիմնաւորուած եւ պաշտօնականացած Հայրենիքի Տուրքին հետ (*Հանահաւար* Ա., էջ xxiv–xxv):

¹⁰⁰ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը իր 9 Ապրիլ 1919-ի Ա. նիստի ընթացքին հայկական պետութեան ճանաչման տեսակէտով առաջին քայլ մը կը նկատէր Ամերիկեան Նպաստամատոյցին հետ իր կնքած պայմանագիրը, որուն համաձայն ամէն ամիս 5000 թոն ցորենի Հայաստան առաքումը նկատուած էր ամերիկեան կառավարութեան կողմէ փոխառութիւն մը՝ կատարուած հայկական կառավարութեան, հետագային հատուցուելու պայմանով: Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական ճանաչումը, սակայն, Ազգերու Լիկայի Գերագոյն Խորհուրդին կողմէ, պիտի կատարուէր 1920-ի առաջին ամիսը, 27 Յունուար թուակիր զեկոյցով մը, ուր կը նշուէր թէ Հայկական Պետութեան կառավարութիւնը «գոյապէս» ճանչցուած է եւ թէ ճանաչումը «չի կանխորոշեր» պետութեան ապագայ սահմաններու խնդիրը: Սահմաններու խնդրին որոշումը պիտի կատարուէր աւելի ուշ, անգործադրելի մնացած Սելի Դաշնագրին կնքումով 10 Օգոստոս 1920-ին:

նոյնպէս՝ Ռոստոֆէն Չալխուշեան անուն յայտնի փաստաբանի մը հեղինակած «Livre rouge» անուն մէկ գործին ֆրանսերէն եւ անգղիերէն օրինակները որ Բարիզ կը դրկենք նոյն միջոցաւ, հոդ հրատարակուելու համար¹⁰¹: Օգտակար տեղեկութիւններ կը պարունակէ գործը: Տպագրութեան ծախքը յանձնուած է Պր. Ռաֆաէլ Քայալօֆի, որ անձամբ Բարիզ բերելու պաշտօն ունէր, բայց ճամբորդութեան դժուարութեանց պատճառով խորհեցանք հեղինակութիւնը խրկել, իսկ իր մեկնելուն համար ալ պիտի աշխատինք:

.....

Ձերդ յարգանք
Տօք. Գ. Դաւիթեան

¹⁰¹ Իրաւաբան Չալխուշեանի (1861–1931) աշխատութեան անգլերէնով հրատարակուած օրինակի մը չենք հանդիպած: Ֆրանսերէնով «Կարմիր Գիրքը» խորագրեալ հատորը լոյս տեսած է որպէս «Վերածնունդ»ի հրատարակութիւն (Tchalkhouchian, Gr., Le Livre Rouge. Imprimerie Veradzenount, Paris, 1919): Հեղինակը 112 էջերու մէջ ներկայացուցած է Առաջին Աշխարհամարտի նախօրեակին հայերթրքական բանակցութիւնները, կովկասեան զանազան ցեղերու կողմէ հայերու նկատմամբ բարեկամական զգացումներու բացակայութիւնը, հայոց ռուսամէտ կեցուածքը, հայ կամաւորներու մասնակցութիւնը Ա. Պատերազմին, թուրքերու կողմէ գործադրուած ջարդերը Գերմանիոյ ներողամիտ հայեացքին ներքեւ, հայ գաղթականներն ու որբերը, հայոց բողոքը ընդդէմ Պրեսթ-Լիթովսքի դաշնագրին, Պաքուի մէջ մոսսաւաթականներու ընթացքն ու հայկական կոտորածը, եւայլն: Հեղինակը կ'եզրակացնէ թէ հայերն իրենց տառապանքով ձեռք բերած են ինքնորոշման իրաւունք եւ կը սպասեն Մեծ Տէրութիւններու արձակելիք վճռին:

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 11 Ապրիլ 1919

Յարգելի բարեկամ

Այսօր ստացայ Sop. Սայեանի¹⁰² միջոցով Ձեր Մարտ 31 նամակը, ինչպէս նաեւ երկու օրինակ memorandum. իսկ ես կը հաստատեմ Դուրեան Սրբազանի գրած նամակս մէջի documentներովը [= փաստաթուղթերովը] որ արդէն ստացած էք. իսկ Ձեզի գրած երեք նամակներս՝ Աբիկեանի, Պօղոս Մարլըի եւ յունաց միջոցով:

Նախորդ նամակներովս կացութեան վրայ բաւական տեղեկութիւններ տուած եմ: Վերջերս զգալի փոփոխութիւններ մը չկան. միայն այն պարագաները թէ՛ թուրքերը շատ աւելի յուսալից են այս վերջերս. թերեւս նպաստաւոր տեղեկութիւններ առած ըլլան:

Ապահովութեան մասին նախորդ նամակներովս գրած եմ ընդարձակօրէն: Ներքին գաւառներէն մեր ստացած տեղեկութիւնները գոհացուցիչ չեն: Թուրքերուն կողմանէ պատրաստութիւններ կան, ժողովուրդին զէնք կը բաժնուի, սպառնալիքներ կան շարունակ. իսկ մասնակի սպանութիւններ խիստ յաճախադէպ են: Այսպէս՝ անցեալ օրեր Օվանքքի ծովափին մօտ երեք հայեր սպաննուած էին, նոյնպէս՝ գիւղերուն մէջ. այնպէս որ խեղճ գիւղացիները դաշտի աշխատութեան համար կը զգուշանան շատ հեռուները երթալու: Կերպով մը մնայուն սարսափի մէջ պահել կ'ուզեն հայերը, որպէսզի չհամարձակին իրենց ապրանքները ետ ուզելու, վերստին հաստատուելու եւ ով գիտէ դեռ ինչ յետին միտքերու համար: Այս մասին միշտ դիմումներ կ'ըլլան եւ միշտ կը խնդրենք որ սպաներ եւ զինուորներ խրկուին ներսերը, բայց դժբաղդաբար դեռ գոհացուցիչ արդիւնք մը ձեռք բերած չենք: Համաձայնականները բաւականաչափ ուժ չունին այս կողմերը ամբողջ Անատոլուն գրաւելու համար, մասամբ մը փափաք ալ չունին. կը սպասեն անշուշտ քաղաքական հարցերու լուծման, միայն թէ մինչ այդ կրնա[ն] նոր փորձանքներ գալ մեր գլխուն, եւ ճիշդ այդ վախերը ունեցանք անցեալ շաբթու եւ բաւական պահանջկոտ թագրիք [= զեկուցագիր] մը տուինք Բ. Դրան եւ նօթ [= ծանօթագիր] մ'ալ Համաձայնական

¹⁰² 1921-ին մահացած բժիշկ Գրիգոր Սայեան եղած է Երլտրդի մահափորձի կազմակերպիչներէն: Փարիզի Հայ Ազգային Համագումարին մասնակցած է որպէս պուլկարահայութեան պատուիրակ:

ներկայացուցիչներուն: Այս վերջինին պատճենը կը ներփակեմ¹⁰³ որպէսզի գաղափար մը ունենաք: Բոլորին ալ խրկեցինք, նոյնիսկ՝ Պապական Նուիրակին:

Օսմ. կառավարութիւնը թերեւս քիչ շատ բարի կամեցողութիւն ալ ունենայ, բայց այս պահուս կ'երեւի թէ բաւականին չափ ուժ չունի եւ միշտ իրթիհատական կազմակերպութեան ազդեցութիւնն է որ կը տիրապետէ ամէն տեղ, եւ մանաւանդ հեռաւոր գաւառները. եւ որովհետեւ կառավարութիւնը չի կրնար կոր արժանաւոր պատիժները տալ չարագործներուն, անոնք ալ անսանձ կը գործեն: Չարագործներու դատավարութիւնը որ ամիսներէ ի վեր կը շարունակուի, հազիւ հազ Պօղազեանի զայմաքամին [= կառավարիչի տեղակալին] մահուան վճիռը տրուեցաւ ու երէկ երեկոյ ալ գործադրուեցաւ: Եթէ այսպէս շատ մը չարագործներ պատժուին, երկիրը շուտով կը խաղաղի:

Այս օրերս կառավարութիւնը երկու յանձնախումբեր կը դրկէ կոր գաւառները. երկուքն ալ իշխաններու նախագահութեանը տակ¹⁰⁴: Մեզմէ

¹⁰³ Ծանօթագրին մէջ՝ ստորագրուած հայ երեք համայնքներու հոգեւոր պետերուն կողմէ, կացութիւնը կը ներկայացուի իբրեւ ճգնաժամային, նշելով թէ «... ամէնուր գաղտնի կազմակերպութիւն մը զենքեր կը բաժնէ իսլամներու: Արդէն իսկ տեղեկագրուած են բազմաթիւ սպանութիւններ...: Թէ՛ «Ոչինչ կայ զարմանալի այս ուղղութեամբ, քանի որ նահանգները գրեթէ ամէնուր մնացած են ուղղակի ազդեցութեանը ներքեւ 1915–1916-ի սպանութիւններն ու կողոպուտները գործադրողներու կամ յանցակիցներու»: Թէ՛ «Կեդրոնական կառավարութիւնն անկասկած պէտք է իրագել ըլլայ այս կացութեան, բայց՝ կամ անգործութիւն, կամ չկամութիւն, փորձեր իսկ չ'ըներ դարմանելու զայն», որով «բացարձակապէս անհրաժեշտ պիտի ըլլայ պաշտօնէ արձակել եւ յետս կոչել բազմաթիւ կասկածելի պաշտօնատարներ, եւ վերացնել բոլոր նախկին գործակալները [Միութիւն եւ Յառաջդիմութիւն] Կոմիտէին, վարկաբեկուած երեւելիները, ինչպէս նաեւ անոնց գործակիցները: Անոնք կրնան վնասագերծուիլ միայն զանոնք համապատասխանաբար հեռացնելով իրենց միջավայրերէն»: Շեշտելով նոր ոճիրներ կանխարգիլելու ստիպողական կարիքը, երեք պետերը կ'ընդգծեն թէ գործուելիք չարիքներէն պէտք է վախճալ մանաւանդ երբ Փարիզի Վեհաժողովին որոշումները դառնան յայտնի (*Համահաւաք* Բ., էջ 895–896):

¹⁰⁴ Մէյֆետտին եւ Շեմալետտին կայսերագուն իշխաններուն նախագահութեամբ դէպի Թրակիա եւ Անատոլիա ուղարկուելիք մարմինները կը դիտուէին որպէս օտարներուն ի ցոյց կազմուած յանձնաժողովներ: Այդ յանձնաժողովներուն կը վերագրուէր խրատիչի կամ յորդորիչի, ինչպէս նաեւ բարե-

խնդրուեցաւ որ հայ անդամ ալ նշանակենք, բայց մենք մերժեցինք, որով-
հետեւ յայտնի է թէ անօգուտ բան մը եւ կամ քաղաքական դաւ մըն է: Այս
յանձնախումբերը կայսեր¹⁰⁵ կողմանէ կը մեկնին եւ իր բարեւները պիտի
հաղորդեն ժողովրդեան (գէթ այսպէս կ'ըսեն մեզի):

Կառավարութեան հետ մեր ունենալիք յարաբերութեան մասին միշտ
դժուարութիւններ ունինք: Չենք ուզեր որ բոլորովին խզում յառաջ բերենք,
բայց չենք ալ ուզեր, ամէն բան այլեւս մոռցուածի պէս, բարոք յարաբե-
րութիւններ մշակել, մանաւանդ որ իրենք շարունակ կ'առաջարկեն որ
ձեռք ձեռքի տալով երկիրը բարեկարգենք: Անշուշտ այդքան չենք կրնար
յառաջ երթալ եւ եւրոպացւոց ալ ցցնել թէ թուրքերուն հետ մենք կարգա-
դրելիք հաշիւ չունինք, եւ կամ անոնք կրնան շահագործել մեր այդպիսի
մէկ ընթացքը: Ամիսներէ ի վեր այս տեսակ կրնանք կոր շարունակել, միայն
թէ քանի մը օրէն կայսեր գահակալութեան տարեդարձն է, կը խորհինք թէ
պատրիարքը պալատ պէ՛տք է երթայ թէ ոչ: Ոմանք բացարձակապէս ոչի
կողմն են. կ'ըսեն որ քանի մը օրուան համար կղզի թող քաշուի հիւան-
դութիւն մը պատրուակելով: Ուրիշներ կ'ըսեն թէ պալատ այցելութիւնը
քաղաքական նշանակութիւն մը չունի, պարզ էթիքէթի [= վարուելակարգի]
խնդիր մըն է, հարկ չկայ այդպիսի ցոյց մը ընել այժմ որ կրնայ թուրքերը
աւելի եւս գրգռել: Դեռ որոշում մը չունինք այս մասին: Եթէ հաղորդակ-
ցութեան դիւրութիւններ ունենայինք, Ձեր ալ խորհուրդը պիտի հար-
ցնէինք այս մասին¹⁰⁶:

կարգիչի կամ խորհրդատուի դեր, որպէս թէ կարելի դարձնելու օսմանեան
այլացեղ եւ այլադաւան հպատակներու համակեցութիւնը: Երգիծագիր
Եռւանդ Օտեան ատենին մերկացուցած է յանձնաժողովներուն իսկական
դերը, պատմելով թէ ինչպէս անոնք Էտիրնէի մէջ յոյն եւ հայ հոգեւոր
պետերուն կը ներկայացնեն նախօրօք մշակուած վաւերագիր մը՝ ստորագրե-
լու իրենց եւ հետեւաբար իրենց հօտին կողմէ հաւատարմագիր մը: «Հաւա-
տարմական գիր ստորագրել տալը Ապտիլ Համիտական գեղեցիկ օրերը կը
յիշեցնէ մեզի...» եզրակացուցած է ան («Խրատիչները», *Ժամանակ*, Պոլիս,
25/8 Մայիս 1919, թիւ 3515):

¹⁰⁵ Ակնարկութիւն Օսմանեան Կայսրութեան վերջին սուլթան Մեհմէտ Դ
Վահիտետտինի (1861–1926), որ 10 Օգոստոս 1920-ին պիտի ստորագրէր
Սեւրի Դաշնագիրը եւ որուն իշխանութեան վերջ պիտի տրուէր 1 Նոյեմբեր
1922-ին՝ Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովին որոշումով:

¹⁰⁶ Չաւէն Պատրիարքի յուշերը յստակօրէն ցոյց կու տան թէ զինադադարին
յաջորդող շրջանին, երբ թուրք կառավարութիւնը ոչ մէկ քայլ առած էր «հայ
տարրին սիրտին մէջ» նախորդ կառավարութեան «բացած վերքը դարմա-

*

Այս օրերս ուրիշ կարելուր հարց մ'ալ ունինք մեր առջև: Ինչպես գիտեք, տարագրեալ հայերու անշարժ թէ շարժուն գոյքերը կողոպտելու համար *Էմվալը Մէթրուքէի* [= Լքեալ Գոյքերու] օրէնք մը հրատարակեցին ժամանակին¹⁰⁷: Չինադադարէն վերջ եկող կառավարութիւնները նոր օրէնք մը հրատարակել ուզեցին, որպէսզի կարելի ըլլայ վերադարձող հայերու գոյքերը ետ վերադարձունել: Նախորդ կառավարութիւնը օրէնք մը խմբագրած էր որ բնաւ արդարութեան չէր համապատասխաներ եւ այդ օրէնքով կարելի չպիտի ըլլար գրաւուած գոյքերը ամբողջապէս ստանալ: Ներկայ կառավարութիւնը պաշտօնի անցնելուն՝ անգղիական իշխանութիւնն ալ դիտողութիւն ըրաւ եւ պնդեց որ նոր մը պատրաստուի աւելի արդար ըմբռնումով մը խմբագրուած: Այդ ուղղութեամբ մենք բան մը պատրաստելով անգղիացիներուն յանձնեցինք, իրենք ալ իրենց կողմանէ օրէնքի ծրագիր մը պատրաստած են: Այս երկուքին ալ օրինակները ներփակ ձեզի կը դրկեն:

Հիմա թուրքերն ալ այդ նոր օրէնքը խմբագրելու համար յանձնախումբ մը ընտրած են. երեք թուրքեր եւ երկու հայեր՝ Համամնեան եւ Խոսրովեան Էֆենտիները¹⁰⁸: Խոսրովեան Էֆենտի հրաժարական տուաւ եւ ըստ իր

նելու», եւ երբ հայութիւնն անոր դէմ «բողոքողի դիրքին մէջ» էր ու «անոր դէմ կը գործէր եւրոպական պետութիւններու առջեւ զայն ամբաստանելով», բանականօրէն կարելի չէր անոր հետ յարաբերիլ: Յուշերուն մէջ նաեւ կը նշուի թէ բժիշկ Դաւիթեան յարաբերութիւններու հաստատումը նիւթ դարձուցած էր Ազգային Կեդրոնական Վարչութեան քննարկման եւ նոյնիսկ առանձին նիստ գումարած էր հոսանքներու առաջնորդող դէմքերու հետ: Շարադրանքէն կը հետեւի թէ մեծամասնութիւնը դէմ գտնուած էր յարաբերութիւններու վերսկսման (Չաւէն Արքեպս., էջ 306–308):

¹⁰⁷ 1915-ի Լքեալ Գոյքերու Օրէնքը (Emval-i Metruke Kanunları) հիմնուած էր ներքին գործերու նախարարութեան կողմէ կէանքի կոչուած եւ իր լայն գիծերով գաղթականներու տեղաւորման վերաբերեալ 30 Մայիս 1915 թուականի որոշմնագրի մը վրայ, որ աւելի ուշ, 10 Յունիսին, 26 Սեպտեմբերին եւ 8 Նոյեմբերին շարք մը նոր կանոնակարգերու որդեգրումով աւելի յստակ ուղեցոյց մը պիտի ընծայէր Յեղասպանութիւնը գործադրողներուն՝ որպէս թէ օրինական գետին մը հարթելով հայկական ինչքերու բռնագրաւման համար: Սեպտեմբեր 26-ին անուանուած Հաշուեյարդարի Յանձնաժողովներուն (Tasfiye Komisyonları) պիտի վստահուէր զբաղիլ հայոց «լքեալ» գոյքերով:

¹⁰⁸ Յակոբ Համամնեան գործակատարն էր պատրիարքարանին, իսկ իրաւաբան

կարծեաց մեր շահերուն վնասաբեր է թուրքերուն հետ բանակցիլ այս մասին: Կ'ըսէ թէ հայերու տրուելիք վնասուց հատուցման խնդիրը միջազգային սեղանին վրայ ելած է արդէն Հայ Պատուիրակութեան կողմանէ. արդ, հակասութիւն մը պիտի ըլլայ հիմա ելլել նոյն խնդրոյ մասին թուրքերուն հետ բանակցիլ, եւ ապահովաբար ապարդիւն կերպով: Իսկ ուրիշներ կը պնդեն թէ այդ օրէնքի պատրաստութեան համար թուրքերու հետ բանակցիլը հայերու վնասուց հատուցման դատին չի վնասեր բնաւ, մանաւանդ թէ վնասուց հատուցում մը չէ որ պիտի տրուի, այլ՝ գրաւուած անշարժ թէ շարժուն գոյքերը ետ առնելու մասին է պատրաստուած օրէնքը, թէ՛ ետ առնուելիքները կորսուածին բաղդատմամբ ոչինչ բան են, եւ թէ՛ գտնուածները ետ առնուելէ վերջ, տեղի ունեցած վնասներն ալ պահանջելու արգելք մը չէ այդ օրէնքը: Անգղիացիները մեզի կը յորդորեն որ մասնակցինք այդ յանձնաժողովին, բայց մեր անդամակիցները, մանաւանդ Խոսրովեան Էֆէնտին, ջերմօրէն կը հակառակի[ն] եւ վնասակար կը նկատ[են] մեր շահերուն¹⁰⁹:

Հմայեակ Խոսրովեան անդամ էր Ազգային Երեսփոխանական Ժողովի:

¹⁰⁹ Դաւիթեան Ազգային Երեսփոխանական Ժողովի 4 Յունիս 1920-ի նիստի ընթացքին պիտի տեղեկացնէր հետեւեալը. «Երբ Չինադադարը հռչակուեցաւ, նախկին օրէնքը գործադրութեան մէջ էր, սակայն խորհուեցաւ հրատարակել օրէնք մը, որ լիովի պաշտպանէ ազգին շահերը: Այդ թուականին անգլիական դեսպանատան մէջ նախագիծ մը պատրաստուեցաւ: Այս աշխատութեան մասնակցեցան տեարք Խոսրովեան եւ գործակատար Համամնեան, որոնք պատրաստեցին օրէնքի ծրագիրը, որ առանց պետական խորհուրդի քննութեան ենթարկելու, ուղղակի նախարարաց խորհուրդէն պիտի վաւերացուէր: Քանի մը օր յետոյ մեզ[ի] հաղորդուեցաւ որ Համաձայնութեան կողմէ ուղղակի այս օրէնքին պարտադրութիւնը աննպաստ է, ուստի ուրիշ օրէնք մը պիտի պատրաստուի Բ. Դրան մէջ: Նախապէս մենք չուզեցինք մասնակցիլ այդ յանձնաժողովին, սակայն ըսուեցաւ մեզի որ մասնակցինք եւ այդ յանձնաժողովին մասնակցեցան Պ. Սրենց եւ Համամնեան: Ամիսներ անցան եւ բան մը չեղաւ, ու ոչ միայն բան մը չեղաւ, այլեւ Միլլի շարժումներ սկսան եւ անգամ մ'ալ հաստատուելով որ Թուրքիոյ մէջ օրէնք մը պատրաստելով գործադրելու անկարելիութիւն կայ, անհրաժեշտ դատեցինք որ Հաշտութեան Դաշնագրին մէջ ներմուծուի [տրամադրութիւն մը կալուածներու մասին] ու մեզի խոստանան գործադրել մեր բաղձանքները եւ 3 Մարտ թուականով խնդրուեցաւ իրենցմէ [Համաձայնական տէրութիւններէն- Վ.Ղ.] որ նկատողութեան առնուի[ն] մեր բաղձանքները: Յետոյ հեռագիրներէն միայն իմացանք որ այդ մասին տրամադրութիւններ կան

Փափաքելի է որ Բարիզի մեր Պատուիրակությունը այս կետերուն վրայ մեզ լուսարանէ եւ մեզի ուղղութիւն մը ցցնէ: Կ'ենթադրենք որ հող դուք աւելի իրազեկ էք անցուդարձերուն եւ կրնաք մեզի կարգ մը խնդիրներու մէջ լուսարանել, ինչպէս՝ վնասուց հատուցման խնդիրը, թուրքերուն հետ մեր բռնելիք քաղաքականութեան գլխաւոր գիծերու հարցը եւ այլն եւ այլն:

Զմոռնամ յիշել թէ վնասուց հատուցման մասին անգղիացւոց տեսակէտը սա է թէ այդ խնդիրները Բարիզ պիտի որոշուին, բայց հոս պէտք է թուրք կառավարութեան մատուցանել խնդիրը, եւ տրուելիք հաշուեցոյցին մէկ օրինակն ալ պատրիարքարանները պահել մինչ ցնոր տնօրինութիւն: Իբր ատոր օրինակ ներփակ կը դրկեմ անգղիացւոց տուած մէկ պատասխանը Ճէնագեանի¹¹⁰, որ կ'երեւի թէ անոնց դիմած է վնասուց հատուցում

Հաշտութեան Դաշնագրին մէջ: Սակայն Սալիի փաշայի դահլիճին օրով նոր օրէնք մը հրատարակուեցաւ, որ նախապէս Պոլսոյ մէջ մեր պատրաստած օրէնքը կերպարանափոխ կ'ընէ: Այսօրուան վիճակը այս օրէնքն է, բայց մենք ազգապատկան կալուածներու եւ գողցուած գոյքերու մասին Համաձայնական ոստիկանութեան կողմէ պէտք եղած հետապնդութիւնը ի գործ կը դնենք եւ հոն ուր կարելի եղած էր գտնել կը գտնէինք, սակայն դժբաղդաբար արգելք եղաւ ինչպէս հոս՝ նոյնպէս գաւառներու մէջ...: Ազգապատկան բոլոր գոյքերը առնուած են. գալով ամբողջ իրեղէններուն, ասիկա առնել անկարելիութիւն մ'էր, որովհետեւ մենք անոնց տէր պիտի ըլլայինք երկու կերպով՝ կա՛մ օրէնքի ուժով, կա՛մ Համաձայնական պետ]ութեան[ց] միջոցով: Օրէնքը ... թոյլատու չէր ասոր, իսկ Համաձայնական կառավարութիւնը մեզի մերժեցին անհատական գոյքերը առնել: Պատրիարքարանը ... 3 Յունուար 1306 թուականով ընդարձակ յիշատակագիր մը տուաւ. կառավարութեան, որուն մէջ ... պահանջեց 209 վանքերու եւ 2000ի մօտ եկեղեցիներու բոլոր գոյքերը եւ 4 տարուան մէջ եկեղեցապատկան հաստատութիւններու հասոյթները: Այս գիրը կարծեմ Սալիի փաշայի դահլիճին օրով մէկ կողմ դրուեցաւ եւ նոյնիսկ իր ոճին համար պահ մը խորհուեցաւ ետ տալ, բայց արդի դահլիճը նկատողութեան առաւ. զայն եւ որոշեց հաշուեցոյց մը պատրաստել: Արդէն մեծ մասամբ արծաթեղէնները, ինչպէս տետրակներու մէջ արձանագրուած են, տարեր հալեցուցեր են: ... բացի եկեղեցական իրեղէններէ, անհատական սեպհականութիւնները ոեւէ կերպով չենք կրնար ստանալ, որովհետեւ գործը մեր փափաքին համաձայն ուղղութիւն մը չկրցաւ ստանալ եւ քանի որ այդ օրէնքը չկայ, մանաւանդ գաւառներու մէջ այդ մեր պահանջը գործադրելու կարելիութիւնն ալ չկայ» (*Համահաւաք* Ա., էջ 194–195):

¹¹⁰ Օննիկ Ճէնագեան արտօնատէրն էր 1919-ին ՄԴՀԿ-ի խօսափող դարձած «Երկիր» օրաթերթին, որուն 1919-ի համարները մեր հասողութենէն դուրս

պահանջելու համար:

Գաւառի հայութեան անհուն կարօտութեանց օգնելու խնդիրը գմեղ տառապեցնող ու մեր միտքը չարչիկող մեծագոյն հարցերէն մէկն է: Ինչպէս հասնիլ այդքան մեծ պետքերու. գանձեր ու անսպառ գանձեր պետք են: Ատանա արդէն 60000էն աւելի գաղթականներ հասած են, բոլորովին մերկ ու սովալլուկ. Սեբաստիա 10000է աւելի հայեր նոյն վիճակին մէջ [են]. Խարբերդ, Սալաթիա, Տիարպէքիւր նոյնպէս: Այս օրերս Պոլսոյ մէջ մեծ հանգանակութեան մը սկսած ենք: Մարմին մը ընտրեցինք պատրիարքին նախագահութեամբը եւ վաճառականներէ բաղկացած. Իպրանոսեան էֆէնտին գանձապետն է այդ մարմնոյն: Մենք մէկ միլիոն ոսկի կը պահանջենք, բայց կը տարակուսիմ որ կրնանք ձեռք ձգել այդքան գումար, մանաւանդ որ այս օրերս հրապարակի վրայ շատ ծանր *crise* [= տագնապ] մը կայ. ապրանքներ եկան եւ գիները ինկան: Ինչ որ է, կը յուսամ որ 300.000 ոսկիի չափ յաջողինք հաւաքել¹¹¹: Այս օրերս Պուլկարիայէն ալ

մնացած ըլլալով, անհաւանական պիտի չըլլայ ենթադրել թէ Դաւիթեանի ակնարկած պատասխանը կրնայ լոյս տեսած ըլլալ «Երկիր»ի մէջ:

¹¹¹ Կը թուի թէ Պատրիարքարանին նախաձեռնութեամբ 5 Ապրիլ 1919-ին կազմուած եւ 6 Ապրիլին գործի ձեռնարկած Ազգային Նպաստահաւար Յանձնաժողովին ունեւոր հայերէ ձեռք բերած արդիւնքները ակնկալուածին չափ հասոյթ գոյացուցած չըլլալով, որոշուած է զայն վերածել ընդհանուր հանգանակութեան՝ ապահովելով նաեւ աւետարանական եւ կաթողիկէ համայնքներու մասնակցութիւնը: Առ այդ, ընդհանուր հանգանակութեան կոչ մը հրապարակուած է Ապրիլ 12-ին երեք հոգեւոր պետերուն՝ Զաւէն Արք. Տէր Եղիայեանի, Օգոստինոս Արք. Սայեղեանի եւ Զենոր Պէզճեանի, ստորագրութեամբ: Կոչին մէջ կ'ըսուի թէ անմիջական պետքերու համար կայ առ նուազն մէկ միլիոն ոսկիի կարիք, այդ գումարին գոյացման համար ընդգծելով մասնաւոր պատասխանատւութիւնը Պոլսոյ եւ Զմիւռնիոյ հայոց եւ հրահանգելով դադրեցնել «մասնակի հանգանակութիւնները ու հանդէսները, որոնք ցարդ տեղի կ'ունենային միութիւններու եւ անհատներու կողմէ ի նպաստ բարեգործական հաստատութեանց» («Անուագն Մէկ Միլիոն Ոսկիի Պէտք Կայ», *Ճակատամարտ*, Պոլիս, 13 Ապրիլ 1919, թիւ 129/1950): Յաւալի է հաստատել թէ մինչ ազգային իշխանութիւնները ազգային կարիքներուն համար համատեղ ճիգերով դրամահաւաքի ծրագիրներ կը մշակէին, անդին «անպատասխանատու անձեր, Գատը գիւղի եւ ուրիշ թաղերու մէջ անհատներու եւ ազգային մարմիններու սպառնալիքներ ընելով» դրամ կը պահանջէին, որով Քաղաքական Ժողովը 4 Ապրիլին նիստ գումարելով հարկ կը տեսներ այդպիսի անձեր անմիջապէս պատկանեալ

900.000 ֆրանք եկաւ: Վերջապէս, կարելին պիտի ընենք մեր դժբաղդ տարագրեալները մահու[ը]նէ ազատելու համար, բայց, ինչպէս ըսի, զանձեր պէտք են: Պատրիարքարանի մը կարողութենէն վեր բան է: Կառավարութիւն մը պէտք է այս տեսակ բեռան մը տակէն ելլելու համար:

Sop. Սայեանի հետ այսօր տեսնուեցայ: Վաղը առաւօտ իսկ Պուլկարիա կը մեկնի, 31 Մարտ [թուակիր] նամակներ յանձնեց, ինչպէս նաեւ *mémoires*ները: Sop. Սայեան շատ լաւատես է մեր հարցի մասին: Գրեթէ վստահ՝ սպասել պէտք է կ'ըսէ: Իսկ ձեր նամակը թէւ ոչ յոռետես, բայց որոշ բան մ'ալ չէր ըսեր, ինչ որ կը կարծեմ իրողութիւնն է. երկարելը լաւ չէ մեզի համար, կրնան բարդութիւններ պատահիլ եւ վտանգել մեր դատը: Թուրքերը իրենց բովանդակ յոյսը այդ կարգի անակնկալներու վրայ դրած են: Անձկանօք կը սպասեն պօլշէվիքներու յաղթանակին. անոր մէջ կը տեսնեն իրենց ազատումը այս փորձանքէն: Կը կարծեն թէ այդ վտանգին առջեւ եւրոպացիները պիտի ստիպուին նուազ խստութեամբ վարուիլ: Թէ որչափ ստոյգ է իրենց խորհածը չեմ գիտեր, բայց սա անուրանալի է որ Համաձայնականները հոս շատ զգուշութեամբ կը վարուին թուրքերուն հետ. նոյնիսկ աստիճան մը բարեացակամութեամբ, ինչ որ մեծ յոյսեր տուած է իրենց: Ասոնք անշուշտ բոլորն ալ կրնան պարզ քաղաքականութեան պահանջներ ըլլալ, բայց իրողութիւնը այն է որ թուրքը միայն ուժէն կ'ակնածի եւ երբ թոյլ կը վարուի[ն] իրեն հետ, ինք ալ կը շարունակէ իր բարբարոսութիւնները:

Sop. Սայեան հիացմամբ պատմեց մեզի Ձեր տարած աշխատութիւններն ու մեր դատին մատուցած ծառայութիւնները, ըլլայ Ձեր խորհուրդներովը, ըլլայ Ձեր ծանօթութիւններովը: Մենք հոս հպարտութեամբ լսեցինք այս տեղեկութիւնները եւ ուրախ եղանք որ լաւագոյն ընտրութիւնը ըրած ենք: Կը մաղթեմ որ Ձեր աշխատութիւնները պսակուին ու յաղթական Պօլիս վերադառնաք: Անկախ Հայաստան պիտի գիտնայ անշուշտ վարձատրել Ձեզ նման իր արժանաւոր զաւակները:

Sop. Կէյթս դեռ Պօլիս վերադարձած չէ: Ամերիկեան յանձնախումբը կը շարունակէ աշխատիլ, թերեւս քիչ մը դանդաղօրէն՝ զաւառներու անապահովութեան պատճառով¹¹²: Առջի օրը ամերիկեան դեսպանատան մէջ

իշխանութիւններուն յանձնելու մասին յայտարարութիւն հրապարակել («Սպառնալիքով Դրամ Պահանջողներուն», *Ժամանակ*, Պոլիս, 24/6 Ապրիլ 1919, թիւ 3489):

¹¹² Թղթակցութեան մը համաձայն, Մինչև Ապրիլ 18 արդէն սկսուած էր հիւանդանոցներու բացումը Չմիւռնիա, Սամսոն, Երեւան, Սվազ, Մարգուան,

Ժողով մը ունեցանք. տեսակ մը advisory committee [= խորհրդատու յանձնախումբ] պիտի կազմեն, պարբերաբար ժողով գումարելով խորհրդակցութիւններ պիտի կատարուին նպաստի բաշխման մասին, ի մասնաւորի Պօլսոյ մէջ:

.....

Յարգանօք
Տօք. Դաւիթեան

Կեսարիա, Խարբերդ, Տրապիզոն, Պէյրութ, Մարտին, Գոնիա, Ատանա եւ այլուր: Ծրագրուած 15 հիւանդանոցներ օժտուած պիտի ըլլային իւրաքանչիւրը 100-ական անկողինով, երկուքական բժիշկով եւ չորսական հիւանդապահուիչով: Ծրագրուած էր նաեւ հաստատել որբերու համար երկրագործական կայաններ: Ինքնաշարժ երկու արօրներ արդէն դրկուած էին Արմաշ եւ Պարտիզակ, եւայլն («Ամերիկեան Նպաստամատոյցին Գործունէութիւնը», *Ճակատամարտ*, Պոլիս, 20 Ապրիլ 1919, թիւ 135/1956):

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 18 Ապրիլ 1919

Յարգելի բարեկամ

Ձեր Մարտ 25 եւ 28 թուական նամակները ստացայ: Կը յուսամ որ իմ Մարտ 11¹¹³, 18, 28 եւ Ապրիլ 11 թուական նամակներս հետզհետէ կ'ստանաք:

Տօք. Սայեան Պօլսէն անցնելով մեկնեցաւ: Իրեն տուած նամակնիդ ստացած եմ. ինքը շատ լաւատես է մեր խնդրոյն մասին եւ իբր լմնցած հարց մը կը ներկայացներ. եւ այնպէս մը հասկցանք որ Համագումարի¹¹⁴ անդամներն ալ ի մօտոյ պիտի ցրուին. ուստի երէկ Ձեզի հեռագիր մը տուինք որպէսզի մնաք դեռ ու մեր նամակներուն սպասէք:

Այս օրերս հոս դէպք մը պատահեցաւ որ զմեզ շատ յուզեց եւ ուզեցինք որ Ձեզի գրենք անմիջապէս. Պր. Ահարոնեանի ալ գրուեր է արդէն: Տօք. Կէրթս, ինչպէս գրած էի, դէպի ներսերը ճամբորդութիւն մը ըրաւ. մինչեւ Մարտին ու Ուրֆա գացած է, չեմ գիտեր թէ ի՞նչ էր իր ճամբորդութեան բուն շարժառիթը: Խնդիրը այն է որ վերադառնալէն վերջ անցեալ Կիրակի իրիկուն Ռոպերթ-Գոլէժի¹¹⁵ մէջ ճառ մը կը խօսի եւ կը յայտարարէ թէ՛ անկախ Հայաստանի մը գոյութիւնը վնասակար պիտի ըլլայ հայերուն, որովհետեւ հայերը ամէն կողմ փոքրամասնութիւն մը կը կազմեն, թէ՛ լաւագոյն լուծումը պիտի ըլլայ թուրք արդի կայսրութիւնը առանց բաժնելու քրիստոնէայ զօրաւոր տէրութեան մը պաշտպանութեանը տակը

¹¹³ Պահպանուած նամակներուն մէջ չենք հանդիպած 11 Մարտ թուակիրի մը: Կ'ենթադրենք թէ խնդրոյ առարկան է 10 Մարտ թուակիրը, զոր Դաւիթեան հաւանաբար աւարտած էր 11 Մարտին, զայն սկսած ըլլալով հանդերձ 10 Մարտին:

¹¹⁴ Ակնարկութիւն 24 Փետրուար 1919-ին Փարիզի մէջ Գաբրիէլ Նորատունկեանի նախագահութեամբ բացուած առաջին Հայ Ազգային Համագումարին, որ իր եզրափակիչ 38-րդ նիստը կայացուցած էր 8 Ապրիլ 1919-ին:

¹¹⁵ Ռոպերթ կամ Ռապրթ Գոլէժը Կոստանդնուպոլսոյ մէջ հիմնուած էր 1863-ին Քրիսթօֆըր Ռապրթ (Christopher Robert, 1802–1878) անուն ամերիկացի ունեւոր մարդասէրի մը եւ կրթական գործի նուիրուած աւետարանիչ Մայրըս Համլինի (Cyrus Hamlin, 1811–1900) կողմէ, տասնամեակներու ընթացքին տալով բազմաթիւ հայ շրջանաւարտներ:

դնել ուր բոլոր տարրերը ապահովություն ու հաւասար արդարություն պիտի վայելեն¹¹⁶: Այս յայտարարությունը, Ռ[ոպերթ] Գոլեփի պաշտօնական բեմէն, լախտի հարուածի մը պէս կ'իջնէ ներկաներուն առհասարակ եւ հայերուն գլխուն մասնաւորապէս, եւ խոր ու սարսեցուցիչ լռութեան մը մէջ կ'աւարտի բանախօսութիւնը:

Յաջորդ առաւօտուն եւ ժամադրութիւն մը ունէի հետը Ամերիկեան Դեսպանատան մէջ, ուր առանց տեղեակ ըլլալու իր պաշտօնական յայտարարութեանց, նոյն նիւթին վրայ երկարօրէն խօսեցանք: Իր պտտած տեղերուն վրայ տեղեկութիւններ տուաւ, ինչպէս նաեւ Ամերիկեան Reliefի

¹¹⁶ Կէլթա խօսելէ ետք Հալէպ, Այնթապ եւ Ուրֆա այցելութեան մասին, Հայաստանի ապագային կապակցութեամբ ըսած է. «Համոզուած եմ թէ անկախ Հայաստան մը մեծ օգտակարութիւն չպիտի ունենայ հայերու համար, որովհետեւ անոնք ոչ մէկ տեղ մեծամասնութիւն չունին. մինչդեռ թուրքերը որ մեծամասնութիւն ունին, ոչ մէկ տեղ հայկական վարչութիւն մը չպիտի հանդուրժեն: Թուրքիա պէտք է մնայ իր կատարեալ ամբողջութեանը մէջ, եւ պէտք չէ կցուի որեւէ դրացի երկրի: Սակայն ան պէտք է դրուի քրիստոնէայ զօրաւոր երկրի մը վարչութեան տակ, որ երկրին բոլոր տարրերուն հանդէպ արդար եւ հաւասար վարուելակերպ մը ապահովէ» («Տօքթ. Կէլթսի Տեսակէտը», *Ճակատամարտ*, Պոլիս, 17 Ապրիլ 1919, թիւ 132/1953):

Փրոֆ. Աբրահամ Տէր Յակոբեան Կէլթսի ներքողը պիտի հիւսէր անոր պաշտօնաթողութեան առթիւ, համակարծիք ըլլալով ուրիշ պաշտօնակցի մը՝ թէ Կէլթա իրապէս «ծագող արեւ» մըն էր եւ կը յատկանշուէր իր պարտաճանաչութեամբ, ջերմեռանդութեամբ, անկոտորում կամքով, բարի սրտով, առատաձեռն ոգիով, միշտ հակամէտ ընդարձակելու իր գիտելիքները (*Dr. Caleb Frank Gates President of Robert College 1903–1932: An Appreciation*, հրատ. Ռոպերթ Գոլեփի, Պոլիս, 1932, էջ 19–21): Նոյն գրքոյկին մէջ կը յայտնուի թէ 1922-ի Նոյեմբերին ան որպէս Ծովակալ Պրիսթօլի խորհրդական գացած էր Լոզան՝ մասնակցելու Լոզանի Խորհրդաժողովին, եւ թէ հոնկէ վերադարձած էր հիապթափուած Համաձայնական դիւանագէտներէ եւ դիւանագիտութենէ, եւ թէ լեցուած էր խանդավառութեամբ՝ Թուրքիոյ ապագայով, «մեծապէս տպաւորուած ըլլալով վսեմ յատկութիւններովը արտակարգ հայրենասէր եւ պետական այր Իսմէթ Փաշայի...» (էջ 39): Մուսթաֆա Իսմէթ Ինէօնիւ (1884–1973) Թուրքիոյ գլխաւոր բանագնացն էր խորհրդաժողովին մօտ եւ հետագային երիցս պիտի պաշտօնավարէր որպէս վարչապետ, իսկ 1938–1950 տարիներուն՝ նաեւ իբրեւ Քեմալի յաջորդած նախագահ հանրապետական Թուրքիոյ:

[= Նպաստամատոյցի] գործունէութեան մասին. յետոյ ինծի ալ բացատրեց իր այդ սիրելի թէօռին [= տեսութիւնը]: Ինք կ'ըսէ որ հայերու պահանջած հողամասերուն մէջ հայը շատ չնչին բնակչութիւն մը ունի այսօր, թէ՛ թուրքերը շատ գրգռուած ու զինուած են, եւ երբ Բարիզի Վեհաժողովը ընդունի հայերու պահանջքը ու անկախ Հայաստանը հռչակէ, մնացած հայերուն ջարդուիլը անխուսափելի է, որովհետեւ թուրքերը բնաւ չպիտի ուզեն փոքրամասն հայերու հպատակութիւնը ընդունիլ, եւ որովհետեւ գիտեն որ հայերը իրենց հանդէպ վրէժով լեցուած են, հետեւաբար թուրքերը նոյնիսկ իրենց կեանքը վտանգի մէջ պիտի տեսնեն անկախ Հայաստանի մը կազմութեամբը: Վերջապէս թուրքերը այնպէս մը կը ցցնեն որ չպիտի հանդուրժեն Հայաստանի հպատակ ըլլալ եւ թէ ծանր խռովութիւններ պիտի հանեն, որով նոր բարդութեանց տեղի կրնայ տալ. տեսակ մը սպառնալիք եւրոպացիներուն հանդէպ: Թերեւս կը յուսան որ այս կերպով դարձեալ անուշ տեղը կապելու քաղաքականութիւնը կրնայ յաջողիլ:

Ես իրեն երկարօրէն խօսեցայ եւ բացատրեցի թէ՛ ստոյգ է որ այս պահուս փոքրամասնութիւն ենք, բայց ստոր մեծագոյն պատճառը եթէ տեղահանութիւնն ու ջարդն է, միւս կողմանէ ներկայիս ապահովութեան պակասն է որ չի քաջալերեր հայութիւնը դէպի իր երկիրը գաղթելու, թէ՛ իր յուսացածէն շատ աւելի հայութիւն մը պիտի գայ տեղաւորուիլ մայր երկրին մէջ, թէ՛ եթէ այս պահուս հայերը քիչուոր են, կարգ մը գաւառներու մէջ (Էրզրում, Վան, Պիթիս) թուրք բնակչութիւն ալ չկայ եւ երբ ապահովութիւն ըլլայ ու Կովկասէն սկսի գաղթականներու վերադարձը, ապահովաբար այդ կողմերը հայերը մեծամասնութիւնը պիտի կազմեն, թէ՛ մեծամասնութեան ու փոքրամասնութեան խնդիր յարուցանելը է՛ն անբարոյական բանը պիտի ըլլայ եւ տեսակ մը քաջալերութիւն թուրքերու հետապնդած քաղաքականութեան: Այդ պարագային թուրքերը ոչ միայն պատճառ մը չունին զոջալու զմեզ ջարդելուն համար, այլ ընդհակառակը գոհ ըլլալու են որ իրենց ազգայնութեան տեսակէտով ուղիղ քաղաքականութեան մը հետեւած են:

Ըսի նոյնպէս թէ՛ Ձեր այդ առաջարկութեամբը մեր ազգային դատը միանգամ ընդ միշտ թաղուած կ'ըլլայ, թէ՛ մեզի այլեւս կարելիութիւն չի կրնար ըլլալ ազգային կեանք մը ունենալու, տուն մը կազմակերպելու, եւ արտասահմանի հայերը այդ պայմաններուն մէջ դէպի Հայաստան վերադառնալու չպիտի փափաքին, որով մեր այնքան տարիներու զոհաբերութիւնները ոչինչ գացած պիտի ըլլան, եւ մեր երկիրը պիտի թաղուի ամայութեան ու աւերակներու մէջ, քանզի շատ քիչ հայեր պիտի ուզեն յետ

այսու ա՛լ իրենց դահիճներուն հետ ապր[ի]լ:

Ժամանակը արդէն ուշ ըլլալուն բաժնուեցանք. բայց մտադիր եմ իրեն նամակ մը գրելու: Կ'երեւի թէ երկու շաբաթէն Բարիզ պիտի ուղեւորի:

Ինչպէս կրնաք երեւակայել, Տօք. Կէյթսի այս ձախորդ յայտարարութիւնը դժբաղդաբար մամուլին մէջ արձագանգ գտաւ: Թուրք մամուլը գոհութեամբ արձանագրեց եւ մերիններն ալ սկսան խորհրդածութիւններ ընել, որոնցմէ քանի մը նմուշ ներփակ կը դրկեմ: Հայերը շատ յուզուեցան եւ շատ գէշ տպաւորութիւն մը կրեցին: Գոլէժի շրջանաւարտները գումարում մը ունեցան այսօր եւ վաղը առաւօտ ալ պիտի գումարուին Բօֆ. Ճէճիգեանի¹¹⁷ նախագահութեամբ. ինծի ալ հրաւէր ուղղած են: Միտքերը հետզհետէ կը յուզուին: Ես պիտի ջանամ քիչ մը մեղմել, բայց անձնապէս ալ շատ ցաւ զգացի. չպիտի ուզէի բնաւ որ ներկայ պարագաներուն մէջ, մանաւանդ ամերիկացիի մը կողմէ ու Ռ. Գոլէժէն այդպիսի դառն հարուած մը գայ մեզի, որովհետեւ պետք է խոստովանիլ որ Տօք. Կէյթսի ընթացքը մեզի համար վտանգաւոր է եւ իրմէ չէինք սպասեր որ մեր արդէն դառնացած ու վիրաւորուած սիրտերուն իր կողմանէ գար ամենէն դառն հարուածը: Ստիպուիլ դարձեալ թուրքերուն հետ բնակիլ, պարզապէս կը նշանակէ նոր ջարդերու ու նոր հալածանքներու հիմերը դնել: Ես չեմ կարծեր որ գտնուի հայ մը որ այլեւս հանդուրժէ այդ նախատինքին: Եթէ երբեք Եւրոպա այս անգամ ալ զմեզ լքանէ ու խաբէ¹¹⁸, հետեւանքը պարզ է. հայերը այլեւս հանդարտ չեն կրնար ապրիլ եւ ամենքն ալ չէթէճի [= հրոսակ, ազատամարտիկ] պիտի ըլլան, այսինքն Ասիոյ մէջ պիտի կազմուի Պալքան մը¹¹⁹ իր բոլոր անախորժ հետեւանքներովը:

Առջի օրը (Դշ) Տօք. Բիթը¹²⁰ տեսայ եւ խօսեցայ այս մասին: Ինքն ալ

¹¹⁷ Աւետարանական քարոզիչ, հրապարակագիր եւ խմբագիր Յակոբոս Ճէճիգեան (1844–1924) թէ՛ ուսանած էր Ռուսերթ Գոլէճին մէջ եւ թէ՛ այնտեղ իր ուսուցչական գործունէութեան համար արժանացած փրոֆեսորի կոչումին:

¹¹⁸ Հայ քաղաքական մտածողութեան մէջ արմատաւորուած էր (եւ է) թէ Եւրոպա խաբած ու լքած էր արեւմտահայութիւնը 1878-ին (Պերլինի Դաշնագիր), 1896-ին (Մայիսեան Բարենորոգումներ) եւ 1914-ին (դարձեալ Բարենորոգումներ):

¹¹⁹ Ալկնարկութիւն Պալքանացում անուամբ ծանօթ իրավիճակի մը, ուր աշխարհագրական որոշ տարածքի մը մէջ մասնատուած ենթատարածքներ իրենց հակամարտ շահերով եւ զինեալներով կը ներկայացնեն զինեալ բախումներու եւ յանախաղէպ խռովութիւններու պարարտ հող:

¹²⁰ Իրաւագիտութեան Դոկտոր Ուիլիլմ Ուիլլք Փիթ (William Wheelock Peet,

շատ զարմացած էր, եւ ինծի յայտարարեց թէ՝ Ամերիկեան Relief Committee-ն երբեք համակարծիք չէ Sօp. Կէյթսի խօսածներուն եւ այդ իրեն անձնական կարծիքը միայն կրնայ ըլլալ: Կ'երեւի թէ՝ վարժարանէն շատ մը դասատուներ, նաեւ դուրսէն ուրիշ ամերիկացիներ, բնաւ չեն բաժներ Sօp. Կէյթսի կարծիքները եւ դիտողութիւն ընողներ ալ եղեր են: Խնդիրը սակայն հոն է որ ինքը բաւական կարելոր դիրք մը ունի. հեղինակութիւն մըն է եւ արեւելեան գործերու հմուտ ըլլալու համբաւը ունի. այնպէս որ իրեն կարծիքը կշիռ մը կրնայ ունենալ եւ ազդեցութիւն գործել շատերու վրայ: Այսպէս, առջի շաբթօն Mr. Heck¹²¹ հետ տեսնուած էի եւ ինքն էր որ ինծի խորհուրդ տուաւ Sօp. Կէյթսի հետ տեսնուելու: Անշուշտ կարծեաց փոխանակութիւն մը ունեցած են: Չեմ գիտեր թէ Mr. Heck ի՞նչ կը խորհի. արդեօք ազդուա՞ծ է եւ հիմա որ Փարիզ եկաւ ի՞նչ պիտի ըլլայ իր բռնելիք դիրքը մեր հարցի մասին: Քիչ օրէն Sօp. Կէյթսն ալ Բարիզ պիտի գայ. իբր տեղեակ արեւելեան գործերու բնականաբար հոդ կարելոր անձնաւորութեանց հետ տեսակցութիւններ պիտի ունենայ. եթէ այդ միեւնոյն զաղափարներն են որ պիտի արտայայտէ եւ պաշտպանէ, մեր խնդրոյն է՛ն մեծ հարուածը ինք տուած պիտի ըլլայ: Մենք հոս իրեն հետ տեսակցութիւններ պիտի ունենանք, անշուշտ նաեւ պիտի տեսնուիք դուք ալ. եւ իբր գիտակ իր խորհելակերպին, հարկ եղած թելադրութիւնները ընելու է իրեն¹²²: Այս մասին այսչափ. ուրիշ նորութիւններ հետզհետէ կը գրեն:

1851–1942) 1881-էն ի վեր կը վարէր Օտարերկրեայ Առաքելութիւններու Յանձնակատարներու Ամերիկեան Խորհուրդի Թուրքիոյ գործավարի և զանձապահի պաշտօնը Պոլսոյ մէջ: Ան նաեւ սերտօրէն կը գործակցէր Ամերիկեան Նպաստամատոյցին ու Կարմիր Խաչին հետ եւ սորված էր հայերէն ու հայերէնով թղթակցած Չաւէն Պատրիարքին հետ:

¹²¹ Իրաւաբան Լուիս Հէք (Lewis Heck), Միացեալ Նահանգներու Պոլսոյ դեսպանատան երբեմնի քարտուղարը, Ա. Աշխարհամարտի ընթացքին ամերիկեան դեսպանատան փակման հետեւանքով հեռացած էր Պոլսէն, բայց 1918-ի զինադադարէն ետք իրեն հրահանգուած էր որպէս Յանձնակատար անմիջապէս վերադառնալ Պոլիս եւ զբաղիլ սովորական եւ «անպաշտօն» դիւանագիտական եւ հիւպատոսական հարցերով, մինչ ամերիկեան պաշտօնական դիւանագիտական յարաբերութիւնները Թուրքիոյ հետ զինադադարի անմիջական վաղորդայնին կը շարունակէր վարել շուէտական պատուիրակութիւնը:

¹²² Դիւանաթուղթերուն մէջ պահպանուած է Փրոֆ. Տէր Յակոբեանի 26 Ապրիլ 1919 թուակիր նամակը՝ գրուած Ազգային Պատուիրակութեան նամակաթուղթի վրայ, ուր հեղինակը խորհրդապահաբար ներփակած է պատճէնը

Կացութեան մէջ փոփոխութիւններ չկան: Անապահովութիւնը միշտ միեւնոյնն է. ամէն տեղէ հալածանք, հարստահարութեան ու սպանութեան լուրեր կը հասնին մեզի: Գիւղերու բնակչութիւնը մնայուն սարսափի մէջ է, դաշտերը ելլել աշխատելու չի համարձակիր, ամէն կողմ գէնք կը ցրուեն նոյնիսկ տեղական կառավարութեանց գիտութեամբը, եւ այս անտանելի կացութեան հանդէպ համաձայնականները գործնական ու կտրուկ բաներ մը ըրած չունին, ինչ որ աւելի քաջալերած է թուրքերը եւ ամիսէ մը ի վեր աւելի յուսալից ու arrogant (= ամբարտաւան) երեւոյթ մը առած են: Հաւատացէք որ զինադադարէն առաջ աւելի ապահովութիւն կար, որովհետեւ կեդրոնական զօրաւոր կառավարութիւն մը գոյութիւն ունէր, որ գէշ կամ աղէկ, իր ուժը զգալի [կրնար ընել] ու կամքը կրնար քայեցնել:

Պօղազլեանի (Եօզկյաթի) ջարդարարներու դատաստանը աւարտեցաւ եւ գայմաքամը՝ Բէմալ, մահուան դատապարտուելով կախուցաւ ասկից 8–10 օրեր առաջ¹²³: Բայց յետոյ մարմինը առին ու համալսարանի ուսանողութիւնը, ինչպէս նաեւ խումն բազմութիւն մը, փառաւոր թաղում մը կատարեցին եւ դագաղին վրայ ալ ծաղկեփունջեր դրին. վերջապէս՝ ազգային հերոսի մը արժանավայել պատիւներ եղան: Այս վարմունքը Համաձայնականներուն վրայ գէշ ազդեցութիւն ըրած է եւ խիստ դիտողութիւն ըրեր են եւ այսօր ալ այդ սգակիրները որպէս ցուցարար ձերբակալելու ելած են. բայց խնդիրը հոն է որ հարիւրաւոր հազար հայեր ջարդուելէ վերջ երբ գոեհիկ ոճրագործ մը կը պատժուի, թուրք խուժանը գայն կ'աստուածացնէ: Ասոնք այնպիսի հոգեբանական երեւոյթներ են,

հեռագրի մը եւ, յոյս յայտնելէ ետք թէ Տոքթ. Կէլթսի Փարիզ այցելութիւնը առիթ կ'ըլլայ տեսնուելու, աւելցուցած է. «Հեռագրին բովանդակութիւնը բնականաբար յառաջացուց նկատառելի խռովք մը հոս մեր շրջանակին մէջ, թէեւ նաեւ կար կասկած մը անոր բառացի ճշգրտութեան վերաբերեալ: Ամէն պարագայի, կատարեալ վստահութիւն կայ որ այն անձը, որ ենթադրաբար արտասանած է այս բառերը, ամենաանկեղծ բարեկամն ու բարերարն է հայ ժողովուրդին: Ան ի մտի ունի անոնց [հայոց] իսկական շահերը, նոյնիսկ եթէ կը պաշտպանէ տեսակէտ մը, որ յայտնօրէն այնքան հակառակ է մեր ներկայ ազգային ձգտումներուն եւ ճիգերուն» (ՊՏԴ, տրցակ 10, թղթապանակ 40 Կ-Թ, Կ461, անգլերէն ձեռագիր):

¹²³ 1884-ին ծնած իթթիհատական Մեհմէտ Բեմալ, որ գլխաւոր պատասխանատուն էր տասնեակ հազարաւոր եոզկյաթցի հայերու տեղահանութեան եւ կոտորածին, 10 Ապրիլ 1919-ին դարձած էր առաջին կախաղան հանուած ցեղասպանը՝ ցեղասպաններու դատավարութեամբ զբաղող ատեանին դատավճռին հիմամբ:

որմէ պէտք էր Տօք. Կէյթս ու իր համախոհները լիովին լուսաբանուէին: Բայց, աւաղ, մեր սեւ բաղդէն միշտ թոյլատու ու ներողամիտ են թուրքերուն, բայց եթէ խեղճ հայերս հոս հոն անխոհեմ քայլ մը կամ ցոյց մը կատարենք, ամէնքը մէկ զմեզ կը դատապարտեն:

* Այս օրերս թուրք կառավարութիւնը երկու յանձնախումբեր կը դրկէ՝ գաւառները՝ ժողովուրդը խրատելու, յորդորելու որ հանդարտ մնան, տարբեր տարրերու հետ սիրով ու համաձայնութեամբ ապրին եւայլն, եւայլն: Մեզի առաջարկուեցաւ որ հայ անդամ մը նշանակենք, բայց որովհետեւ մեզի ծանօթ են ի վաղուց այդ կարգի յանձնախումբերու գործունէութիւնն ու նշանակութիւնը, ուստի մեծ կարելորութիւն մը չտուինք եւ անտարբեր մնացինք: Կարծեմ կառավարութիւնը Սիսակ Ֆերիտ Էֆէնտին¹²⁴ նշանակեր է:

* Ամերիկեան յանձնախումբի մը մասին գրած էիք¹²⁵: Կ'երեւի թէ այն

¹²⁴ 1922-ին մահացած այնթապցի Սիսակ Ֆերիտ, հայկական մականունով՝ Պոյանեան, վարած է Օսմանեան Կայսրութեան Մարդահամարի Վարչութեան ընդհանուր տնօրէնի պաշտօնը եւ, ըստ Թէոդիկի, եղած է «Համիտեան Գրաքննութեան պաշտօնէայ»: Արտօնատէրն էր օսմաներէն «Կիւզէ Փրենսէս» (Գեղեցիկ Իշխանուհի) պարբերաթերթին եւ Աւանգատ Մոհամէտ Սուլէյմանի հետ 1911-ին թարգմանած էր գերմանացի հեղինակ Ռոպերթ Քրաֆթի (Robert Kraft, 1869–1916) գաղտնի ոստիկանական եւ արկածախնդրական վէպերէն մին «Աթալանթա՝ Ալթըն Կէօլի» (Աթալանթա՝ Ոսկիի Լիճ) վերնագրով, հրատ. «Լուսին» տպագրատան, 960 էջ: Քրաֆթ Պոլիս գտնուած էր 1890-ին:

¹²⁵ Նախագահ Ուիլսըն պարտեալ Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան տակ գտնուած մերձաւոր արեւելեան տարածքներու նկատմամբ ամերիկեան քաղաքականութիւնը ճշդելու նպատակով կազմած էր Օպերլին Գոլէնի նախագահ աստուածաբան Հենրի Քինկի (Henry Churchill King, 1858–1934) եւ որպէս արաբագետ ծանօթ շիքակոցի մեծահարուստ Չարլզ Քրէյնի (Charles Richard Crane, 1858–1939) գլխաւորութեամբ յանձնաժողով մը, որ պիտի ճանչցուէր իբրեւ Քինկ-Քրէյն Յանձնաժողով: Քինկ եւ Քրէյն 1919-ի Յունիսին պիտի ձեռնարկէին իրենց աշխատութեան, այցելելով Պաղեստին, Սուրիա, Լիբանան եւ Արեւմտահայաստան: Սակայն Օգոստոսի աւարտին իրենց տեղեկագիրը ներկայացնելէ անմիջապէս ետք, նախագահ Ուիլսըն կաթուածահար ըլլալով, պիտի չկարենար գործնապէս զբաղի եզրակացութիւններովը յանձնաժողովին, որ Հայաստանի պարագային զօրավիզ կը կանգնէր հայկական պետութեան ստեղծումին, համոզում յայտնելով թէ ցեղասպանութիւն գործադրած Թուրքիոյ կարելի չէր վստահիլ իր հայ

յանձնախումբն է որ Խաղաղության Ժողովին կողմանէ ուսումնասիրության համար կու գայ Արեւելք: Այդ յանձնախումբերու դերը դժբաղդարար յաճախ մեզի նպաստաւոր [չ'ըլլար, որովհետեւ հոս թէ այլուր մեր նիւթական ու բարոյական միջոցները սահմանափակ են եւ չենք կարող լիովի օգտուիլ, մինչդեռ մեր հարեւանները ամէն քովնտի միջոցներ կը գործադրեն եւ շատ անգամ ալ կը յաջողին խնդիրը բոլորովին տարբեր գոյներով ներկայացնել: Օրինակները շատ տեսած ենք:

.....

Յարգանօք
Տօք. Դաւիթեան

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 5 Մայիս 1919

Յարգելի բարեկամ,

Վերջին 18 Ապրիլ թուական նամակս կը հաստատեմ ուր բացատրած էի Տօք. Կէլթսի յայտարարութիւնները. իսկ Ձեր Ապրիլ 4 նամակը ստացած եմ:

Ատկէ վերջ երկու հեռագիրներ զարկինք Ձեզի՝ մին Տօք. Կէլթսի խնդրոյն Մասին¹²⁶, իսկ միւսը Փոքր Ասիա մեկնող եւրոպական քովսիօնին ու գաւառներու մէջ ջարդի հաւանականութեան [մասին] Հայաստանի անկախութեան յայտարարութեան պարագային: Ձեր հեռագիրն ալ ստացած ենք:

Տօք. Կէլթս արդէն մեկնած է: Բարեբաղդաբար իր կարծիքը հոս գտնուող ամերիկացիները չեն բաժներ եւ մասնաւոր պատուիրակութիւն մը անոնցմէ շատերուն դիմած եւ իրենց կարծիքը ուզած է Տօք. Կէլթսի յայտարարութեանց մասին: Շատեր համակարծիք չեն գտնուած: Անոնց բոլորին ալ յայտնած կարծիքներուն համառոտութիւնը Ձեզի կը դրկեմ: Գալիքի հին թէ նոր աշակերտութիւնը յիշատակագիրի պէս բան մըն ալ գրած էին, բայց շատ նպատակայարմար բան մը չէր. կարծեմ նոր մը պիտի պատրաստեն: Տօք. Կէլթսի դէմ բռնուն պայքար մը մղելու համակարծիք չգտնուեցանք մենք: Խնդրոյն politiqueի ձեւ մը տալը անպատշաճ է եւ շատ չքաջալերեցինք մեր խմբագիրները: Բուն խնդրոյն մասին խօսիլ ու գրել անշուշտ աւելի օգտակար պիտի ըլլար: Արդէն թուրք թերթերն ալ մէկ երկու օր յետոյ այլեւս վրան չիօսեցան, այնպէս որ խնդիրը փակուած է. այսինքն՝ Տօք. Կէլթսի յայտարարութեանց մասին հրապարակային վիճաբանութիւնները վերջ գտած են¹²⁷: Հոդ անշուշտ տեսնուեցաք.

¹²⁶ Կէլթսի խնդրին կապակցութեամբ Պօղոս Նուպարի հասցեագրուած հեռագրով Չաւէն Պատրիարք 23 Ապրիլ 1919-ին բառացիօրէն կը գրէր թէ Ռուսերթ Գոլէնի տնօրէն Կէլթս հրապարակաւ արտայայտուած էր ի նպաստ Թուրքիոյ հողային ամբողջականութեան, թէ Կէլթս Փարիզ կ'երթայ ազդելու քրիտանացիներուն եւ ամերիկացիներուն վրայ ի հեճուկս յունեւհայկական պահանջներու, թէ քրիստոնէայ տարրերը տազնապած են, եւ թէ պետք է հակազդել (ՊՏԴ, տրցակ 5, թղթապանակ Հ, Հ888, ֆրանսերէն մեքենագիր):

¹²⁷ Կէլթսի բանախօսութեան հետեւանքով ստեղծուած աղմուկին դադարեցման

հետաքրքրիկ ենք իմանալու թե որոշ քաղաքական պաշտոն մը ունի՞ թե չէ, հող իր գաղափարները արժեցնել տալու ջանք ու փորձ ըրա՞ւ: Նոյնպէս Mr. Heck, որ Sop. Կէթօսի գաղափարները բաժնած ըլլալ կը թուէր, հող ի՞նչ ընթացք բռնած է: Կը կարծէ՞ք թե ասոնց կարծիքները կրնան կշիռ մը ունենալ հող ամերիկեան բարձր շրջանակներու մէջ:

*

Գիտէք կարծեմ թե նախորդ թուրք դահլիճնը *mémorandum* մը տուած էր եւրոպական տէրութեանց հայոց մասին, որուն մէջ շատ անհեթեթ ու սուտ փաստեր յառաջ կը բերէր, ընդ որս հայերու 1.000.000 իսլամ ջարդած ըլլալը¹²⁸: Մենք լսեցինք որ Բարիզի Հայկական Պատուիրակութիւնը պա-

նպատած կը թուի ըլլալ նաեւ անոր բացատրական նամակը՝ դրկուած յոյն պատասխանատու դէմքերէն եւ բժիշկ Դաւիթեանի հետ շաբաթական դրութեամբ գումարուող Հայեւյունական Բաժնի նիստերու մասնակից բժիշկ Թէոքոքասի Պոլսոյ մէջ հրատարակած օրաթերթին, որ լոյս կը տեսնէր անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով, հետեւեալ համապատասխան խորագրերով՝ *The Eastern Spectator* եւ *Le Spectateur d'Orient*: Յաւելուած Ը.-ով կու տանք նամակի հայերէն թարգմանութեան երկու տարբերակ, ատենին լոյս տեսած հայկական մամուլին մէջ, մի՛ն անգլերէնէ թարգմանուած, միւսը՝ ֆրանսերէնէ:

¹²⁸ Ակնարկուածը Բ. Դրան կամ վարչապետ Թեմֆիք փաշայի դահլիճին կողմէ 12 Փետրուար 1919-ին Պոլսոյ ամերիկեան, բրիտանական, ֆրանսական եւ իտալական բարձր յանձնակատարներուն ներկայացուած յուշագիրն է, որ կողքէ կողք 32 էջանի գրքոյկի մը ծաւալով հրատարակուած էր Պոլիս Զօլիչ Եղբայրներու Տպարանէն (*Memorandum of the Sublime Porte Communicated to the American, British, French and Italian High Commissioners on the 12th February 1919*) [Բարձր Դրան Յուշագիրը՝ Հաղորդուած Ամերիկացի, Բրիտանացի, Փրանսացի Եւ Իտալացի Բարձր Յանձնակատարներուն 12 Փետրուար 1919-ին]: Հոն յուշագրին հեղինակները երկարօրէն կը ծանրանան զանազան մարդահամարային տուեալներու վրայ, ապացուցանելու համար թե հայեր Եւրոպայի կողմէ հայկական նկատուած նահանգներու եւ Կիլիկիոյ մէջ ոչ մէկ ժամանակ կազմած են մեծամասնութիւն իսլամ տարրի համեմատութեամբ: Ապա կոչ կ'ընեն կարգ մը եւրոպական կառավարութիւններու մասնակցութեամբ միջազգային յանձնաժողովի մը կազմութեան՝ քննելու թուրքերու եւ հայերու պատասխանատուութեան բաժինը Ա. Պատերազմի ընթացքին պատահած «տխուր դէպքերու» վերաբերեալ, բառացիօրէն ըսելով թե հայկական հրոսակախումբեր կոտորած են աւելի քան մէկ միլիոն մահմետականներ նախքան տեղահանման միջոցառումներուն

տասխան մը տուած է այդ *mémorandum*ին. հոս մենք ալ ուզեցինք պատասխան մը տալ: Յոյները ուզեցին որ միասին գրենք, ատոր համար բաւական ժամանակ անցաւ, բայց յետոյ տեսանք թէ իրենց եւ մեր գրածները զիրար ձուլել անկարելի է: Մեր առարկութիւններն ու պահանջները միեւնոյնը չեն, որով մենք առանձին բաւական երկար ու խնամքով պատրաստուած Յիշատակագիր մը պատրաստեցինք որ տալու վրայ ենք, միայն թէ Բարիգի եւ մեր միջեւ հակասութիւն մը չլլալու համար, չուզեցինք հոս եւրոպացիներուն ներկայացնել, եւ որոշած ենք նախ հող խրկել քանի մը օրինակ, եւ եթէ նպատակայարմար գտնէք, հոս կը բաժնենք:

*

Գաւառներու վիճակը գրեթէ նոյնն է՝ անապահովութիւն եւ վերադարձող գաղթականներու եւ ոչ մի հատուցում: Այս օրերս *Էմիլալը-Մէթրուքէի* օրէնքի մը շարադրութեամբ շատ զբաղեցանք: Այդ նախորդ օրէնքին յառաջ բերած բոլոր անիրաւութիւնները, զրկանքները եւ կողոպուտը աստիճան մը դարմանելու ու փոխարինելու նպատակաւ պատրաստուած է, չեմ գիտեր թէ թուրք կառավարութիւնը ամբողջապէս պիտի ընդունի՞, եւ կամ ընդունելէ վերջ պիտի կրնա՞յ գործադրել: Մենք շատ յոյս չունինք, բայց վերջապէս փորձ մըն է որ մեր բարեկամները անօգուտ չեն գտնար: Եթէ այդ օրէնքը հրատարակուի, ըստ այնմ շատ մը անշարժ ու ծախուած կալուածները պիտի վերադարձուին, նոյնպէս շարժական գոյքերը ետ պիտի տրուին եւ կամ փոխարժէքը պիտի վճարուի: Այս երկրին համար չ[են] այս բաները, մանաւանդ երբ որ թուրքերը պիտի ըլլան գործադրողները: Եթէ միջազգային արդար մարմինի մը ձեռքով ըլլան այս բաները, այն ատեն արդիւնք մը յուսալ կարելի է, բայց դժբաղդաբար այդպիսի յոյս մը

դիմուիլն ու յատկապէս Յարին բանակներուն կողմէ արեւելեան նահանգներուն նուաճումը: Հետագային, երբ թրքական պատուիրակութիւնը, զխաւորութեամբ պաշտօնապէս հայոց դէմ ցեղասպանութիւն գործադրուած ըլլալը խոստովանող յաջորդ վարչապետ եւ Սուլթան Ապտիլմէնիտ Ա.ի փեսա Մեհմէտ Ատիլ Ֆերիտ կամ Տամատ Ֆերիտի 17 Յունիս 1919-ին պիտի ներկայանար Տասներու Խորհուրդին՝ թրքական տեսակէտները պաշտպանելու համար, Խորհուրդը իր 23 Յունիս 1919-ի պատասխանին մէջ պիտի նշէր թէ ներկայացուած թրքական յուշագրով պատերազմի ընթացքին գործուած ոճիրներու պատասխանատուութիւնը կը բարդուէր ատենի կառավարութեան վրայ եւ կ'աւելցնէր թէ չէր կրնար ընդունիլ թրքական պատճառաբանութիւններն ու եզրակացութիւնը եւ թէ ընդհանուր առմամբ ազգ մը պէտք է դատուի իր վրայ իշխող կառավարութեամբ:

չունինք եւ եւրոպացիները միշտ բոլոր այս գործողությունները թուրքերուն ձեռքովը գործադրել տալու քաղաքականութեանը կը հետեւին ու զմեզ ալ կը մղեն այդ ուղղութեան: Այդ քաղաքականութիւնը այս վերջին շաբաթները աւելի շեշտուած է: Շատ մը մանրամասնութիւններու մէջ որոշապէս կը տեսնենք թէ թուրքերու արժանապատուութիւնը վիրաւորել չ'ուզուիր եւ շատ մը ménagementներ ցոյց կը տրուին, որուն անմիջական հետեւանքը այն կ'ըլլայ որ թուրքերը երես առնելով, քաջալերուելով, հայերուս հանդէպ աւելի ամբարտաւան ու աւելի անիրաւ ընթացք մը կը բռնեն: Անշուշտ որոշ քաղաքականութեան մը արդիւնքն է այս, որուն թերեւս աւելի ուշ պիտի հասկնանք բուն պատճառները, բայց անմիջական հետեւանքները մեզի բնաւ նպաստաւոր չեն:

*

Այս վերջի ամսուան մէջ մեր ներքին խնդիրներուն է՛ն կարեւորը հանգանակութեան հարցն է: Սրբազանը ատով զբաղած է: Շաբաթը երեք անգամ գումարումներ կ'ունենայ եւ դրամահաւաքութեան գործը առաջ տանիլ կը ջանայ: Մեծ դժուարութիւններու կը բաղխինք, որովհետեւ մեր յուսացած գումարները կարելի չ'է եղած գանձել: Միւս կողմանէ, պետքերը անսահման են: Գրեթէ ամէն գաւառներէն դրամ կը պահանջեն եւ մանաւանդ գաւառները որբանոցներ բանալ հարկ պիտի ըլլայ, որոնց համար մեծագումար դրամ հարկաւոր է: Շատ հասկնալի է որ Պոլսոյ եւ Իզմիրի հայութիւնը չի կրնար իր նպաստովը դարմանել հայերուն կրած վնասները: Ատոր համար միլիոններ պէտք են, ինչ որ [ցոյց տրուած] էր Պատուիրակութեան պատրաստած վնասուց հատուցման տետրակին մէջ: Բայց մենք կ'ակնկալենք որ գէթ մէկ միլիոն ոսկի կարելի ըլլայ հանգանակել այս երկու քաղաքներուն մէջ. մինչդեռ մինչեւ այսօր Պոլսոյ մէջ 50.000 ոսկի միայն հաւաքուած է: Միտքերը հետզհետէ կը գրգռուին ու կը լարուին ունեւոր դասակարգին դէմ. մենք ալ չենք կրնար ընկրկիլ, պէտք է որ հաւաքենք այդ գումարը, որով անհաճոյ բաղխումներ ու վիրաւորիչ վէճեր անխուսափելի ըլլալ կը թուին:

*

Այս օրերս Պեսարապիոյ հայութեան կողմանէ Թումանեան անուն անձ մը հոս եկած է Երեւան մեկնելու համար: Ինքը Ռումանիայէն անցած ըլլալով, հոն լսած է թէ՛ ռումանահայ պատուիրակի գրածին համաձայն՝ Խաղաղութեան Համաժողովը վճռած է Հայաստանի խնդիրը, այսինքն՝ անկախ Հայաստանի մը գոյութիւնը որոշուած է, մայրաքաղաք ունենալով Վանը: Չենք գիտեր թէ այս լուրը ո՞ր աստիճան ստոյգ է. մաղթենք որ ճիշդ ըլլայ: Ամէն պարագայի մէջ, մենք որոշ ու պաշտօնական լուր մը չունինք:

Շատեր մեզի կը կը հարցնեն, բայց բան մը չգիտենք որ պատասխանենք: Անհամբեր կը սպասենք որ այդ բարի լուրը մեզի տաք շուտով, թէև մենք ալ փափաքող ենք ջերմապէս որ այդ որոշումը չիրատարակուի, որովհետև կրնայ մեր ժողովրդեան համար անհաճոյ հետեւանքներ ունենալ:

.....

Յարգանօք
Դաւիթեան

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 11 Մայիս 1919

Յարգելի բարեկամ,

Նամակս գրած էի եւ Զօրավար Կորկանօֆի¹²⁹ Պօլսէն անցնելով հող գալու առիթն օգտուիլ ուզեցի, բայց անմիջապէս չկրցաւ մեկնիլ, և կարծեմ վաղը երեկոյ կը մեկնի, որով այս երկրորդ նամակս ալ գրելու առիթը կ'ունենամ:

Երէկ ստացայ Ձեր 25 Ապրիլ նամակը եւ ներփակը ուղղեալ Տօք. Կէյթսի: Յիշեալը շատոնց մեկնած է եւ անշուշտ հող տեսնուելու առիթը ունեցաք եւ իր գաղափարները Ձեզի ալ բացատրեց: Յաւալի է իր մտայնութիւնը, մանաւանդ՝ հրապարակաւ իր ըրած յայտարարութիւնները բոլորովին անտեղի էին, ինչ որ այստեղի ամերիկացիներուն ալ մեղադրանքին արժանացան: Այս մասին Ձեզի գրած եմ արդէն Ապրիլ 18 թուականով եւ ֆր[անսական] դեսպանատան միջոցաւ. յուսամ ստացած կ'ըլլաք: Չեմ գիտեր թէ Տօք. Կէյթս հող ինչ դիրք բռնեց. միեւնոյն քարոզչութիւնները ըրա՛ւ արդեօք, թէ միջավայրի փոփոխութիւնը իր գաղափարներն ալ փոփոխեց, ինչ որ իրեն կը պատահի բաւական յաճախ: Տարակոյս չկար թէ ինքը Ձեզի ալ ծանօթ կարգ մը թուրքերու շարունակական ազդեցութեանը տակ մնացած էր, եւ դժբաղդաբար մեր կողմէ հակազդեցութիւն մը գործող չկար, որպէսզի չափաւորէր իր հակումները:

Միեւնոյն երեւոյթը հոս տեղի ունենալու վրայ է կարգ մը ուրիշ եւրոպացիներու մասին ալ: Թուրքերը քաջալերուած Ententisteներու [= Համաձայնականներու] թոյլատու եւ բարեացակամ ընթացքէն, այս վերջերս բաւական գործունէութիւն մը կը ցցեն եւ հազարումէկ խոստովանելի եւ ոչ միջոցներով անոնց համակրութիւնը շահելու եւ կամ՝ աւելի լաւը՝ հակակրութիւնը մեղմացնելու կ'աշխատին, եւ կարգ մը շրջանակներու մէջ յաջողած ըլլալ կը թուին:

¹²⁹ Իբրեւ 1914–18 թուականներու կովկասեան ռազմաճակատի գործողութիւններուն մասնակից, այդ իրադարձութիւններուն մասին 1927-ին Փարիզ ֆրանսերէն հատոր մը հրատարակած Զօրավար Գաբրիէ Ղորղանեան կամ Կորկանօֆ (1880–1954) Փարիզ կը մեկնէր զինուորական կցորդի դերով մասնակցութիւն բերելու Հաշտութեան Վեհաժողովին մօտ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան աշխատանքներուն:

Ձեզի վաղածանօթ Պօլսոյ հրեայ եւ Levantin [= արեւելցիներ կամ արեւելուիներ] խումբերը գործի վրայ են, նոյնպէս՝ թուրք մասնաւոր դասակարգ մը, եւ այս բոլորին մէջ գեղեցիկ սեռին խաղացած դերն ալ բոլորովին արհամարհելի չէ: Այսպէս թէ այնպէս, քանի գործերը ու որոշումները կ'ուշանան, կարծես մեզի հանդէպ գոյութիւն ունեցող համակրութիւններն ու բարեացակամութիւններն ալ կը պակսին: Այլեւս մեր տրտունջները, աղաղակները, գանգատները բթացուցած ըլլալ կը թուին մեզ խողներու սրտի թելերը, եւ թերեւս ալ բնական երեւոյթ մըն է: Անվերջանալի գանգատները վերջ ի վերջոյ ձանձրանալի կը դառնան: Բայց ինչ օգուտ որ, մեր սեւ բաղդէն, միշտ solliciteuri [= թախանձողի] դիրքին մէջ գտնուած ենք:

Միւս կողմանէ, դժբաղդաբար, մեր հայերուս բրօքականտի միջոցները սահմանափակ են, մեր նիթական միջոցները անձուկ, ընկերական յարաբերութիւնները նոյնպէս սահմանափակ, այնպէս որ մեր հարեւաններուն կարգ մը շարժումները չեզոքացնելու դժուարութիւններ կ'ունենանք, թէւ ուշի ուշով հետեւելով հակազդելու ձեռնարկներ ընելէ ալ չենք դադրած: Չեմ գիտեր թէ այս տեղի եւրոպացիներու կարծիքները ինչ աստիճանի կարեւորութիւն ու ազդեցութիւն կրնան ունենալ հոդ, բայց իրողութիւնը այն է որ Sop. Կէլթս առանձինն չէ եւ իրեն համակարծիքներ ունի:

*

Ռօպերթ Գոլէժի հայ շրջանաւարտներն ու ուսանողութիւնը որ շատ յուզուած է[ին] իր[ենց] տնօրէնին բռնած ընթացքէն, կարգ մը նամակներ գրած էին որ ինծի յանձնեցին Ձեզի խրկելու համար: Նամակները բաց են. կարդացէք եւ եթէ յարմար դատեք, հաճեցէք հասցէին խրկելու: Ուրիշներ ալ պիտի գրեն Բարիկ եւ Ամերիկա: Նախագահ Վիլսոնի ուղ[ղ]եալ հեռագիր մ'ալ խմբագրած են որ պիտի ջանանք քապլէ ընել [= հեռագրել] տալ եթէ յաջողինք: Mr. Ravndal ամերիկեան քօմիտէի անուանուած է: Չինքը շատ մօտէն չեմ ճանչնար, չեմ գիտեր մեր մասին իր կարծիքը, բայց այս օրերս շնորհաւորելու պիտի երթանք: Գործերու ընթացքն ալ հետզհետէ պիտի ցցնէ [իր ինչ ըլլալը], թէւ մինչեւ ցարդ ամերիկեան դեսպանատունը շատ չեզոք գտնուած է մեզի հանդէպ:

Ամերիկեան Նպաստամատոյցը իր գործերը հետզհետէ կազմակերպելու եւ ընդարձակելու վրայ է: Կովկաս բաւական ուտելիք խրկեցին եւ նախախնամական դեր մը կատարելու վրայ են հոն: Սամսոն, Մարգուան, Գոնիա, Պրուսա, Իզմիր արդէն գործի սկսած են: Սերաստիա եւ Խարբերդ, որ անապահովութեան պատճառով կը վարանին երթալ, այս օրերս մարդ խրկած են եւ կ'երեւի թէ իրենց ստացած տեղեկագիրները քաջալե-

րական են եւ տրամադիր՝ այդ կողմերը գործունէութիւն սկսելու: Մեր կողմէ ալ հետզհետէ առաջ տանելու վրայ ենք մեր կազմակերպական գործը: Մօտակայ գաւառները արդէն առաջնորդական ու խնամատարական կազմակերպութիւն կայ եւ որբանոցներ բացուելու վրայ են Իզմիտ ու Պրուսա: Սամսոն առաջնորդ գնաց եւ արդէն որբանոց կայ: Կը յուսանք մօտ ատենէն Սերաստիա ալ առաջնորդ մը խրկել եւ ուր արդէն տեղացի տարրերով գործի ձեռնարկուած է, նոյնպէս՝ Խարբերդ: Տիարալէքիւր եւ հեռունները դեռ ոչ մի կազմակերպութիւն: Չինուորական գրաւում մը անհրաժեշտ է աւելի ազատ ու առոյգ գործունէութիւն մը կարենալ ստեղծելու համար:

Ներփակ պիտի գտնէք քանի մը լրագիրներ ու կտրուա[ծ]քներ, երկու օրինակ թրքական ֆինանսի [= ելեւմուտքի] մասին քանի մը տեղեկութիւն պարունակող: Թերեւս Ձեզ կը շահագրգռէ. նոյնպէս՝ մեր Տեղեկատուութեան Դիւանին առաջին երկու թերթերը¹³⁰: Միւս կողմէ կարգ մը հայրենակցական միութիւններ կազմուած են¹³¹, որոնք իրենց գաւառի տեսակէտով օգտակար աշխատութիւններ կը կատարեն:

.....

Յարգանք
Տօք. Դաւիթեան

Ներփակ պիտի գտնէք նաեւ Պր. Ահարոնեանի ուղղուած նամակ մը, հաճեցէք փակել ու իրեն տալ: ...

Յ.Գ.- Ձեր 23 Ապրիլ նամակը այս վայրկեանիս ստացայ, նոյնպէս Նորատունկեան էֆէնտիինը. յետոյ կը պատասխանեմ:

¹³⁰ Ստուգապէս կարելի չեղաւ յստակացնել թէ ի՞նչ կամ ինչպիսի՜ հրատարակութեան կ'ակնարկէ Դաւիթեան: Ինչ կը վերաբերի Տեղեկատուութեան Դիւանին, պէտք չէ շփոթել զայն Տեղեկատու Դիւանին հետ, որ պիտի կազմուէր Դաւիթեանի գլխաւորած Քաղաքական Ժողովին 17 Օգոստոս 1919-ի որոշումով եւ դրուէր՝ Դաւիթեանի անմիջական ղեկավարութեան ներքեւ:

¹³¹ Թէոդիկի առաջարկով Պիմէն Զարդարեանի պատրաստած ցանկը կը յիշատակէ զինադադարէն անմիջապէս ետք ստեղծուած քսանհինգ հայրենակցական միութիւն («Միութենական Շարժում Կոստանդնուպոլսոյ», *Անէնուն Տարեցոյցը*, ԺԵ. տարի, 1921, տպ. Մ. Յովակիմեան, Ղալաթիա-Կ. Պոլիս, 1920, էջ 306–307):

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 16 Յունիս 1919

Յարգելի բարեկամ,

Ձեր բոլոր նամակներն ալ ստացած են, ինչպէս նաեւ վերջինը՝ 29 Մայիս թուականը: Իսկ վերջին անգամ Պ. Պապաջանեանի¹³² միջոցաւ Յունիս 2 նամակ մը գրած են, որուն մէջ կա[յին] քանի մը հաշիւներու ու նամակներու օրինակներ:

Mr. A. H. Lybyerի¹³³ հետ տեսնուեցայ, նոյնպէս՝ Mr. Montgomeryի¹³⁴ հետ: Մեր տեսակցութիւնները շատ երկար չեղան: Իրենք հոս երկար չմնալով անմիջապէս Սուրիա մեկնեցան, որով աւելի մանրամասնաբար ու երկարօրէն պիտի տեսնուինք իրենց վերադարձէն վերջ: Չեմ գիտեր թէ Հայաստանի մասին ի՞նչ տեղեկութիւններ պիտի կրնան քաղել: Դէպի ներսերը իրենց ճամբորդութիւնը դժուար պիտի ըլլայ եւ տեղւոյն վրայ որոշ տեղեկութիւններ մը չեն կրնար քաղել այն գլխաւոր պատճառաւ որ հայերը հեռացած են եւ գտնուածներն ալ ի վիճակի չեն զիրենք գոհացնելու: Միւս կողմանէ, պատրիարքարանի կազմակերպութիւնները, գաւառներու մէջ, դեռ թերի են եւ կարելի չէ հայ օրինաւոր ներկայացուցիչներու դիմել ու տեղեկութիւն քաղել, որով իրենց ընելիք քննութիւնները իրաց բնական բերմամբ միակողմանի պիտի ըլլան եւ միայն տեղւոյն թուրք իշխանու-

¹³² Իրաւաբան Միքայէլ Պապաջանեան կամ Բաբաջանեան (1868–1929), Փարիզ կը մեկնէր իբրեւ անդամներէն մին Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան: Հիմնադիրներէն էր եւ շրջան մըն ալ նախագահը պիտի ըլլար Հայ Ժողովրդական Կուսակցութեան, ինչպէս նաեւ եղած էր երեսփոխան ցարական Ռուսաստանի խորհրդարանին:

¹³³ Պատմութեան դասախօս Ալպերթ Լայպլըր (Albert Howe Lybyer, 1876–1949) Պոլիս կը գտնուէր իբրեւ խորհրդական Քինկ-Քրէյն Յանձնաժողովին:

¹³⁴ Մարաշ ծնած Իմաստասիրութեան Դոկտոր, դասախօս եւ աւետարանիչ Ճորճ Մոնթկոմըրի (George Reddington Montgomery, 1870–1945) 1916-ին Պոլիս վարած էր ամերիկեան դեսպանին յատուկ խորհրդականի պաշտօնը, անդամ նշանակուած էր Փարիզի Հաշտութեան Վեհաժողովի ամերիկեան յանձնաժողովին, ապա խորհրդական կարգուած էր Քինկ-Քրէյն Յանձնաժողովին: Աւելի ուշ, 1920–23 տարիներուն պիտի գործէր որպէս տնօրէնը Ամերիկեակական Ընկերութեան:

թիւներուն ըսածները արձանագրած պիտի ըլլան: Որոշ բան մը չկրցի հասկնալ թէ ի՞նչ բաներու վրայ լուսաբանուիլ կը փափաքին: Հայերս պահած չունինք թէ առ այժմ Հայաստանի մէջ շատ ժողովուրդ չունինք. զինադադարէն վերջ երկրին վիճակը չբարուքուեցաւ որպէսզի հայերը իրենց բնագաւառը խուժեն. ընդհակառակը ամէն ջանք կը թափուի որպէսզի այդ կողմերը [հայ] մարդ չերթայ: Հետեւաբար իրենց ճամբորդութեան ընթացքին պիտի հանդիպին ցանցառ հայերու, շատ մը աւերուած ու կործանուած գիւղերու եւ ամայութեան. ահաւասիկ վերիվերոյ տեսնելիքնին: Այսինքն՝ բան մը, որ արդէն ծանօթ է եւ որուն համար չ'արժեր այդքան անհաճոյ ճամբորդութիւն մը ընել:

Քաղաքական.-

Անցեալ օր Colonel Desbrière անունով զինուորական մը եկաւ Ս. Պատրիարքին, ընդհանուր հրամանատար Զօրավար Փրանշէ-Լո'Էսպէր]էի¹³⁵ կողմանէ: Այս անձը որպէս ֆրանսական ներկայացուցիչ Կովկաս կ'երթայ եւ Վեհափառ Կաթողիկոսին¹³⁶ յանձնարարական մը տրուեցաւ: Մեզի որոշ կերպով յայտնեց թէ Փրանսա չէ մոռցած իր դարաւոր դերը Արեւելքի մէջ, թէ՛ միշտ պատրաստ է օգնութեան փութալ տառապող ու հարստահարուած ազգերու, թէ՛ կը ցաւի որ այս վերջերս իրենք մոռցուած են եւ հայերը վարանումներ ունին, թէ՛ թերեւս ալ հասկնալի պատճառներով հայերը որոշ ուղղութիւն մը ու դիրք մը բռնելու կը տատամսին. բայց վերջապէս Փրանսա հոս է եւ միշտ պատրաստ ձեռք կ'արկառելու: Մենք մեր կողմանէ բնականաբար մեր սէրն ու երախտագիտութիւնը յայտնեցինք Փրանսայի մասին, թէ՛ իրենց չքնաղ երկիրը մեր երկրորդ հայրենիքն է եւ միշտ բարիքները վայելած ենք ու կը յուսանք որ Փրանսա, հաւատարիմ իր ասպետական ոգւոյն ու աւանդութեանց, այս անգամ ալ մեր անկախութեան հարցին մէջ մեզի պիտի օգնէ: Յետոյ խօսակցութիւնը դարձաւ ներքին գաւառներու կացութեան մասին: Նշմարեցինք որ պարոնը բոլորովին անտեղեակ էր Թուրքիոյ մէջ անցած դարձածէն եւ կը զարմանար որ հայերը դեռ իրենց տեղերը չեն վերադարձած: Ո՛վ է հիմա

¹³⁵ Զօրավար Փրանշէ (Louis Franchet d'Espèrey, 1856–1942) ընդհանուր հրամանատարն էր Համաձայնականներու Արեւելեան Բանակին, որուն յաղթանակները պիտի նպաստէին Ա. Աշխարհամարտի աւարտը նշանաւորող զինադադարի կնքման:

¹³⁶ Գէորգ Ե. Սուրենեանց Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուած էր 1911-ին: Պիտի վախճանէր 1930-ին:

ձեզի սպառնացողը կ'ըսէր եւ ասոր նման հարցումներ: Ջանացինք կարելիին չափ կացութիւնը իրեն պարզել եւ եզրակացուցինք որ գաւառներու ապահովութիւնը Համաձայնական ուժերու գրաւումովը միայն կրնայ իրականանալ: Այս մասին ալ կարգ մը բացատրութիւններէ վերջ մեզմէ ծրագիր մը ուզեց. այսինքն՝ ինչպէ՞ս կարելի է զինուորական գործողութիւն կատարել այդ կողմերը եւ թէ՛ հայերը ի՞նչ ուժ կրնան տրամադրել եւ ի՞նչպէս: Բոլորովին մերժած չըլլալու համար, համառօտ ծրագիր մը պատրաստելով իրեն տուինք¹³⁷, որուն օրինակը ներփակ կը դրկեմ Ձեզի:

Ներփակ պիտի գտնէք նաեւ Կիլիկիա դրկուած մեր մասնաւոր պատուիրակին նամակին մէկ օրինակը¹³⁸, որուն մէջ նկարագրուած՝ ֆրանսական զինուորական իշխանութեանց ընթացքը հայ կամաւորներու հանդէպ բոլորովին կը հակասէ վերի ըսուածներուն: Աւելորդ բացատրութիւններ չեմ ուզեր տալ. նամակին պարունակութիւնը որոշ կերպով կը պատմէ իրողութիւնը:

*

Գրած եմ արդէն թէ թուրքերը այս վերջերս բաւական գործունէութիւն մը կը ցցեն. անընդհատ բրօքականտ ընելու վրայ են: Վերջերս Entente անունով թերթ մը հիմնած են¹³⁹, բայց իրենց ջանքերը գլխաւորաբար Անկլօ-Ամերիկեան շրջանակներու մէջ է որ կը թափեն: Տօք. Ֆրուի¹⁴⁰ շաբաթական ընդունելութեանց առթիւ, բաւական թիւով անգլիախօս թրքուհիներ կ'այցելեն իր տունը, իսկ իր կիրակնօրեայ քարոզներուն մէջ չի մոռնար սքօղեալ բրօքականտ մը մղել ի նպաստ թուրքերուն: Ամերիկեան ծովակալ Պրիսթօլ¹⁴¹ յաճախ շրջապատուած ըլլալ կը թուի թրքուհի-

¹³⁷ Չյաջողեցանք գտնել այդ ծրագիրը:

¹³⁸ Կը թուի թէ ակնարկուած նամակը 3 Յունիս թուակիրն է, զոր չգտանք դիւանաթուղթերուն մէջ եւ որուն յղում կատարած է Քաջբերունի իր 17 Յունիս 1919 թուակիրին մէջ (տես Յաւելուած Թ.):

¹³⁹ Պոլիս ֆրանսերէնով հրատարակուող L'Entente թերթը ունեցած է կարճատեւ կեանք՝ յոյս տեսնելով միայն 1919 տարուան ընթացքին:

¹⁴⁰ Ենթադրաբար 1868-ին ծնած եւ 1941-ին մահացած սկոտլիացի աստուածաբան Robert Frew, որ կ'ըսուի թէ Պալքանեան պատերազմի ընթացքին Բրիտանական Կարմիր Մահիկ Ընկերութեան գործակցութեամբ հոգ տարած է աղիտեալ թուրքերու եւ տուեալ շրջանին հովին էր «Եունիքն» եկեղեցոյ, թրքական աղբիւրներու մէջ յիշատակուած է որպէս անգլիական լրտես:

¹⁴¹ Ծովակալ Մարք Պրիսթօլ (Mark Lambert Bristol [1868–1939]), որ հայ քա-

ներեւ. իր այցելութեան ժամերուն շատ անգամ նշմարուած է որ թրքուհիներ մեծ թիւով կը ներկայանան: Առնաւուտ գիւղի վարժարանը միշտ թուրք բրօքականտի կեդրոնը ըլլալ կը թուի: Հոն է որ երես կը գտնեն բոլոր այդ տիկիներն ու պարոնները: Խալիտէ հանրմ¹⁴² մեծ գործունէութիւն մը կը ցցնէ. նոյնիսկ թերթերուն մէջ կարդացինք որ Բարիզ պիտի գայ թուրք պատուիրակութեան մաս կազմելու համար: Նոյն բրօքականտը կը մղուի ֆրանսական շրջանակներու մէջ եւ ասոնց բոլորին արդիւնքը սա եղած է որ զինադադարի սկիզբները թուրքերուն դէմ եղած հոսանքը այսօր դադարած է եւ շատ մը զինուորականներ նպաստաւոր գաղափարներ արտայայտելու չեն վարանիր:

Հարկ չկայ Ձեզի բացատրել[ու] մտայնութիւնը այն բոլոր եւրոպացիներուն որոնց անձնական շահերը իրենց քաղաքականութեան բուն առանցքը կը կազմեն: Անշուշտ ասոնց մէջ նշանաւոր մարդիկ չկան, բայց մեծ մասամբ ասոնք են որ կը գործածուին որպէս տեղական լեզուներու եւ բարբերու աւելի գիտակ անձեր, եւ շատ անգամ ալ անոնց հետ է որ գործ կ'ունենանք զանազան խնդիրներու առթիւ:

Յաւալի է ըսել որ այդ բրօքականտը չէզոքացնելու համապատասխան գործունէութիւն մը չենք կրցած ունենալ: Դուք գիտէք մեր պայմանները: Երբեք չպիտի կրնայինք մրցիլ Իթթիհատի տրամադրած նիւթական միջոցներուն դէմ. բայց կը նշմարենք որ հող կորսնցնելու վրայ ենք եւ այս օրերս կարգ մը ձեռնարկներ ընելու մտադիր ենք, որոնց մասին վերջը կը խօսիմ:

*

Այս վերջին շաբթուն քիւրտերուն հետ երկու անգամ տեսնուելու առի-

ղաքական գործիչներու կողմէ ամբաստանուած է որպէս թրքամէտ, 1919-ին Միացեալ Նահանգներու Բարձր Յանձնակատար նշանակուած էր Պոլսոյ մէջ եւ իր այդ հանգամանքով կը զբաղէր հայեւթուրք յարաբերութիւններու հարցերով ու Հայաստանի հոգատարութեան խնդրով: Ան 1922-ի Նոյեմբերէն 1923-ի Փետրուար անպաշտօն կերպով ներկայ պիտի գտնուէր Լոզանի Խորհրդաժողովի նիստերուն եւ զանոնք նիւթ դարձնէր իր օրագրութիւններուն: Պրիսթոլ Համազգային Խորհուրդին ուղղուած իր նամակներուն մէջ վերապահութիւն ցուցաբերած է աղիտալի կացութեան վերաբերեալ իրեն ներկայացուած տեղեկութիւններուն հանդէպ:

¹⁴² Ազգայնամոլ Խալիտէ Էտիպ Ատըվար (1884–1964), հայ որբեր թրքացնող տխուր դերակատարներէն մին, իր տունը դարձուցած էր քաղաքական գործիչներու և մտաւորականներու հանդիպավայր:

թը ունեցանք: Քիւրտերը հոս քիւլայ մը ունին որ իբր թէ յանուն բոլոր քիւրտերու խօսելու իրաւասութիւնը ունի: Ատոնցմէ երեք ներկայացուցիչներ մեզի դիմեցին հասկնալու համար թէ հայերը տրամադի՞ր են իրենց հետ զանազան խնդիրներու մասին հասկացողութեան մը գալու: Բնականաբար շատ ջերմ ընդունելութիւն մը ըրինք եւ ուզեցինք գիտնալ թէ ի՞նչ են իրենց դիտաւորութիւնները եւ պահանջները: Իրենց յայտարարածին համաձայն, Շէրիֆ Փաշա քիւրտերու լիազօր ներկայացուցիչն է ի Բարիզ եւ անոնց իրաւունքները պիտի պաշտպանէ Հաշտութեան Համաժողովին մէջ, թէ՛ անգղիական շրջանակներու մէջ իրենց մասին համակրութիւն կայ եւ պատրաստակամութիւն իրենց դատը պաշտպանելու: Կարգ մը կէտեր բանակցութեանց առարկայ եղան եւ որոնց վրայ համաձայնութիւն մը գոյացնել դժուար չպիտի ըլլայ: Ներփակ պիտի գտնէք բանակցութեանց առարկայ եղող այդ խնդիրները¹⁴³: Բայց գլխաւոր կէտը, որու մասին համաձայնի կարելի չէ, սահմաններու խնդիրն է: Իրենք կը պահանջեն Վան եւ Մուշ գրեթէ ամբողջութեամբ, յետոյ Կարնոյ տակէն անցնելով իրենց գծած սահմանը կ'երթայ մինչեւ Տիվրիկ, Տարէնտէ, յետոյ վար կ'իջնայ եւ մաս մը Կիլիկիայէն առնելով կ'երթայ հարաւ ուր կը պահանջեն նաեւ Տիգրանակերտը եւս, իսկ անցք մ'ալ դէպի Միջերկրական, մէջն ունենալով Ալեքսանտրէթը:

Մենք իրենց յայտնած ենք թէ այս կարգի հարցերը Բարիզի մէջ կրնան ծեծուիլ ու վճռուիլ, թէ՛ մենք ձեռնհաս չենք, բայց իրենք կը պնդեն շարունակել բանակցութիւնները եւ կ'ուզեն կ'երեւի մեզմէ *consession* [= զիջում] մը առնել, որպէսզի Շէրիֆ Փաշայի հաղորդէն թէ հայերը տրամադիր են իրենց ներկայացուցած Հայաստանի սահմաններէն զիջումներ ընել ի նպաստ քիւրտերու¹⁴⁴:

¹⁴³ Տեսնել այս նամակին յաջորդող 15 Յունիս թուակիր վեց կէտերէ բաղկացած ամփոփագիրը:

¹⁴⁴ Հայեւքոտական բանակցութիւնները աւելի ուշ պիտի կատարուէին Փարիզի մէջ եւ յանգէին հրապարակուած յայտարարութեան մը (*Համահաւաք* Բ., էջ 942–943), ուր կ'ըսուէր թէ երկու ազգերն ունին իրենց ազատութեան եւ անկախութեան հասնելու նոյն նպատակը՝ հողամասերու յատկացման եւ սահմանագծման խնդիրը վստահելով Խաղաղութեան Վեհաժողովին տալիք որոշումներուն: Համաձայնագիրը պիտի բաղխէր դժգոհութիւններու: Գարեգին Փաստրմանեան, որ անդամ էր Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան եւ Նիւ Եորք կը գտնուէր Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կարգադրութեամբ, 6 եւ 7 Յունուար 1920 թուակիր

Հարկ չկայ ըսելու թե այս բանակցությունները որևէ լուրջ հանգամանք չեն կրնար ունենալ եւ ոչ ալ գործնական արդիւնք մը արտադրել, բայց մենք խզելու միտք չունինք, եւ եթէ քիւրտերը, գէթ առժամեայ կերպով, հանդարտ մնալու ծառայէ, այդ ալ մեծ բան է: Քիւրտիստանի սահմաններուն վրայ խօսուած ատեն յայտարարեցին թէ իրենց բաղձանքին համաձայն Քիւրտիսթան մը կազմուած պարագային, երբ Չորսերու Ժողովը¹⁴⁵ վճիռը տայ եւ երկու դրացի ժողովուրդներու անկախութիւնը յայտարարուի, ապահովաբար որեւէ բաղխում տեղի չ'ունենար եւ երկու ժողովուրդներն ալ գոհ կը մնան. հակառակ պարագային, ատելութիւններ կրնան պատահիլ:

անգլերէն հեռագիրներով Պօղոս Նուպարի պիտի գրէր յաջորդաբար. «Ծիշդ հիմա իմացայ թէ Հաշտութեան Վեհաժողովին [ուղղուած] Յիշատակագրի մը մէջ միացեր էք Ծերիֆին: Այդ քայլը ոչ միայն դուրս է ձեր իրաւասութեան ծիրէն, ինչպէս ան սահմանուած եւ բնորոշուած է Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան փոխըմբռնման յուշագրին մէջ, այլ նաեւ կը վնասէ մեր օրինական իրաւունքներուն եւ պատեհութիւն կ'ընծայէ այլ հակադիր շահերու՝ զայն շահագործելու համար: Հետևաբար այս պաշտօնական բողոքը կը կատարեմ անոր դէմ»: «Հաշտութեան Վեհաժողովին [ուղղուած] Յիշատակագրի մը մէջ ձեր Ծերիֆին միանալը ձախորդ եւ աններելի սխալ մըն է: Իրաւունք ունի՞ք փոխելու Հայաստանի սահմանները» (ՊՏԴ, տրցակ 9, թղթապանակ M6000_Ղ, Ղ145, անգլերէն մեքենագիր): Ի պատասխան, Նուպար պիտի դրկէր նոյնիմաստ բացատրութեամբ ֆրանսերէն հեռագրեր, որոնցմէ երկրորդին մէջ կ'ըսուէր. «Առանց կանգ առնելու ձեր հեռագրին անսովոր ձեւին վրայ, ձեզի կը տեղեկացնեմ թէ քիւրտերուն վերաբերող յիշատակագիրը ներկայացուած է որոշումովը Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան եւ կը կրէ ստորագրութիւնը Օհանջանեանի՝ փոխարինաբար Ահարոնեանի, որ անոր խմբագրման մէջ համագործակցելէ ետք հարկադրուած էր Լոնտոն երթալ» (ՊՏԴ, տրցակ 9, թղթապանակ M6000_Ղ, Ղ146, ֆրանսերէն մեքենագիր):

¹⁴⁵ Չորսերու Ժողովը բաղկացած էր Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Միացեալ Նահանգներու Փարիզ մէկտեղուած գլխաւոր բանակցող կողմերով՝ վարչապետ Տէյվիտ Լօյտ Ճորճ, վարչապետ Ժորժ Բլեմանսօ, վարչապետ Վիթթօրիօ Էմանուէլ Օրլանտօ եւ նախագահ Վուտրօ Ուիլսըն: Յիշեալները Փարիզի Հաշտութեան Վեհաժողովին մասնակից այլ երկիրներու ներկայացուցիչներէն առանձնանալով իրենց գումարումներուն մէջ կը մշակէին Վեհաժողովին կողմէ առաջդրուած եւ վաւերացուած դաշնագրերը:

Ապահովություն.-

Մօտաւոր թէ հեռու գաւառներէ հասած տեղեկագիրները շատ ծանր կը նկարագրեն կացութիւնը: Ամէն տեղ զինուած թուրք ժողովուրդ մը, որ միշտ կը սպառնայ ջարդել հայերը եւ ասոր դէմ որեւէ գործնական քայլ առնուած չունի ոչ թուրք կառավարութեան եւ ոչ ալ Համաձայնականներու կողմանէ: Առանց չափազանցած ըլլալու, պիտի ըսեմ թէ գաւառներու այժմեան կացութիւնը պատերազմի վերջին երկու տարուան կացութենէն աւելի վատթար է: 1917-18 տարիներու մէջ Իթթիհատի կառավարութիւնը աստիճան մը դադրեցուցած էր հալածանքը եւ ջարդի սպառնալիք չկար այլեւս: Հոս հոն ցրուած ժողովուրդը որեւէ կերպով ապրուստի միջոց մը գտած կը համբերէր ու կը սպասէր լաւագոյն օրերու: Չինադադարի առաջին երկու ամիսները Իթթիհատը տապալած ու վարկաբեկուած, թուրք ժողովուրդն ալ սահմնկած, ջարդի երկիւղ չկար բնաւ: Բայց կացութիւնը փոխուեցաւ հետզհետէ եւ թուրք տարրը սկսաւ նորէն խլրտիլ, օգտուելով անշուշտ Համաձայնականներու աստիճանաբար աւելցող թոյլատու ընթացքէն: Չինադադարէն վերջ, իրարու յաջորդող թուրք նախարարութիւններու ապիկար ու թոյլ ընթացքը եւ մանաւանդ Չմիւռնիոյ՝ հէլլէններու կողմանէ գրաւումը¹⁴⁶, սքանչելի կերպով շահագործուեցաւ Իթթիհատի կողմանէ: Թուրքերը կը խորհին թէ ներկայ կառավարութիւնը անկարող է զիրենք փրկելու քայքայման վտանգէն, եւ Իթթիհատը կը ներկայանայ նորէն որպէս միակ կազմակերպուած ուժը որ պիտի կրնայ իր դիմադրութեամբ ու սպառնալիքներովը ազդել Հաշտութեան Ժողովի որոշումներուն վրայ:

Տամատ Ֆէրիտ Փաշայի որպէս թուրք լիազօր պատգամաւոր Բարիզ մեկնելուն առթիւ ամէն կողմէ բազմաթիւ բողոքի հեռագիրներ քաշուեցան սուլթանին, ինչ որ կ'ապացուցանէ թէ Իթթիհատը զանազան անուններու տակ երկրին քաղաքականութիւնը վարելու ձգտումներ ունի եւ թուրք ժողովուրդն ալ, թէեւ յուսախաբ Իթթիհատէն, բայց առ ի չգոյէ ուրիշ ուժի

¹⁴⁶ Յունական ուժերը Չմիւռնիա մուտք գործած էին 15 Մայիս 1919-ին եւ պիտի շարունակէին շրջանը իրենց հակակշռին ներքեւ պահել մինչեւ քաղաքին ոչ-թրքական շրջաններուն հրկիզումը քեմալական ուժերու կողմէ 9 Սեպտեմբեր 1922-ին: Չմիւռնիոյ անկումին հազիւ ամիս մը ետք պիտի հետեւէր Համաձայնական պետութիւններու հեռացումը Կոստանդնուպոլսէն, որուն իրենց վերջին հրաժեշտը պիտի տային խունապի մատնուած բազմաթիւ հայեր, ներառեալ՝ Չաւէն Պատրիարքը եւ կարեւոր թիւով գործիչներ ու մտաւորականներ, մեկնելու Եւրոպա եւ այլուր:

մը, նորէն անկէ կը յուսայ երկրին փրկութիւնը:

Այսպէս, ուրեմն, հայ ժողովուրդը այս վայրկեանիս, կայսրութեան մէկ ծայրէն միւսը, ջարդի մնայուն սպառնալիքին տակը կը գտնուի: Դաշտային աշխատութիւնները անկարելի դարձած [են] եւ վերադարձող հայերուն քիչ շատ բարեկեցիկ դասակարգը ստիպուած նորէն կը գաղթէ ու կ'երթայ աւելի ապահով տեղ մը՝ Պօլիս կամ Զմիւռնիա, իսկ աղքատ դասակարգը կը մնայ հոն բոլորովին անտէր ու անտիրական: Պատրիարքարանը, առ ի չգոյէ առաջնորդ եկեղեցականներու, շատ տեղեր վերադարձող բանիմաց ազգայիններէն մարմիններ կազմած էր որբերու, տարագիրներու եւ ազգային այլեւայլ խնդիրներով զբաղելու համար: Այսօր այդ մարմիններն ալ քայքայուելու վրայ են տեղ տեղ եւ խնամատարական գործը պիտի մնայ բոլորովին անկերպարան վիճակի մը մէջ:

Մեր դիմումները գործնական արդիւնք մը չեն տուած դեռ, թէւ կը շարունակենք միշտ մեր ցաւերը ներկայացնել ու դարման խնդրել:

Խնամատարական.-

Մեր որբերու, տարագիրներու խնամքը յանձնուած է Ազգ. Խնամատարութիւն անուամբ մարմինի մը հոգածութեան եւ որուն գլխաւոր ու առ այժմ միակ հասոյթի աղբիւրը եղած է Պոլսոյ մէջ եղած հանգանակութիւնը, որ դեռ կը շարունակուի, եւ Պուկարիայէն ու Ռումանիայէն եկած մաս մը դրամը: Այս մասին անցեալ անգամ քանի մը տեղեկագիրներ խրկեցի Ձեզի. Ապրիլ-Մայիս ամսոյ տեղեկագիրն ալ յառաջիկայ առթիւ կը դրկեմ: Մեր որբերը հոս շատ մը որբանոցներու մէջ գետեղած ենք մեծ շէնքերու պակսելուն համար եւ որոնց թիւը 2500ի հասաւ: Բացի Պօլսոյ մէջ նախապէս գտնուած որբերէն, ասոնցմէ զատ Իզմիտի եւ Պրուսայի մէջ որբանոցներ բացուելու վրայ են, նոյնպէս եւ զանազան գաւառներ, եւ ինչպէս գիտէք, դեռ հազարաւոր որբեր կան թուրքերու քովը, որ հետզհետէ առնելու պիտի աշխատինք, թէւ շատ դժուար հարց մըն է: Թերեւս 50000է աւելի որբեր կան ցրուած հոս ու հոն եւ որոնցմէ մաս մը թերեւս բնաւ չպիտի յաջողինք ետ առնելու: Այսօր Պոլսոյ թէ գաւառներու մէջ պատրաստ գտնուած որբերու թիւը 10000ի մօտ է: Արդ, իւրաքանչիւր որբի միայն ուտեստի համար եթէ 6 ոսկի հաշուենք, ամսական 60000 ոսկիի գումարի մը կը կարօտինք: Ասոնցմէ բաւական թիւով որբեր ամերիկացիները կը խնամեն թէւ, բայց եթէ նկատի առնենք սա պարագան թէ դեռ շատ մը տեղեր որբերը հաւաքուած իսկ չեն տակաւին կազմակերպութեան, նամանաւանդ դրամի չգոյութեան պատճառաւ, այն ատեն Խնամատարութեան հաշուոյն հոգացուելիք որբերու թիւը 10000 հաշուելը

չափազանցում չէ:

Գալով տարագիրներու խնդրոյն, այդ մասին ըլլալիք ծախքերը անսահման են: Ես ներգաղթի եւ վերաշինութեան պարագան չէ որ նկատի կ'առնեմ, այլ պարգապէս մինչեւ հայկական կառավարութեան մը կազմութեան ատեն, կարօտ ժողովուրդին չոր հաց մը հայթայթելու համար մեծ գումարներու պէտք ըլլալուն հարցն է որ զմեզ մեծապէս կը զբաղեցնէ եւ այդ մասին շատ մտահոգ ենք: Մեզի կը թուի թէ առ նուազն ամսական 100000 ոսկիի պէտք մը կայ, ինչ որ մեծ գումար մը չէ, երբ նկատի առնենք սա պարագան թէ շատ մը տեղեր մէկ թուղթը հազիւ 15–20 դուրուշ արծաթ դրամ կ'արժէ եւ հացահատիկն ալ Պօլսէն աւելի սուղ է: Այս գումարին մէջ չեմ հաշուած որբերու հագուստի եւ անկողնոյ սպասներու ծախքերը, կարգ մը տարագրեալներու ճամբորդութեան ծախքերը եւայլն եւայլն:

Արդ, մեր միջոցներովը ամսական այդպիսի գումար մը հայթայթելու որեւէ հնարաւորութիւն չունինք եւ կը մտածենք թէ ի՞նչ պէտք է ընենք, մանաւանդ երբ ամէն օր գաւառներէն անօթութեան ու թշուառութեան սրտակեղեք նամակներ կը ստանանք, որո[նց] մէկ նմուշը Չօրավարին տրուած տեղեկագրի մը համաձայն ներփակ կը գտնէք:

Բաւական ատենէ ի վեր Բարիզի Supreme Economic Councilի [= Գերագոյն Տնտեսական Խորհուրդի] ներկայացուցիչները հոս են եւ որոնց հետ շատ անգամներ շփման մէջ գտնուած ենք¹⁴⁷: Իրենց տեղեկագիրներ

¹⁴⁷ Փարիզի Հաշտութեան Վեհաժողովի Գերագոյն Տնտեսական Խորհուրդը ստեղծուած էր նախագահ Ուիլյամի առաջարկով եւ Գերագոյն Պատերազմական Խորհուրդին վաւերացումով: Մասնակիցները կը ներկայացնէին չորս մեծ պետութիւնները՝ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա եւ Միացեալ Նահանգներ: Հետագային նիստերուն պիտի մասնակցէր նաեւ Պելճիքայի ներկայացուցիչը: Առաջին նիստը գումարուած էր 17 Փետրուար 1919-ին: Խորհուրդը զանազան խնդիրներու առընթեր պիտի զբաղէր պատերազմէն ամենէն շատ վնասուած երկիրներու տնտեսական վերականգնումով եւ պարենային հարցերով: Օրակարգին մաս պիտի կազմէր նաեւ պոլշէիկ Ռուսիոյ հետ տնտեսական յարաբերութիւններու հարցը: Խորհուրդն իր հիմնական ուշադրութիւնը կեդրոնացուցած էր եւրոպական երկիրներու եւ հինգ մասնակից երկիրներու տնտեսական շահերուն վրայ: Հայոց պարագային, անոնք հետաքրքրուած էին Հայաստանի Հանրապետութեան եւ ոչ թէ արեւմտահայութեան տնտեսական հարցերով: 23 Յունիս 1919-ի քսանչորրորդ նիստի ատենագրութենէն, օրինակ, յայտնի կը դառնայ թէ Բրիտանական Գիտարուեստական Առաքելութիւնը զբաղելով Անդրկովկասի եւ Հայաստանի երկաթուղագիծերով, կը փորձէր կազմակերպել արդիւնաւէտ

ու բերանացի բացատրություններ տուած ենք երկրին ու ժողովուրդին կացութեանը մասին եւ իրենք ալ նկատի առնելով երկրին ու մեր բացառիկ դրութիւնը, ըստ այնմ տեղեկութիւններ հաղորդած են Բարիգ: Արդ, վերջերս մեր տեսակցութեանց մէջ յայտնեցին թէ երկրին անապահովութեան ու փոխադրութեանց միջոցներու անբաւականութեան պատճառաւ, իրենց համար շատ դժուար պիտի ըլլայ երկրին մէջ նպաստի գործ մը կազմակերպել եւ խորհուեցաւ փոխատուութեան ձեւ մը գտնել: Իրենք կը խորհին թէ մեր Բարիգի Պատուիրակութիւնը կրնայ փոխառութիւն մը կնքել ի հաշիւ Հայաստանի ապագայ կառավարութեան: Այդ իմաստով տեղեկագիր մը խրկեցին Բարիգի իրենց կեդրոնին եւ ինձմէ ալ խնդրեցին որ Ձեզի գրեմ, որպէսզի եթէ անպատեհ չնկատէք, այդպիսի դիմում մը կատարէք փութով հետեւեալ հասցէին.

Sir William Goode

British Representative of the Food Section

Supreme Economic Council

Hôtel Majestic – Paris

Իրենք ամսական 50000 անգղիական ոսկիի համար գրեցին եւ որոշ կերպով հասկցուցին թէ այս գումարը անմիջական ծախքերու եւ մանաւանդ անհրաժեշտ սնունդը հայթայթելու սահմանուած է:

Չեմ գիտեր թէ Պատուիրակութիւնը ինչ կը խորհի այս մասին: Կարելի կը նկատէ՞: Կէտ մը կայ, սակայն, որու վրայ Ձեր մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմ. այն է մեր ժողովրդեան օրհասական ու վտանգաւոր վիճակը: Որեւէ գնով պէտք է օգնութեան հասնինք, եթէ ոչ վերապրողներու մէկ մեծ մասը պիտի մեռնի եւ արդէն մեր ամայի երկրին մէջ իրապէս ժողովուրդ չպիտի ունենանք: Այս է ճշմարիտ ու իրական կացութիւնը:

Չինադադարէն վերջ երկու բանի վրայ յոյս դրած էինք մեր ժողովուրդը ապրեցնելու համար. այն է՝ ապահովութիւն եւ յափշտակուած շարժուն ու անշարժ գոյքերու վերադարձը: Արդ, երկուքն ալ չիրականացան: Եթէ ապահովութիւն ըլլար, հայ ժողովուրդը դաշտի եւ այլ աշխատութիւններով իր ապրուստին մեծ մասը կրնար ապահովել, մաս մ'ալ իր կողոպտուած ստացուածքին վերադարձով կ'ապրէր, մնացածն ալ մեր ու ամերիկացիներու օգնութեամբը անօթութենէ մեռնելու վտանգէն կ'ազատէր:

Էմիլյար Մէթրուքէի օրէնքը, որու մասին խօսած եմ ձեզի, վերջը աւելի

սպասարկութիւն մը Սեւ Ծովէն Կասպից Ծով, կամ Գերագոյն Տնտեսական Խորհուրդը կը ջանար Հայաստանի յատկացուող օգնութիւնը բարձրացնել ամիսը հինգէն տասնհինգ հազար թոնի:

մանրամասնօրէն ուսումնասիրուեցաւ եւ հայելթուրք յանձնախումբի մը կողմէ կատարելագործուելով կառավարութեան յանձնուած է շատոնց, բայց կ'երեւի թէ այդ օրէնքին հաստատումը դժուարութեան կը բաղխի: Կառավարութիւնը այս միջոցներուն չի համարձակիր կոր հայերուն նպաստաւոր այդպիսի օրէնք մը հրատարակել, որով այդ կողմէն ալ յոյսերնիս չիրականացաւ: Այս առթիւ ըսեմ թէ տեղւոյս օտար զինուորական իշխանութիւնները այս վերջին շաբաթները շատ զգուշաւորութեամբ կը վարուին կոր թուրքերուն հետ եւ մեզի բացայայտօրէն ըսին թէ՝ որքան ատեն որ Բարիզի մէջ որոշում չկայ, մենք հոս շատ տարտամ ու երկչոտ քայլեր միայն կրնանք առնել եւ պէտք է գոհանանք ձեռք ձգուած փոքրիկ արդիւնքներով: Այդ տեսակէտով, վերոյիշեալ օրէնքին հրատարակութեան մասին ալ աստիճան մը պիտի ճնշեն թուրքերու վրայ:

.....

Յարգանք
Տօք. Գ. Դաւիթեան

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 15 Յունիս 1919

- 1° Յայտարարել, Բարիզ թէ հոս, որ քիւրտերը իրենց բոլոր յարաբերութիւնները խզած են թուրք կառավարութեան հետ, եւ անկախ պետութիւն մը կազմել կը բաղձան:
- 2° Ապագայ Բիւրտիսթանի մէջ գտնուող հայերը, ինչպէս եւ ապագայ Հայաստանի մէջ բնակող քիւրտերը, յօժարակամ կը յայտարարեն թէ՝ որպէս քաղաքացի իրենց պատկանեալ պետութեանց, պատրաստ են երկրին բոլոր օրէնքները ընդունելու եւ այդ պետութիւնը պաշտպանելու:
- 3° Երկու պետութեանց մէջ ապրող հայ թէ քիւրտ քաղաքացիները տիրող տարրին համահաւասար իրաւունքներ կը վայելեն:
- 4° Երկու պետութիւնները կը խոստանան ամէն տեսակ քաղաքական թէ տնտեսական փոխադարձ օժանդակութիւններ ընել:
- 5° Հայ եւ քիւրտ կազմակերպութիւններ կը խոստանան այժմէն իսկ հայեւքիւրտ եղբայրակցութիւն մը յառաջ բերել, եւ թէ մայրաքաղաքը, մանաւանդ գաւառներու մէջ ոչ միայն հայեւքիւրտ ընդհարումներու եւ վէճերու առաջքը առնել, այլեւ՝ ի հարկին զինեալ ուժով զիրար պաշտպանել թուրքերու եւ այլ թշնամիներու դէմ:
- 6° Այժմէն իսկ հայ տարագիրներու ներգաղթը դիւրացնել ու վերցնել բոլոր արգելքները:

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 29 Յունիս 1919

Յարգելի բարեկամ,

Զօրավար Բագրատունիի¹⁴⁸ Բարիզ մեկնումեն կ'ուզեմ օգտուիլ, այս քանի մը տողերը գրել ու կացութեան վրայ Ձեզ տեղեկացնելու համար:

Ապահովութիւն.-

Դժբաղդաբար միշտ այս նիւթին վրայ անդրադառնալու հարկին տակ կը գտնուինք: Այս վերջին շաբաթներու մէջ խնդիրը շատ աւելի բարդ հանգամանք մը ստացած է: Գաւառներէն մեր ստացած տեղեկագիրները սոսկալի են. ամէն կողմ ջարդի սպառնալիք եւ խեղճ ժողովուրդը տուններէն իսկ դուրս ելլելու կը վախնայ: Բացէ ի բաց չեթեական կազմակերպութիւն մը ընելու վրայ են եւ թուրք ժողովուրդը կեդրոնական կառավարութեան հանդէպ տեսակ մը ապստամբական դրութեան մէջ կը գտնուի: Ներքին գործոց նախարարին վերջերս հեռագրած խիստ ու որոշ շրջաբերականին հակառակ, ուր հանդարտութեան եւ ապահովութեան ամէն գնով պահպանումը կը յանձնարարէր, ոչ միայն մտիկ ընող չեղաւ, այլեւ նոյնիսկ կարելուր պաշտօնատարներ բացէ ի բաց ապստամբեցան: Մամսոնի թուրք բանակի հրամանատար Մուստաֆա Բէմալ Պէյ իր շրջանակին մէջ հեռագրական հրահանգներ տուած է չեթեական կազմակերպութիւն ընելու ու թուրք ժողովուրդը զինելու համար: Եոզկաթի մէջ այդ հեռագիրը ստանալով՝ տեղւոյն թաղապետութիւնը գործի ձեռնարկած ու 285 չեթէներ

¹⁴⁸ Ռուսական Կայսրութեան զինեալ ուժերուն մէջ կարելուր ծառայութիւններով աչքի ինկած եւ Ա. Աշխարհամարտի օրերուն հայկական զինեալ ուժերու կազմակերպման օգտակար դարձած Զօրավար Յակոբ Բագրատունի (1879–1943) 1919-ին արդէն որպէս խորհրդական անդամ ընդգրկուած էր Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան կազմին մէջ եւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը զինք Զօրավար Անդրանիկի հետ Միացեալ Նահանգներ պիտի դրկէր իբրեւ Միացեալ Ռազմական Առաքելութեան պետ (*Պողոս Նուբար Փաշա. Վալերագրեր*, կազմող՝ Էմմա Հովսէփյան, Երեւան, 2001, էջ 134–141): Զօրավարը 1920-ին, Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումի նախօրեակին, պիտի նշանակուէր դեսպան Անգլիոյ:

արձանագրած է. նոյնը եղած է բոլոր շրջակայ գիւղերը¹⁴⁹: Մալաթիոյ մէջ քիւրտ ցեղապետներէ բաղկացած կարելոր ժողով մը տեղի ունեցած է միշտ թուրք էշրաֆներու ու իրթիհատականներու դրդումով ու առաջնորդութեամբը եւ որոշած է զինուիլ ու խումբեր կազմել: Որոշ կերպով յայտարարած են թէ՛ եթէ անգղիացի կամ ֆրանսացիները գան ու այս հողերը գրաւելով հայերուն յանձնեն, ամէն գնով պիտի կռուին ու ընդդիմանան, եւ քովերնին ու տեղւոյն վրայ գտնուած հայերը անխնայ սուրէ պիտի անցունեն¹⁵⁰: Նոյնն է նաեւ միւս բոլոր գաւառներուն մէջ, ուր գտնուող հայութեան քիչ շատ բանիբուն ու բարեկեցիկ մասը դարձեալ գաղթելու հարկին տակը կը գտնուի: Յաւալի է ըսել որ Կիլիկիոյ մէջ դրութիւնը աւելի լաւ չէ, հակառակ ֆրանսացիներու ներկայութեան: Սպանութիւն, կողոպուտ եւ ամէն տեսակ անիրաւութիւններ գործուելու վրայ են: Տեղւոյն Ազգ. Միութենէն ստացուած տեղեկութեան համաձայն շատ մը թուրք սպաներ սիվիլ [= քաղաքացիական] հազուստներով Կիլիկիոյ ամէն կողմը ցրուած պատրաստութիւններ ու կազմակերպութիւններ յառաջ բերելու վրայ են, նպատակ ունենալով միշտ հայերու սպառնալիք եւ Վեհաժողովի որոշումներուն դէմ ընդդիմութիւն¹⁵¹:

Այս քանի մը օրինակներէն կը տեսնաք թէ այս անգամուան պատրաստութիւնները բոլորովին տարբեր հանգամանք մը ունին: Մենք գիտենք թէ Տանկաստանի մէջ ջարդերը միշտ կեդրոնական կառավարութեան հրահանգովն ու հաճութեամբը տեղի կ'ունենան, թէ՛ բոլորովին սուտ խօսք է թէ թուրք ժողովուրդը վրդոված կամ գրգռուած՝ ծայրայեղութիւններու դիմած է: Թուրքիոյ մէջ հանրային կարծիք գոյութիւն չունենալուն պէս, ժողովրդական շարժում ու կամք ալ գոյութիւն չունի: Այժմեան գործունէութիւնները Իթթիհատի կողմէ սարքուած խաղեր են, որոնց] եթէ մասնակից չէ, գէթ համակարծիք է կեդրոնական կառավարութիւնը, եւ բոլոր ասոնց միակ նպատակը Եւրոպայի ցցնէլ է թէ Թուրքիոյ մէջ գիտակից ժողովուրդ մը կայ եւ չպիտի համակերպի Վեհաժողովին որոշման, եթէ իրենց աննպաստ ըլլայ: Տեսակ մը սպառնալիք, որով կը յուսան իրենց նպաստաւոր կերպով ազդել Վեհաժողովի տալիք որոշումներուն վրայ: Այս չի նշանակեր, սակայն, թէ տեղ տեղ ալ ջարդ չի կրնար ըլլալ: Բայց կարելորը այն է որ բոլոր այս պատրաստութեանց նպատակը քաղաքական է այս անգամ:

Դժբաղդութիւնը հոն է, սակայն, որ Համաձայնականներուն ծայր

¹⁴⁹ *Post-WWI*, էջ 19:

¹⁵⁰ Նոյն, էջ 17:

¹⁵¹ Նոյն, էջ 19:

աստիճան թոյլատու ընթացքը քաջալերանք մը եղաւ թուրքերուն իրենց վաղեմի խաղերուն սկսելու, եւ որովհետեւ զինադադարէն աստի անկեղծ ու կորովի կառավարութիւն մը գործի գլուխ չանցաւ, Իթթիհատը յաջողեցաւ դարձեալ գլուխ բարձրացնել ու ազատ համարձակ գործել: Սկիզբէն իսկ քիչ մը կորով ու արդարամտութիւն [ցուցաբերուելով] բոլոր ասոնց առաջքը դիւրութեամբ պիտի առնուէր: Թուրքերը *léche* [= շողոքորթ, ռռլէզ] ժողովուրդ մըն են եւ ուժին առջեւ անմիջապէս տեղի կուտան: Այսօր իսկ եթէ Համաձայնականները քիչ մը կորով ցցնեն ու քանի մը հոգի պատժեն, շուտով կը խաղաղի երկիրը: Կրնան օրինակի համար կարգ մը տեղերէ ելրաֆներ [= թուրք երեւելիներ] որպէս պատանդ արգելափակել եւ իրենց շրջանակին մէջ պատահած դէպքերու պատասխանատու բռնել զիրենք եւ քանի մը հատն ալ գլխատել: Պիտի տեսնէք որ շուտով իրենց յոխորտանքները մէկ կողմ կը դնեն. բայց դժբաղդաբար այդ կարգի միջոցներ ձեռք առնելու բնաւ հաւանականութիւն մը չենք տեսներ եւ այս վերջերս ընդհակառակը աւելի թոյլատու կ'երեւին:

Պարենաւորում.-

Այս խնդիրն ալ մեզի համար անլուծելի մնաց: Գաւառները ծայր աստիճան խեղճութիւն կայ: Շատ տեղեր հայ ժողովուրդը դաշտերը խոտ ուտելով կ'ապրի, բոլորովին մերկ են, որբերը՝ անպատսպար եւ մեծ մասամբ դեռ թուրքերու մօտ: Մեր նիւթական միջոցները սպառելու վրայ են. չենք կրնար կոր գաւառները բաւականաչափ դրամ հասցնել: Ինչպէս անցեալ նամակիս մէջ գրած էի, գէթ չոր հաց մը կարենալ բաշխելու համար ամսական նուազագոյն 150000 ոսկիի պէտք կայ. մեծ գումար մը չէ անշուշտ, բայց մեզի համար հայթայթելը դիւրին չպիտի ըլլայ: Վերջապէս շարունակ հանգանակութեամբ կարելի չէ ժողովուրդ մը ապրեցնել: Անցեալ անգամ Supreme Economic Councilէն փոխառութեան մը մասին գրած էի. կը յուսամ որ այդ կէտը հարկ եղած կարենորութեամբք ուշադրութեան առած կ'ըլլաք, որովհետեւ կորսնցնելիք ժամանակ չկայ. օրերը շաբաթները կ'անցնին եւ կը վախճամ որ վաղը յանկարծ դժբաղդ անակնկալի մը առաջքը գտնուելով, արդէն ձեռք անցուած որբերն ալ չկրնալ խնամելու վիճակին մէջ կրնանք գտնուիլ:

Ապահովութեան եւ պարենաւորման խնդրոյն մասին այսօր երկարօրէն խօսեցայ Չօրավար Բագրատունիի: Իմ կարծիքս այն է թէ հաշտութեան խնդիրը դեռ կրնայ երկարիլ, ձմեռը վրայ կը հասնի եւ այդ պարագային՝ գտնուած հայութեան մեծ մասին կորուստը անխուսափելի է: Ես կարծիք մը յայտնեցի որ զօրավարը անիրականաւի չգտաւ: Կը

խորհիմ որ եթէ ամբողջական Հայաստանի կազմութիւնը դեռ կրնայ շատ մը դժուարութեանց հանդիպիլ ու երկարիլ, գէթ Կովկասի սահմանակից Կարին ու Վանի նահանգները գրաւուելով, հոն համախմբել տալ ոչ միայն Կովկաս գտնուող թրքահայ գաղթականութենէն մաս մը, այլեւ մեր ներքին գաւառներէն ալ կամաց կամաց հոն խրկել, տեսակ մը առժամեայ *dépôt* [= կայան] մեր ժողովրդեան համար, ուրկէ կարելի է յետոյ բուն ներգաղթը կատարել: Գրաւեալ այդ մասերուն մէջ պէտք է առնուազն 6 ամսուան համար ուստեստ ամբարել, որովհետեւ հունձքի ժամանակը անցած է եւ այլեւս բան մը յուսալ կարելի չէ: Թուրքերը անշուշտ դժուարութիւններ պիտի յարուցանեն, բայց ես միշտ այն համոզումը ունիմ թէ Համաձայնականները եթէ քիչ մը խիստ խօսին, խնդիրը կը հարթուի: Եթէ մեծ քաղաքներու, ծովեզերեայ վայրերու ու Պօլսոյ մօտերը եւ երկաթուղիի երկայնքը ցրուած հայութեան կարելի է աստիճան մը օգնութեան հասնիլ նոյնիսկ ձմեռը, անդին կարգ մը գիւղերու, գիւղաքաղաքներու մէջ հայութիւն մը ունինք որոնք բոլորովին զրկուած կը մնան. ճիշդ ատոնց համար է որ կ'ըսէի թէ թերեւս յաջողինք կա'մ կեդրոն քաղաքներու մէջ տեղաւորել եւ կամ այդ գրաւուած տեղերը տանիլ: Այսպէս, նոյնիսկ Պօլսոյ մէջ կան շատ մը գաւառացիներ որոնք մեր վրայ բեռ եղած են. ատոնք ալ կարելի է Պաթումի ճամբով խրկել ու կեդրոնացնել: Վերջապէս նպատակս սա է թէ այս ձմեռ ժողովուրդին գէթ մէկ մասը պէտք է խոնուի այնպիսի միջավայրի մը մէջ ուր կարելի ըլլայ ապահով պայմաններու մէջ զանոնք հոգալ, պարենաւորել ու պատսպարել, մինչդեռ Թուրքիոյ զանազան տեղերը ցրուած հայերուն օգնութեան հասնիլն իսկ կարելի չէ:

Ներքին.-

Մեր հոս տեղի ազգային ներքին կեանքին մասին Ձեզի բան մը գրած չէի: Պէտք է ըսեմ որ ժամանակէ մ'ի վեր նորէն պայքարը սկսած էր, Ազգային Խորհուրդ մը կազմելու գաղափարը նորէն մէջտեղ նետուած էր, խորհրդակցութիւններ, բանակիւններ եւ այլն եւ այլն: Վերջապէս նորէն որոշ եզրակացութեան մը ջանգեցաւ [պայքարը]: Արդէն գոյութիւն ունեցող Համազգային Խորհուրդը անբաւական եւ անգործնական կը գտնէին եւ խորհրդարանական դրութեամբ նոր ժողով մը ստեղծելու մտադրութիւնները մէջտեղ նետուեցան: Բայց վերջապէս բոլոր այս պարապ ըսի ըսաւները գործերու ընթացքին վրայ գէշ ազդեցութիւն մը գործեցին բնականաբար: Մեր [Քաղաքական Ժողովի] անդամներէն ոմանք պատճառաբանեալ հրաժարական տուին եւ ես ալ այլեւս զգուած հրաժարական մատուցի քանի մը մնացեալ ընկերներով միասին Երեսփոխանական

Ժողովին, որ երէկ չէ առջի (Ուրբաթ) օրուան նիստին մէջ ընդունեց եւ կը յուսամ որ յառաջիկայ Ուրբաթ] նոր Քաղ[աքական] Ժողովի մը ընտրութիւնը կատարուի¹⁵²: Այդ նիստին մէջ ապահովութեան մասին կարգ մը տեղեկութիւններ հաղորդեցի ժողովին, որուն վրայ որոշուեցաւ այսօր (Կիրակի) բոլոր յարանուանութեանց ժողովներն ալ հրաւիրել նիստի: Այսօր երեք կրօնապետներու նախագահութեամբ ու մասնակցութեամբ երեք յարանուանութեանց երեսփոխանական ժողովներուն նիստը գումարուեցաւ Ղալաթիոյ խորհրդարանը եւ գաւառներու անապահովութեան մասին քանի մը ճառախօսներ խօսեցան ու յետոյ բանաձեւ մը քուէարկուեցաւ որուն համեմատ հեռագիրներ պիտի քաշուին մեր Պատուիրակութեան, Վեհաժողովին, Ամերիկա եւայլն եւայլն, որոնց մանրամասնութիւնները ձեզի կը գրեմ վերջը¹⁵³: Մեր բուն նպատակը ապահովութեան խնդրոյն առթիւ մեր Բարիգի Պատուիրակութեան դիրքը ուժովցնել էր եւ յաջողեցանք: Այսօրուան գումարուած Համագային Խորհուրդը իր յարգանքն ու վստահութիւնը յայտնեց Պատուիրակութեան ու Փաշային եւ գիրով մը վերահաստատեց Թուրքիոյ հայոց փոխանորդութեան խնդիրը, որովհետեւ նամակներ ստացանք Կովկասէն, ուր մտադրութիւն կայ եղեր ամբողջական հայութեան ներկայացուցիչ նկատել Պր. Ահարոնեանը, հիմա որ հայկական կառավարութիւնը ինքզինք ամբողջական Հայաստանի կառավարութիւն հռչակած է: Այս մասին աւելի մանրամասնօրէն կը գրեմ յետոյ: Սաչափը ըսեմ որ բացի կուսակցականներէ, միւսները բոլորն ալ կատարեալ ու բացարձակ վստահութիւն ունին Փաշային ու մեր Պատուիրակութեան վրայ եւ այսօրուան նիստին մէջ հանդիսաւորապէս վաւերացուեցաւ այդ վստահութիւնը:

Յարգանօք

Տօք. Դաւիթեան

¹⁵² Ազգային Երեսփոխանական Ժողովի յաջորդ՝ 4 Յուլիս 1919-ի նիստը չէ գրադած Քաղաքական Ժողովի ընտրութեան հարցով՝ երեսփոխաններու մեծամասնութիւն ապահովուած չլլալով («*Համահաւաք* Ա., էջ 34-40):

¹⁵³ Ազգային Համագումար Ժողովի 29 Յունիս 1919-ի նիստին միաձայնութեամբ քուէարկուած բանաձեւը կը տրամադրէր. «1. Շնորհաւորել Համաձայնութիւնը Գերմանիոյ հետ կնքուած հաշտութեան դաշնագրին համար: 2. Թուրքիոյ գաւառներուն մէջ հայերուն ջարդի սպառնալիքի տակ գտնուիլը մատնանշելով, անմիջական միջամտութիւն պահանջել» («*Համահաւաք* Ա., էջ 33):

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 30 Յունիս 1920

Յարգելի բարեկամ,

Զօրավար Բագրատունի երեկ պիտի մեկնէր եւ անապարեցի այդ առթիւ Ձեզի գրելու, բայց յետոյ իմացայ որ այս կէսօրին կը մեկնի: Հիմա այս նամակս իրեն պիտի յանձնեմ եւ բերանացի քանի մը տեղեկութիւններ պիտի հաղորդեմ զաւառներու անապահովութեան, չեթներու կազմութեան եւ մասնաւորապէս քաջալերութեան այն աղբիւրի մասին որմէ կը կարծենք թէ եղած ըլլայ թուրքերու այս սանձարձակ գործունէութիւնը:

Դժբաղդաբար փորձառութիւնը մեզի զցուցած է որ Թուրքիոյ մէջ ամէն եղեռնագործութիւն, մանաւանդ քրիստոնէից դէմ, դուրսէն կամ ներսէն եղած քաջալերութեանց ու թելադրութեանց համեմատ կազմակերպուած է: Յաւալի է որ այս անգամ ալ մեր այնքան արդար դատը դարձեալ եւրոպական կնճռոտ դիւանագիտութեան լաբիւրինթոսին մէջ ինկած է: Մաղթենք որ այս ծանր փորձութիւնները վերջինը ըլլան եւ մեր Ժողովուրդը կարենայ վերջապէս վայելել իրաւունքներու է՛ն տարրականը՝ ապրելու իրաւունքը:

Այսօր պիտի պատրաստենք այն հեռագիրները որ երեկի Համագգային Երեսփոխանական Ժողովին հանդիսաւոր նիստին մէջ որոշուեցան¹⁵⁴:

¹⁵⁴ Դաւիթեանի «Համագգային Երեսփոխանական Ժողով» անուանած ժողովը խորքին մէջ կը կոչուէր «Ազգային Համագումար Ժողով», որ կը գումարէր իր առաջին նիստը՝ բաղկացած առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական հայոց երեսփոխանական ժողովներու անդամներէն: Նիստը հրաւիրուած էր Միլլի ազգայնական շարժման գործունէութեան հետեւանքով զաւառներէն հասնող տագնապալի լուրերու քննարկման համար: Մասնակիցները քուէարկած էին Համաձայնական պետութիւններուն դրկուելիք բողոքի բանաձեւ մը՝ նախ այդ պետութիւնները շնորհաւորելու Գերմանիոյ հետ կնքուած հաշտութեան դաշնագրին համար, ապա անմիջական միջամտութիւն խնդրելու՝ մատնանիշ ընելով զաւառներուն մէջ հայերու ջարդի սպառնալիքի տակ գտնուիլը (*Համահաւաք* Ա., էջ 31–33): 4 Յուլիսին գումարուած Ազգային Երեսփոխանական Ժողովի նիստի ատենագրութենէն կը պարզուի թէ Համագումար Ժողովի որոշման համաձայն հեռագիրներ ուղղուած էին

Օրինակները Ձեզի պիտի դրկեմ անմիջապես: Ներփակ պիտի գտնէք յոյներուն հետ միասին քաշուած հեռագրին օրինակը¹⁵⁵, նոյնպէս մեր կողմանէ խրկուած քանի մը հեռագիրներ: Գերման էքարտի մասին երկու ամբաստանագիրներ տրուած էին Ժամանակին. ատոնց ալ օրինակը ներփակ կը դրկեմ¹⁵⁶: Այդ անձը հոս ձերբակալուած էր, բայց յաջողեցաւ ազատիլ ու մեկնիլ: Կարգ մը ուրֆացիներ շատ գէշ կը խօսին իր մասին: Ես անձամբ որոշ գաղափար մը չունիմ, վերջը պիտի իմանանք անշուշտ խնդրոյն ստուգութիւնը:

Յարգանք
Տօք. Դաւիթեան

[Յ.Գ.] Երէկ լսեցի որ Դուրեան Սրբազանը եկած է. դեռ զինքը չտեսայ:.....

Վեհաժողովին Պատրիարքը հեռագիր մը ըրած է 25 թուական, որուն մէկ պատճենն ալ Պատուիրակութեան հեռագրած է, իսկ հայ կիներու խրկած հեռագիրներու օրինակը վաղը միւս օր կը դրկեմ:

Փարիզի Հաշտութեան Ժողովին, ԱՄՆ-ի նախագահ Ուիլսոնի եւ Հայ Ազգային Պատուիրակութեան (*Համահաւաք Ա.*, էջ 34):

¹⁵⁵ Միլի ազգայնական շարժման ծաւալումով ստեղծուած սպառնալից իրավիճակը յոյներն ալ որոշապէս մղած էր տագնապելու: Նամակին կցեալ ֆրանսերէն պատճենէն, որուն իսկականին ներքեւ ստորագրած են երեք հայ հոգեւոր պետերն ու յունաց տիեզերական պատրիարքը, 29 Յունիս 1919-ին Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովի նախագահ Քլեմանսոյի կը յայտնուի թէ անյապաղ քայլերու պէտք է ձեռնարկել դարմանելու համար տիրող կացութիւնը, որուն երկարաձգումը պիտի յանգեցնէ անբաղձալի հետեւանքներու:

¹⁵⁶ Ամբաստանագրերուն չենք հանդիպած, բայց Ուրֆայէն Սարգիս Կէզուրեանի կողմէ 28 Մայիս 1919-ին ուղարկուած նամակի մը վերաբերողութեան մէջ նշուած կը գտնենք հետեւեալը. «Գերմանացի Էքարտի եւ անոր ընկերը Եագուպ Քիւնզլերի մասին զանգատ: Այս վերջինը հոս պիտի գայ այս օրերս, հարիւրաւոր աղջիկներ ծախեր է: Տեղւոյս անգղիական իշխանութիւնները անհոգ գտնուած են ատոր մասին եղած զանգատին» (*Post-WWI*, էջ 21): Franz Eckert (1873–1919) գերմանացի, իսկ Jakob Künzler (1871–1949) գուիցերիացի ասետարանիչներ էին:

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 5 Յուլիս 1919

Յարգելի բարեկամ,

Զօրավար Բագրատունիի հետ 29 Յունիս թուականով նամակ մը գրած եմ ներփակ կարգ մը վաւերաթուղթերով եւ իրեն ալ բերանացի կարգ մը բաներ ըսած եմ որ Ձեզի պիտի հաղորդէ անշուշտ: Ձեզմէ ստացած վերջին նամակներս են թիւ 7 եւ 12:

Ապահովութիւն.-

Բոլոր նամակներուս մէջ ալ այս մասին գրած եմ: Մեզի համար կենսական հարց մըն է եւ շատ մը խնդիրներու լուծումը ատկէ կախում ունի: Ինչպէս միշտ գրած եմ, անապահովութեան խնդիրը Չմիւռնիոյ գրաւումէն վերջ աւելի սաստկացած եւ տեսակ մը ապստամբութեան երեսոյթ առնել սկսած էր: Այս օրերս այլեւս բոլորովին պարզուած է խնդիրը. կեդրոնական կառավարութեան մէջ իսկ անիշխանութիւն կայ եւ նախարարները իրարու բոլորովին հակասական ընթացքի մը մէջ կը գտնուին եւ միշտ ալ հրաժարումներ կան: Այսպէս՝ ներքին գործոց նախարարը, Ալի Բեմալ Պէյ¹⁵⁷, որ անցեալ օրեր ապահովութեան պահպանմանը համար շատ խիստ շրջաբերական հեռագիր մը խրկած էր, քանի մը օր վերջ հրաժարեցաւ եւ հիմա Տամատ Փէրիտ փաշայի գալուն կ'սպասուի *քապինէ*ի փոփոխման համար: Թուրքերուն մէջ մեծ խմորում կայ, շատ մը կուսակցութիւններ կան որոնք զիրար կը քննադատեն, ոմանք ալ միանալու վրայ են: Բայց երբ խնդիրը իր պարզ վիճակին վերածուի, ամէնքն ալ իրօքիհատականներ են, որ այսօր ալ զանազան անուններու տակ գործելու սկսած են, այսպէս՝ «Րէտտ Իհլաք», «Միլլէթ փերվերանէ օսմանեան», «Սուլու սէլամէթը Օսմանիյէ»¹⁵⁸, եւ ասոնց պէս կարգ մը ուրիշ մարմիններ,

¹⁵⁷ Ազատական գաղափարներու տէր հրապարակագիր եւ բանաստեղծ Ալի Բեմալ (1869–1922), որ բացայայտօրէն ամբաստանած էր Իրօքիհատական պատասխանատուները հայկական չարդերու կազմակերպման համար, 4 Մարտ 1919-ին ներքին գործոց նախարարի պաշտօնին նշանակուելէ հազիւ երեքուկէս ամիս ետք ներկայացուցած էր իր հրաժարականը: Մաս կազմած էր Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովին մօտ թրքական պատուիրակութեան: Իր հակաքեմալական կեցուածքին զինը պիտի վճարէր քեմալական հրոսակներու կողմէ չարաչար սպանութեամբ:

բոլորն ալ Իթթիհատի ծնունդներ: Բոլորովին նոյն ծրագիրովը կ'աշխատին, իսկ «Ահրար», որ իբր թէ Իթթիհատին հակառակ կուսակցութիւն մըն է, երբ ուժովնայ ու պայմանները փոխուին, թերեւս նոյնչափ նեղմիտ ու հակաքրիստոնէական ուղղութեան մը պիտի հետեւի, այնպէս որ ասոնցմէ յոյս չկայ, ինչ գոյնով որ ըլլան՝ նոյնն են: Տամատ Ֆերիտ փաշա որ այսօր կը ներկայանայ իբր լուսամիտ մէկը եւ դատապարտող Իթթիհատի արարքներուն, իր մասին առնուած տեղեկութիւնները շատ նպաստաւոր չեն, Տօք. Կէյթս ինծի ըսաւ որ հայերը կ'ատէ: Ինչ որ է, ուրախ եղանք որ իր mission-ը [= առաքելութիւնը] անյաջող կերպով վերջացաւ¹⁵⁹:

Գաւառներու մէջ կատարեալ ապստամբութիւն կայ: Մուստաֆա Քեմալ փաշա, Արեւելեան գաւառներու զինուորական քննիչ եւ Սամսոնի բանակին հրամանատար, բոլորովին ապստամբած եւ բանակ կազմակերպելու վրայ է: Հեռագրով հրաման ըրած է որ ամէն կողմ զինուոր հաւաքուի եւ իր հրամանը գործադրուած ըլլալուն մասին տեղեկագիրներ ստացած ենք. կազմակերպուածը չէթէի խումբեր չեն, այլ կանոնաւոր բանակ եւ դէպի Կարին կ'ուղղուին, իսկ մաս մ'ալ հոս հոն կ'ասպատակեն: Ռէուֆ փաշա, նախկին ծովային նախարար¹⁶⁰, նոյն գործունէութիւնը կատարած է Չմիւռնիոյ եւ Գոնիայի կողմերը, ուր յոյներուն եւ իտալացիներուն հետ

¹⁵⁸ Դաւիթեան այս անունները քաղած և աղաւաղումով յիշատակած է 19 Յունիս 1919-ին Եոզկայթէն պատրիարքարան որկուած նամակէ մը, ուր կ'ըսուի. «Ծայր աստիճան հակաքրիստոնէական շարժում: Սամսոնի բանակին հրամանատար եւ Անատոլիի վիլայէթներու ընդհանուր միւֆէթթիշ [քննիչ] Մուստաֆա Քեմալ փաշա ամէն կողմ հեռագրով հրաման տուած է չէթէներու խումբեր կազմելու համար: Ըստ այդ հրամանին, Եօզկայթի մէջ քաղաքապետութիւնը 285 չէթէ արձանագրած է. նոյնպէս՝ գիւղերը: Ասոնցմէ զատ, վերջերը կազմակերպուած «Րէտ'տ Իլիաք» [Մերժել կցումը], «Միլլէթ Փէրվէրանէ Օսմանիան» [Օսմանեան Ազգասէրներ] եւ «Մուլի ու Սէլամէթը Օսմանիյէ» [Օսմանեան Խաղաղութիւն եւ Փրկութիւն] կոչուած կազմակերպութիւնները միացած չէթէներու հետ, Անատոլիի վիլայէթները հայերու տրուելու պարագային, մեծ ապստամբութիւն մը պիտի հանեն եւ բոլոր քրիստոնէաները, հայ թէ յոյն, պիտի ջարդեն...» (*Post-WWI*, էջ 19):

¹⁵⁹ Անկարկութիւն Փարիզի Վեհաժողովի Գերագոյն Խորհուրդին առջեւ Տամատ Ֆերիտի ներկայացուցած յուշագրին եւ անոր տրուած պատասխանին:

¹⁶⁰ Արիսագական ծագումով Հիւսէյին Ռաուֆ Օրպէյ (1881–1964) ամենասերտ գործակիցներէն մին էր Մուսթաֆա Քեմալի եւ 1922-ի Օգոստոսին պիտի ստանձնէր Ազգային Մեծ Ժողովի ժամանակաւոր կառավարութեան վարչապետի դերը:

միշտ կռիւ կայ:

Մեր առած վերջին տեղեկութեանց համաձայն այս ուժերուն մէկ մասը Կովկասի սահմանագլուխը պիտի հաւաքուի՝ թերեւս Թրքահայաստանի գաւառներու գրաւման ընդդիմանալու համար, բայց ուրիշ լուրի մը համաձայն միայն ընդդիմութեամբ չպիտի բաւականանան, այլ՝ Երեւան պիտի արշաւեն, հոնտեղի հայութիւնն ալ փնացնելու ու Հայաստանի մը կազմութիւնը անկարելի դարձնելու նպատակաւ: Թէ որ աստիճան ստոյգ է այս լուրը, կարելի չէ այժմէն ըսել, բայց շատ մը նշաններ սկսած են երեւնալ որ մեզի կասկածելի կը թուին: Այսպէս՝ Րէուֆ փաշա իր գործը աւարտելէ վերջ դէպի Կովկաս երթալու վրայ է՝ հոն անշուշտ թաթարներն ալ ոտքի հանելու համար, եւ ի նկատի ունենալով Հայ Հանրապետութեան ոչ բարեկամական յարաբերութիւնը թաթար ու վրացւոց հետ եւ Տենիքինի¹⁶¹ յառաջացող բանակին վտանգը այս վերջիններուն համար, բոլորովին անհաւանական չէ որ յարմար առթիւ մը Կովկասի հայ կառավարութիւնն ու բնակչութիւնը տկարացնելու ու փնացնելու փափաքող չըլլան: Թէ պայմանները ո՞ր աստիճան նպաստաւոր կրնան ըլլալ այսպիսի ծրագիր մը գործադրելու համար, յայտնի չէ: Բայց եթէ մինչեւ հիմա անցած դարձածներէն ու Համաձայնականներու բռնած դիրքէն պիտի դատենք, չպիտի զարմանամ որ թուրքերը այդպիսի յանդուգն փորձ մը ընելու վարանին: Այս մասին Փաշային հեռագիր մը պիտի տանք այսօր եւ Հայ Հանրապետութեան ալ իմացուցած ենք:

Բոլոր այս մտահոգութեանց ու չարեաց պատճառը այն է որ մեր բարեկամները, փոխանակ սկիզբէն իսկ զսպողական ու կտրուկ միջոցներու դիմելու, ձգեցին որ իրերը այսպէս կնճռոտին ու վտանգաւոր հանգամանք մը ստանան, եւ մենք ջարդուեցանք մեր թշնամիներէն, եւ այսօր ալ պիտի ջարդուինք մեր բարեկամներու անտարբերութեան ու ներքին մրցակցութեան շնորհիւ: Այն միջոցը որ Ձեզի հետ շարունակ թելադրեցինք մեր բարեկամներուն, այսօր ալ կը մնայ միակ դարմանը այս կացութիւնը փրկելու համար, այսինքն՝ զինուորական գրաւում, եւ պէտք է որ ժամ առաջ տեղի ունենայ: Չարդը անխուսափելի է. այս է մեր անխախտ համոզումը որպէս գիտակ տեղւոյն հանգամանքներուն եւ իրազեկ մեզի հասած տեղեկագիրներուն: Գրաւումը պիտի կատարուի, ուրիշ միջոց չէ մնացած, բայց կը վախճամ որ ուշ մնայ եւ մենք դարձեալ կո-

¹⁶¹ Անթոն Տենիքին (1872–1947) Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի շրջանին հակապոլշեիկ շարժման պարագլուխներէն էր եւ զիսաւոր հրամանատարը Հարաւային Ռուսիոյ զինեալ ուժերուն:

տորուինք, եւ պէտք է որ հայ բանակ մը կազմակերպուի Համաձայնական սպաներու հսկողութեամբ: Անկարգապահութեան ու վրէժխնդրութեան ոգիի առարկութիւնները բաւական չեն գրաւման այդ կարելորդ ազդակը անտես առնելու համար, եւ կը կարծեմ թէ Համաձայնականներուն այդ ծայրայեղ խղճահարութիւնը շատ անկեղծ չէ. երբ հայր թուրք մը սպաննած է՝ մեծ իրարանցում, մեղադրանք, իսկ երբ անդին ամէն օր թուրքերու կողմէ սպանութիւններ կը գործուին՝ մեղսակցութեան համահաւասար լռութիւն մը կը տիրէ: Այս կացութիւնը այլեւս անհանդուրժելի է եւ շուտափոյոջ դարմանի կը կարօտի:

Այս օրերս մեզի շարունակաբար հարցումներ կ'ուղղուին ֆրանսացիներու կողմէ թէ՛ ի՞նչ տեղեկութիւններ ստացած ենք Բարիզէն. եւ այս՝ այնքան կրկնակի ու ստիպողական կերպով, որ մեզի այնպէս թուեցաւ թէ Կիլիկիոյ մասին կարգադրութիւններ մը կան եւ կ'ուզեն գիտնալ թէ մենք ալ գիտա՞նք ենք, եւ ճիշդ այդ պատճառաւ առջի օրը հետեւեալ հեռագիրը տուինք փաշային:

Const[antinople] 3 Juillet 1919

Boghos Nubar 12 Avenue Président Wilson, Paris.

Certains indices nous <...> penser que décisions auraient été prises relativement Cilicie. Prière nous édifier.¹⁶²

Եթէ բոլորովին գաղտնի պահուելիք խնդիրներ են, անշուշտ չէք պատասխաներ, մանաւանդ որ օտարներու ձեռքը պիտի անցնի հեռագիրը եւ հոս մեր կազմակերպութիւնն ալ անթերի չէ, կը հասկնաք ինչ ըսել կ'ուզեմ:

*

Խնամատարական գործին մէջ նշանակելի փոփոխութիւն մը չկայ ձեզի հաղորդուելու արժանի. պէտք եղածը գրած եմ արդէն, անշուշտ լուրջ խորհրդածութեան առարկայ կ'ընէք: Այս օրերս Պէյրութէն նոր գաղթականներ եկան, մեծ մասամբ մօտակայ գաւառներու բնիկներ, բայց կան ալ որ ներքին գաւառներէն են եւ ատոնք հոս մնալու ստիպուած են. այս պահուն հոս 2200 գաղթական ունինք:

*

Ներքին կազմակերպութեան մասին անցեալ օր քիչ մը գրեցի: Մեր վարչութիւնը հրաժարեցաւ. երէկի նիստին մէջ Ազգ. Ժողովը իր սովորութեան համաձայն ամուլ վիճաբանութիւններու մէջ կորսուած՝ գործ մը կատարելու վիճակին մէջ չէր եւ մինչեւ կէս օր շաղակրատրելէ վերջ

¹⁶² Որոշ նշաններ մեզի մտածել կու տան թէ որոշումներ առնուած են Կիլիկիոյ վերաբերեալ: Կը խնդրենք մեզ լուսարանել:

ցրուելու վրայ էր, երբ Սրբազան Պատրիարքը ազդու միջամտություն մը ըրաւ եւ պահանջեց որ ներկայ պարագաներուն մէջ ազգը առանց գործադիր մարմնի չի կրնար մնալ եւ պէտք է այսօր իսկ Քաղաքական Ժողովը կազմուի: Եւ որովհետեւ անկարելի էր քուէարկութեամբ ընտրութիւն կատարել, անուններու շուրջ համաձայնութիւն չկար, ժողովը որոշեց Սրբազան Պատրիարքին թողուլ ընտրութիւնը, յաջորդ ժողովին վաւերացուելու պայմանաւ: Այժմ անուններու վրայ կը խորհուի¹⁶³. Սրբազանը կը ստիպէ որ ես չքաշուիմ, թէեւ շատ յոգնած ու տկարացած եմ: Գործերու մեծագոյն մասը վրաս մնացած է. պէտք է աշխատիլ, մաքառիլ, համոզել ոմանք, յանդիմանել ուրիշներ, օտարներու առջեւ վեր բռնել մեր դիրքը եւ նշմարելի չընել մեր ներքին կացութիւնը եւն եւն: Այս մասին աւելի երկար գրելիքներ ունիմ, բայց, ինչպէս ըսի, տկարացած եմ եւ շատ երկար չեմ կրնար գրել, յաջորդով կը ջանամ աւելին գրել:

Անցեալ Կիրակիի մեր հանդիսաւոր նիստի մասին գրեցի Ձեզի. երեք հայ հասարակութեանց ազգային ժողովները, երեք կրօնապետներու նախագահութեամբը հաւաքուած ապահովութեան խնդրոյ մասին խօսեցան եւ բանաձեւ մը քուէարկեցին, որու համաձայն, Փաշային, Վեհաժողովին, Ambassador Gerard-ին¹⁶⁴ եւ հոս հեռագիր ու գրութիւններ տրուեցան,

¹⁶³ Ազգային Երեսփոխանական Ժողովի 11 Յուլիս 1919-ի նիստին Քաղաքական Ժողովի որպէս նորանշանակ անդամներ Չաւէն Պատրիարք պիտի ներկայացնէր հետեւեալ անձերը՝ Գրիգոր Դաւիթեան (ատենապետ), Ստեփան Գարսեան, Հայկ Խօճասարեան, Միհրան Մուրատեան, Դաւիթ Տէր Մովսէսեան, Պետրոս Խօրասանճեան, Խաչիկ Սըվաճեան, Ներսէս Օհանեան, Վահան Շահիրման եւ Վահան Չէթունցեան (*Համահաւաք Ա.*, էջ 52–53):

¹⁶⁴ Իրաւաբան Ճէյմս Ճերարտ (James Watson Gerard [1867–1951]), Ա. Աշխարհամարտի շրջանին կը վարէր ամերիկեան դեսպանի պաշտօնը Գերմանիոյ մօտ մինչեւ իր արտաքսումը երկրէն 1917-ին: Ճերարտ այնուհետեւ պիտի դադրեցնէր իր դիւանագիտական աշխատանքը, բայց յօժարէր գործել որպէս 1918-ին հիմնուած Հայաստանի Անկախութեան Ամերիկեան Յանձնաժողովի կեդրոնական կոմիտէի ատենապետ: Առ այդ, հայերը համաթուրանական վտանգէն փրկելու նպատակով, պիտի հետապնդէր ամերիկեան հոգատարութեան ներքեւ անկախ Հայաստանի մը կազմութեան ծրագիրը: Ատենապետի հանգամանքով ան ստորագրողներէն մին էր հոգատարութեան խնդրով նախագահ Վուորո Ուիլսոնի ուղղուած 18 Դեկտեմբեր 1919 թուակիր յուշագրի մը եւ հեղինակն էր «Թրքական «ՄԱՆՏԱ» Մը՝ Համաթուրանականութիւնն Ու Համիսլամութիւնը Ամերիկեան Հոգատարութեան

որոնց օրինակները ներփակ պիտի գտնէք: Իսկ մեր Բարիզի Պատուիրակութեան ու Փաշայի մասին վստահութիւն յայտնուեցաւ, պատրիարքարան ու թրքահայութիւն Պատուիրակութեան ու Փաշային վստահ են եւ հաւատարիմ. կրնաք Նորին Բարձրապատուութիւնը ապահովել: Իր ծանօթ հեղինակութեամբն ու կորովովը մեր արդար դատին պաշտպանութիւնը կ'ականկալենք իրմէ: Նորընտիր վարչութիւնն ալ անշուշտ պիտի գրէ այս իմաստով:

Ապահովութեան խնդրոյն մասին, այսօր յունաց հետ միասին, գրութիւն մը պիտի մատուցանենք, օրինակը Ձեզի կը դրկեմ. ժամը 11ին Պր. Քազանօվայի հետ պիտի երթամ, բերանացի ալ կարգ մը բաներ ունինք ըսելիք¹⁶⁵:

Բարեկամներու սիրալիր բարեւներ, ներողամիտ թող գտնուին, զբաղ ու տկար եմ, յարմար առթիւ կը գրեմ.....:

Յարգանք
Տօք. Դաւիթեան

Յ.Գ. Նիւ Եորքէն հեռագիր մը ստացանք ծանուցանող թէ՝ Տօք. Աէյթս միացած է հայերու անկախութիւնը պահանջող խումբին, դուք չէք զարմանար անշուշտ:

Ներքեւ» խորագրով յօդուածի մը 58 էջերէ բաղկացեալ գրքոյկի մը մէջ (*The Joint Mandate Scheme: A Turkish Empire under American protection* [Միացեալ Հոգատարութեան Նախագիծը՝ Թրքական Կայսրութիւն Մը Ամերիկեան Թեւարկութեան Ներքեւ], հրատարակութիւն Հայաստանի Անկախութեան Ամերիկեան Յանձնաժողովի, Նիւ Եորք, 1919):

¹⁶⁵ Այնպիսով գրութիւնը՝ հայ երեք հոգեւոր պետերուն եւ յունաց Տիեզերական Պատրիարքութեան տեղապահին ստորագրութեամբ, ներկայացուած էր Պոլսոյ Բարձր Յանձնակատարներուն: Հոն կը խնդրուէր դիմել ահագանգող նկարագիր ստացած կացութեան բարուքման համար միջոցառումներու, որովհետեւ «թրքական կառավարութիւնն ուղղակիօրէն պատասխանատու է անապահովութեան համար, որ կը յանգեցնէ սպանութիւններու, առեւանգումներու, բռնաբարութիւններու եւ այլ ոճիրներու, ամէն օր գործուող քրիստոնէայ անհատներու դէմ, եւ որոնք, զարգացող իրողութիւններու հոլովոյթով, մեզի կը թուի թէ կ'առաջնորդեն նոր ջարդերու» (*Համահաւաք Բ.*, էջ 898–899):

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Ներփակ գտնուած գրութիւնները.

- 1° Նամակ Նուպար Փաշային, Համագգային Խորհուրդի կողմէ, երկու նոր պատուիրակներու անուանման մասին¹⁶⁶;
- 2° Կիլիկիոյ մասին Տօք. Քաջբերունիի տեղեկագիրը¹⁶⁷;
- 3° Տօք. Պարթընի յայտարարութեանց մասին Օհան Վարդապետի տեղեկագիրը:
- 4° Երեւանի կացութեան մասին Ն. Մարտիրոսեանի նամակը¹⁶⁸:

¹⁶⁶ Ինչպէս նախապէս նշուած է, երկու նոր պատուիրակներն էին Պօղոս Մարըրը եւ Գրիգոր Սինապեան:

¹⁶⁷ Տես նախապէս յիշատակուած Յաւելուած Թ.-ն:

¹⁶⁸ Ն. Պ. Մարտիրոսեան յիշեալ նամակին չենք հանդիպած: Կայ, սակայն, իրմէ 2 Սեպտեմբեր 1919 թուակիր նամակ մը, ուղղուած Պատրիարքական Փոխանորդ Մեսրոպ Եպիսկ. Նարոյեանի, ուր ան նախ կը խնդրէ հետաքրքրուիլ նահատակ գրող Գեղամի [Տէր-Կարապետեան (Մշոյ Գեղամ)] Պոլիս ձգուած ձեռագիրներով՝ Գեղամի այրիին տրամադրութեան տակ դնելու գանոնք, յայտնելով թէ ծրագրած է գանոնք հրատարակութեան տալ Աղեքսանդրապոլի մէջ, ուր կ'եղորոնացած է «Տարօնի շրջանէն (Պուլանըզ, Մանագկերտ, Բիթլիս եւն.) 40.000 մօտիկ գաղթականութիւնը»:

Ապա կ'աւելցնէ. «... իմ ծանօթներէս եւ այս աղէտներու մէջ իր խ[ումը]երով ու անձնական աշխատութիւններով կարելոր ծառայութիւն կատարող՝ ռամկավար կուսակցութեան պատկանող Պ. Արմենակ Եկարեան այդ տեղ կու գայ իր տղաները Կեդրոնական եւ կամ Պէրպլերեան ընդունել տալու համար. կը խնդրեմ, Ձեր աջակցութիւնը չխնայեք»:

Այնուհետեւ կ'անցնի ուրիշ նիւթի, տեղեկացնելով. «Ս. Կարապետի հնութիւններէն գատ (մասնակի) որ ազատուած են մասնաւոր յանձնախումբի մը ձեռամբ Էջմիածին դրկուած, ազատուած [են] նաեւ Առաքելոց Վանքի թանկագին դերկեահները [= դուռները] հետեւեալ կերպով:

«Յիշուած դերկեահները վերուցած կ'ըլլայ գերմանացի սպայ մը, որ 916-ին Բաղէշ կը գտնուի եղեր. Մինչեւ Բաղէշ կ'բերէ. Բաղէշէն դուրս ալ կը հանէ. Բայց երբ ռուսական բանակը անակնկալի կ'բերէ օսմանեան բանակն ու խուճապի կը մատնէ թէ զինուորութիւնն եւ թէ թուրքական ժողովուրդն, այլեւս չեն կրնար հետերնին տանիլ, կարծեմ թէ աւելի ձիւներու պատճառաւ. չեն կրնար տանիլ, կ'թողուն Արապի կարմունջի մօտերի տիղմին մէջ կու

- 5° Հեռագիր Մուստաֆա Քէմալի գործունեության մասին:
- 6° Հեռագիր Ambassador Gerard-ի:
- 7° Հեռագիր Նուպար Փաշային, 15 ընկերակցությանց կողմէ, ապահովության խնդրոյ մասին:
- 8° Հեռագիր Նուպար Փաշային, երեք կրօնապետներուն կողմէ, Համազգային Երեսփոխանական Ժողովի բաղձանքին համաձայն:
- 9° Հեռագիր Վեհաժողովի նախագահին, վերեւ յիշուած մարմնոյն արտայայտած իղձին համաձայն:

կ'երթան: Նազարբեգովի զինուորներէն մէկն կ'վերցնէ, Նազարբեգով ձեռքէն կ'առնու եւ կ'դրկէ Թիֆլիսի պետական թանգարան, վերջոյ թէւ իրեն զգացնել կուտան, որ այդ դերկեահները հայ ազգին կ'պատկանին, բայց ի զուր բան բանէ անցած էր. կ'գրէր Վեհափառ Կաթողիկոսին, որ Պետրոգրադ դիմում ընէ. Թերթերուն մէջ եւ ալ այդ առթիւ բաց նամակ մ'ուղղեցի կաթողիկոսարանին, բայց ոչ դիմում եղաւ եւ ոչ ալ հետապնդում եւ հիմա կը գտնուի Վրաստանի հանրապետության տրամադրության տակ» (ՊՏԴ, տրցակ 8, թղթապանակ MD6001, Խ176–177):

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 1 Օգոստոս 1919

Յարգելի բարեկամ,

Կը յուսամ ստացած էք վերջին նամակս 5 Յունիս¹⁶⁹: Այս անգամ չկրցայ շուտով գրել, զբաղած էինք կարգ մը կազմակերպություններով եւ կամ կը կարծէինք թէ բաներ մը ընելու վրայ ենք, մինչդեռ իրականին մէջ շատախօսութիւններ էին եղածները եւ սկզբունքի վրայ անվերջանալի վիճաբանութիւններ¹⁷⁰. տարակոյս չկայ թէ հանրային կեանքի մէջ հիւանդագին թերութիւններ ունինք եւ մաղթենք որ Հայաստանի mandat [= յանձնակատարութիւն] առնող տէրութիւնը ամէն բանի հետ, մեր այդ թերութիւնն ալ ուղղէ: Կը տեսնեմ որ դուք ալ սոյն տաղտկալի շատախօսութիւններուն դէմ մաքառելու ստիպուած էք. կարողութիւն կը մաղթեմ:

Ձեր 29 Յունիս եւ 10, 19 Յուլիս նամակները ստացած եմ, նոյնպէս ներկիակ գտնուածները:

¹⁶⁹ Ակնարկութիւնը կը վերաբերի նախորդ՝ 5 Յուլիս թուակիր նամակին:

¹⁷⁰ Կը դժուարանանք ստուգապէս ըսել թէ ի՞նչ էին Դաւիթեանի ակնարկած սկզբունքային շատախօսութիւններն ու վիճաբանութիւնները: Նախորդ եւ այս նամակներու միջանկեալ շրջանին գումարուած էր Ազգային Երեսփոխանական Ժողովի 11 Յուլիսի նիստը, ուր Փարիզէն վերադարձած Եղիշէ Արք. Դուրեան, իբրեւ Հայ Ազգային Համագումարին մասնակցած Թուրքիոյ հայութեան պատուիրակներէն մին, ներկայացուցած էր համագումարին աշխատութեան մասին լայն տեղեկութիւններ՝ հիմնուելով հրապարակուած ամփոփումին վրայ, միաժամանակ իրեն ուղղուած հարցումներու: Նիստի աւարտին Չաւէն Պատրիարք ներկայացուցած էր նոր Քաղաքական եւ Կրօնական Ժողովներու անդամներու իր մշակած ցանկը՝ յետ խորհրդակցութիւններու եւ թեկնածուներու հաւանութեան ապահովման (*Համահաւաք Ա.*, էջ 41–53): Դիտել պէտք է տալ հետաքրքրական պարագայ մը: Համագ-գային Խորհուրդի մեզի ծանօթ 23 Յունիս 1919-ի նիստէն ետք թէեւ Ազգային Համագումար Ժողովը գումարած էր երկու նիստ, երկրորդը՝ 15 Օգոստոս 1919-ին, Համագգային Խորհուրդի յաջորդ նիստը տեղի ունեցած էր նախորդէն աւելի քան երկու ամիս ետք՝ 27 Օգոստոսին, նիւթ ունենալով հայ երեք համայնքներու համագործակցութեան նոր համաձայնագիրի մը պատրաստութիւնը: Պարագան ենթադրել կու տայ քննարկելի կամ վիճելի հարցերու առկայութիւն:

Ձեր նամակներուն անհամբեր կը սպասենք եւ մեծ հաճոյքով կը կարդամ: Որչափ որ ալ դեռ վերջնական որոշումներ չկան մեր դատին մասին, բայց Ձեր գրածներէն այնպէս կը գուշակեմ թէ՛ յուսահատելու պատճառ մը չունինք եւ յամբօրէն բայց միշտ դէպի նպատակ քայլ մը առնելու վրայ ենք: Հարցը շատ կնճռոտ է] եւ մեծամեծ շահեր կան. հակընդդէմ շահեր, որոնք դիւրութեամբ չէ որ կրնան հաշտութեան մը յանգիլ, եւ եթէ մենք կ'անհամբերինք, պարզապէս մեր ժողովողեան դժնդակ կացութեան մը մատնուած ըլլալուն համար է:

Անսպասելիութիւն.-

Այս մասին գրելիքներս կրկնութիւններ պիտի ըլլան, քանի որ կացութիւնը միեւնոյնն է, թէեւ այս վերջերս բոլորովին տարբեր երեւոյթ մը ստացաւ:

Ինչպէս գիտեք, ասկէ մինչեւ 1^{1/2}-2 ամիս առաջ շարունակական սպառնալիքներ ու հարստահարութիւններ տեղի կ'ունենային, տեղ տեղ ալ մասնակի սպանութիւններ, այնպէս որ վերադարձող հայ ժողովուրդը իր տնտեսական դիրքը աստիճան մը բարուրելու որեւէ հնարաւորութիւն չունէր ու գիւղացին կը վախճար դաշտերուն մէջ աշխատելու, բայց վերջապէս բոլոր ասոնք տեղի կ'ունենային այս երկրին յատուկ սովորական ոճրագործութիւններու երեւոյթին տակ, թէեւ մեզի ծանօթ էր թէ բոլոր այդ սխրագործութիւնները քաղաքական նպատակներով սարքուած դաւեր էին:

Այս վերջերս, Ֆերիտ փաշայի բացակայութեան միջոցին, խնդիրը տարբեր կերպարանք մը առաւ: Երկրին խորերը իբր թէ հայրենասիրական շարժում մը յառաջ եկաւ, բանակներու հրամանատարներ կերպով մը սպաստամբեցան կեդրոնի դէմ, Ազգային Բանակ անուան տակ չեթեական խումբեր կազմակերպեցին եւ Կարնոյ մէջ Congrès [= համաժողով] մը հաւաքեցին: Բոլոր այս խաղերը Պոլսէն կը կառավարուէին սակայն. այդ մասին մենք ստոյգ տեղեկութիւններ ստացած ենք. նոյնիսկ պատերազմական նախարարութեան մէջ է որ պատրաստուած են «Ազգային Բանակի» կազմակերպութեան ծրագիրները:

Այս շարժման գլուխը կանգնած են Մուստաֆա Զեմալ փաշա, Բէուֆ Պէյ եւ ուրիշներ, եւ կ'երեւի իրենց քարոզութիւնները մեծ ընդունելութիւն գտած են թուրք ժողովուրդին մէջ եւ շատեր արձանագրուած այդ բանակին: Պատերազմի պահուն «Թէշքիլաթը Մախսուսէ» [= Յատուկ Կազմակերպութիւններ] անուան տակ չեթներու խումբեր կային, որոնք հազարաւոր հայերու կորստեան պատճառ եղան: Այսօր, թուրքը չարաչար

յադրուել է վերջ, Համաձայնականներու քթին տակ «Միլի Օրտու» [= Ազգային Բանակ] անուան տակ կը վերակազմե միեւնոյն չէթէի խումբերը, որոնք միեւնոյն նպատակները կը հետապնդեն, այն է՝ հայերու բնաջնջումը. եւ արդարեւ այս օրերս յաճախադէպ սպանութիւններ տեղի կ'ունենան, արդիւնք՝ մղուած այդ հակահայ բրօքականտին:

Կեդրոնի կառավարութիւնը այս օրերս իբր թէ հրաժարեցուց այդ ապստամբ զինուորականները եւ դատարան պիտի յանձնէ, բայց մենք հայերս երկարամեայ փորձառութիւնը ունինք որ՝ Թուրքիոյ մէջ առանց կեդրոնի հրամանին բան մը չ'ըլլար եւ ժողովուրդը երբեք ինքնիրեն չ'ապստամբիր, եթէ զինքը մղող մը չ'ըլլայ. որով, առանց սխալած ըլլալու, կրնանք ըսել թէ այս շարժումները Իթթիհատն է որ առաջ կը բերէ, կառավարութեան լոյն գիտութեամբն ու նոյնիսկ օգնութեամբը:

Խնամատարական.-

Բարձր. Պօղոս Փաշային նամակէն ուրախութեամբ տեղեկացանք թէ փոխառութեան խնդիրը ձեռք առնուած է: Այս խնդիրը հետզհետէ մեծ կարեւորութիւն մը ստանալու վրայ է՝ որովհետեւ Խնամատարութիւնը հազիւ մէկուկէս ամսուան բաւելու չափ դրամ ունի: Միւս կողմէ, հանգանակութեան գործը դանդաղած է: Այս օրերս թէւ մղում մը տալ կ'ուզուի, բայց ես անձնապէս արդեանը մասին մեծ հաւատք մը չունիմ: Երկրին տնտեսական վիճակը աւելի վատթարացած ըլլալուն, վաճառական ու դրամատէր աւելի ժլատ են եւ հազար քարոզ անօգուտ է: Մեծ վախ մը ունիմ թէ ծանր գայթակղութեան մը տեղի պիտի տրուի, որովհետեւ այսօր Խնամատարութիւնը շատ մը engagement-ներ [= յանձնառութիւններ] ունի, ըլլայ հոս ըլլայ գաւառները, որբերու եւ տարագրեալներու համար եւ եթէ չկարողանայ դրամ հասցնել, կրնաք երեւակայել հետեւանքը. ուստի պիտի խնդրեմ [որ] այդ փոխառութեան հարցին ստիպողականութիւն տրուի:

Քաղաքական.-

Ամերիկեան Յանձնախումբը Սուրիայէն վերադարձաւ եւ հոս ժողովրդեան հետ շփման մէջ մտնելու սկսած է արդէն: Մասնաւոր հրաւերով այսօր իրենց ներկայացանք, երեք ազգապետներն ու ես¹⁷¹: Հարցմանց գլխաւոր կէտը ապագայ Հայաստանի մէջ հայերու մեծամասնութեան խնդիրն է: Յայտնապէս շատեր կասկած ունին թէ հայերը չպիտի գաղթեն

¹⁷¹ Տես Յաւելուած Ժ.:

դէպի երկիր եւ թուրքերը մեծամասնութիւնը կազմելով, հայերու դիրքը պիտի դժուարացնէ: Այս մասին երկար չպիտի գրեմ: Սրբազանը պիտի գրէ արդէն եւ տեղի ունեցած խօսակցութեան ատենագրութիւնն ալ պիտի ներփակէ: Ամէն պարագայի մէջ, մեր տպաւորութիւնը լաւ եղաւ եւ կը կարծենք թէ մեր դատին մասին նպաստաւոր գաղափար մը կազմած են:

Մր. Հէսթէլ¹⁷² վաղը Պօլիս կը ժամանէ, պաշտօնական ընդունելութիւն տեղի չպիտի ունենայ, պիտի ջանանք իրեն հետ տեսնուելու: Կ'ըսուի թէ՝ շատ քիչ պիտի մնայ Պոլիս:

Թուրքերը ամերիկեան շրջանակներու մէջ բուռն բրօքականտ մը մղելու վրայ են: Ծովակալ Պրիսթօլ շրջապատուած է թուրքերէ, մանաւանդ թրքուիներէ: Անցեալ օր Ազգապետը¹⁷³ տեսակցութիւն մը կ'ունենայ հետը եւ իր ըրած յայտարարութիւններէն որոշ կերպով կը հասկցուի որ ինքն ալ ամբողջական Թուրքիոյ վրայ միակ *մանտայի* [= յանձնակատարութեան] մը կողմնակից է: Ծովակալը՝ ինչպէս իրեն պէս շատ մը բարձր պաշտօնականներ՝ դժբաղդաբար չեն ճանչնար ո՛չ երկիրը եւ ո՛չ ալ թուրքերը, չեն ուսումնասիրած երկրին պայմանները եւ մանաւանդ պատմութիւնը, եթէ ոչ չպիտի առաջարկէին այնպիսի լուծում մը, որ զմեզ պիտի բռնադատէր մեր թշնամիներուն ու ոճրագործներուն հետ խառն ապրելու եւ դարձեալ անոնց ազդեցութեանը տակը իյնալու:

Իր կարծիքով պետք է լուծել թուրք արդի կայսրութիւնը եւ անոր տեղ հիմնել նոր պետութիւն մը արդիական սկզբունքներու համաձայն, այսինքն՝ նոր Ամերիկա մը պիտի կազմակերպէ եւ կը կարծէ թէ հոն երկրին բոլոր տարրերը համերաշխաբար պիտի ապրին եւ կերպով մը նոր

¹⁷² Ակնարկութիւն գնդապետ William N. Haskell-ի (1878–1952), որ 1919-ին պաշտօնի կոչուած էր Ամերիկեան Նպաստամատոյց Վարչութեան մէջ: Տուեալ շրջանին ան կը վարէր Հայաստանի Բարձր Յանձնակատարի պաշտօնն ու կը հետեւէր ընդհանրապէս Կովկասի եւ Ռուսաստանի մէջ կատարուող խմորումներուն: Հասքէլ 20 Հոկտեմբեր 1919-ին Ազգային Խորհուրդին հետ պիտի ունենար հանդիպում մը, որուն կը մասնակցէր նաեւ Դաւիթեան՝ կատարելով թարգմանի դեր (*Համահաւաք* Բ., էջ 930–931):

¹⁷³ Հայ բողոքականներու ազգապետն էր Այնթապ ծնած եւ ծննդավայրին մէջ շրջան մը դասատուութիւն կատարած Փրոֆ. Չենոբ Պէզգեան (1862–1933), որ Պոլսոյ մէջ ազգապետութեան կոչուած էր 1915-ի Փետրուարին: Իր շահեկանութեան համար Յաւելուած ԺԱ.-ով կը ներկայացնենք քաղուածքը Պէզգեանի համարատուութեան, որ կը վերաբերի 1919-ի Հոկտեմբերին Պրիսթօլի հետ իր ունեցած տեսակցութեան:

կադապարի մը մէջ պիտի ձուլուին բոլոր ժողովուրդները:

Այս տեսակ կարծիք մը, ամերիկացի Ծովակալի մը կողմէ պաշտպանուած, կրնայ որոշ չափով մը իր ազդեցութիւնը գործել Խաղաղութեան Վեհաժողովի շրջանակներուն մէջ, ուստի պէտք է ջանանք գայն չեզոքացնել: Կը յուսամ որ յարմար առթիւ մը, առանց Ազգապետի անունը տալու, պէտք եղած տեղը կը խօսիք:

*

Ներքին պիտի գտնաք թուրք եւ արապ դաշնագրի մը օրինակը¹⁷⁴. ինծի տուողը կը պնդէ թէ վաւերական է, այսինքն՝ բնագիր մը կայ որմէ ընդօրինակուած է:

¹⁷⁴ Դաշնագրին օրինակին չենք հանդիպած դիւանաթուղթերուն մէջ: Թրքական կարգ մը ուսումնասիրութիւններու մէջ յղում կատարուելով ֆրանսական եւ անգլիական աղբիւրներու, ի մասնաւորի բրիտանական արտաքին գործերու նախարարութեան 371/233/119322 համարակալումով վաւերագրին, կը նշուի թէ դաշնագիրը կնքուած է Հալէպի մէջ 16 Յունիս 1919-ին, ընդմէջ Ֆայսալ իշխանին եւ Մուսթաֆա Քեմալի՝ միջնորդութեամբը Քերեքի կուսակալ Էսատի, եւ թէ ան կը բաղկանայ ինն յօդուածներէ, ուր դաշնադիր թուրք եւ արաբ ազգերը ցաւ կը յայտնեն իսլամական աշխարհի պառակտեալ վիճակին համար եւ սրբազան պարտականութիւն կը նկատեն բաժանումներու վերացումն ու նիւթական, բարոյական եւ կրօնական շահերով իրարու կապուած երկու ազգերուն համագործակցութեան երաշխաւորումը: Այնպիսի պահու մը, ուր արաբներու անկախութիւնն ու թուրքերու միութիւնն ու ազատութիւնը վտանգուած են Փոքր Ասիան եւ արաբական կարգ մը երկիրներ մասնատելու ցանկութեան պատճառով, կողմերը կ'որոշեն Փարիզի Հաշտութեան Վեհաժողովին որոշման յաջորդ օրն իսկ սրբազան պատերազմ յայտարարել կրօնքի եւ հայրենիքի պաշտպանութեան համար: Կողմերն իրենց նպատակին հասնելու համար կը մերժեն ընդունիլ օտար ուժերու կողմէ թրքական կայսրութեան եւ Արաբիոյ մասնատումը կամ գրաւումը եւ այլն: Այս կապակցութեամբ, կը նշուի նաեւ 371/4233/11392 համարակիր վաւերագիր մը, ուր Քըրքըն Գահիրէ Գնդապետ Ֆրենչի եւ Պոլիս Ծովակալ Ուէլի 28 Օգոստոս 1919-ին կը յայտնէ թէ Փարիզի Հայ Պատուիրակութիւնը խորհրդապահաբար Պալֆուրի հաղորդած է ենթադրական դաշնագրի մը մասին ընդմէջ Ֆայսալի եւ Քեմալի (HÜLAGÜ, M. Metin, TÜRK KURTULUŞ SAVAŞI DÖNEMİ TÜRKİYE - İSLAM ÜLKELERİ MÜNASEBETLERİ, էջ 23–25: Աղբիւր՝ <https://dergipark.org.tr/tr/pub/ankuayd/issue/1868/22699>, 13 Նոյեմբեր 2023-ի դրութեամբ. նաեւ՝ Yenen, Alp, Envisioning Turco-Arab Co-Existence between Empire and Nationalism, *Die Welt des Islams*, 61(1), 72-112):

Խնդիրը բաւական կարելոր է եւ շատ վտանգաւոր քայլ մը՝ նոյնիսկ արեւելքի խաղաղութեան տեսակէտով. իսկ մեր տեսակէտով բոլորովին աղիտալի: Բայց եւ միշտ կը կասկածիմ այդպիսի դաշնագրութեան մը գոյութեան վրայ. արդարեւ, երբ Չօրավար Ալեմպի¹⁷⁵ բանակները դեռ արապ հողի վրայ կը գտնուին, ինչպէ՞ս Էմիրը¹⁷⁶ կը համարձակի այդպիսի վտանգաւոր քայլ մը առնելու:

Այդքան կարելոր դաշնագրի մը ընդօրինակութիւնը, համեմատաբար դիրութեամբ ձեռք ձգուած ըլլալը ենթադրել կուտայ ինծի թէ՝ մասնաւոր նպատակով մը պատրաստուած է այն: Ինչպէս գիտէք, թուրքերը, մանա-

¹⁷⁵ Չօրավար Ալեմպի կամ Ալենպի (Edmund Allenby, 1861–1936), պաղեստինեան ճակատին վրայ իր գովեստին եւ շնորհակալութեան արժանացած հայ լեգէոնականներու մասնակցութեամբ 1918-ի Սեպտեմբեր–Հոկտեմբեր ամիսներուն ջախջախիչ պարտութեան մատնելով օսմանեան ուժերը, խթանիչ դեր մը ունեցած էր 30 Հոկտեմբեր 1918-ի զինադադարի կնքման մէջ: Իբրեւ վարձատրութիւն՝ ան ստացած էր մարաջախտի աստիճան եւ նշանակուած՝ Բարձր Յանձնակատար Եգիպտոսի եւ Սուտանի:

¹⁷⁶ Ալկնարկութիւն Հաշեմական գերդաստանին պատկանող Մեքքէի Շերիֆ Ֆայսալի (1885–1933), որ Փարիզի Հաշտութեան Վեհաժողովին կը դիմէր արաբական անկախ իշխանութիւններու հաստատման պահանջով եւ հետագային պիտի դառնար Մեծն Սուրիոյ ապա նաեւ Իրաքի թագաւոր: Հայ Ազգային Պատուիրակութեան հետ զանազան առիթներով շփում հաստատած եւ արաբական հողերու վրայ գտնուող հայ տարագիրներու ապահովութեան նկատմամբ հոգատարութիւն ցուցաբերած Ֆայսալ Ա. Աշխարհամարտի ընթացքին գլխաւորած էր այդ հողերու ազատագրման նպատակով ապստամբութիւն մը ընդդէմ օսմանեան իշխանութեան՝ խանդավառուած այն հեռապատկերով թէ Համաձայնականները Օսմանեան Կայսրութիւնը մասնատելէ ետք պիտի թոյլատրեն իր գլխաւորութեամբ արաբական անկախ պետութեան մը կազմութիւնը: Հակառակ ատոր, եղած էին պահեր, ուր ան փորձած էր համաձայնութեան գալ օսմանցի եռապետներուն՝ Թալաաթի, Էնվերի եւ Ճեմալի հետ՝ ճակատ փոխելու, պայմանաւ որ ի փոխարէն ունենայ իր իշխանութեան տակ դրուելիք երկրամաս մը: Անհաւանական չէ որ Ֆայսալ բանակցած ըլլար ուղղակի կամ միջնորդաւորուած կերպով Բեմալի հետ, որովհետեւ 1919-ի Նոյեմբերին ան Պօղոս Նուպարի պիտի յայտնէր թէ Համաձայնականները իրենց խոստումները չարգելով, պատճառ կը դառնան որ արաբները թուրքերու գիրկը նետուին եւ ինք չկարենայ նոր պատերազմի մը առաջն առնել ու արաբական հողերու վրայ տարագիր հայերու ապահովութիւնը երաշխաւորել:

ւանդ այս վերջերս, սպառնական դիրք մը բռնած են, հասկցնել կ'ուզեն Եւրոպայի թէ իրենց հետ խաղալ չ'ըլլար, սխալ է խորհիլը թէ թուրքերը դիակի մը վերածուած են, թէ՛ կրնան դեռ պատկառելի ուժ մը մէջտեղ հանել եւ ծանր դժուարութիւններ պատճառել Համաձայնականներուն, եւ նոյնիսկ դաշնագիր կնքել արարներու հետ ու այդպէսով իսլամական աշխարհը ոտքի հանել: Ասոնք ենթադրութիւններ են, անշուշտ, որոնք կրնան ուղիղ չըլլալ, բայց խնդիրը այնքան հետաքրքրաշարժ է որ ուզեցի Ձեզի խրկել, որպէսզի հոդ ալ ուսումնասիրէք եւ օգտագործէք ի հարկին:

*

Ոչ նուազ հետաքրքրական document մըն է ներփակ *Ֆօթօկրաֆի* [= լուսանկար] մը, որ տեսակ մը ջարդի հրամանագիր է, գրուած 1916ին, թուրքերու դէպի Կովկաս արշաւելու ատեն: Թէեւ թուրքերու գործած ոճրագործութիւնները այլեւս վաւերացուած խնդիր մըն է եւ կարօտ չէ նոր վաւերաթուղթերու, բայց օգտակար պիտի ըլլայ հաւաքել բոլոր document-ները մեր ժողովուրդի վերջին մարտիրոսագրութեան պատմութիւնը պատրաստելու համար:

Մերինները բոլորն ալ լաւ են եւ սիրով կը բարեւեն, Նուպարը¹⁷⁷ Dérindjé կը գտնուի՝ ամերիկացիներու որբերուն համար հիմնած tent cityն [= վրանաքաղաքը]: Այս օրերս զինքը քօլէժ արձանագրել տուի յառաջիկայ շրջանին համար:

.....

Յարգանք
Տօք. Դաւիթեան

¹⁷⁷ Դաւիթեանի որդին, որ հետագային Փրանսայի մէջ պիտի շարունակէր հօրը գործը՝ ղեկավարելով որբերու ապաստանարան եւ ուսումնարան ծառայող Գարակէօզեան Տունը:

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 26 Օգոստոս 1919

Յարգելի բարեկամ,

Այս անգամ ուշացայ Ձեզի գրելու: Ամերիկեան պատուիրակությունը քաղաքս եկած էր եւ ատով շատ զբաղեցանք: Թե՛ տեսակցություններ ունեցանք եւ թե՛ ուրիշներու տեսակցությունները ուղղեցինք, նոյնպէս ալ գրաւոր նօթեր մը տալ հարկ տեսնուեցաւ: Իրենց բռնած ընթացքը լաւ էր: Ինչպէս թերթերէն պիտի իմանաք, մասնաւորապէս հայերու խնդրով զբաղեցան եւ նոյն իմաստով ալ հարցումներ ուղղեցին թուրքերուն եւ ուզեցին հայկական խնդրոյ մասին անոնց կարծիքը իմանալ:

Այս խնդիրը թուրքերուն ջիղերուն դպաւ. շատ մը քննադատություններու եւ առարկություններու տեղի տուաւ: Որոշ չեմ գիտեր թէ ինչ եղաւ այս քննութեանց արդիւնքը, բայց հետեւանքը սա եղաւ որ թուրքերը քիչ մը պաղեցան ամերիկացիներէն: Նախապէս Ամերիկայի *մանտան* ուզողները այսօր կա՛մ կը լռեն եւ կամ նոյնիսկ դե՛մ կը խօսին: Անգղիացիները, վարպետ քաղաքագետներ, կրցան օգտուիլ բոլոր այս իրադարձություններէն: Փրանսացիներու Արեւելքի մէջ հետեւած քաղաքականությունը դժբաղդաբար այնքան ձախորդ եղաւ որ իրենց է՛ն համակիրներն իսկ սկսան պաղիլ, որով Անգղիան մինակը մնաց իր վրայ հաւաքելու բոլոր համակրությունները:

Այս վերջնոյն համար կ'ըսուի թէ ներքնապէս հետամուտ է Թուրքիոյ ամբողջութեան պաշտպանությունը իր վրայ առնելու: Ամերիկացի զինուորականներ այնպէս կը կարծեն թէ՛ թէեւ արտաքուստ անգղիացիները *désintéressé* [= անշահախնդիր] կը ձեւանան, բայց ձեռքի տակէ մեծ աշխատություններ կը թափեն ուրիշ *մանտան*ներու յաջողությունը արգիլելու համար: Անշուշտ իրողությունը մեզի համար դժուար է իմանալ, բայց սա ստոյգ է որ անգղիացիները քիւրտերու մէջ մեծ բրօքականտ մը մղելու վրայ են, զանոնք կազմակերպելու ջանքեր մը կ'ըլլան, իսկ թուրքերու հանդէպ ծայրայեղ զգուշաւորութեան ու փափկանկատութեան քաղաքականություն մը կը հետապնդեն բաւական ատենէ ի վեր, որ այս վերջերս աւելի աչքառու կերպարանք մը ստացած է: Ամէն գնով կ'ուզուի թուրքին տհաճոյ չըլլալ եւ զգուշանալ այն ամէն բաներէն որ կրնա[ն] թուրքին զգացումները վիրաւորել: Երբ ամէն օր, ամէն վայրկեան մեր պատիւը ոտնակոխ կ'ըլլայ

ու մեր կեանքին կը սպառնան եւ լուրջ միջոցներ մը ձեռք չեն առնուիր ատոնց առաջքը առնելու համար, անդին մեզի դիտողագիր կ'ուղղուի եւ հրահանգ կը տրուի որ հայ պոյ-ըսքաւութիւնը 16էն վեր պատանիներ չըլլան եւ քաղաքին մէջ հանդիսաւոր անցք չկատարեն, անշուշտ թուրքին զգացումները խնայելու համար: Եւ ասոր պէս ալ շատ մը ուրիշ օրինակներ կարելի է տալ: Վերջապէս Համաձայնականները Թուրքիոյ մէջ այնպիսի քաղաքականութեան մը հետեւեցան եւ իրարու հետ այնպիսի մրցակցութեան պայքար¹⁷⁸ մը մղեցին որ թուրքը, սկիզբները բոլորովին յուսահատ ու շուարած, կամաց կամաց պոսփեցաւ եւ տեսաւ թէ իր վաղեմի քաղաքականութեան համար դարձեալ լայն ասպարէզ մը բացուած է եւ ոտքով գլխով մէջը նետուեցան: Թէ խաբելու ու կեղծ խոստումներ շռայլելու թրքական այդ քաղաքականութիւնը վերջ ի վերջոյ ի՞նչ արդիւնք պիտի տայ մեզի համար կարելի չէ գուշակել, բայց այս պահուս բաւական յուսադրիչ ըլլալ կը թուի եւ մեծ յոյսեր ունին թէ իրենց նախապէս կարծածէն նուազ վնասով պիտի կրնան ազատիլ այս փորձանքէն:

¹⁷⁸ Օտար պետութիւններու մրցակցական քաղաքականութեան գծով հարկ կը դատենք նշել թէ շուտով տարաձայնութիւններ պիտի սկսելին անգլո-թրքական գաղտնի համաձայնութեան մը մասին, ըստ որո՞ւ բրիտանական կառավարութիւնը յանձնառու կը դառնար Օսմանեան Կայսրութեան ամբողջականութեան եւ անկախութեան՝ իր յանձնակատարութեան տակ (Salahi R. Sonyal, "The Secret Anglo-Ottoman Treaty of 1919 in the Light of British Foreign Office Documents" *Belleten*, vol. 34, issue 135, 1970, pp. 451-462):

Պանտրմայի առաջնորդն, օրինակ, 17 Հոկտեմբեր 1919-ին կը գրէր. «Միլլի շարժումէն առաջ եւ յետոյ տեղւոյս եւ շրջակայից մէջ ուշադրութիւն գրաւելու աստիճան Համաձայնական ներկայացուցիչները մին միւսը հակակշռելու եւ հետապնդելու ուղղութեան մը հետեւելով կարծես անուղղակի իմն Միլլի շարժումը քաջալերելու համոզումը տուած են իսլամ տարրին: Հազիւ անգլիական ներկայացուցիչները քաղաք, գիւղ կամ ոեւէ տեղ մը ոտք կը կոխէին, ահա յանկարծ ֆրանսական ներկայացուցիչ կամ պաշտօնեայ վրայ կը հասնէին, կարծես մղձաւանջէ մը բռնուած, եւ այսպէս յաջորդաբար, կարծես թէ մասնաւոր ճիգ մը ընելով շահելու թուրքերը» (Post-WWI, էջ 99): Երեւոյթը պիտի շարունակէր գոյատեւել: Օրինակ՝ 21 Ապրիլ 1920-ին, Տրապիզոնի առաջնորդական տեղապահը Չաւէն Պատրիարքին յայտնելէ ետք թէ թուրքերը պոլշեիկ կը ձեւանային, կ'աւելցնէր թէ անոնք «մեծ յոյս դրած են նաեւ Համաձայնական պետութեանց անհամաձայնութեան վրայ» (Post-WWI, էջ 263):

Ապահովություն.-

Ապահովության խնդիրը փոփոխություն մը կրած չէ: Կացութիւնը աւելի վատթարացած է կրնայ ըսուիլ: Համատարած ջարդեր տեղի ունեցած չեն, բայց մասնակի սպանութիւններ յաճախադէպ են եւ մանաւանդ վերջերս կազմուած չեթներու բռնած ընթացքին հետեւանքով, հայ ժողովուրդը շարունակական սպառնալիքի տակ է եւ ամէն օր նամակներ, հեռագիրներ եւ մասնաւոր պատուիրակութիւններ այս կացութեան դարման մը կը խնդրեն, եւ կարգ մը տեղերէ ալ, ինչպէս՝ Տիգրանակերտ, Պրուսա եւ Կեսարիա, ժողովուրդը՝ արդէն խեղճ, գաղթել եւ ապահով տեղ մը գալ կ'ուզէ: Կեսարիա 7000 հայ բնակչութիւն մը ունէր զինադադարին սկիզբը, այսօր 4000 միայն մնացած է: Քիչ շատ բարեկեցիկ դասակարգը կը մեկնի եւ բոլորովին աղքատներն են որ կը մնան, ինչ որ օգնութեան գործին ալ մեծապէս կը վնասէ:

Այս մասին արդէն գրած եմ Ձեզի: Թուրքերուն այս վերջին քաղաքականութիւնը (ազգային բանակի կազմութիւն) բաւական ճարպիկ խաղ մըն է: Թերեւս ալ բոլորովին միանկնին յղացած չեն այդ գաղափարը: Այս կերպով թէ՛ հայերու ներգաղթը արգիլած կ'ըլլան, թէ՛ մնացած հայերը յամրաբար փնացուցած կ'ըլլան եւ թէ՛ ալ քաղաքական բարդութիւններու հողը պատրաստած կ'ըլլան, միանգամայն՝ հաւանական mandataireին ալ գործը աւելի դժուար ու աւելի կնճռոտ լինելուն պատրանքը ցուցադրած, ինչ որ առաւելութիւն մըն է անշուշտ:

Հոս շատերը համոզուած են որ կեդրոնի կառավարութիւնը բոլորովին օտար չէ մնացած այդ կազմակերպութեանց մէջ: Նոյնպէս վստահ ենք որ Համաձայնականներու կողմէ որեւէ անկեղծ ու լուրջ միջոցներու գործադրութիւնը վերջ մը կրնայ տալ այս խաղերուն, բայց քաղաքական հակընդդէմ շահերը դժբաղդաբար չեն թոյլատրեր այդ տեսակ գործելակերպ մը, եւ մեր ժողովուրդը՝ հազիւ ազատած պատերազմի ու տեղահանութեան արհաւիրքներէն, այսօր ալ ստիպուած պիտի տանի զինադադարի չարչարանքներուն խաղը:

Կովկասէն եկած գէշ լուրերուն վրայ ժողովուրդը՝ յուզուած՝ փափաքեցաւ դարձեալ Համազգային Խորհուրդ մը գումարելով իր բողոքի ձայնը բարձրացնել, ինչ որ տեղի ունեցաւ անցեալ շաբթո՝¹⁷⁹: Ատկից 1–2 օրեր

¹⁷⁹ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան եւ Թուրքիոյ հայոց ազգային իշխանութիւններուն հաղորդուած էր թէ անգլիական բանակը Օգոստոս 15-ին պիտի քաշուէր Կովկասէն: Միւս կողմէ, ամերիկեան պատուիրակութեան կողմէ առաքուած հեռագիր մը ծանուցած էր թէ «թուրքերն ու թաթար-

առաջ, Ձեր Պատուիրակության միջոցառ. Conférenceին [= Վեհաժողովին] հեռագիր մը խրկեցինք, կը յուսամ արդէն ձեռքերնիդ հասած է: Առջի օրն ալ երկար Note մը տուինք հոս Համաձայնական ներկայացուցիչներուն միեւնոյն նիւթին վրայ, բայց քիչ մը աւելի կտրուկ, եւ խնդրեցինք որ պարունակութիւնը Բարիզի Հաշտութեան Ժողովին հաղորդուի¹⁸⁰: Օրինակը ներփակ կը դրկեմ: Պարունակութենէն պիտի տեսնաք թէ՛ արդարեւ, մեր ժողովուրդին վիճակը յուսահատական է եւ այլեւս պէտք է որ քիչ մը աւելի յստակ կերպով խօսուի:

Խնամատարական.-

Supreme Economic Councilէն կնքուելիք փոխառութեան մասին հոս իրենց ներկայացուցիչին հետ քանի մը անգամներ տեսնուեցայ: Haskell-

ները կը քայեն Հայկական Հանրապետութեան վրայ: Նոյնիսկ յաջողեր են կտրել հայոց պարենաւորման գիծը: Հայերը գորահանութիւն կ'ընեն ինքզինքնին պաշտպանելու համար, որովհետեւ անգլիացիք հրաման չունին արշաւողներուն դէմ գործելու» (Ազգային Երեսփոխանական Ժողովի 1 Օգոստոս 1919-ի նիստ): Ազգային Համագումար Ժողովին տագնապեցնող լուրերուն յատկացում չնստը գումարուած էր 15 Օգոստոսին: Հոն Չաւէն Պատրիարք նշելով հանդերձ թուրք ազգայնական շարժման գործունէութեան հետեւանքով ամէն կողմէ պատրիարքարան հասնող սպանութեան լուրերու մասին, կը շեշտէր. «Սակայն ամենէն աւելի մտահոգիչ է կովկասահայ եղբայրներու վիճակը, որոնց կեանքի տագնապը աւելի մեծ է: Անոնք շրջապատուած [են] սուրը ձեռքին մէջ ունեցող թշնամիներէ, [որոնք] կ'ուզեն] իր որորանին մէջ խեղդել նորածին Հայկական Հանրապետութիւնը: ... Հայ Հանրապետութիւնը, որ յարգանքը կը վայելէ թէ՛ հայերուն եւ թէ՛ օտարներուն, ուշադրութիւնը կը գրաւէ իր իսլամ տարրերուն, որոնք կ'աշխատին փճացնել այդ կորիզը, որպէսզի փճանան նաեւ մեր բաղձանքները: Անոնք ունին իրենց ղեկավարողները եւ բոլոր Միլի թեշքիլաթները կը սնուցուին այստեղէն, գէնքերն ալ այստեղէն կը ստանան: Եթէ ոչ օգնութիւն մը ընելու, գոնէ ուշադրութեան առնելու համար հրաւիրեցի գձեզ, որպէսզի հայութիւնը փճանալէ յետոյ անոնց վրայ լալու հարկին մէջ չգտնուինք: Ահաւասիկ այս է մեր այսօրուան հրաւերին նպատակը, որպէսզի խորհրդակցութիւն տեղի ունենայ» (*Համահաւաք Ա.*, էջ 54-60):

¹⁸⁰ Կը թուի թէ խօսքը կը վերաբերի 23 Օգոստոս 1919 թուակի վեցէջանի ծանուցագրի մը, որուն պատճէնը պահպանուած է դիւանաթուղթերուն մէջ (ՊՏԳ, տրցակ 11, թղթապանակ MD902, Գ425-Գ430, ֆրանսերէն մեքենագիր):

ին ալ հարցուած էր եւ նպաստաւոր պատասխան տուաւ: Իսկ այստեղի ներկայացուցիչն ալ մեկնեցաւ եւ հոդ անձամբ պիտի աշխատի աստոր յաջողութեանը համար: Ինքը մեծ յոյս ունի. կը յուսամ որ դուք ալ Ձեր կողմանէ պէտք եղած աշխատութիւնը կու տաք, որովհետեւ ինչպէս ուրիշ անգամներ ալ գրած եմ, պէտքը մեծ է, թշուառութիւնը՝ անսահման, եւ մեր աղբիւրները՝ սահմանափակ: Կարելի չէ տեղական հանգանակութիւններով ու ամսավճարներով բաւականաչափ գումար հայթայթել: Այս օրերս դրամահաւաքութեան նոր թափ մը տալ կ'ուզուի, բայց տեղ մը կայ որ հոն պիտի կասի, մանաւանդ թե՛ զինադադարէն ի վեր՝ մեր հայերու տնտեսական վիճակը զգալի բարւոքում մը չկրեց, իսկ շատեր ալ վնասուեցան, հետեւաբար վտանգաւոր է ամէն յոյս աստոր վրայ դնել:

Եթէ փոխառութիւնը յաջողի, այդ գումարին մատակարարութեան հարցը պիտի ներկայանայ անշուշտ: Մենք հոս Խնամատարական Կեդրոնական Մարմին մը ստեղծած ենք, որ աստիճանաբար կազմակերպուելու վրայ է: Անշուշտ դեռ շատ մը թերութիւններ կան, որոնք յատուկ են *amateur*ներէ [= ոչ-արհեստավաժներէ] կառավարուած բոլոր գործերուն: Բայց եւ այնպէս, կարելի է կերպով մը աստոր դարմանը գտնել:

Մեր ներքին խնդիրներու մասին ընդարձակօրէն Ձեզի գրելու կը փափաքիմ, բայց այսօր ժամանակ չունիմ: Առ այժմ սաչափը ըսեմ թէ Պօլտոյ մէջ Պատուիրակութեան ներկայացուցիչի մը պէտքը զգալի է շատ մը տեսակետներով, որոնք յետոյ կը բացատրեմ: Ինչպէս Կիլիկիոյ մէջ ունինք, ձեռնհաս մէկն ալ կարելի է հոս դրկել եւ վստահ եմ որ կրնայ օգտակար ըլլալ. բաւական է որ ողջամիտ մէկը ըլլայ: Այդպիսի ներկայացուցիչ մը կրնայ հեղինակօրէն հսկել խնամատարական գործին եւ աւելի զարկ մը տալ անոր եւ արգիլել բոլոր այն չարաշահութիւնները, որ այս կարգի գործերու մէջ սպրդելու հաւանականութիւններ ունին միշտ: Այս մասին յաջորդով դարձեալ կը գրեմ:

*

Օգոստ. 3 նամակնիդ ստացայ: Պր. Թերզիպաշեան¹⁸¹ թանկագին

¹⁸¹ Աւետիս Թերզիպաշեան (1873–1947), որ ծանօթ է Խրիմեան Հայրիկի, Պօղոս Նուպարի եւ Չօրավար Անդրանիկի նուիրում վեպերով, որոնք լի են պատմական հարուստ տեղեկութիւններով, Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան 24 Ապրիլ 1919-ի նիստին նշանակուած էր ներգաղթի Եւ վերաշինութեան յանձնաժողովի անդամ եւ Յունիսին մասնակցած էր Հայաստանի հողային սահմանագծման հարցի քննարկումներուն՝ յստակացնելու համար պատուիրակութեան կողմէ Գերագոյն Խորհուրդին ներկայացուելիք հողա-

տեղեկություններ հաղորդեց մեզի: Այս օրերս Երեւանի Հանրապետութեան ու Պր. Ահարոնեանի նամակ պիտի գրենք իրենց ծանուցանելով մեր տարակարծիք ըլլալը. պիտի ըսենք նաեւ թէ չենք կրնար ճանչնալ որպէս թրքահայութեան ներկայացուցիչ այն քանի մը հայերը որ իրենց խորհրդարանին կը մասնակցին¹⁸²: Յաւալի երեւոյթներ են ասոնք եւ շատ վնասակար: Կը զարմանամ որ չեն ուզեր տեսնալ իրենց առած քայլին վտանգաւոր հանգամանքը: Ամերիկեան Յանձնախումբը մեզի քանիցս հարցուց թէ պիտի կրնա՞նք ապրիլ ռուսահայերու հետ. անշուշտ այս գործերուն ակնարկել կ'ուզէին:

.....

Յարգանօր
Տօր. Դաւիթեան

յին պահանջները: Դաւիթեանի յաջորդ տողերէն կարելի է ենթադրել թէ Թերզիպաշեանի հանդիպումը առիթ եղած է քննարկելու Մայիս 28-ի Աքթը, արեւմտահայ հողերու ազատագրութեան գծով սնուցուած յոյսերուն ու կատարուած աշխատանքներուն նկատմամբ անոր ունենալիք նշանակութիւնը, ինչպէս նաեւ Արեւմտահայ Երկրորդ Համագումարը:

182

6–13 Փետրուար 1919-ին Երեւանի մէջ 55 ընտրեալ պատգամաւորներով կայացած էր Արեւմտահայ Երկրորդ Համագումարը, որ ձայներու մեծամասնութեամբ ընդունած էր ութ կէտերէ բաղկացած եզրափակիչ յայտարարութիւն մը, որուն մէջ կը գտնուէին թեական եւ կուսակցութիւններու միջեւ բռնութիւն վեճի առարկայ կէտեր, ինչպէս՝ Բ. կէտը, որ լիակատար վստահութիւն կը յայտնէր «Ազատ եւ Միացեալ Հայաստանի Պօղոս Նուպար Փաշայի անդրանիկ դահլիճին», հիմնուելով տարածայնութեան մը վրայ, ըստ որո՞ւ Նուպար Փարիզի մէջ հռչակած էր Հայաստանի անկախութիւնն ու երկու Հայաստաններու միութիւնը՝ կազմելով միացեալ կառավարութիւն, մինչ Ե. կէտը Համագումարի Գործադիր մարմինը կը պարտաւորեցնէր քայլերու ձեռնարկել՝ Արարատեան Հանրապետութեան նախարարութեան եւ խորհրդարանին հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու» եւ այլն: 28 Մայիս 1919-ին պաշտօնապէս Հայաստանի Խորհրդարանի անդամ կ'ընդունուէին Արեւմտահայ Գործադիր Մարմնին կողմէ ընտրուած տասներկու պատգամաւորներ (*Համառօտ Տեղեկագիր Արեւմտահայ Երկրորդ Համագումարի Եւ Կազմակերպիչ Կօմիտէի Հաշիւը 1919 Երեւան*, հրատարակութիւն Արեւմտահայ Գործադիր Մարմնի, Թիֆլիս, 1919 եւ Վրացեան, Ս[իմոն], *Հայաստանի Հանրապետութիւն*, հրատ. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.-ի, Փարիզ, 1928, 228–237:

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Père

26 Օգոստ. նամակին հետ ներփակ գտնուած վաւերաթուղթերը.

- 1° *Էմվալը Մէթրուքէի* օրէնքին ծրագիրը, թուրքերէն. դեռ չէ հրատարակուած.
- 2° Պօլսոյ Համաձայնական ներկայացուցիչներուն տրուած Note. 23 Օգոստ. 1919
- 3° Major Arnoldի գրուած նամակ. 7 Օգոստ. Չէզոք Տան¹⁸³ մասին.
- 4° 14 Օգ. նամակ. բասբորի խնդրոյ մասին¹⁸⁴.

¹⁸³ Հազարապետ Davis Gorham Arnold (1882–1951) Պոլիս կը գտնուէր Ա. Աշխարհամարտին գերի ինկած համաձայնական բանակայիներու ազատ արձակումն ապահովելու համար եւ նշանակուած էր Ամերիկեան Նպաստամատոյցի վարիչ տնօրէն: Չաւէն Պատրիարքի անոր հասցեագրուած նամակէն կը հասկցուի թէ Նպաստամատոյցի խորհուրդը, թրքական խլրդային աշխատանքներու ազդեցութեամբ, առաջարկած էր հայ որբերը պատսպարել եւ կերակրել «գուտ ամերիկեան» չէզոք հիմնարկութեան մը մէջ՝ ամերիկեան վերահսկողութեան տակ՝ հայ տնօրէնուհիով կառավարուող չէզոք տան մէջ կատարուած աշխատանքը գտնելով քննադատելի: Պատրիարքը դիտել կու տար թէ միայն նոյն բնօրրանին մէջ հայ ծնած եւ նոյն մանկավարժական պայմաններուն տակ աճած անձ մը կրնար թրքական կրթութեան գարշելի ազդեցութենէն մտաւորապէս եւ հոգեպէս ազատագրել հայ որբերը (ՊՏԴ, տրցակ 3, թղթապանակ 2-Հ, Հ240–Հ242, անգլերէն մեքենագիր):

¹⁸⁴ 14 Օգոստոս թուակիրը ուղղուած էր բրիտանացի Բարձր Յանձնակատարին: Կը տեղեկացուէր թէ Պոլիս կամ Թուրքիա չծնած հայերու, որոնց շարքին՝ կովկասեան բանակին պատկանող անձերու, հաշմանդամ զինուորներու, օտարերկրացի գաղթականներու, գաւառներէն տարագրեալներու Միջ-Համաձայնական պաշտօնեաները կը մերժեն անցագիր տալ արտասահման ճամբորդելու համար: Թրքահպատակներու պարագային, երբ կը պահանջուի թրքական իշխանութիւններէ ձեռք բերել իրենց ծննդեան վկայականները, այդ պահանջը անիրատեսական է, որովհետեւ նոյնիսկ եթէ անոնց ծննդավայրերուն մէջ կարելի է ձեռք ձգել գրանցամատեանները, անհետբերութիւն պիտի ըլլայ մտածել թէ կամաւորապէս անոնց թոյլ պիտի տան ունենալ իրենց ծննդեան վկայականները: Որպէս միակ լուծում, պատրիարքարանն իր վրայ վերցուցած էր անոնց ինքնութեան թուղթեր տալը եւ հիմա այդ

- 5° Հեռագիր Բարիզի Conférenceին. 12 Օգոստ.
- 6° Պր. Տամատեանի տեղեկագիրը. 30 Յուլիս¹⁸⁵.
- 7° Երկու փոքր նամակներ Պր. Տամատեանէ.
- 8° Խնամատարութեան Գաղատիոյ քննիչ Խալասեանի Եղկաթէն գրուած 30 Յուլիս նամակ.
- 9° Բժշկական Միութեան հրատարակած տետրակը նահատակուող բժիշկներու մասին¹⁸⁶:

փաստաթուղթերն այլևս անընդունելի կը նկատուին պաշտօնեաներէն: Պատրիարքարանը ի վիճակի չէ հարցը լուծել թրքական իշխանութեան հետ, քանի որ հայերը միացած էին Համաձայնականներուն եւ կառավարութիւնը զիրենք կը նկատէ պատերազմող կողմ: Հետեւաբար, կը խնդրուէր երկարածգել ընթացիկ դրութիւնը ի տես Փարիզի ձգձգուող Հաշտութեան Վեհաժողովին կողմէ որոշումի մը բացակայութեան (ՊՏԴ, տրցակ 11, թղթապանակ MD902, Գ456–Գ457, անգլերէն մեքենագիր):

¹⁸⁵ Միհրան Տամատեան (1863–1945) Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Կիլիկիոյ լիազօր ներկայացուցիչի հանգամանքով բազմաթիւ նամակներ եւ տեղեկագրեր ուղարկած է պատրիարքարան եւ զինք նշանակող պատուիրակութեան: 30 Յուլիս թուակիրին համար տեսնել Յաւելուած ԺԲ: Յաջորդ կէտով նշուած փոքր նամակներուն վերաբերեալ կը դժուարանանք որեւէ յստակ նշում կատարել:

¹⁸⁶ Ակնարկութիւն Հայ Բժշկական Միութեան հրատարակած *Հայ Բժշկութեան Տուած Չոհերը – Յուցակագրուած Վաւերական Փաստերով* խորագրեալ 40 էջերէ բաղկացած գրքոյկին, «Կիլիկիա» գրատուն, Պոլիս, 1919): Գրքոյկին «Ամփոփում» բաժնին համաձայն (էջ 38), Ցեղասպանութեան շրջանին սպաննուած է 60 բժիշկ, 30 դեղագործ, 8 ատամնարոյժ: Թիֆլիսը (Ժանտատենդ) հնձած է 43 բժիշկ եւ 14 դեղագործ: Սպաննուած կամ այլապէս մահացած է 13 բժշկական ուսանող: Համագումար՝ 168:

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Père

Կոստանդնուպոլիս, 7 Հոկտմ. 1919

Յարգելի բարեկամ

Երեկ կարգ մը գրութիւններ, ընդ որս Հայկական Հանրապետութեան կառավարութեան ուղղուած 16 Սեպտմ. թուական նամակը եւ նոյնպէս Նուպար Փաշային ուղղուած նամակ մը ապահով միջոցաւ մը խրկելու դիմում ըրի, բայց հայերէն գրութիւնները չընդունեցին, ուստի աճապարանօք ֆրանսերէն նամակով մը խրկեցի այդ գրութիւնները, իսկ Երեւանի կառավարութեան ու Փաշային ուղղուած նամակները ներփակ կը դրկեմ այսօր¹⁸⁷:

Վերջին նամակս կը յուսամ ստացած էք 26 Օգոստ. իսկ Զեր Օգոստ. 12, 15, 20 եւ 22 եւ 10 Սեպտմ. թուական նամակները իրենց պարունակութեամբը ստացած եմ:

Ամերիկացի missionներու Պօլսէն անցքը բաւական զբաղում տուաւ մեզի, մանաւանդ թէ երկար մնալու ժամանակ չունէին եւ հարկ եղաւ կարգ մը տեղեկութիւններ ափ յափոյ պատրաստել: Աւելի լաւ պիտի ըլլար, եթէ նախապէս գիտնայինք եւ ըստ այնմ հաւաքէինք իրենց ուզած տեղեկութիւնները: Այս երկիրը շատ թերի կերպով ուսումնասիրուած ըլլալուն, դիւրին չէ կարգ մը ուսումնասիրութիւններու հաւաքումն ու դասաւորումը: Ինչ որ է, կարելիին չափ զոհացում տալու ջանացինք:

Տեարք Թէքէեան եւ Տէր Ստեփանեան հոս ժամանեցին եւ առիթը ունեցանք քանի մը անգամ տեսնուելու, եւ յատենի ժողովոյ պէն ներկայանալով կարգ մը օգտակար տեղեկութիւններ տուին¹⁸⁸: Այդ մասին մեր կար-

¹⁸⁷ Նամակն ուղղուած էր վարչապետ Խատիսեանի, նշելով հայկական մարմիններու միջեւ գոյութիւն ունեցող անհամերաշխութիւնն ու, հետեւաբար, օտար շրջանակներու մօտ հայոց եւ հայկական հարցին նկատմամբ անոնց յառաջացուցած յոռի տպաւորութիւնը, որոնք հետեւանք էին 28 Մայիսին Հայաստանի Հանրապետութեան հաստատութեան առաջին տարեդարձին առիթով հռչակուած Միացեալ եւ Անկախ Հայաստանի յայտարարութեան (*Համահաւար* Բ., էջ 909–912):

¹⁸⁸ Թէքէեան եւ Տէր Ստեփանեան միացեալ հայկական կառավարութեան մը ստեղծման նպատակով որպէս Ազգային Պատուիրակութեան կողմէ նշանակուած բանագնացներ դէպի Հայաստան ուղեւորութեան համար անց-

ծիրը արդեն հաղորդած ենք եւ այս անգամ ալ Հանրապետութեան ուղղուած գրով մը Մայիս 28ի որոշման մասին թրքահայոց կարծիքը շատ յստակ ու որոշ կերպով յայտնեցինք¹⁸⁹: Կը յուսամ որ մէկ կողմանէ Հանրապետութեան ներքին դժնդակ կացութիւնը, միւս կողմանէ Թէքէեան պատուիրակութիւնը ու թրքահայոց արտայայտած կարծիքը պիտի կրնան ազդել կարգ մը երազատես կուսակցականներու վրայ ու պիտի յօժարին վերջապէս համաձայնութեան մը գալ, որ թուէին անհրաժեշտ պահանջքն է: Բրօֆ. Խաչատուրեան եւս քաղաքէս անցաւ գնաց Երեւան: Չկրցի զինքը տեսնել, բայց հոս հոն արտայայտած կարծիքներէն այնպէս կ'երեւայ թէ ինքն ալ տեսակ մը պաշտօն ունի Թէքէեան պատուիրակութիւնը չեզոքացնելու¹⁹⁰: Մասնաւորապէս Փաշային մասին աննպաստ արտայայտուած է:

նելով Պոլսէն, 19 Սեպտեմբեր 1919-ին հանդիպում ունեցած էին Դաւիթեանի գլխաւորած Բաղաքական Ժողովին հետ (*Համահաւաք* Բ., էջ 913–915): Չաւէն Պատրիարք ալ Նուպարի ուղղուած իր 10 Հոկտեմբեր 1919 թուակիրին մէջ պիտի գրէր. «պ.պ. Վ. Թէքէեան եւ Ն. Տէր Ստեփանեան քաղաքէս անցան Երեւան երթալու համար: Իրենց հոս մնացած պահուն առիթ ունեցայ քանի մը անգամ տեսնուելու եւ կարգ մը խնդիրներու համար լուսաբանութիւններ ստանալու: Ձեր երկու պատուիրակները ներկայացան նաեւ Բաղ. Ժողովին եւ կարծեաց փոխանակութիւններ ունեցան:

Արդէն անոնց հոս ժամանելէն առաջ դատելով երեւոյթներէն եւ հիմնուելով մեր ստացած տեղեկութեանց վրայ համոզում գոյացուցած էինք թէ 28 Մայիսին Արարատեան Հանրապետութեան յայտարարութեան կատարուելէն յետոյ Ձեր Վսեմութեան եւ պ. Ահարոնեանի միջեւ գոյացած համաձայնութեան հակառակ քայլեր կ'առնուէին եւ 28 Մայիսի յայտարարութեան հետեւանք կը տրուէր: Մեր այս տեսութիւնը հաստատեցին մասնաւորապէս երկու վաւերագիրներ: Ասոնցմէ մին այն հեռագիրն էր, որ պ. Ահարոնեան ուղղած էր Հանրապետութեան Կ. Պոլսոյ ներկայացուցիչ պ. Ֆ. Թահթաճեանի, որով կը հրաւիրուէր այս վերջինը Կ. Պոլսոյ հայ ժողովուրդին գլուխը անցած դիմաւորել Չօր. Հարպորթը եւ երկրորդը՝ Երեւանէն դրկուած այն գրութիւնը՝ որուն մէջ կը պատճառաբանուէր 28 Մայիսի յայտարարութիւնը եւ զայն արդարացնելու համար փաստեր կը բերուէր: Այս երկու գրութիւններուն եւ աստ անդ եղած հրատարակութեանց եւ ձեռնարկներու ծանօթանալէ յետոյ, Վարչութեան որոշմամբ ընդարձակ դիտողագիր մը յղեցինք Երեւան: Այդ դիտողագրին պատճենը արդէն հաղորդուած է Ձեր Վսեմութեան, ինչպէս նաեւ պ. Ահարոնեանի՝ պ. Թահթաճեանի միջոցաւ» (*Համահաւաք* Բ., էջ 918): Ակնարկութիւն 16 Սեպտեմբեր 1919-ի վերոյիշեալ նամակին:

189

190

Պատմաբան Փրոֆ. Աստուածատուր Խաչատուրեան (նաեւ յիշատակեալ

12 Օգոստ. նամակնուդ մէջ յանձնարարուած Mr. Oliver Wardrop¹⁹¹, Անդրկովկասի անգղ. քովիստերը տեսնելու առիթը չունեցայ, բայց իր երկրորդը՝ Captain Gracey¹⁹² հետ երկարօրէն տեսնուեցայ եւ քանի մը բարեկամներով ճաշի ալ հրաւիրեցի: Շահեկան մէկն էր եւ մեզի բարեկամ: Արդէն շատոնց մեկնած է իր պաշտօնատեղին. ինքը Երեւան պիտի հաստատուէր, կը յուսամ որ օգտակար ըլլայ:

Փրանսական Օտար Լեզէոնի արձանագրուող հայերու մասին արդէն հոս շատ աշխատութիւն թափուեցաւ. կուսակցականներու միջոցաւ ալ համոզել ջանացինք, բայց անօգուտ եղաւ¹⁹³: Գիտէք մերիններուն ինչ փոփոխամիտ ու անհնազանդ ըլլալը: Բարեբաղդաբար այդ հոսանքը դադրած է: Միւս կողմէ, կրնաք երեւակայել թէ որչափ փափուկ է այդ կարգի արձանագրութեան մը դէմ ուղղակի ու բացէն հակառակիլը:

Խրկուած 175 հազար ֆրանքը ստացած ենք եւ ըստ հրահանգի բաժնուած. դրամի փոփոխութեանց մէջ կարծեմ քանի մը ոսկիի վնաս գոյացաւ:

Զմիւռնիոյ հայոց մասին Պր. Վենիզելոսի ըրած դիտողութիւնը¹⁹⁴ հարկ

որպէս Խաչատուրեան, 1862–1938), երբեմնի տեսուչը Կարնոյ Սանասարեան Վարժարանին, մասնակիցներէն էր Փարիզի Առաջին Հայ Ազգային Համագումարին՝ որպէս Միջագետքի հայոց ներկայացուցիչ: Ան Երեւան կ'ուղղուէր կարգադրութեամբը Ահարոնեանի գլխաւորած Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան, բայց անձամբ պիտի չմասնակցէր Հայաստանի կառավարութեան եւ Թէքէեանի գլխաւորած պատուիրակութեան բանակցային նիստերուն:

¹⁹¹ Անգլիացի ճանապարհորդ եւ դիւանագէտ Oliver Wardrop (1864–1948) 1919–20 տարիներուն պիտի վարէր Մեծն Բրիտանիոյ Անդրկովկասի Գլխաւոր Յանձնակատարի պաշտօնը՝ իր նստավայրը հաստատելով Թիֆլիս, ուր գտնուած էր 19-րդ դարու վերջին քառորդին եւ ուսումնասիրած վրացերէնն ու վրացական պատմութիւնը:

¹⁹² Որպէս Յանձնակատար Ուորտրոփի «երկրորդը» ակնարկուած հարիւրապետը կը թուի ըլլալ Douglas David Gracey-ն (1894–1964), որ Ա. Աշխարհամարտի ընթացքին ծառայած էր Միջագետքի եւ Պաղեստինի մէջ:

¹⁹³ Ազգային պատասխանատու մարմիններ լեզէոնին կամաւոր արձանագրուելու արշաւը թրքական իշխանութիւններու ազդեցութեան գօտիին մէջ բնակող հայութեան համար վտանգաւոր հետեւանքներով լի անխոհեմ քայլ մը նկատելով՝ կը ջանային կասեցնել զայն:

¹⁹⁴ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան 22 Օգոստոս 1919-ի նիստի մասնակիցներուն Նուպար հաղորդած էր թէ Վենիզելոս մատնանիշ ըրած է

եղած տեղը հաղորդունցաւ, թէւս պէտք է խոստովանիլ թէ հայերու դիրքը փափուկ է: Յոյները պէտք է լաւ ըմբռնեն մեր վիճակը եւ Չմիւռնիոյ հայերը եթէ ոչ իրենց համար, ինչ որ անհաւանական ալ չէ որ յոյները պարպեն, բայց գէշ ներքին գաւառները գտնուող անպաշտպան հայերուն համար աստիճան մը զգուշաւոր ըլլալին հասկնալի է: Այսուհանդերձ պէտք եղածը գրուած է:

...

*

Թուրքիոյ մէջ սկսած նոր «Միլլի» [= ազգայնական] շարժման տեղեակ էք անշուշտ: Ատոր պարագլուխը եղող Մուստաֆա Բէմալի մասին գրած եմ արդէն: Այդ շարժումը կայծակի արագութեամբ տարածուեցաւ եւ հասաւ մինչեւ Իզմիտ: Կեդրոնական կառավարութիւնը բոլորովին կղզիացած, ստիպուեցաւ տեղի տալ եւ անոր յաջորդեց նոր նախարարութիւն մը, որ կ'երեւի չի գոհացներ զիրենք եւ նոր պայմաններ ու փոփոխութիւններ կը պահանջեն: Կարծեմ գաղտնիք մը չէ այլեւս որ եղածը իթթիհատական շարժում մըն է, Միլլի անուան տակ, եւ արդէն այսքան շուտ տարածուած ըլլալն իսկ ապացոյց է թէ իթթիհատականներն են որ իբր թէ գունափոխ մէջտեղ ելած են եւ չպիտի գարմանամ, եթէ մօտ օրէն իշխանութիւնը բոլորովին ձեռք անցունեն: Ի՞նչ պիտի ըլլայ հետեւանքը. նոյնը՝ ինչ որ եղած է մինչեւ այսօր. հրապուրիչ ծրագիրներ, մեծամեծ խոստումներ, յետոյ՝ յարմար առիթը ներկայացածին պէս՝ հալածանք եւ ջարդ: Արդէն սկսած են հրատարակել իրենց ծրագիրները՝ հաւասարութիւն բոլոր օսմանցիներու միջեւ, քրիստոնէից պաշտպանութիւն, հողային ամբողջութիւն եւ այլն եւ այլն:

Գաւառներու մէջ այս օրերս սպանութիւնները քիչ մը պակսած են եւ աստիճան մը ապահովութիւն կը տիրէ, ինչ որ կուգայ անգամ մը եւս ապացուցանել թէ այդ բոլոր հարստահարութիւնները քաղաքական նպատակաւ սարքուած ու իրենց միջոցաւ գործադրուած բաներ են, եւ այսօր դարձեալ քաղաքական պէտքի մը համար կը դադրեցնեն. բայց հայ

վերջերս Իզմիրի հայոց ցոյց տուած անհամակիր ընթացքը յունաց նկատմամբ եւ նշած՝ թէ «Զաւէն Սրբազանի միջոցաւ պիտի յայտնէ Իզմիրի հայոց թէ իրենց կողմէ այդ տեսակ ընթացք մը համաձայն չէ ազգային քաղաքականութեան: Պէտք է լաւ յարաբերութիւններ մշակենք յունաց հետ՝ նկատի առնելով սա պարագան թէ համանման շահեր ունինք եւ թէ անոնց հետ խնդիր պիտի ունենանք Պոնտոսի, Կիլիկիոյ, եւ այլն հարցերուն մէջ»: Էլեֆթերիոս Վենիզելոս Յունաստանի վարչապետն էր 1917–1920 տարիներուն:

ժողովուրդը վստահություն չունի եւ երբ կը տեսնէ թէ բոլոր ջարդարարներն են որ գործի վրայ են, սարսափահար կը փախչին, դէպի ծովեզրները կը գաղթեն: Թէեւ իշխանությունները ամեն ապահովություն կուտան, բայց մտիկ ընող չկայ եւ նոր գաղթականություն մը ծայր տուած է, ինչ որ նորահանոր թշուառութեանց ու աղէտներու տեղի պիտի տայ մանաւանդ վերահաս ձմռան ատեն: Ասկից կը ծագի ուրիշ ոչ նուազ ծանր անպատեհություն մը: Մեր յարաբերությունները գաւառի անկյուններուն հետ արդէն թերի էին զինադադարէն ի վեր. այժմ բոլորովին պիտի խանգարուի[ն] եւ տեղեկություն չպիտի կրնանք ունենալ հոս հոն ցրուած հայութենէն, անոնց պետքերուն հասնի: Գէշ աղէկ կազմակերպել հարկ է [գաւառները], մինչդեռ ո'չ միայն նիւթական մեր միջոցները բոլորովին անբաւական են, այլեւ՝ հաղորդակցությունները պիտի դժուարանան, տեղ տեղ բոլորովին պիտի դադարին, եւ անշուշտ նամակները Միլի շարժման քննութենէն պիտի անցնին: Ահաւասիկ նոր կացություն մը, որ մեր դժբաղդ ժողովուրդը նոր ու ծանր վտանգներու կ'ենթարկէ:

Ասկից գատ, ներքին ապահովությունը առերեւոյթ բան մըն է. կիրքերը բռնկած են դարձեալ: Թուրք կուսակցությունները իրարու դէմ կը զինուին, պայքարի կը սկսին, *coup d'État* [= պետական հարուածի, յեղաշրջումի] հաւանականություններ կ'երեւին եւ փորձով գիտենք թէ բոլոր այս ցնցումներուն մէջ մենք հայերս ենք որ կը տուժենք: Մեր բարեկամները առ այժմ անտարբեր հանդիսատեսներու դիրքին մէջ են: Այդ քաղաքականութեան ու թերեւս ալ գիտակցաբար հետապնդուած ուղղութեան շնորհիւ էր որ իրերը այս վիճակին հասան, եւ թուրքերը յաղթականի հովեր առնել սկսան: Գաւառներու մէջ շատ տեղեր ժողովուրդին այդպէս ալ հաւատացուցած են: Այժմ սպասողական դիրքի մը մէջ ըլլալ կ'երեւին եւ պաշտօնական անձնաւորություններ յայտարարեցին իսկ թէ պետք պիտի ըլլայ հաշուի առնել Միլի շարժումը եւ համաձայնութեան մը գալ: Երբ մենք կ'իմանանք այս, թուրքերը անշուշտ շատ աւելի կանուխ տեղեակ են այս տրամադրութեանց եւ զարմանալի չէ ուրեմն որ քաջալերուին ու դեռ աւելի խստապահանջ գտնուին: Ահաւասիկ կացությունը, որու մասին աւելի մանրամասնություններ կը գրեմ շուտով: Առ այժմ նոր կառավարություն մը կայ¹⁹⁵, որ կը բանակցի Միլիի[ն] հետ. ուրիշ ոչինչ:

Ներփակ Փաշային գրած նամակէս պիտի տեղեկանաք թէ մեր ազգա-

¹⁹⁵ Նոր կառավարությունը երբեմնի պատերազմական նախարար Ալի Ռեզայի (1860–1932) վարչապետութեամբ գործի անցած էր 2 Հոկտեմբերին եւ պիտի պաշտօնավարէր մինչեւ 3 Մարտ 1920:

յին շրջանակները, տիրող քաղաքական անստոյգ ու աննպաստ երեւոյթներու ազդեցութեան տակ, յուզուած են եւ անհամբեր տեղեկութեան կը սպասեն: Կը գանգատին թէ Պատուիրակութենէն բաւականաչափ ուղղութիւն ու տեղեկութիւն չեն ստանար, թէ Պօլիսն ալ իբր թրքահայութեան կեդրոն եթէ կրնայ Ձեզի աջակցիլ, պատրաստ է ու սիրով Ձեզի պիտի տրամադրէ իր ջանքերը, բայց որեւէ քայլ առնելու կը վարանի Ձեզի հետ հակասութեանց մէջ չգտնուելու համար: Ուստի, յառաջիկայ առթիւ, եթէ կարելիութիւն կը տեսնաք, տեսակ մը տեղեկագիր պատրաստել տուէք արդի կացութիւնը եւ մեր խնդրոյն վերջին փուլերը պատկերացնող, եւ խրկեցէք Սրբազանին: Անշուշտ՝ ինչ որ կարելի է ըսել, մանաւանդ գիտնալով մեր վարչական կազմակերպութեանց վիճակը:

Փաշային նամակիս մէջ նոյնպէս խօսած եմ փոխառութեան մասին: Այդ խնդիրը շատ կարեւոր է եւ երանի թէ յաջողիք: Այս տեղի կացութիւնը եւ վտանգաւոր կը տեսնեմ. Խնամատարութիւնը 120.000 ոսկիի հաշիւ մը ներկայացուցած է, մինչդեռ սնտուկը 20–30 հազար ոսկի կայ: Կը վախնամ որ ո՛չ միայն նոր որբեր ու կիներ չենք կրնար հաւաքել, այլ արդէն հաւաքուածներուն ալ չպիտի կրնանք դրամ հասցնել, որովհետեւ միշտ այն յոյսով թէ զինադադարի այս առժամեայ շրջանը հազիւ 4–5 ամիսներ կը տեւէ, որոշ պիւտճէ չէինք պատրաստած, այլ ջանացած էինք կարելիին չափ շատ որբ ու տարագիր փրկել, ինչ որ անհրաժեշտ էր ընել: Եւ հիմա բաւական խոշոր պիւտճէ մը կայ որբանոցներու, տարագիրներու ու գաւառ դրամ խրկելու համար, եւ այդ միայն Պօլսէն դրամ հայթայթելով չի կրնար փակուիլ: Ուստի, ըստ այնմ եթէ միջոցներ կարելի է ստեղծել, ասոր առաջնութիւն ու հարկ եղած կարեւորութիւնը տալ հաճեցէք: Միւս կողմէ, հոս Հայրենիքի Տուրքը տարածելու ու ընդհանրացնելու լուրջ ջանքեր ըլլալու վրայ են: Բայց ինչ որ ալ ըլլայ, վերջապէս տուրք չէ, այլ՝ իրականին մէջ նուիրատուութիւն¹⁹⁶:

Յարգանք

Տօք. Դաւիթեան

¹⁹⁶ Քաղաքական Ժողովին նախաձեռնութեամբ մշակուած Հայրենիքի Տուրքի օրինագիծը քննարկման նիւթ սկսած էր դառնալ Ազգային Երեսփոխանական Ժողովի 19 Սեպտեմբերի նիստի ընթացքին եւ վերամշակուելէ ետք նոյն ժողովը տասնմէկ կէտերէ բաղկացած օրէնքը վաւերացուած էր 26 Սեպտեմբերին (*Համահաւաք Ա.*, էջ 76–82 եւ 84–91): Օրէնքն իր առաջին կէտով կը տրամադրէր թէ «ամէն հայ անհատ, այր թէ կին, որ ունի եկամուտ եւ շահուո՞ւնէ աղբիւր», պարտաւոր է մասնակցիլ Հայրենիքի Տուրքին:

Patriarcat Arménien
Bureau d'Informations¹⁹⁷

Կոստանդնուպոլիս, 16 Նոյ. 1919

Յարգելի բարեկամ

Ձեր վերջին Հոկտմ. 1 թուական նամակը ստացած եմ ժամանակին, որուն մէջ Ամերիկա ուղեւորելիդ ծանուցած էիք: Հեռագիրներէն արդէն ուրախութեամբ իմացանք Նիւ-Եօրք հասնիլնիդ¹⁹⁸: Հոկտմ. 7 թուակիր նամակ մը գրած եմ Ձեզի, կը յուսամ կը ստանաք:

Թուրքիոյ կացութեան մասին կը յուսամ որ բոլորովին անտեղեակ չէք, թէւ հոդ ուրիշ զբաղումներ պիտի ունենաք, մանաւանդ կ'երեւի թէ քաղաքական խնդիրներու ծանրութեան կեդրոնը Վաշինկթըն հակելու վրայ է: Բայց կ'ըմբռնեմ թէ տեղւոյս կացութեան մասին Ձեր քաղելիք տեղեկութիւններն ալ կրնան մեծ չափով մը օգտակար ըլլալ Ձեր յառաջիկայ աշխատութեանց: Փաշային քանի մը նամակներ գրուեցան, ես ալ գրեցի եւ տեղեկագիրներ ալ խրկեցի. կը յուսամ որ Ձեզի կը հաղորդէ: Իրմէ դեռ նամակ չենք ստացած:

Թուրքիոյ մէջ իրերը լաւ չեն ընթանար. հետզհետեւ, ընդհակառակը, աւելի վատթարանալու վրայ են: Իթթիհատը Միլլի անուան տակ երեւան ելաւ եւ գաւառները բովանդակ տիրապետած է: Կրնաք երեւակայել թէ ինչ կը նշանակէ Իթթիհատի տիրապետութիւնը: Այդ մասին բացատրութիւններ տալս աւելորդ է: Երկրին մէջ բացարձակ անիշխանութիւն կայ. կառավարութիւն գոյութիւն չունի: Իրականին մէջ Մուստաֆա Քէմալ եւ ընկ. են որ կը կառավարեն երկիրը Սերաստիայէն (իրենց կեդրոնը) հրամաններ

¹⁹⁷ Դիտելի է թէ Դաւիթեան, իր նախապէս գործածած անձնական նամակաթուղթերուն փոխարէն, ներկայ եւ հետագայ նամակներուն համար օգտագործած է Տեղեկատու Դիւանի նամակաթուղթերը:

¹⁹⁸ Ազգային Ռամկավարական Կուսակցութեան Ամերիկայի Նահանգային Վարչութեան գործիչ-քարտուղար Փափագեանի կողմէ Ազգային Պատուիրակութեան Լիազօր Ներկայացուցիչ Տէր Յակոբեանի ուղղուած 23 Հոկտեմբեր 1919 թուակիրէն կը պարզուի թէ յիշեալն արդէն հասած էր Նիւ Եորք եւ թէ կուսակցութիւնը իր աջակցութիւնը կը տրամադրէ անոր առաքելութեան, յուսալով որ իր եւ վարչապետ Քաջազունիի ստորագրութեամբ «ամերիկահայութեան ուղղուած համերաշխ գործակցութեան կոչը եղբայրական սիրոյ նոր թուական մը» բանայ գաղութին կեանքին մէջ (ՊՏԴ, տրցակ 9, թղթապանակ M6000_Ղ, Ղ86, հայերէն ձեռագիր):

արձակելով: Երկրին բոլոր հին իթթիհատականները որ ամեն տեսակ չարագործութեանց մասնակցած են եւ զինադադարէն ի վեր աստիճան մը զգուշաւոր ընթացք մը ունէին, այժմ դարձեալ հրապարակ ելած՝ իրենց հին յոխորտանքներով սպառնալից դիրք բռնած են: Հայերը, որ խաբուսիկ յոյսերով եւ քաջալերուած Համաձայնականներու ներկայութենէն համարձակած էին իրենց տեղերը վերադառնալ ու պահանջել իրենց բռնագրաւուած գոյքերը, կալուածները եւ արտն ու այգիները, այսօր բոլորովին սարսափահար, քիչ շատ ունեցածնին ալ ծախելով եւ շատ անգամ երեսի վրայ ձգելով գաղթելու վրայ են եւ դէպի Կիլիկիա, Սեւ Ծովի եզերքները եւ Պօլիս կը փախչին: Կրնաք երեւակայել այս առթիւ տեղի ունեցած թշուառութիւնն ու խեղճութիւնը: Այս ալ չի բաւեր, կառավարութիւնը այս օրերս հայերուն արգիլեց որեւէ տեղափոխութիւն: Կեսարացի 40ի չափ կին ու տղաքներ եւ քանի մը հատ ալ այրեր օրինաւոր անցագրերով ճամբայ կ'ելլեն դէպի Ատանա: Նիյտէ հազիւ հասած, ժանտարմաներ կը հասնին ու ծեծով եւ խոշտանգումներով Կեսարիա կը վերադարձնեն¹⁹⁹: Նոյնպէս ալ ուրիշ տեղեր ճամբորդելու արգելք կայ հայերուն համար: Կը տեսնէք դարձեալ հին օրերուն կը վերադառնանք: Այդ մասին խստիւ բողոքեցինք հոս Համաձայնականներուն եւ որուն պատճենը ներփակ է:

Օամ. երեսփոխանական ժողովի ընտրութիւնները կատարուելու վրայ են. արդիւնքը դեռ յայտնի չէ, բայց եղածներէն դատելով կարելի է ըսել որ իթթիհատականներն են որ պիտի ընտրուին: Արդէն քրիստոնեաները եւ քիւրտերը ձեռնպահ կը մնան, նոյնպէս՝ քանի մը թուրք կուսակցութիւններ (Իթիլաֆ, Անզղիասէր կուսակցութիւն եւ այլն), որով հրապարակը բոլորովին իրենց մնացած է: Իթիլաֆը ձեռնպահ կը մնայ որովհետեւ ընտրութիւնները ազատ կերպով չեն տեղի ունենար, իսկ պատրիարքարանները՝ յայտնի է ինչու: Թուրքերը շատ աշխատեցան որ ամենքն ալ մասնակցին, բայց չյաջողեցան. իսկ գաւառները թէեւ ձեռնպահ մնալու հրահանգ գացած էր, բայց տեղ տեղ սպառնալիքներու տակ մաս մը հայեր քուէ տուեր են, ինչ որ ինքնին նշանակութեւն զուրկ է: Գալով քիւրտերուն, անոնք ալ երկուքի բաժնուած են. մէկ մասը թրքացած քիւրտեր են որ կ'ուզեն թուրք կառավարութեան հետ հաշտ ապրիլ եւ անոր հաւանութեամբը ստանալ քրտական ինքնավարութիւն մը կամ self-government [= ինքնակառավարում], իսկ երիտասարդ քիւրտերը որ *ժին* անունով թերթ մ'ալ կը հրատարակեն հոս, կը պնդեն թէ թուրքէն խէր [= օգուտ կամ բարիք] չկայ, պէտք է միանգամ ընդ միշտ բաժնուիլ եւ Հաշտութեան Վեհաժողովէն

¹⁹⁹ Post-WWI, էջ 111-112:

պահանջել անկախ Թիւրտիսթանի մը կազմութիւնը²⁰⁰: Հրեաները ինչպէս միշտ opportuniste քաղաքականութեան մը կը հետեւին. քրիստոնեայ պատրիարքարաններու հետ չմիացան եւ շարունակ զանազան շահեր հետապնդելու վրայ են: Ամէն անգամ որ առիթ մը կը ներկայանայ, կառավարութեան հետ *բազարլըքի* [= սակարկութեան] կը մտնան եւ կը ջանան շահ մը ապահովել, ինչ որ ըրին ընտրութեանց խնդրոյն մէջ:

Ինչպէս գիտէք, մինչեւ Միլլի շարժման մէջտեղ ելլելը, մեր բոլոր ջանքերն եղած են ասկէ անկէ վերադարձող ժողովուրդը իրենց տեղերը դրկել, որբերը հաւաքել, իսլամացած կին եւ այրերը ժողովել, վերադարձող ժողովրդեան նիւթական իրաւունքները ապահովել եւ այսպէս առժամեայ կարգադրութիւններով գէշ ժողովուրդին ֆիզիքական գոյութիւնը վտանգէ գերծ պահել: Այդ ուղղութեամբ շարունակ դիմումներ կը կատարէինք Համաձայնականներուն մօտ, նոր օրէնքներ խմբագրել տալու կը ջանայինք եւ կամ արգելիչ կանոնները բառնալու կ'աշխատուէր եւ թէեւ գոհ չէինք ձեռք բերուած արդիւնքէն, բայց եւ այնպէս շատ տեղեր հայ ժողովուրդը քիչ մը շունչ առնել սկսած էր արդէն: Ազգային կալուածները եւ եկեղեցիները վերադարձուեցան, անհատական կալուածներուն ալ մէկ մասը կարելի եղաւ ստանալ, թէեւ շատերը փլատակ վիճակի մէջ: Քանի մը տեղեր կարգ մը գոյքեր ալ առնուեցան, իսլամացածները իրենց մայրենի կրօնին վերադարձան, իսկ որբերն ալ թէեւ շատ դժուարութեամբ, բայց վերջապէս թափուած ջանքերը բոլորովին ապարդիւն չէին մնար. իսկ տեղ տեղ ալ ժողովուրդը սկսած էր ապրուստ մը հայթայթել: Վերջապէս ստեղծուած էր այնպիսի կացութիւն մը, որ թէեւ առժամեայ, բայց կարելի էր քաշքշել անվտանգ, մինչեւ որ Վեհաժողովը իր վճիռը արձակէր:

Արդ, հիմա այդ կացութիւնը բոլորովին տակն ու վրայ եղաւ, աշխատութիւնը դադրեցաւ, սարսափը տիրեց, նոր գաղթականութիւն մը ծայր տուաւ, իսկ տեղերնին մնացողներն ալ գրեթէ բանտարկուած, թուրքերուն

²⁰⁰ 6 Նոյեմբեր 1917-ին քիւրտերն ստեղծած էին Թիւրտիստանի Վերելքի (կամ Յառաջդիմութեան) Ընկերութիւն անունով գաղտնի կազմակերպութիւն մը, որ զինադադարէն ետք, 17 Դեկտեմբեր 1918-ին պիտի անցնէր բացայայտ գործունէութեան եւ որուն նպատակն էր անկախ կամ ինքնավար Թիւրտիստանի մը կազմութիւնը: Ընկերութիւնը նաեւ կը միտէր զարկ տալ քրտերէն լեզուի եւ քրտական մշակոյթի զարգացման: Իր նպատակները իրագործելու համար, 1918-ի վերջերուն Ընկերութիւնն սկսած էր հրատարակել «Ժին» (Jin= Կեանք) շաբաթաթերթը թրքերէնով եւ քրտերէնով (իր քուրմանճի եւ սորանի բարբառներով):

ձեռքը տեսակ մը պատանդ, գուրկ ապրուստի միջոցներէ, եթէ այսպէս շարունակէ՝ անսուղ մեռնելու դատապարտուած են, եթէ նորանոր ջարդեր չգան վերջ դնել իրենց յամր հոգեվարքին:

Միլիի շարժումը իր ազդեցութեանն ու ցանցին մէջ առած է ամբողջ Թուրքիան, եւ իր համարձակութիւնները այնքան հեռուները մղած՝ որ նոյնիսկ օտար գրաւման տակ գտնուած հողամասերու մէջ ալ մեծ գործունէութիւն ցոյց կուտայ: Այսպէս, լսեցիք անշուշտ Կիլիկիոյ մէջ պատահածները, ուր Ատանայէն 4 ժամ հեռու՝ Շէյխ-Մուրատ կոչուած գիւղին բոլոր այրերը կը սպաննուին Միլիի չէթէներու կողմէ: Նոյնպէս կոտորածներ կը պատահին Ատանայի դաշտին մէջ աշխատող հայերու մէջ: Իթթիհատի այս յանդգնութիւնը բարեբաղդաբար քիչ մը կը ցնցէ ֆրանսական իշխանութիւնները, որոնք արագ ու կտրուկ միջոցներ ձեռք կ'առնեն եւ օրինակելի կերպով կը պատժեն յանցաւորները, շատերը մահուամբ, որով ապահովութիւնը կը վերահաստատուի²⁰¹:

Իթթիհատի այս քաջագործութիւնը քաղաքական նպատակի մը համար էր անշուշտ: Թերեւս տեսակ մը բողոք էր օտար գրաւման դէմ, *défi* [= մարտահրաւէր] մը ֆրանսացւոց հանդէպ, եւ կամ ցոյց մը հասկցնելու համար հայերուն թէ՝ օտար գրաւման տակ գտնուած երկիրներու մէջ ալ իրենք ապահով չեն կրնար ապրիլ եւ իրենց համար (հայերուն) փրկութեան միակ միջոցն է գալ թուրքերուն ոտքը իյնալ ու անոնց հետ հաշտ ըլլալով շարունակել իրենց գերիի կեանքը ըստ առաջնոյն, որովհետեւ Մուստաֆա Քէմալ շարունակ կը յայտարարէ թէ Միլիի ազդեցութեան տակ գտնուած հողամասերու մէջ ապահովութիւնը կատարեալ է եւ զանազան տեղերէ ալ, հայ եւ յոյն թաղական խորհուրդներէ բռնի գոհունակութեան հեռագիրներ կը կորզէ, ճիշդ Համիտի²⁰² օրով եղածին նման: Երէկ թերթերուն մէջ Մուսթաֆա Քէմալի ուրիշ մէկ յայտարարութիւնը կարդացինք զոր ներփակ կը դրկեմ: Կը տեսնաք թէ ինչ յանդգնութեամբ գրուած է եւ ինչ սպառնալիքներ կը պարունակէ: Մարդ կը տարուի խորհիլ թէ՝ արդեօք այս Միլիին ետեւը կեցող ի՞նչ ուժ կայ, որո՞նք են այն աղբիւրները ուր իր

²⁰¹ Շէյխ-Մուրատ գիւղի պատահարին եւ ֆրանսացիներու քիչ անգամ ձեռք առած կտրուկ միջոցառման մասին Ատանայի առաջնորդարանէն եւ Ազգային Միութենէն դրկուած տեղեկատուութիւններուն հմար տեսնել՝ *Post-WWI*, էջ 107 եւ 117–121:

²⁰² Ակնարկութիւն իր արիւնքուշտ քաղաքականութեան եւ 1895–1896 տարիներուն 300,000 հայերու կոտորածին համար «Կարմիր» կոչուած սուլթան Ապտիլ Համիտ Բ.ի (գահակալած՝ 1876-էն 1919):

գորութիւնն ու յանդգնութիւնը կը քաղէ, թե՛ պարզ *պրլոֆ* [= խաբէութիւն] մըն է եւ կ'ուզէ օգտուիլ եւրոպական խառնաշփոթութենէն, եւրոպական բանակներու այլեւս կոռուելու տրամադիր չլլալէն: Թերեւս այս վերջինն ալ մեծ դեր մը կը խաղայ թուրքերու վերջերս բռնած խիզախ դիրքին մէջ, հոս թէ Եւրոպա: Համաձայնականները այնքան ըսին որ իրենց զինուորները յոգնած են, այլեւս կամուի չեն ուզեր եւայլն եւայլն, որ թուրքերը խորհիլ սկսան թե՛ եթէ իրենք քիչ շատ դիմադրութիւն մը կազմակերպեն, պիտի կրնան գոհացուցիչ պայմաններ խլել Հաշտութեան Ժողովէն: Բոլոր ասոնց մէջ բան մը կայ սակայն որ պէտք չէ դադրիլ յեղեղել մեր ամերիկացի եւ եւրոպացի բարեկամներուն: Սա է թե՛ Միլլիին հանած աղմուկները *պրլոֆ* մըն են. թուրք բանակը մարտական որեւէ ուժ չի ներկայացներ. թուրք ժողովուրդը շատ աւելի ձանձրացած է պատերազմել եւ անհամբեր խաղաղութեան կը սպասէ. կազմակերպուած Եւրոպական բանակ մը, ոչ ստուարաթիւ, շուտով կրնայ երկիրը խաղաղեցնել:

Բոլոր այս գրածներս կուգան յանգիլ այն ցաւալի եզրակացութեան թէ մեր ժողովուրդը այս պահուս հաւանական նոր ջարդերու նախօրեակին մէջ կը գտնուի, թուրքերու միտքերը գրգռուած են, զօրաւոր բրօքականտ կը մղուի քրիստոնէից եւ մասնաւորապէս հայերուս դէմ, Համաձայնականներ գաւառներու մէջ ուժ չունին, Պօլսոյ մէջ ալ ուժով կեդրոնական կառավարութիւն մը չկայ՝ անոր վրայ ազդելու համար, եւ արդէն Միլլի եւ կառավարութիւն համաձայն են: Սերաստիոյ մէջ Մուստաֆա Քէմալի կազմած անպաշտօն կառավարութիւնը ուրիշ նպատակ չունի եթէ ոչ խուսափիլ Պոլսոյ Համաձայնական ուժին ազդեցութենէն եւ ուզածին պէս գործել ու կառավարել երկիրը: Ըստ զինադադարի պայմաններուն, թուրքերը ամբողջ երկրին մէջ կարծեմ 30.000 զինուորէն աւելի ունենալու իրաւունք չունենին²⁰³: Արդ, եթէ պաշտօնական կառավարութիւնը ստիպուած է

²⁰³ 30 Հոկտեմբեր 1918-ի Մուտրոսի Դաշնագրի հինգերորդ կէտին համաձայն կը տրամադրուէր թրքական բանակին անյապաղ զօրացումը, պահելով միայն այն ուժերը, որոնք անհրաժեշտ էին սահմաններու հսկողութեան եւ ներքին կարգ ու կանոնի պահպանման համար: Համաձայնականները բանակին թուային կազմը պիտի որոշէին աւելի ուշ՝ թրքական կառավարութեան հետ խորհրդակցաբար: Հետագային, Սերի Դաշնագրին Հինգերորդ Բաժնին զանազան յօդուածներուն համաձայն, զինեալ ուժերը պիտի բաղկանային միայն սուլթանին թիկնապահներէն, ներքին գաւառներու մէջ կարգ ու կանոնի պահպանման եւ փոքրամասնութիւններու պաշտպանութեան ծառայող ոստիկան զօրքերէ եւ յատուկ տարրերէ՝ ոստիկան զօրքերուն աջակցե-

համակերպիլ այդ պայմանին, անդին կայ առժամեայ կառավարությունը (Մուստաֆա Բեմալ) որ կը լրացնէ այդ պակասը, քանի որ գաւառներու մէջ ժողովուրդէն տուրք եւ զինուոր կը հաւաքեն: Ահաւասիկ ուր եկած հասած են գործերը: Պէտք է աւելցնեմ նոյնպէս թէ՛ իրաց այս կացութեան մէջ, եթէ ոչ միակ, գէթ զիսաւոր պատասխանատուն Համաձայնականներն են: Տարակոյս չկայ թէ զինադադարին սկիզբները կրնային այնպիսի միջոցներ ձեռք առնել որ արգիլէր բոլոր այս պատահածները: Դժբաղդաբար այս տեղի missionsները պէտք եղած կերպով չեն ըմբռներ կացութիւնը եւ կամ չեն ուզեր այնպէս ըմբռնել. ապացոյց՝ շատերու մէջէն հետեւեալը պատմեմ:

Հոկտմ. 17ին, յոյներու հետ մեր հաւաքական դիմումի պահուն երբ մենք բողոքեցինք Միլլի շարժման դէմ եւ անոր յառաջ բերելիք բոլոր ցաւալի հետեւանքները ցցուցինք, մեզի պատասխանեցին թէ Միլլին յայտարարած է որ քրիստոնէից կեանքը եւ ինչքը պիտի ապահովէ եւ արդարեւ ալ մինչեւ հիմա ջարդ եղած չէ²⁰⁴: Արդ, կը հարցնեմ, այս ըստածին մէջ որեւէ տրամաբանութիւն կա՞յ: Իրողութիւնը այն է որ սպանութիւնները բնաւ դադարած չեն եւ արդէն աղմկալի ջարդերու ալ պէտք չկայ: Եթէ շարունակուի հայերը իրենց տեղերը անշարժութեան դատապարտելու այս դրութիւնը, արդէն այս ձմեռ մարդ չի մնար: Յետոյ, Միլլի շարժմամբ բոլոր ոճրագործ տարրերուն գլուխ վերցնելը, քաջակերութիւն գտնալը եւ պաշտօնի գլուխ անցնիլը արդէն ինքնին երկիւղալի երեւոյթ մը չէ՞ արդեօք. պէտք է անպատճառ ջարդերո՞ւ սպասել հաւատալու համար: Երեւակայեցէք պանքա մը, որուն բոլոր պաշտօնէութիւնը կազմուած ըլլայ ծանօթ գողերէ: Արդ, քանի մը ամիսէ ի վեր պանքային մէջ մեծ գողութիւններ պատահած չըլլալը կը բաւէ՞ արդեօք որ հասարակութիւնը վստահաբար գայ եւ իր դրամները այդ դրամատունը զետեղէ: Պարագան ճիշդ միեւնոյնն է: Մէկ խօսքով, ներկայ քաղաքականութիւնը պարզապէս զգուելի է. վա՛յ տկարներուն: Պատերազմի տււողութեան ջարդուեցանք մեր թշնամիներէն, զինադադարի միջոցին ալ ջարդուելու վրայ ենք մեր բարեկամներու անհոգութեան պատճառաւ:

Եւ համար լուրջ խնդիրներու եւ սահմաններու հսկողութիւնը ապահովելու համար: Յիշեալներէն դուրս՝ բոլոր զինեալ ուժերը պարտաւոր էին զինաթափուիլ Դաշինքն ուժի մէջ մտնելէ ետք վեց ամսուան ընթացքին եւ վերոնշեալ ուժերուն ընդհանուր թիւը պէտք է սահմանափակուէր յիսուն հազարով՝ անկախաբար իրենց պաշտօններէն:

²⁰⁴ Համահաւաք Բ., էջ 926-929:

*

Բոլոր այս հալածանքները ու անստոյգ եւ վտանգաւոր կացութիւնը ծայր աստիճան ծանրացուցած են ինամատարական գործը: Ամիսէն աւելի է որ կատարեալ տագնապի մը մատնուած ենք: Ամսական 40–50000 ոսկիի յանձնառութիւն մը ունինք արդէն եւ որուն փոխարէն 20000 ոսկի հազիւ կայ: Երեսփոխանական Ժողովը Հայրենիքի Տուրքը քուէարկեց պարտաւորիչ ամէն հայու համար: Այժմ ամէն թաղ մասնախումբեր կազմուած են եւ թաղեցւոց վրայ տուրքի բաշխում կատարելու գործը յառաջ կը տարուի: Տուրքերը միանուագ եւ ամսականաւոր են եւ այս բոլորին քօնթօրը եւ կազմակերպութիւնը յանձնուած է կեդրոնական ելեւմտական մարմնոյ մը: Ամիսէ մը կը յուսամ թէ Հայրենիքի Տուրքի բաշխումը կը վերջանայ եւ արդիւնքը մէջտեղ կ'ելլայ: Բայց այժմէն իսկ կ'երեւայ որ ամսական առ առաւելն 20000 ոսկիէն աւելի չպիտի կրնանք գանձել, ինչ որ մեր պետքերուն անբաւական է. ի՞նչ պիտի ընենք ուրեմն: Մտածելն իսկ սարսափ կ'ազդէ: Կը խորհինք երկու հարիւր հազար ոսկիի ներքին փոխառութիւն մը ընել, որուն տոկոսն ու amortissementը [= պարտքերու մարումը] Հայրենիքի Տուրքովը պիտի վճարուի Եւ ազգային կալուածներն ալ իբր ապահովութիւն ցոյց պիտի տրուին: Այդ մասին բանակցութեան մէջ ենք. առ այժմ շատ քաջալերական չէ եւ կը կասկածինք որ կարելի չպիտի ըլլայ տեղաւորել այդ պարտաթուղթերը:

Մանասարեան Խանը, որ թուրք բօլիսի [= ռստիկանութեան] վարչութիւնը գրաւած էր եւ դեռ մէջէն չեն ելած ու վարձք ալ վճարած չունին, այս օրերս անգղիացիի մը վարձեցինք տարեկան 7000 անգղիական ոսկիի եւ 3 տարեկանը կանխիկ վճարելու պայմանաւ²⁰⁵: Չենք գիտեր թէ անգղիա-

²⁰⁵ Մէկէ աւելի վարժարաններու հովանաւոր եւ բարերար՝ անգաւակ մահացած թիֆլիսեցի Մկրտիչ Մանասարեան (1818-1890) Կարնոյ մէջ 1881-ին իր անունը կրող վարժարանի հիմնադրութենէն ետք, վարժարանին յարատեւութիւնը ապահովելու նպատակով պատրաստած էր նաեւ կտակ մը, որուն գործադրութիւնը ի վերջոյ Պոլսոյ Պատրիարքին նախագահութեամբ գործող ինամակալութեան մը վստահուելով, յարմար տեսնուած էր Պոլսոյ Սիրքէնի շրջանին մէջ գնել կալուած մը, զայն մկրտել Մանասարեան Խան անունով եւ այդ խանին հասոյթներով մատակարարել վարժարանին ծախքերը: Առաջին Աշխարհամարտի ընթացքին կառավարութիւնը ձեռք դրած ըլլալով կալուածին վրայ, ինամակալութիւնը գրկուած կը մնար անոր եկամուտներէն: Այդ եկամուտները պիտի վերսկսէին հոսիլ դէպի պատրիարքարան նշեալ կարգադրութեամբ: Ուրիշ հարց որ երկար դատերէ ետք թրքական

ցին պիտի յաջողի՝ շենքը պարպել տալ: Մենք տարի մըն է աշխատեցանք եւ ջաջողեցանք, որովհետեւ թուրքերը շարունակ կը ձգձգեն, իսկ police interallian [= Միջհամաձայնական ոստիկանությունը]²⁰⁶ որ հոն հաստատուած է, ան ալ դժկամակութիւն ցոյց կու տայ: Եթէ յաջողինք շենքը պարպել տալ, գանձուած գումարին գէթ կ'եսը պիտի կրնանք խնամատարական գործին յատկացնել:

Ինչ որ ալ ըլլան սակայն գանձուած գումարները, մեր պետքերուն չեն կրնար բաւել: Ինչպէս ըսի վերը, այս պահուս արդէն 40000 ոսկիէն աւելիի համար յանձնառութիւն մը ունինք: Հոս թէ գաւառները որբանոցներ կան բացուած, Պօլսոյ մէջ միշտ մնայուն 2000ի մօտ գաղթականներ կան, բայց ասոնցմէ զատ դեռ ասիական պետքեր կան զորս զանց ըրած ենք պարզապէս դրամի չգոյութեան պատճառով եւ սակայն ազգային պարտաւորութեան ու խղճի դէմ մեղանշում մըն է այդ եղածը: Մեր եւ ամերիկեան Reliefին հոգածութեանը յանձնուած որբ ու կիներէ դուրս դեռ հազարաւորներ կան որոնք փողոցները, դաշտերը, գիւղերը եւ կամ թուրքերու մօտ կը մնան եւ կը սպասեն անհամբեր որ ազգը զիրենք փրկէ ստոյգ մահէ մը: Sop. Բիկս²⁰⁷, Խարբերդի միսիոնարը, վերջերս հոս էր եւ տեսակցեցանք հետը: Իրենց հաստատութեանը մէջ 4000 որբեր կը խնամեն եւ հոս եկած էր նոր քրէտի [= վարկ] մը պահանջելու, որովհետեւ դեռ 4000 ուրիշներ կան որ գրեթէ անպատսպար են եւ կարելի է զանոնք հաւաքել ամսուան մը մէջ: Դժբաղդաբար չկրցաւ նոր քրէտի մը ստանալ: Sop. Քաջբերունի եւ Քէթնէճեան, Խնամատարութեան Կիլիկիոյ եւ Հալէպ-Ուրֆայի քննիչները, վերջերս Պօլսոյ եկան եւ իրենց տեղեկագիրը տուին, որուն մէջ կը պարզեն թէ այդ կողմերը 30000էն աւելի որբ ու չափահաս աղջիկներ կան ազատուելիք ու պատսպարուելիք եւ որոնք ի սպառ պիտի կորսուին, եթէ ազգը տէր չկանգնի անմիջապէս:

կառավարութիւնը շարունակելով օսմանեան շրջանէն սկսած հայակործան քաղաքականութիւնը՝ 1935-ին պատրիարքարանը դարձեալ պիտի գրկէր անոր եկամուտներէն:

²⁰⁶ Տեսնել թիւ 49 ծանօթագրութիւնը:

²⁰⁷ Սվազ ծնած ամետարանիչ եւ Աստուածաբանութեան Դոկտոր Բիկզ (Henry H. Riggs, 1875–1943), երբեմնի նախագահն էր Խարբերդի Եփրատ Գոլէճին եւ 1918-ին թուղթի յանձնած էր իր անձնական փորձառութեան պրիսմակէն դիտուած «հայկական ողբերգութեան» պատմութիւնը: Գործը 1997-ին պիտի հրատարակուէր Կոմիտաս Հիմնարկին կողմէ հետեւեալ խորագրով՝ Days of Tragedy in Armenia: Personal Experiences in Harpoot, 1915-1917:

Նախորդ նամակներովս գրած եմ արդէն թէ այսքան խոշոր աղետի մը դարման տանելու համար պետական լայն միջոցներ հարկաւոր են եւ առաջարկած էի փոխառութիւն մը կնքել, ինչ որ դժբաղդաբար յաջողեցաւ: Այժմ այդ պէտքերը շատ աւելի բազմացած եւ ստիպողական ու անյետաձգելի հանգամանք մը ստացած են: Այդ անհրաժեշտութենէն իթանուած՝ հոս անգղիական դեսպանատունը փոխառութեան առաջարկ մը ըրի, որ իրենց շատ տարօրինակ չերեւցաւ եւ նկատողութեան պիտի առնուի: Ինչպէս գիտեք, կառավարութիւնը (թուրք) *Էմլաքը Մէթրուքէ* անունով հայերուս պատկանած բաւական գումար մը պահած ունի. ոմանք 2 միլիոն ոսկի ըսին: Ատկէ դուրս կա[ն] «Էշխասը Մէշհուլէ» [= Անյայտ Անձեր] անունով գումարներ, որոնք դարձեալ հայերու կը պատկանին, բայց սեպհականատէրերը անձանօթ են (եկեղեցիները, ճամբաները ձգուած ապրանքներ), իսկ քանի մը տարիներէ ի վեր «Էվլատը Շուիէտա» [= Նահատակներու Չաւակներ] անուամբ տուրքեր կը գանձուին որբերու համար, որմէ տասը փարա տրուած չէ հայերուն: Ասոնցմէ դուրս կը մնան անշուշտ *indemnité*ի գումարները, որ եթէ վճարուելու ըլլան՝ միլիոններ կը կազմեն: Արդ, առ այժմ այս գումարները թուրք կառավարութենէն գանձել կարելի չէ. ուստի առաջարկեցի որ թուրք կառավարութեան հաշւոյն գումար մը տրամադրուի մեզի, 1–2 միլիոն ոսկի, վերջը հաշուեյարդարութեան ատեն հաշուակցելու պայմանաւ: Համաձայնականները այսքան մը բարիք պէտք է ընեն մեզի, մանաւանդ որ կորսուելիք դրամ մը չէ: Անշուշտ օր մը թուրք կառավարութեան փոխառութեանց ու վնասուց հատուցման խնդիրը սեղանի վրայ պիտի գայ եւ այսքան միլիոններուն մէջ մեզի տրուելիք 1–2 միլիոն հաշիւն ալ կրնան կարգադրել. բաւական է որ բարի կամք ունենան: Այս խնդիրը Պոլսոյ մէջ կարգադրուելիք գործ չէ, բայց եթէ իրենք համոզուին ու խնդիրը այնպէս ներկայացնեն, հաւանական է որ ընդունելութիւն գտնէ: Ասոնք բոլորը բանակցութեան ու երկարածգուելիք խնդիրներ են, գիտեմ, բայց մեր առջեւ գտնուած հարցը այնքան ստիպողական է որ գլուխնիս ամէն բարի պիտի զարնենք, յոյս ունենալով թէ արդիւնք մը կրնանք ձեռք ձգել: Որովհետեւ բան մը կայ որ ամէն վայրկեան մեր սիրտը կը տանջէ. սա է թէ՝ առձեռն գտնուած մեր միջոցներով գործ մը չպիտի կրնանք տեսնալ եւ այս ձմեռ մեր աչքերուն առջեւ իսկ մեր որբերուն ու ժողովրդեան կորստեան ահաւոր տռամը տեղի պիտի ունենայ: Այդ պատասխանատուութիւնը գմեզ կը զարհուրեցնէ եւ շարունակ մեր մտահոգութեան առարկայ դարձած է այս հարցը: Արդիւնքը ձեզի կը գրեմ:

Քանի մը օրեր առաջ Ամերիկայէն հեռագիր մը ստացանք, որ հանգա-

նակութեան ձեռնարկուած ըլլալը ծանուցանելով, պատրիարքէն քաջալերութիւն կը խնդրէր²⁰⁸. կը յուսամ որ գոհացուցիչ արդիւնք պիտի տայ եւ մեզի ալ դրամ պիտի հասցնեն:

Հիմա ստացայ Ձեր 12 Հոկտմ. նամակը շոգեմաւն գրուած: Հոս արդէն տեղեակ էինք Ձեր հասած ըլլալուն եւ լրագիրներու մէջ ալ ծանուցուեցաւ: Կը յուսամ որ հոդ օգտակար գործունէութիւն մը կ'ունենաք, թէւ գործերը աւելի կ'նճռոտ երեւոյթ մը առնելու վրայ են եւ Բարիգի conférencer իր գործունէութիւնը դանդաղեցուց եւ նոյնիսկ դադրեցնելու միտումներ ունենալ կը թուի: Հոս Ամերիկայի մասին յոռետես եմ. կը կասկածուի որ Ամերիկա Թուրքիոյ գործերուն միջամուխ ըլլալ ուզէ. բայց եթէ լուրջ օգնութիւններ ընէ՝ այդ ալ բան մըն է: Հոս լուր կայ նաեւ որ Reliefը իր գործունէութիւնը պիտի սահմանափակէ, կէսի պիտի իջեցնէ՝ դրամի պակսելուն համար, ինչ որ մեր կացութիւնը աստիճան մը եւս պիտի դժուարացնէ:

Ռուսերը Պօլսոյ մէջ իրենց գործունէութիւնը աւելցնելու վրայ են: Արդէն բաւական զինուորականներ կային, հիմա պաշտօնական ներկայացուցիչ մը եկաւ եւ հեռագրական գործակալութիւն մը ու տեղեկատուու-

²⁰⁸ Մեզի կը թուի թէ խնդրոյ առարկան դիւանաթուղթերուն մէջ գտնուող 21 Դեկտեմբեր 1919 թուակիր հեռագիրն է Չաւէն Պատրիարքի, ուր կ'ըսուի. «Ամերիկացիներ, դուք մեր խլեակի վերածուած ազգին օգնէր էք ինքնաբերաբար եւ ձեռնարկէր էք նպաստի մեծ գործին: Մենք ձեզի կը նայինք որպէս մեծագոյն մարդասիրական զգացումներով օժտուած ազգի մը: Ձեր եռանդը միշտ կը թուի ըլլալ իր գագաթնակէտին: Չինադադարի ստորագրութենէն ի վեր ձեր նպաստամատոյցի աշխատողները տարածած են յոյս վշտաբեկ սիրտերուն եւ օգնէր են կենդանի պահել հազարաւոր որբեր՝ յայտնաբերել կիսաբարբարոս հողերու վրայ: Ձեր նպաստամատոյց գործակալներուն ներկայութիւնը այդ շրջաններուն մէջ մեր ցեղին վերապրող մասունքներուն կը ներշնչէ յոյս եւ կեանք: Հազարաւոր պատերազմի որբեր պիտի փնանային առանց ամերիկեան օգնութեան: Որպէս պետք այս խլեակի վերածուած ժողովուրդին, թոյլ տուէք որ ըսեմ թէ տեսած էք հսկայ գործ, բայց եթէ հարցերը թողլըուին հիմա, ցարդ կատարուած ամբողջ աշխատանքը պիտի ըլլայ անպտուղ եւ շատ հոգիներ պիտի մահանան: Հետեւաբար կը դիմեմ ձեզի որ կրկնապատկէք ձեր ջանքերը ձեր եկեղեցական կազմակերպութիւններուն, տեղական մարմիններուն, խորհուրդներուն եւ անհատներու կողմէ, որոնք բոլորը կը բաղկացնեն ամերիկեանութեան ազնուական ջախը: Ըրէ՛ք ջանք մը եւս, ո՛վ դուք միշտ պատրաստ սիրտեր, ժողովուրդի մը մնացորդացին համար: Հայոց Պատրիարք Չաւէն» (ՊՏԴ, տրցակ 10, թղթապանակ 40_Կ-Թ, Կ465, անգլերէն մեքենագիր):

թեան դիւաններ կազմակերպած են: Շատ թիւով ալ ռուսեր միշտ կուգան կ'երթան. նոյնիսկ գաղտնի ոստիկանութիւն ունին:

Տեղական կարելուր բաներ մը չկան Ձեզի հաղորդելիք: Կեանքը Պոլսոյ մէջ շատ սուղ եւ անտանելի եղած է: Սարսափելի բազմութիւն հաւաքուած է. ոչ միայն օտարականներ, այլեւ՝ շրջակայ ու հեռաւոր գաւառներէն ալ շատեր հոս հաստատուած են իբր համեմատաբար ապահով քաղաք: Կրնաք երեւակայել տիրապետող աղտոտութիւնն ու անհանգստութիւնը:

...

Հոս Տեղեկատու Դիւան մը կազմակերպեցինք մեզի պէտք եղած նիւթերը հոն կեդրոնացնելու համար²⁰⁹: Պիտի խնդրեմ որ երբ առիթը ներկայանայ, մեզի կարգ մը Brochure [= գրքոյկ] կամ գիրքեր խրկէք, պատրիարքարանի հասցեով, բայց նշանակելու է որ Տեղեկատու Դիւանին յատուկ է, որպէսզի ուրիշի ձեռք չանցնի: Պատ. Գրիգորեան²¹⁰ Ամերիկա կը մեկնի. այս նամակս անոր միջոցաւ կը դրկեմ. նոյնպէս՝ կարգ մը Brochure եւայլն: Ինքը մեզի գործակցած է եւ կրնայ օգտակար տեղեկութիւններ տալ:

Յարգանօք
Տօք. Դաւիթեան

²⁰⁹ Ակնարկութիւն Քաղաքական Ժողովին 17 Օգոստոս 1919-ի որոշումով ստեղծուած դիւանին:

²¹⁰ Աստուածաբանութիւն եւ հոգեբանութիւն ուսանած Փրոֆ. Վեր. Յովհաննէս Գ. Գրիգորեան (1856–1942) Այնթապի մէջ դասատուական եւ հովուական պաշտօններ կատարելէ ետք Պոլիսն ընտրած էր գործունէութեան դաշտ եւ շարունակելով հովուել, հրատարակած էր «Բահնիւմա» հայատառ թրքերէն շաբաթաթերթը: Ընտանիքով հանդերձ Նիւ Եորքը հաստատուելու նպատակով Միացեալ Նահանգներ մեկնող Վեր. Գրիգորեան հետը պիտի տանէր Ճերարտի ուղղուած նամակ մը եւ Չաւէն Պատրիարքի ուղարկէր իր յանձնառութեան իրազործման մասին նամակ մը (Յաւելուածներ ԺԳ. եւ ԺԴ.):

Patriarcat Arménien
Bureau d'Informations

Կոստանդնուպոլիս, 12 Յունվար 1920

Յարգելի բարեկամ,

Նիւ Եորքէն գրած 6 Նոյ. նամակնիդ ստացայ: Հեռաւորութիւնը նոր արգելք մը եղաւ աւելի յաճախ թղթակցելու: Ստիպուած եմ կարգ մը խնդիրներու համար Փաշային գրել, այնպէս որ ժամանակը կը պակսի շատ մը նամակներ գրելու: Դժբաղդաբար մեր Դիւանին մէջ ալ ըստ այնմ կազմակերպուած չեն օրը օրին թղթակցութիւն կատարելու համար. շատ մը բաներ մենք ընելու ստիպուած ենք:

Կը յուսամ որ առողջութիւննիդ վերագտաք: Եթէ հարկ է, քանի մը օր աւելի հանգիստ առէք: Կ'ըմբռնեմ թէ որքան յոգնած ըլլալու էք հիմա, մանաւանդ Ձեր նկարագիրը ունեցող մէկու մը համար, որ ամենապզտիկ բաներուն սիրտ կը հատցնէք: Զաղաքական կեանքը այնպէս է. միշտ յուզում, միշտ փոփոխութիւն, մանաւանդ մեզի պէս տկար ազգերու համար որ ամէն բան ուրիշէն կ'ակնկալենք:

Մեր դատը կ'երեւի դեռ մենք յառաջդիմութիւն մը ըրած չէ. դեռ անստոյլ[ւ]գութեան ու անորոշութեան մէջ կը տուայտինք: Ամերիկեան մանտայի խնդիրը, իրազեկ անձանց կարծիքին նայելով, ջուրը ինկած պէտք է համարել, ինչ որ մեր խնդիրը շատ աւելի կնճռոտ դրութեան մը պիտի մատնէ: Փաշայէն 16 Դեկ. նամակ մը ստացանք. իր Լօնտոնի մէջ ունեցած տեսակցութեանց արդիւնքը կը հաղորդէ: Դժբաղդաբար գրեթէ յուսահատական կացութիւն մըն է նկարագրուածը²¹¹: Անշուշտ դուք ալ

²¹¹ Նամակին չենք հանդիպած դիւանաթուղթերուն մէջ, բայց Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան 29 Նոյեմբեր 1919-ի նիստին ատենագրութիւնը հնարաւորութիւն կու տայ գաղափար մը կազմելու «յուսահատական կացութեան» մասին: Նուպար Լոնտոնի մէջ տեսակցած էր արտաքին գործոց նախարար Լորտ Քըրզընի հետ եւ վերջինս «Հայաստանի պահանջումներուն» անդրադառնալով յայտնած էր թէ հաւանական չի նկատեր որ ԱՄՆ ստանձնէ Հայաստանի հոգատարութիւնը, Անգլիա եւ Ֆրանսա նոյնպէս չեն ուզեր ստանձնել գայն, իսկ ուրիշ երկիրներու պարագային հարկ է նկատի ունենալ թէ ամէն երկիր «կը փափաքի զօրացրում կատարել, մինչդեռ, թուրքերու դէմ կարելորդ ոյժեր անհրաժեշտ են: Մուսթաֆա Բէմալ 100.000 հոգինոց բանակ մը ունի: Բոլոր Յանձնաժողովները որոնք կացութիւնը ուսումնասիրեցին, կ'ըսեն թէ 100–150.000 մարդ պէտք է

ժամանակին տեղեկացած էք այդ իրադարձությանց: Ամեն պարագայի, մեր վրայ շատ գէշ տպաւորութիւն ըրաւ: Գրուածէն այնպէս կ'երեւի թէ Հայաստանի մանտան ընդունող ոչ մէկը կայ. գէթ Անգղիա եւ Ֆր[անսա] կը մերժեն. իսկ Հայաստանի կազմութիւնն ալ կը վերածուի գրեթէ Թալթի²¹² շնորհ ըրածի վիճակին. այսինքն՝ այժմեան Արարատեան Հանրապետութեան վրայ աւելցնելով Վան, Պիթիս եւ Կարնոյ նահանգներուն մէկ մասը: Ծովի խօսք ալ չկայ: Արդ, թուրքերը արդէն առաջարկած են այդպիսի կարգադրութիւն մը եւ եթէ ժամանակին մենք թուրքերու հետ բանակցութեան մտնել ուզէինք, ասկէ աւելին առնելու հաւանականութիւն կար: Ինչ պիտի ըլլայ ուրեմն մեր մեծ Դաշնակիցներուն մեզի ըրած պաշտպանութիւնն ու տուած առաւելութիւնները: Կիլիկիոյ համար ալ ըստւած է թէ ֆրանսացիներուն հետ յարմարելու ենք:

Արդ, Հայաստան մը՝ սահմանափակուած այդ լեռներուն մէջ, առանց ծովի վրայ ազատ ելքի մը, եւ մանաւանդ անջատուած Կիլիկիայէն թուրք հողամասով մը, այսինքն շրջապատուած ամեն կողմէ թշնամի ու վայրագ ցեղերով, անկարելի է որ ապրի: Այդպիսի կարգադրութիւն մը Պերլինի 61 յօդուածին²¹³ մէկ ուրիշ variant[ը] [= տարբերակը] պիտի ըլլայ եւ ապագայ

երկիրը գրաւելու եւ անոր մէջ կարգը պահպանելու համար»: Սահմանազուխներու հարցին կապակցութեամբ Քրդըն յայտնած էր թէ, իր կարծիքով, կարելի չէ հայոց պահանջը գոհացնող մեծ Հայաստան մը կազմել եւ հայոց շահը կը պահանջէ Կիլիկիոյ համար ջանալ յարմարիլ Ֆրանսայի մօտեցման, եւայլն:

²¹² Ա. Աշխարհամարտի շրջանին ներքին գործոց նախարար ապա նաեւ եպարքոս Մեհմէտ Թալաթ, որ Մալթա քստորուած էր իբրեւ Հայկական Յեղասպանութեան գլխաւոր մտայղացողներէն մին, ազատ պիտի արձակուէր անգլիացիներու կողմէ եւ 1921-ին Պերլինի մէջ պիտի զգեստնուէր Սողոմոն Թեհլիրեանի գնդակով:

²¹³ Պերլինի Վեհաժողովը (1878-ի Յունիս 13-էն Յուլիս 13) հրաւիրուած էր Աւստրո-Հունգարիոյ եւ Մեծն Բրիտանիոյ նախաձեռնութեամբ, վերատեսուութեան ենթարկելու նոյն տարուան Մարտին Սան Սթեֆանոյի մէջ կնքուած ռուսեւթրքական դաշնագիրը, որուն համաձայն անկախութիւն ձեռք պիտի բերէին Պուլկարիա եւ ուրիշներ, միաժամանակ իր 16-րդ յօդուածով նշելով թէ Բարձր Դուռը կամ թրքական կառավարութիւնը յանձն կ'առնէր հայերու բնակած գաւառներուն մէջ տեղական պետքերու պահանջած բարւոքումներն ու բարենորոգումները անյապաղ գործադրել եւ անոնց ապահովութիւնը երաշխաւորել քիւրտերու եւ չէքէզներու դէմ (Լէօ, *Հայոց Հարցի Վաւերագրերը*, Թիֆլիս, 1915, էջ 59): Պերլինի բանակցութիւններու ընթացքին,

կնճռոտությանց ու ջարդերու նոր շարք մը պիտի սկսի: Շատ քիչ հայեր պիտի ուզեն Հայաստանի հողին վրայ հաստատուիլ եւ թերեւս հոն գտնուողներու բարեկեցիկ մասն ալ գաղթելու ստիպուի, իսկ ռուսական վտանգի²¹⁴ մասին առ այժմ անմիջական բան մը չըլլալուն չեմ ուզեր խօսիլ:

Մեր շրջանակներուն մէջ Փաշային այդ տեղեկութիւնները այնքան ճնշող տպաւորութիւն մը գործեցին որ կը խորհինք Պատրիարքը Բարիզ խրկել, եւ մեր այս մտադրութիւնն ալ Փաշային հեռագրեցինք եւ պատասխանի կը սպասենք²¹⁵: Պատրիարքին ներկայութիւնը չէ անշուշտ որ Վեհաժողովին որոշումները պիտի փոխէ, բայց վերջապէս իբր բարձրաստիճան կղերական մը եւ իր հօտին հոգեւոր պետը կրնայ հեղինակութեամբ խօսիլ եւ ըսել այնպիսի բաներ որ թերեւս մեր պետական վարիչները չպիտի կրնային ըսել: Պիտի ծանրանայ մասնաւորապէս հայ ժողովրդեան կեանքի ու ինչքի ապահովութեան մասին, եւ կրնայ ձայն բարձրացնել բոլոր այն կարգադրութեանց դէմ որ չեն երաշխաւորեր մեր այդ տարրական իրաւունքը: Պատեհութիւն պիտի ունենայ անշուշտ քրիստոնեայ տարբեր եկեղեցիներու պետերուն հետ տեսնուելու եւ անոնց ուշադրութեանը յանձնելու այս կէտերը: Դժբաղդաբար աւելի զօրաւոր միջոցներ չունինք մեր դատին ի սպաս դնելու եւ այդ լուրին տպաւորութեանը տակ այս գաղափարը ունեցանք: Մենք պատրաստութիւններ տեսնելու

Յուլիս 8-ին, մասնակիցները կը բանաձեւէին 61-րդ յօդուածը, որուն համաձայն Բարձրագոյն Դուռը յանձն կ'առնէր առանց յաւելեալ յապաղումի գործադրել հայերէ բնակեցուած նահանգներու մէջ տեղական պահանջներէ բխող բարոյքումներն ու բարենորոգումները, և երաշխաւորել անոնց ապահովութիւնը չերքէզներէ եւ քիւրտերէ, այս նպատակով ձեռք առնուած միջոցները պարբերաբար ծանուցանելով տէրութեանց, որոնք պիտի հսկեն անոնց գործադրութեան (Լէօ, էջ 110):

²¹⁴ Ակնարկութիւն, շատ հաւանաբար, վտանգի մը, որ կրնար յառաջ գալ ռուսական մեծամասնական կամ պոլշեիկեան շարժման Հայաստանի մէջ տարածումէն:

²¹⁵ Դաւիթեան իր 9 Յունուար 1920 թուակիր հեռագրով Նուպարի կը գրէր թէ ի տես ստիպողական կացութեան, կը խորհուէր Պատրիարքն անմիջապէս Փարիզ դրկել բարոյական աջակցութեան եւ նոր մօտեցումի մը մշակման համար: Նուպար հեռագրով մը կը պատասխանէր թէ տուեալ վճռական պահուն Պատրիարքին Փարիզ ներկայութիւնը շատ թանկագին աջակցութիւն մը պիտի ըլլար պատուիրակութեան՝ ազգային թանկագին դատին ի խնդիր (ՊՏԴ, տրցակ 3, թղթապանակ 2Խ, Խ587–588, ֆրանսերէն մեքենագիր):

վրայ ենք. միւս կողմէ՝ Փաշային պատասխանին կը սպասենք: Պատրիարքին հետ Պր. Չայեանը²¹⁶ պիտի ընկերանայ: Շատ փափաքեցան որ ես ալ ընկերանամ, բայց այս տեղի գործերը բոլորովին երեսի վրայ պիտի մնան եւ յետոյ իմ անձնական վիճակս ալ չի ներեր որ բացակայիմ, այնպէս որ առ այժմ ուրիշ կարգադրութիւն չկայ: Ուզեցինք որ Օհան Վարդապետն ալ միասին ըլլայ, բայց այդ մասին դեռ վերջնական որոշում մը տուած չենք: Միւս կողմանէ, Եւրոպայի մէջ շատ յարմար հայրենակիցներ ունինք Պատրիարքին ընկերանալու, ըլլայ Փրանսա, ըլլայ Անգղիա:

*

Խնամատարական.-

Մեր խնամատարական գործը շատ ծանր կերպով վտանգուած էր ասկից մէկ ամիս առաջ: Գրեթէ դրամ չէր մնացած սնտուկը: Իսկ միւս կողմանէ, ամսական 40000 ոսկիի յանձնառութիւն մը ունէինք որբերու եւ տարագրեալներու խնամքին համար: Կրնաք երեւակայել կացութեան ծանրութիւնը: Մեր թերթերը փոխանակ մեզի գորավիզ կանգնելու, ընդհակառակը ոմանք ուրախ էին որ այս դժուարին դրութեան մատնուած ենք, թէ՛ մեր ապիկարութեան արդիւնքն էր եւայլն եւայլն: Ճիշդ այդ օրերը Փաշային սրտառուչ հեռագիր մը զարկինք: Շնորհակալ ենք, անմիջապէս 200.000 ֆր. խրկած էր, ինչ որ քիչ մը շունչ առնել տուաւ մեզի. իսկ միւս կողմանէ՝ Հայրենիքի Տուրքի գանձման ուժ տալով մաս մը գումար ալ անկից ստացանք: Իսկ Ձեր ջանքերովը խրկուած 130.000 տոլարը կացութիւնը բոլորովին փրկեց: Ձեր հեռագիրէն առաջ արդէն մեզի իմաց տրուեցաւ ու Major Arnoldին հետ բանակցութեան մտանք այդ գումարին գործածութեան եղանակին մասին եւ համաձայնեցանք որ ամսական 26000 ոսկիէն, հինգ ամիս պիտի շարունակեն մեզի վճարումներ ընել, որով այդքան մը գումար մեր պիտոճէին պակսած պիտի ըլլայ, իսկ մնացած մասն ալ տեղական միջոցներով կրնանք հայթայթել:

Փաշան մեզի իմացուցած էր որ ըստ համաձայնութեան, ամերիկեան

²¹⁶ Տիգրան Չայեան (1880–1952) կը խմբագրէր Renaissance թերթը: Դաւիթեան զինք ընդգրկած էր 1919-ի Մարտին իր ատենապետութեամբ կազմուած Քաղաքական Ժողովին մէջ: Հետագային Չայեանի պիտի վստահուէր Յունաստանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցչի պաշտօնը: Փարիզ հաստատուելէ ետք Չայեան աշխատակցած է Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան ու անոր անդամներէն Նելսոնի եւ Հանրմեանի հետ կատարած է առեւտրական ձեռնարկներ:

Relief-ը մեր խրկած գումարները կրկն[ապատկ]ելու յանձնառությունը առած է: Ըստ այնմ ալ մեր ստացած 200.000 ֆրանքին կրկնուիլը խնդրեցինք: Major Arnold-ը մերժեց այդ առաջարկը եւ սկզբունքին հակառակ ըլլալը յայտարարեց եւ ըստ այնմ ալ պիտի գրէ կեդրոնին: Իրեն հետ կարգ մը ուրիշ անհամաձայնություններ ալ ունինք: Օրինակի համար, անապատի որբերը հաւաքելու համար Հերեան²¹⁷ անունով ամերիկեան քաղաքացի մը ամէն դժուարություն աչքը առած որբ կը հաւաքէ, եւ շատ անգամ ալ որբ գլուխ երկու կարմիր ոսկի տալով կ'ազատէ: Major-ը [= Հազարապետը] այսպէս դրամով որբ առնելու հակառակ է եւ կ'ըսէ թէ մի անապարէք որբ հաւաքելու, հաշտութենէն վերջ այդ անապատները ֆրանսական կամ անգղիական ազդեցութեան տակ մնալով, կանոնաւոր վարչություն մը պիտի հաստատուի, որով դիւրութեամբ պիտի ժողվենք մեր որբերը: Major-ին անկեղծութեանը վրայ տարակուսելու պատճառ մը չունինք, բայց կը ցաւինք որ, ինչպէս ուրիշ շատ մը ամերիկացիներ, ինքն ալ տեղային խնդիրներուն ու սովորություններուն անտեղեակ է ու մեր ըսածներուն ալ չեն հաւատար եւ կամ կարեւորություն չեն տար: Բայց իրողությունը սա է թէ իրենք միամտաբար կը խաբուին: Անապատներու տիրապետող իշխանությունը որն ալ ըլլայ, բնաւ չպիտի ուզէ հայ որբերը հաւաքելու համար վշտացնել բնիկները եւ անոնց հետ դժուարություններու բռնուիլ: Մենք փորձը շատ տեղեր ունեցած ենք. նոյնիսկ ի վնաս մեզի կ'արտայայտուին եւրոպացիները այդ կարգի պարագաներու մէջ:

Մեր այս դժբաղդությունները անշուշտ շահաւէտ ու հանգիստ ասպարէզ մը բացած են կարգ մը ամերիկացիներու եւ հոս իրենց վարչությունը անպատճառ մերինէն լաւ չէ, եւ շատ անգամ ալ՝ աւելի գէշ: Բայց վերջապէս հարցը հոդ չէ. մենք միշտ շնորհակալ ու երախտապարտ ենք եւ որեւէ քննադատություն ընելու ալ փափաք չունինք. բաւական է որ մեր որբերը կարենանք ինամել ու սա դժուարին տարիները անցունել: Ամէն պարա-

²¹⁷ 1868 կամ 1869-ին Թոգատ ծնած եւ 1921-ի Յուլիսին Եգիպտոս մահացած Ռուբէն Հերեան, որ Ա. Աշխարհամարտի ընթացքին Անգլիոյ ի սպաս դրած էր իր ծառայությունները, զինադադարէն ետք միացած էր Հայկական Լեզեոնին եւ այնուհետեւ լծուած որբահաւաքական աշխատանքի Արաբիոյ անապատներուն մէջ, որուն համար ալ իրեն պիտի շնորհուէր «Որբախոյզ» մակդիրը (*Պատմություն Եւրոպիոյ Հայոց. տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկություններով*, համադրուած Արշակ Ալաջանեանէ, հրատ. Նիւ-Եորքի Եւրոպիոյ Կրթասիրաց Միութեան, տպ. Նոր Աստղ, Գահիրէ, 1952, էջ 1732–1735):

գայի մէջ, եթէ նորէն դրամ խրկելու ըլլաք, կարծեմ լաւագոյնը ուղղակի պատրիարքարանի խրկելն է, որպէսզի գործածութեանը մէջ դժուարութիւններ չունենանք: Մանաւանդ քանի որ չեն ուզեր կրկնապատկել խրկուած գումարները, այն ատեն իրենց բովէն անցնել աննպատակ բան մը եղած պիտի ըլլայ:

Հոս անգղիական կարգ մը պաշտօնական անձերու խորհուրդներէն քաջալերուած, դիմում մը կատարեցինք Համաձայնականներուն մօտ, ի հաշիւ թուրք կառավարութեան՝ մեզի երկու միլիոն ոսկիի *avanace* [= կանխավճար] մը ընելու համար: Ներփակ պիտի գտնէք նամակին պատճենը ուր մանրամասնաբար պարզուած է խնդիրը: Մեր նպատակը եղած էր կարելոր գումար մը ձեռք ձգելով, ընդարձակ սահմանի մը մէջ կատարել տալ որբերու ու աղջիկներու հաւաքումը: Արժանահաւատ անձեր կը հաւաստեն թէ աւելի քան 60000 այս կարգի անտէրունչ հայեր կան դեռ, մասնաւորապէս Ուրֆա, Նիսիպիս եւ շրջակայքը: պատասխանը առջի օր ստացանք որ մերժում է, առարկելով թէ այդքան խոշոր էշէլի [= աստիճանի] վրայ անգղ. կառավարութիւնը չի կրնար ուղղակի օգնութիւն մը ընել (*direct assistance*): Մեր վախը այն է որ հաշտութիւնը այսպէս երկարաձգելով, մեր տղաքը բոլորովին կ'օտարանան եւ յետոյ անոնց հաւաքումը բոլորովին կը դժուարանայ:

*

Միլի շարժումը իր նախկին թափը կորսնցուցած է, տեղ տեղ ալ հակառակ շարժումներ կան, բայց միշտ գոյութիւն ունի եւ կառավարութիւնը համակիր ու անոր ազդեցութեանը տակ է: Անոր գոյութիւնը մանաւանդ շատ կարելոր կը նկատուի՝ Վեհաժողովի որոշմանց վրայ ազդելու համար: Թուրքերը որոշապէս կը յայտարարեն թէ՝ իրենց մասին աննպատակ որոշում մը տրուելու պարագային, դիմադրութիւն պիտի փորձեն եւ այդ ուղղութեամբ ալ կը պատրաստուին: Անշուշտ բոլոր ատենք կարգադրուած խնդիրներ են, եւ եթէ լրջօրէն արդարութիւնը գործադրել որոշուի, Համաձայնականներու ձեռքը միշտ չէ որ կը պակսի: Այս մասին (Միլի) պզտիկ աշխատութիւն մը եղած է որուն օրինակը կը դրկեմ:

*

Անձնական.-

Հոս մեր կեանքը սովորական միօրինակութեամբը կ'ընթանայ: Անհամբեր կը սպասենք հաշտութեան, որովհետեւ կեանքը անկարելի դարձած է Պօլիս: Տարօրինակ սղութիւն կայ եւ ամէն բան երեսի վրայ ձգուած է: Փոխանցման շրջան մը ըլլալուն, ոչ որ լրջօրէն կ'աշխատի եւ նպատա-

Լոր աշխատության մը կը սկսի:

.....

Յարգանք

Sop. Դաւիթեան

Յ.Գ. Եթէ պատեհութիւն ներկայանայ ու յարմարի, պիտի խնդրէի որ պատրիարքարանին համար նոր եւ լաւ գրի մեքենայ մը ընծայ առնէք: Ունեցածնիս հինցած է: Royal մեքենան նպատակայարմար պիտի ըլլայ. հոս չկայ եւ երբեմն կեցածներուն ալ սոսկալի գիներ կը պահանջեն:

Նոյն

Պատրիարքարան Հայոց
Տեղեկատու Դիւան

Կ. Պոլիս, 11 Փետրվար 1920

Յարգելի բարեկամ,

Յունվար 12 թուական նամակս կը հաստատեմ: Ձեզմէ տեղեկութիւն չունինք: Յուսացինք որ Համագումարի գումարման առթիւ²¹⁸ Բարիզ կը վերադառնաք եւ մեզի աստիճան մը մօտեցած կ'ըլլաք, բայց կ'երեւի յետաձգուած է եւ պիտի ստիպուիք ժամանակ մ'ալ Ամերիկա մնալ:

Անցեալ նամակէս ի վեր բաւական փոփոխութիւններ տեղի ունեցան: Նախ՝ Հայ Հանրապետութեան ճանաչումը²¹⁹, որ մեր ներքին կացութեան մէջ ալ կարգ մը փոփոխութիւններ յառաջ պիտի բերէ անշուշտ: Չեմ գիտեր թէ ինչ է այժմ Պատուիրակութեան դիրքը: Համերաշխութիւնն ու միացումը այժմ աւելի քան երբեք անհրաժեշտ է: Անպատշաճ պիտի ըլլայ երկու պատուիրակութեամբ գործելը: Դժբաղդաբար համաձայնութիւն մը գոյացնելը դիւրին չէ: Թէքէեան եւ Տէր-Ստեփանեան ձեռնունայն վերադարձան, թէւ ըստ իս յարմարագոյն անձերն ալ չէին բանակցութիւններ վարելու համար²²⁰: Ինչ որ է, հիմա իրողութիւն մը կայ. գէշ աղէկ կառավարութիւն

²¹⁸ Դաւիթեան հաւանաբար նկատի ունի Երկրորդ Ազգային Համագումարը, որուն նիստերը պիտի գումարուէին 5 Մայիս 1920-էն մինչեւ 13 Յուլիս 1920:

²¹⁹ Գերագոյն Խորհուրդին կողմէ Հայաստանի Հանրապետութեան գոյապէս ճանաչման վճիռն ընդունուած էր իր 19 Յունուար 1920-ի նիստի ընթացքին եւ առ այդ պաշտօնական զեկոյցը Ահարոնեանի գլխաւորած Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան հաղորդուած էր 27 Յունուար 1920-ին, նշելով թէ կառավարութիւնը պաշտօնապէս ճանչցուած է եւ թէ հանրապետութեան ապագայ սահմաններու խնդիրը կանխորոշուած չ'ըլլար այդպիսով:

²²⁰ Թէքէեան իր գլխաւորած առաքելութեան բանակցութիւններու աւարտին պիտի հրատարակէր «Բացատրութիւն Մը Երեւանի Բանակցութիւններուն Վրայ. Ի՞նչ Ուզեցինք, Ի՞նչ Ստացանք» խորագրով համարատուութիւն մը, ուր վերջին պարբերութիւններուն մէջ կ'ըսէր. «Եթէ [բանակցութիւնները] չյաջողեցան՝ պատճառը այն է որ չուզուեցաւ զանոնք յաջողցնել, ի սկզբան ուզուելէ ետք»: Ապա կ'աւելցնէ. «Չուզուեցաւ, Երեւանի մէջ եւ այլուր, ինքնախաբէական, անհիմն նկատումներով...: Այս մասին մեր բոլոր գիտցածները հոս չեմ կրնար յայտնել» (*Մամուլի Մէջ Տպուած Եւ Անտիպ Երկեր Ու Նամակներ Վահան Թէքէեանէն*, հաւաքեց եւ ծանօթագրեց Դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէյրութ, 1987, էջ 325–331):

մը ունինք. ներքին ցաւերու դարմանը ու վարչական կանոնաւորութիւնը ստեղծելը ժամանակի կը կարօտի, ներքին ընկերական կարգ մը *évolution*ներու [= եղաշրջումներու] կապուած է: Պէտք է ջանալ արտաքին աշխարհի առջեւ մէկ ճակատով ներկայանալ եւ գայդ իրագործելու համար ալ զիջողութիւններ ընել անհրաժեշտ է: Կը յուսամ որ մեր կուսակցական բարեկամները կը հասկնան թէ Հանրապետութեան ճանաչումը մեր խնդիրը չի լուծեր. դեռ շատ աշխատութիւններ կան ըլլալիք: Թրքահայութիւնը ամբողջութեամբ եւ կամ մեծ մասամբ ազատագրելը անհրաժեշտ պայման մըն է մեր պետութեան հիմերուն ամրապնդման տեսակէտով ալ: Այժմ ազատագրուած Կովկասահայաստան մը ռուսական վտանգէն ազատուած չի կրնար համարուիլ: Թրքական գաւառներու կցումն է որ պիտի ապահովագրէ Երեւանը: Այս մասին կարծեմ տարակարծիք եղող չկայ, ուստի այդ ուղղութեամբ աշխատելու համար համերաշխ ու մէկ ճակատով գործելը անհրաժեշտ կը նկատեմ: Եթէ կուսակցականները գոհացում ստացած ըլլալ կը ցցնեն եւ կամ տարտամ կերպով մը միայն կը մօտենան թրքահայերու խնդրոյն, ծանր սխալ մը գործած պիտի ըլլան, թէեւ չեմ կարծեր եւ կը յուսամ որ այդ մասին մեզի տարակարծիք չեն կրնար ըլլալ: Ես խնդիրը շատ մօտէն ուսումնասիրած չեմ, բայց կը կարծեմ թէ կուսակցականներու հետ տեղի ունեցած գծութեանց է՛ն գլխաւորը իշխանութեան գլուխը մնալու հարցն է. այսինքն՝ Դաշնակցականները որքան ատեն որ իշխանութեան գլուխը մնան եւ այդ մասին իրենց դէմ պայքար չմղուի, չեմ կարծեր որ անհամաձայնութիւն մը մնայ: Արդ, իշխանութեան հարցը զիս բոլորովին անտարբեր կը թողու. առ այժմ մեզմէ շատ քիչեր փափաքող պիտի ըլլան կառավարութեան գլուխը գտնուելու: Այդ հարցը ապագային պիտի լուծուի, երբ երկրին մէջ իսկ զօրաւոր տարբեր կուսակցութիւններ կազմակերպուին: Առ այժմ Դաշնակցականները լինելով միակ կազմակերպուած կուսակցութիւնը, բնական է որ այն ձեռք պիտի առնէ իշխանութիւնը: Մեզի համար միակ ցաւալի կէտը այն է որ այս փափուկ ու ճգնաժամային թոպէներուն, փոխանակ զգոյշ ու իմաստուն քաղաքականութեան մը հետեւելու, ծայրայեղ ու աղմկալից ընթացք մը կը ցուցադրեն նոյնիսկ օտարներուն առջեւ:

Չեմ գիտեր թէ Հանրապետութեան ճանաչմամբը Ձեր գործունեութեան մէջ որեւէ փոփոխում պիտի մտցնե՞ք, նոր ուղղութեան մը հետեւելու պէտք կա՞յ, ամերիկեան կառավարութեան քաղաքականութիւնը պիտի ազդուի՞ այդ իրողութենէն եւ մեզի հանդէպ տարբեր ուղղութեան մը հետեւելու տրամադրութիւններ մը կա՞ն: Մենք բոլորովին անտեղեակ ենք այդ խնդիրներէն: Կը սպասենք միայն որ մեզի ուրախառիթ լուրեր հաղոր-

դէք: Հանրապետութեան ճանաչումը կրնա՞յ արդեօք դիւրացնել փոխառութեան հարցը: Մենք վերջերս այդ մասին դարձեալ դիմումներ մը ըրած էինք: Գրեցի կարծեմ ձեզի թէ ի հաշիւ Թուրքիոյ, *alliéներէն* [= դաշնակիցներէն] փոխառութիւն մը կնքել ուզեցինք, բայց մերժողական պատասխան ստացանք: Հիմա թերեւս աւելի դիւրանայ այդ հարցը:

Ասկից առաջ Նուպար Փաշայէն նամակ մը ստացած էինք որով Լօնտօնի մէջ իր ունեցած տեսակցութեանց արդիւնքը կը հաղորդէր մեզի: Այդ նամակը շատ աննպաստ տպաւորութիւն մը ըրաւ մեր վրայ եւ ժողովը այդ ազդեցութեան տակ փափաք յայտնեց որ պատրիարքը անձամբ Բարիզ երթալով իր հօտին կացութիւնը պարզէ եւ իր հեղինակութեամբը զօրացնէ Պատուիրակութեան դիրքը: Այդ մասին Փաշային ալ կարծիքը ուզած էինք եւ նպաստաւոր պատասխան ստացանք: Կարգ մը դժուարութիւններէ վերջ խնդիրը կարգադրուեցաւ վերջապէս եւ հաւանաբար այս շաբթու մեկնի Պր. Չայեանի հետ:²²¹ Միւս հոգեւոր պետերուն ալ միասին երթալու

²²¹ Չաւէն Պատրիարք բաւական ընդարձակ կերպով խօսած է իր ճամբորդութեան նախօրեակին անցագիր ստանալու բարդութիւններու եւ Եւրոպա գտնուած միջոցին ունեցած գործունէութեան մասին իր «Յուշեր»ուն մէջ (էջ 327–355), ուր կը նշէ թէ Չայեանի հետ Պոլսէն մեկնած է Փետրուար 12-ին, բայց կը թուի թէ անուշադրութեան հետեւանքով հատորին մէջ տեղ գտած է թուականի սխալ մը, երբ կ'ըսուի թէ «1920 Դեկտ. ամսուան մէջ» Պօղոս Նուպար դրկած էր յուսահատական շեշտով տեղեկագիր մը: Դաւիթեանի նախորդ նամակին մէջ արդէն նշուած էր թէ Նուպարի նամակը կը կրէր 16 Դեկտեմբեր 1919 թուականը: Հետեւաբար, Չաւէն Պատրիարքի յուշերուն մէջ նշուած 1920-ը պետք է կարդալ 1919 (էջ 327): Իր առաքելութենէն վերադարձին, Ազգային Երեսփոխանական Ժողովի նիստի ընթացքին Չաւէն Պատրիարք պիտի ներկայացնէր 18 Մարտ 1920 թուակիր գրաւոր հետաքրքրական հաշուետւութիւն մը, ուր, օրինակ, կը նշէ. «Զսանչոք օրէ ի վեր Լոնտոն գտնուելով իմացայ որ Ֆրանսացիք իրենց ծանօթ թրքասէր քաղաքականութեամբ կ'աշխատին [որ] կարելի եղածին չափ քիչ հող տրուի մեզի եւ կամ քիչ հող առնուի Թուրքիայէն, որովհետեւ կը յուսան թէ իրենք պիտի կրնան սիրաշահիլ թուրքերը եւ տնտեսական առաւելութիւններ ձեռք ձգել Թուրքիոյ մէջ, եւ հետեւաբար որչափ ընդարձակ Թուրքիա մը մնայ՝ այնչափ աւելի կ'ըլլան իրենց ապագայ շահերը»: Կամ՝ «Կիլիկիոյ եւ Հայկական միւս հողամասերուն խնդիրը կը մնայ: Ինչպէս ըսուեցաւ վերը, դժբաղդաբար Ֆրանսացիք շատ գէշ դեր կը խաղան թրքական դաշնադրութեան մէջ: Ասոնք պարտաւորցուցին Յունաստանը որ ընդունի Իզմիրի վրայ թրքական գերիշխանութիւն եւ իրենք ալ յայտարարեցին թէ նոյնը կ'ընդունին Կիլիկիոյ

խօսք մը կար, բայց մինչեւ այս վայրկեանիս դեռ անորոշ է²²²:

Իմ տեսակետովս շատ որոշ չէ պատրիարքին ճամբորդութեան արդիւնքը: Կը կարծեմ թէ Թուրքիոյ խնդրոյն մասին կարեւոր որոշումները արդէն տրուած են եւ դժուար պիտի ըլլայ ատոնց մէջ փոփոխութիւններ մտցնելը: Իսկ հիմա շատ ուշ է քրիստոնեայ աշխարհին մէջ մեծ բրօքականտ մը մղելով քաղաքականութեան վրայ ազդելու համար: Մասնաւոր պատրաստութիւններ պէտք են եւ ժամանակի կարօտ է: Ինչ որ է, եթէ ոչ օգտակար, գէթ վնասակար չի կրնար ըլլալ եւ իբր իրազեկ Թուրքիոյ ներքին կացութեան ու հայերուս վիճակին, կրնայ կարգ մը շրջանակներու մէջ նպաստաւոր հոսանք մը յառաջ բերել:

Իր բացակայութիւնը մեզի համար դժուար պիտի ըլլայ: Ինչպէս գիտէք, մեր վարչական կազմակերպութիւնները շատ ուժով չեն եւ երբ արեւոյն տէրը կը բացակայի, վարչական մեքենան աւելի կը թուլնայ՝ մանաւանդ ներկայ փափուկ ժամանակներուն մէջ, ուր վայրկեանէ վայրկեան անակնկալներ կրնան պատահիլ: Այս օրերս Պօլսոյ ապահովութեան մասին աննպաստ տարաձայնութիւններ կը լսուին: Չմի գիտեր թէ որ աստիճան ստոյգ են, բայց տարակոյս չկայ թէ միտքերը շատ գերագրգռուած են եւ Քօնֆէրանսին տալիք աննպաստ մէկ որոշմանը պահուն, ծանօթ ըլլալով թուրքերու մտայնութեան, չպիտի զարմանամ եթէ անախորժ դէպքեր մը պատահին, մանաւանդ գաւառները: Բոլոր ասոնք զմեզ մեծապէս մտահոգ ըրած են եւ անձկանօք կը սպասենք հաշտութեան վախճանին:

Հեռագիրներէն իմացած ըլլալու էք անշուշտ Կիլիկիոյ մէջ պատահած ցաւալի դէպքերը: Ժամանակէ մը ի վեր Միլլի կազմակերպուած չեթական խումբերը Կիլիկիոյ զանազան մասերուն մէջ սպանութիւններ կը կատա-

համար», եւայլն (Համահաւաք Բ., էջ 970–976):

²²² 13 Մարտ 1920-ին Փարիզ պիտի մեկնէր նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսը (1849–1939), որուն եւրոպական առաքելութիւնը պիտի աւարտէ 7 Յուլիս 1920-ին: Եւրոպայի մէջ Սահակ Բ. ի կատարած դիմումները եւ ունեցած հանդիպումները ներկայացնող օրագրութիւնն ու պաշտօնական թղթակցութիւնները հետագային լոյսին պիտի տար Մարաշի կոտորածէն փրկուած անոր ուղեկիցը՝ Վահան Լ. Խուլէսէրեան (*Օրագրութիւն Ուղևորութեան յԵւրոպայ Սահակ Բ. Կաթողիկոսին Կիլիկիոյ, Հալէպ, 1928*): Ըստ Չաւէն Պատրիարքի նախորդ ծանօթագրութեամբ յիշատակուած համարատուութեան, իր Փարիզ գտնուած շրջանին հայ կաթողիկէ Նազլեան Գերապայծառն ալ Փարիզ եւ Լոնտոն պիտի այցելէր նոյն ազգային մտահոգութիւններով:

րեին որու մասին ժամանակին բողոքած էինք: Յունվար ամսոյ մէջ՝ Մարաշ եւ շրջակաները կատարեալ թրքական ապստամբութեան մը թատրը եղած են: Զօրավար Կուրօ²²³ Սուրիոյ քօմիսէր անուանուելուն առթիւ, Կիլիկիոյ զանազան կողմերը թուրք դրօշակին տեղ ֆրանսականը պարզուիլ սկսած էր: Մարաշի մէջ թուրք ժողովուրդը գրգռուած ֆրանսականը վար առնելով դարձեալ թուրք դրօշակը կը պարզէ: Ատիկա կ'ըլլայ սկզբնական պատճառը որ թուրքերը ապստամբին ու ֆրանսական իշխանութեանց հետ կռուի բռնուին: Երկու շաբաթէն աւելի է որ այդ կողմերը կատարեալ պատերազմ տեղի կ'ունենայ: Երկու կողմէն ալ շատ զոհ կայ: Բնականաբար հայերը

²²³ Զօրավար Հենրի Ժոզէֆ Կուրօ (Henri Joseph Eugène Gouraud, 1867-1946), ֆրանսական Արեւելեան Բանակի հրամանատարը, 1919-էն սկսեալ զանազան հանգամանքներով Միջին Արեւելքի մէջ վարած է Ֆրանսայի գաղթարարական գործունէութիւնները եւ 1920-ին նշանակուած է Սուրիոյ եւ Լիբանանի Բարձր Յանձնակատար: Կուրոյի նկատմամբ ստեղծուած էր այն կարծիքը թէ ան կը պատկանէր Կիլիկիոյ մէջ «թրքաց վրայ յենուլ» մտածող դպրոցին (*Համահաւաք* Ա., 229): Պօղոս Նուպար 3 Դեկտեմբեր 1920 թուակիրով մը Զաւէն Պատրիարքի պիտի հաղորդէր. «[Կուրոյի հետ] մեր խօսակցութիւնը շատ սիրալիւր էր եւ ինք նոյնիսկ խոստացաւ իր աջակցութիւնը տալ, Սեւրի Դաշնագրին սահմաններուն մէջ, որ, ըստ իրեն, Ֆրանսա կրնայ միայն ճշգրտիւ գործադրել: Բայց իր միտքին մէջ նուազ չնշմարեցի շատ զօրաւոր կանխակալութիւն մը հայ տարրին դէմ ... Իր համակրանքը յստակօրէն կ'երթայ թուրքերուն եւ իր թրքասիրութիւնն է որ միշտ կը յադթանակէ իր դատողութեան մէջ: Խորհրդարանի Ելեւմտական Յանձնաժողովին առջեւ իր վկայութեան մէջ թուրք զինուորը չափազանց գովել է տք, ան այնքան առաջ գնաց, որ ըսաւ թէ թուրքերը եթէ գերմանական մեթոտներ գործածած ըլլային պատերազմին մէջ, ինք ողջ մնացած պիտի չըլլար: Ուրեմն, անկէ պէտք է եզրակացնել, տրամաբանական ըլլալու համար, թէ իր կեանքը կը պարտի անոնց: Ան աւելցուց թէ ջարդարարներն այսօր հայերն են եւ ո՛չ թէ թուրքերը...»

... Զօրավար Կուրօ յամառելով իր կողմնակալութիւններուն մէջ, կառավարութեան եւ Խորհրդարանին վրայ իր բովանդակ ազդեցութիւնը կը բանեցնէ ֆրանսական ուժերը ամբողջովին Կիլիկիայէն ետ քաշելու համար եւ կը գործածէ փաստարկութիւններ, որոնք կը տպաւորեն երեսփոխաններն ու ծերակուտականները, յայտարարելով թէ եթէ իրեն հրամայուի Կիլիկիա մնալ, 70,000 յաւելեալ անձեր պէտք է տրուին իրեն, համապատասխան ծախքերով, որ կը հաշուէ հարիւրաւոր միլիոն ֆրանք» (*Համահաւաք* Բ., էջ 1049):

ամենէն շատը տուժած են: Այդ շրջանակի գիւղերը մինչեւ Չէյթուն թուրք չէթներու յարձակմանը ենթարկուած ու բոլորովին քանդուած են: 2000ի մօտ գոհ կայ կ'ըսուի: Թերեւս ոմանք փախած եւ կամ տեղ մը ապաստանած են, բայց դարձեալ շատ են հայերու կորուստները: Մինչեւ այս թուականիս թուրքերը Մարաշի մէջ կը դիմադրեն եւ փողոցներու մէջ կռիւներ կը պատահին: Հայերու ամբողջութիւնը վարժարան ու եկեղեցի հաւաքուած կը դիմադրեն թուրքերու յարձակման: Կացութիւնը շատ ծանր է, եւ հետզհետէ շարժումը կը տարածուի դէպի Քիլիս, Այնթապ, Ուրֆա²²⁴:

Ատանայի Ազգ. Միութենէն նամակներ ստացանք որ շատ յոռի գոյներով կը նկարագրեն երկրին վիճակը²²⁵: Հայ ժողովուրդը գերագրգռուած գէնք ու օգնութիւն կ'աղաղակէ: Ֆրանսական իշխանութիւնները դժբաղդաբար անկարող են երկրին վիճակը ըմբռնելու եւ իրենց հետեւած չեմ ըսեր թրքասէր, բայց թոյլատու ու անստոյգ քաղաքականութիւնը երկրին մէջ ներկայ վիճակը յառաջ բերելու պատճառ եղած է: Իրենք ուղղակի պատասխանատու են մեր կրած կոտորածներուն համար: Հայերը ամիսներէ ի վեր բնաւ չեն թերացած մատնանշելու կացութիւնը եւ գուշակած են բոլոր այս եղածները: Քանիցս նօթերով բացատրեցինք ու դարման խնդրեցինք. դժբաղդաբար լսելի չեղան մեր աղաղակները, եւ չուզեցին փոխել իրենց ուղղութիւնը: Չմեզ նկատեցին անվստահելի տարր մը, որովհետեւ Կիլիկիոյ հողամասը մեր պահանջներուն մէջն է[ր] եւ մեր դէմ անարգանօք վարուեցան, չհամարձակեցան թուրքերը զինաթափ ընելու եւ արդիւնքը այն եղաւ որ այսօր անհնարին դժուարութիւններու մատնուած են թուրք տարրը զսպելու համար, եւ միւս կողմէ ալ մենք ջարդուելու վրայ ենք:

Տեղական յուրերը բաւական շահեկան են: Օսմ. մէպուսա[րա]նը [= խորհրդարանը] գումարուիլ սկսաւ. բոլոր երեսփոխանները Միլլիի (Իթթի-հատի նոր անունը) կուսակիցներն են եւ բնաւ ընդդիմադիր չկայ: Միլլին կատարելապէս տիրացած է բովանդակ երկրին. ամէն բան ձեռքին մէջ առած ու ազատ համարձակ կը գործէ ու կը զինէ ժողովուրդը: Միւս կողմէ,

²²⁴ Մարաշի եւ շրջակայքի վատթարացող կացութեան մասին տեղեկութիւնները պատրիարքարան կը սկսին հասնիլ Խնամատարութեան լիազօր ներկայացուցիչ բժիշկ Բաջբերունիի կողմէ 3 Յունուար 1920-էն սկսեալ (*Post-WWI*, էջ 157, 159):

²²⁵ Ատանայի Ազգային Միութեան եւ Միհրան Տամատեանի համատեղ տեղեկատուութեան 31 Յունուար 1920 թուակիր արձանագրութեան համար տեսնել (*Post-WWI*, էջ 163–165):

թաթար, արապ եւ այլն տարրերուն հետ ալ յարաբերութիւններ մշակելով, Համաձայնականներուն դէմ դժուարութիւններ հանելու վրայ է: Կատարեալ խաղըութիւն մըն է եղածը. տեսնենք ինչպէս պիտի վերջանայ:

.....

Տրապիզոնէն Գարեգին Վարդապետը տեղւոյն Reliefի ներկայացուցիչին հետ դժուարութիւններ մը ունեցեր է եւ այդ մասին Dr. Bartonի նամակ մը գրած էր զոր ներփակ կը դրկեմ²²⁶: Կարդացէք. եթէ յարմար

²²⁶ Առաջնորդ Գարեգին Վարդապետ Խաչատուրեանի (հետագային՝ Գարեգին Տրապիզոնի, Պատրիարք Թուրքիոյ Հայոց) 13 Յունուար 1920 թուակիր անգլերէն նամակը կը վերաբերէր ամերիկեան Նպաստամատոյցի ներկայացուցիչ Ռայլընի եւ իր միջեւ ծագած «անախորժ կացութեան մը», որ կը վերաբերէր Տրապիզոնի հայ որբերու կրթութեան հարցին առնչուած թիրիմացութեան մը: Հայ հոգեւորականը կ'ըսէր թէ իր պարտականութիւնն էր հայ որբերու կրթութեան պատասխանատուութիւնն ստանձնել՝ ցորչափ միջոցները չեն պակսիր իրեն, եւ թէ ինք գործած է ինքնօգնութեան ամերիկեան ոգիով, զոր Պարթըն բանաձեւած էր Գ. Ս. Փափագեանի հետ տեսակցութեան մը ընթացքին, որ լոյս տեսած էր «Ազգ» թերթին մէջ եւ ուր կ'ըսուէր. «Մեր քաղաքականութիւնն այն է, որ, որքան հնարաւոր է, հայերն իրենք հոգան իրենց որբերը»: Ան կ'աւելցնէր. «Դուք, անկասկած, ի մտի ունէիք ո՛չ միայն նիւթական օգնութիւնը, այլ նաեւ բարոյական օգնութիւնը: Եւ կը դժուարանամ մտածել թէ այս քաղաքականութեան հետեւելու մեր ճիգը կրնայ արդարացնել Պրն. Ռայլընի բառերը. «Կը վախճամ թէ կրնամ հետս Ամերիկա տանիլ հայոց վերաբերող տեսակէտ մը, որ տարբեր է անկէ, որմով եկայ Թուրքիա»»: «Նպաստամատոյցին նպատակը,- կ'աւելցնէր վարդապետը,- օգնել է մեզի եւ ո՛չ թէ տկարացնել է մեզ, եւ մենք ուրիշներէ շատ աւելի գիտենք գնահատել այդ օգնութիւնը՝ համագործակցելով մեր պայմաններուն թոյլատրած չափով»: Գարեգին Վարդապետ կը շեշտէր թէ իր պարտականութիւններուն մէջ կրթական հարցը կը գրաւէր առաջնակարգ տեղ: Պոլսոյ, Սամսոնի եւ Կիրասոնի մէջ կրթական գործն ու կառավարումը ձգուած է հայ ազգային իշխանութիւններուն, որոնց կը տրուի անհրաժեշտ նիւթական օգնութիւնը: Նպաստամատոյցի Տրապիզոնի ներկայացուցիչը ո՛չ միայն չ'ընծայէր որեւէ օգնութիւն, այլ նաեւ կը խոչընդոտէ մեր անկախ ջանքերը: Այս կ'աւելցնէր թէ Պրն. Ռայլըն կրնայ փոխել հայոց մասին իր տեսակէտը, բայց ատիկա չի փոխեր նկարագիրը հայոց, զորս մօտէն կը ճանչնաք ու կը սիրէք: «Հայերը ճանչնալու համար անհրաժեշտ է թափանցել մարդոց հոգեբանութեան մէջ եւ վերլուծել անոնց մղումները իրադարձութիւններու ընթացքին: Նպաստամատոյցը, վստահ ենք, իր շարքերուն մէջ

գտնէք, հանեցէք հասցէին ուղարկել:

Յարգանք
Տօք. Դաւիթեան

ունի բազմաթիւ այդպիսի միտքեր: Աւելցնեմ թէ մենք գիտակից ենք մեր թերութիւններուն, բայց չենք ուզեր որ մեր բարեմասնութիւններն անտեսուին» (ՊՏԴ, տրցակ 5, թղթապանակ Ծ4, Ծ987–Ծ990, անգլերէն մեքենագիր):

ՅԱՒԵԼՈՒԿԾ

Յակոբյան Ա.

Docteur Tavitian
17-rue Mekteb – 17
Pèra

Կոստանդնուպոլիս, 8 Հոկտմ. 1919

Յարգելի բարեկամ,

Ձեր անձնական կացության մասին գրածները կարդացի: Շատ լավ կ'ըմբռնեմ որ դժուարին վիճակ մը ստեղծուած է, թէ Ձեր առողջութիւնն ալ չի ներեր որ այդքան ծանրաբեռնուիք: Բայց խնդիրը այնքան կարեւոր [է] ու այնքան սրբազան, որուն առջեւ ամէն առարկութիւն կը լռէ,- եւ ես կատարելապէս փաշային համակարծիք եմ,- որ Ձեր ներկայութիւնը հող անհրաժեշտ ու անփոխարինելի է: Բիչ մ'ալ համբերենք: Բրօֆ. Հընդինկ-թընի անձամբ տուի փաշային ու Ձեր նամակը: Ըսաւ որ դասախօսութեան համար չէ այնչափ որչափ Ձեր départementի եւ Facultyի աշխատութեանց մէջ է որ Ձեր ներկայութեան պէտքը կը զգան եւ կարելի չէ միւս հայ ուսուցիչներէն սպասել այդ գործերը, մանաւանդ որ այս տարի աշակերտներու թիւը շատցած եւ կարծեմ հարիւրաւոր նոր աշակերտներ մերժել ստիպուեր են: Վերջապէս ես ալ բացատրեցի մեր տեսակէտը, Ձեր հետապնդած խնդրոյն կենսական կարեւորութիւնը ու Ձեր հող գտնուելուն անհրաժեշտութիւնը եւ այն որոշման յանգեցանք որ այս վեցամսեային ալ հող մնաք եւ եթէ փորձը ցցնէ որ կարելի է շարունակել այսպէս, այն ատեն նոր խորհրդակցութիւն մը պիտի ընենք: Ինքը թերահաւատ է. կ'ըսէ թէ խնդիրը կրնայ երկարիլ, նոր բարդութիւններ յառաջ գալ. յետոյ կ'ըսէ որ եթէ Ամերիկա ընդունի mandat, այն ատեն ալ Բրօֆ. Յակոբեանը մեր ձեռքէն առնելու վտանգներ կը ծագին: Ամերիկեան վարչութիւնը պիտի ուզէ որ Ձեզ նման խոհական ու փորձառու անձնաւորութիւններ գործին մէջ մտնան եւն: Վերջապէս, առ այժմ այս վեցամսեան ալ այսպէս պիտի անցունենք:

Ամերիկա մեկնելու մասին գրած էիք: Չեմ գիտեր թէ իրականացաւ այդ ծրագիրը: Արդարեւ յոգնեցուցիչ գործ մը պիտի ըլլայ: Բայց այս օրերս Գարտաշեանէն նամակ մը եկած է հոս Պատ. Գրիգորեանի որուն մէջ կ'ըսուի թէ Ամերիկայի մէջ կարելի եղեր է համաձայնութեան մը յանգիլ, Press Bureauն միացեր է Gerardi քօմիթէին եւ թէ Սըվազըն ալ համաձայներ է եւն.: Չեմ գիտեր խնդրոյն մանրամասնութիւնը, բայց եթէ այդ է հարցը, թերեւս գէշ աղէկ լուծման մը յանգած է եւ Ձեր ճամբորդութիւնն ալ աւել-

լորդ ըլլայ: Ամէն պարագայի մէջ մեզի տեղեակ կը պահէք անշուշտ:

Հոս իմ ալ վիճակս գոհացուցիչ ըլլալէ շատ հեռի է: Այս ազգային գործերը ժամանակիս մեծագոյն մասը գրաւած են եւ մեծ տաղտուկ ու պայքարներու տեղի կը տրուի: Գործին երկարաձգուիլը ամէնուս ալ հաշիւը տակն ու վրայ ըրաւ: Անձնական գործերս զանց ընելու ստիպուած եմ, ինչ որ շատ երկար ատեն ալ շարունակելու վիճակին մէջ չեմ նկատի առնելով կեանքի տարապայման սղութիւնը: Ձեզի պէս ես ալ կը համբերեմ խնդրոյն կարեւորութիւնը աչքի առջեւ ունենալով եւ միշտ այն յոյսով որ այլեւս շատ չպիտի երկարի մեր հարցին լուծումը: Այսպէսով գրեթէ տարի մըն է քաշքշուեցանք, մաղթենք որ այլեւս վերջաւորութեան մօտեցած ենք. այսինքն խնդրին վտանգաւոր շրջանը անցնելու մասին է խօսքս, եթէ ոչ դեռ երկար տարիներու աշխատութեան պէտք կայ:

... Ես այլեւս հիւանդանոց գացած չունիմ, փոխանորդ մը դրած եմ տեղս:

...

Յարգանք

Տօք. Դաւիթեան

ՊՏԴ, տրցակ 6, Զ105, հայերէն ձեռագիր

Յաւելում Բ.

Պատրիարքարան Հայոց
Կոստանդնուպոլիս
Քաղաքական Ժողով
Ազգ. Կեդրոնական Վարչութեան
Համար 473
Հեռաձայնի թիւ 1328

Կ. Պոլիս, 3 Դեկտմ. 1919

Ազնուաշուք Տօքթ. Գ. Դաւիթեան Էֆ.
Էւն Էւն Էւն

Քաղաքական Ժողովը նկատի առնելով Renaissance Հայկական Դատին տեսակէտով մատուցած կարեւոր ծառայութիւնը եւ նոյն թերթը վարող վարչական մարմնոյն լուծուած ըլլալը, որոշեց ուղղակի իր հսկողութեան տակ առնել անոր հրատարակութիւնը, որուն շարունակութիւնը ապահովելու համար կազմեց վարչական մարմին մը հետեւեալ անձնաւորութիւններէ.

Տեարք Գուրգէն ծովակեան
Տօքթ. Արեւեան
Արշակ Էսաեան
Թագւոր Սուքիասեան
Մկրտիչ Ֆրնէկեան

Արդ՝ կ'իմնդրենք Ձեր Ազնուութենէն որ իբրեւ անդամ Բրօքականտի Դիւանին, բարեհաճի հրաւիրել սոյն նորակազմ մարմինը ձեռնարկելու աշխատութեան առաջնորդութեամբ եւ աջակցութեամբ Պատ. Դիւանիդ:

Մնամք աղօթարար
Պատրիարք Հայոց Չաւէն Արքեպ.

ՊՏԹ, տրցակ 8, թղթապանակ MD6001_Խ, Խ78, հայերէն ձեռագիր

Յաւելում Գ.

20 Նոյեմբեր 1918

Ամենապատիւ Պատր. Փոխանորդ
Սրբազան Հայր,
ի Կ. Պօլիս

Ներփակեալ նամակէն կը տեղեկանաք որ մայրաքաղաքէդ եւս պէտք է ընտրուին պատուիրակներ ու դրկուին աստ՝ մասնակցելու համար ազգային հանրական արդի ամենակարեւոր խնդրոց կարգադրութեանն եւրոպական աշխարհի հետ:

Խնդրեմ յատկապէս փութացնել, զի գործը կարի ստիպողական է ու խնդիրը ամենափափուկ: Կը յաւելում որ եթէ կարելի չլլայ անմիջապէս այդ տեղէն անձինք ճամբայ հանել, կարող էք բնականաբար այժմ Եւրոպա գտնուող մեր ձեռնհաս ազգայիններէն ըստ արժանւոյն ընտրել, նշանակել ու մեզ ծանուցանել առանց ո՛ր էլ է յետաձգման, տալով անոնց իրաւունք ներկայացնելու Պօլսոյ հայութիւնը եւ ընելու կարեւորն գործակցելով Պատուիրակութեան:

Այս առթիւ կը փափաքինք ունենալ ի ձեռին ամէն կարգի ծանօթութիւն ու տեղեկութիւն մեր դժբաղդ տարագրելոց անցեալ ու արդի *վիճակին*, *թուոյն* եւ այլ զանազան պարագայիցը վրայ: Կը խնդրենք որ Ազգ. Պատրիարքարանդ շուտով պատրաստէ ու հասցնէ մեզ (ի պահանջել հարկին Ֆրանսայի դեսպանատան թղթատարի միջոցաւ) մի տեղեկագիր խնամօք պատրաստուած եւ առանց յապաղման:

Շնորհ ըրէ՛ք նաեւ յայտնել մեզ թէ մեր բարձրաստիճան եկեղեցականներէն որո՞նք դարձած են արդ Պօլիս եւ թէ Ձեզ վերադարձուեցան միթե՞ ազգային սեպհականութիւնք՝ որպէս Արմաշի վանք, Շիշլիի որբանոց, Սանասարեան Խանը, Քըտիվիալ պանդոկը եւայլն եւայլն, եւ այդ բռնաբարմանց առթիւ ո՛ր է Է փոխարինութիւն կամ վարձք տեղի ունեցա՞ւ Ազգ. Պատրիարքարանիդ: Անհրաժեշտ է մեզ հասցնել ցուցակներ ու ծանօթութիւնք այս ամէն խնդրոց վրայ, ինչպէս նաեւ թիւն Պոլսոյ եւ Զմիւռնիոյ հայոց:

Սպասելով Ձեր օրհնաբեր պատասխաններուն, մնամ որդիական խոնարհ յարգանօք

Գ. Նորատունկեան

ՊՏԴ, տրցակ 1, թղթապանակ MD150_2-L, 2705, հայերէն ձեռագիր:

Յառնուած Դ.

Կ. Պոլիս, 31 Դեկտ. 1918

Բարձրապատիւ Տէր Նախագահ
Հայկական Ազգային Պատուիրակութեան
Բարիզ

Ազգային Կեդրոնական Վարչութիւնը բաղկացած 1914ին սահմանադրապէս ընտրուած քաղաքական եւ կրօնական ժողովներէն, որոնք 1916ին, թուրք կառավարութեան կողմէ Հայոց Ազգային Սահմանադրութեան վերացման հետեւանքով պաշտօնէ քաշուելու հարկադրուած էին, 1918 Նոյեմբերին կրկին պաշտօնի գլուխ անցաւ այն սահմանադրութեան վերահաստատութեան առթիւ:

Բարիզի հայկական Ազգային Պատուիրակութեան կողմէ եղած հրաւերին վրայ, որով իբրեւ պոլսահայութեան ներկայացուցիչ երկու պատգամաւոր կ'ուզուէր կատարելի աշխատութեանց մասնակցելու համար.

Համախորհուրդ Ազգային Խորհրդակցական Ժողովին հետ որ 1918 Նոյեմբերին կազմուեցաւ երեք հայ յարանուանութիւններէ, չորս հայ քաղաքական կուսակցութիւններէ, ազգ. երեսփոխանական ժողովի խմբակցութիւններէն, հայ մամուլէն, հայ առեւտրական դասէն եւ զանազան կազմակերպութիւններէ -ինչպէս Բարեգործական, Միացեալ, Հայ Բժշկական Միութիւն, Հայ Ուսուցչական Միութիւն եւն- հրաւիրուած երեսուն ներկայացուցիչներէ, ազգային կարեւոր խնդիրներու -ինչպէս յարաբերական գործ, բրոքականտի աշխատանք, փաստաթուղթերու պատրաստութիւն, տարագրեալներու եւ որբերու խնամարկութիւն եւն- մասին ընդհանուր ուղղութիւն գծելու պաշտօնով, եւ նաեւ համաձայն սոյն խորհրդակցական ժողովի իրաւասու յանձնաժողովներուն -յարաբերական եւ բրոքականտի- մաս կազմող 13 անդամներու միաձայն քուէին, թէ պոլսահայութեան եւ թէ թուրք տիրապետութեան տակ ու ներկայիս թուրք սահմաններու մէջ մնացած հայութեան ձայնը ներկայացնելու իրաւասութեամբ, կը նշանակէ պատուիրակութիւն մը բաղկացած նախորդ Պատրիարք եւ Կրօն. Ժողովի այժմու ատենապետ Ամեն. Եղիշէ Արք. Դուրեանէ, նախորդ Քաղաքական Ժողովի Բ. ատենապետ, Ազգ. Երեսփի. Ժողովի Ա. Ատենադպիր եւ ներկայիս խորհրդակցական ժողովի Ա. Ատենապետ Բրօֆ. Աբրահամ Տէր Յակոբեանէ, եւ նախորդ ազգային

երեսփոխան ու ներկայ խորհրդակցական ժողովի անդամներին Տոք. Արմենակ Բարսեղեանէ, առաջին երկուքը իբրեւ լիազօր պատուիրակ, իսկ երրորդը իբրեւ խորհրդական որ միեւնոյն ատեն իրաւասութիւն ունի ի բացակայութեան պատուիրակներէն միոյն իբրեւ պատուիրակ ալ ներկայանալու, իրաւասութիւն տալով անոնց պահանջելու առ որ անկ է.

1.- Ինքնավար (autonom) անկախ (indépendant) եւ միացեալ Հայաստան, իր մէջ պարունակելու պայմանաւ Թրքահայաստանը Կիլիկիայով միասին, Ռուսահայաստանը եւ Պարսկահայաստանը:

2.- Հայոց կողմէ պաշտօնական ներկայացուցիչ հաշտութեան համաժողովին մէջ:

3.- Կազմութիւն առժամեայ հայկական կառավարութեան իբրեւ արտայայտիչ հանուր հայութեան ձայնին:

4.- Ճանաչում առժամեայ հայկական կառավարութեան իբրեւ պատերազմիկ եւ դաշնակից պետութիւն:

5.- Մուտք Հայաստանի ապագայ ազգերու դաշնակցութեան մէջ:

6.- Բացարձակ անջատում հայութեան ճակատագրին ամէն թրքական կապէ: Մերժում որևէ քաղաքական կամ կրօնական առնչութեան թուրք կառավարութեան եւ Հայաստանի սահմաններուն մէջ մնացած իսլամներու միջեւ:

7.- Ծովեզերքներ Սեւ ծովի եւ Միջերկրականի վրայ իբրեւ անհրաժեշտութիւն Հայաստանի գոյութեան եւ յարատեւութեան համար:

8.- Կարելի եղածին չափ ջանալ խուսափիլ որեւէ օտար տեւական թելարկութենէ ապագայ Հայաստանի վրայ:

9.- Ապահովում կարելի եղածին չափ լայն սահմանի մէջ համաձայնական պետութեանց տնտեսական օժանդակութեան ապագայ Հայաստանին:

10.- Անմիջական պարպում թուրքերու ձեռք մնացած հայ հողամասերուն եւ համաձայնական իշխանութեանց օժանդակութեամբ ապահովութեան պահպանման համար անհրաժեշտ միջոցներու ստեղծում, ինչպէս նաեւ դիրքութիւններ ընծայել տարագրավայրերու, գաղութներու կամ թրքական լուծին տակ մնացած վայրերու Հայութեան դէպի Հայաստան մեկնում[ի]:

11.- Համաձայնութիւն Թուրքիոյ ոչ իսլամ տարրերու ղեկավար շրջանակներու հետ քաղաքական փոխադարձ զիջումներու հիման վրայ:

12.- Բացարձակ մերժում բլեպիսիթի [= հանրաքուէի] սկզբունքներուն

Հայաստանի նկատմամբ կիրառման:

13.- Մերժում Թուրքիոյ հանրային պարտքէն Հայաստանի անցած նահանգներու վրայ ինկած որեւէ բաժին[ի]. անկարելիութեան պարագային մերժել մասնակցի այն պարտքերուն որոնք վերջին պատերազմի թուականէն սկսած են:

14.- Քաբիթիլասիոններէ [= անձնատրութիւններէ] օգտուելու իրաւունք Թուրքիոյ հողամասերուն մէջ մնացած հայ հպատակներու:

15.- Հայ մարտիրոսագրութեան թելադրիչներուն, կազմակերպիչներուն եւ հեղինակներուն համար դատաստան համաձայնական լիազօրատեաններու առջեւ, վճիռներու գործադրութիւնն ալ վերապահելով նոյն այդ համաձայնական պետութեանց:

16.- Անդամատեալ Թուրքիոյ զանազան կողմերը գտնուող հայերը Հայաստանի բնիկ (originare) համարուին եւ ըստ այնմ անոնց հաւաքական հպատակափոխութիւնը (nationalisation collective) հաշտութեան դաշնագրին մասնաւոր մէկ տրամադրութիւնը կազմէ: Արտասահման գտնուող թրքահպատակ հայերը Հայաստանի անկախութեան հռչակմամբ ինքնին հայ պետութեան հպատակութիւնը կ'ստանան:

17.- Հայկական հարստահարութիւնները թուրք կառավարութեան գործը ըլլալով, թուրք պետութիւնը ստիպուած է հայոց անհատական կորուստները -նիթական թէ մարդկային- հատուցանել: Հատուցուելիք ամբողջական գումարը կ'որոշուի միջազգային յանձնաժողովի մը կողմէ եւ հայկական կառավարութիւնը ինք կ'ստանձնէ իւրաքանչիւր հայ անհատի ենթարկուած վնասները ճշդել եւ նոյն գումարէն վճարել:

18.- Հայկական Նահանգներու մէջ գտնուած էվգաֆի [= իսլամական բարենպատակ հաստատութիւններու] շարժուն եւ անշարժ հարստութիւնը հայկական կառավարութեան կը փոխանցուի իբր փոխարինութիւն նոյն նահանգներու հայ հասարակութեան ենթարկուած վնասներուն - եկեղեցի, վարժարան, վանք եւն:

19.- Որբերու եւ առեւանգուածներու պրպտումին եւ վերադարձումին համար գործօն միջամտութիւն համաձայնական պետութեանց:

20.- Հին եւ նոր իսլամացած Հայերու կարելի ընել վերադառնալ իրենց մայրենի եկեղեցին ապահով պայմաններու մէջ, եւ համաձայնական պետութեանց գործօն միջամտութեամբ:

Պատուիրակութիւնը լիազօրուած է, սակայն, ի հարկին մեծամասնութեան կողմէ հարկ դատուած զիջումներուն համակերպելու:

Մնամք երախտագիտական անկեղծ զգացումներով եւ սրտագին
Բարեմադրութիւններով,

Ի դիմաց Ազգային Կեդրոնական Վարչութեան
Ատենապետ Քաղ. Ժողովոյ
Ատենապետ Կրօն. Ժողովոյ

Յաւելուած

21.- Իսլամացած հայեր[ու] իրենց մայրենի եկեղեցիին վերադարձը
կարելի ընելու համար, հաշտութեան դաշնագրին մէջ մասնաւոր յօդուած
մը դնել տալու ջանալ:

22.- Իսլամի հետ ամուսնացած հայուհիները, եթէ չվերադառնան
իրենց մայրենի եկեղեցւոյն գիրկը, չեն կրնար իրենց մեռած կամ սպան-
նուած ծնողացը ժառանգորդները համարուիլ:

ՊՏԴ, տրցակ 6, թղթապանակ MD1000, Հ484-Հ486, հայերէն մեքենագիր

Յառնում Ե.

Պատրիարքարան Հայոց
Տեղեկատու Դիւան

Կ. Պոլիս, 13 Յուլիս 1920

Ամենապատիւ

Տ.Տ. Չաւէն Արքեպս. Տ. Եղիանան

Պատրիարք Հայոց եւ Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Աստ

Քաղաքական Ժողովին նոր ընտրութեան առթիւ հարկ կը համարիմ Ձեր Ամենապատուութեան ներկայացնել Տեղեկատու Դիւանի գործունէութեան մէկ համառօտ պատկերը եւ նախորդ Քաղաքական Ժողովին կողմէ դիւանին տրամադրուած վարկին գործածութեան եղանակը:

Ինչպէս յայտնի է Ձեր Բարձր Սրբազնութեան՝ նախորդ Քաղ. Ժողովը որոշեց կազմակերպել 1919 Օգոստոս ամսուան ընթացքին դիւան մը Տեղեկատու անուան տակ: Նախորդ Քաղ. Ժողովը, ինչպէս յայտնի է Ձեր Սրբազնութեան, խմբագրած էր նաեւ այս դիւանին համար յատուկ կանոնադրութիւն մը (օրինակը յարակից կը գտնէք), որմէ որոշապէս կը տեսնուի թէ՛ այս դիւանը որքան ընդարձակ սահման մը ունէր՝ իրեն գործունէութեան համար: Իրականութեան մէջ այդ դիւանը Տեղեկատու Դիւան մը չէր, այլ նաեւ՝ քաղաքական:

Այստեսակ կազմակերպութեան մը կարելորութիւնը եւ պէտքը զգալի եղած էր Չինադադարի յաջորդող առաջին օրերուն իսկ, վասնզի Համաձայնական իշխանութեանց հետ անհրաժեշտաբար ստեղծուեցան այնպիսի յարաբերութիւններ, որոնք նախապէս Օսմ. Իշխանութեանց [հետ] կը կատարուէին: Պատրիարքարանը Բ. Դրան հետ իր յարաբերութիւններուն համար ունեցած է վաղուց ի վեր արդէն դիւան մը, որ Յարաբերական Դիւան անունով ճանչցուած է: Հոն էր որ կը խմբագրուէին Բ. Դրան ուղղուած թագրիրները եւ այլ գրութիւնները: Չինադադարէն յետոյ քանի որ նոյնքան կարելոր էր դիմումներ կատարել Համաձայնական իշխանութեանց, որոնք երկրին իսկական վարիչները դարձած էին, բնական էր որ այդ գործառնութիւնները կանոնաւորութեան մը ենթարկուելու պէտք մը կը ներկայանար:

Քաղ. Ժողովը այնպէս փորձառաբար համոզում գոյացուց թէ անհրաժեշտ պէտք կար դիւանի մը, ուր կեդրոնանային քաղաքական բնոյթ

ունեցող դիմումները եւ բոլոր այն վաւերագիրները ու տեղեկութիւնները, որոնք ազգին անցեալ ու ներկայ վիճակը պատկերացնելու եւ պատերազմին պատճառով հայոց մարդկային ու նիւթական կորուստները երեւան հանելու կը ծառայէին:

Այս տեսակ դիւանի մը պէտքը մանաւանդ անոր համար կարեւոր դարձաւ որ շատ մը մարմիններ առանց Ազգ. իշխանութիւններու տեղեկութիւն տալու ինքնազուիս տեղեկութիւններ կը հայթայթէին, որոնք յետոյ կը հերքուէին ուրիշ աղբիւրներէ, կամ երկրորդ անգամ եղած հարցումի մը առաջինին անհամապատասխան պատասխան մը կը տրուէր:

Այս անպատեհութեանց առաջքը կրնար առնուիլ Տեղեկատու Դիւանին հաստատութեամբ հակակշիռի եւ արձանագրութեան տակ առնուելով ամէն տեղեկատուութիւն եւ ծանօթագրութիւն եւ գործառնութեանց մէջ մտցնելով կանոնաւորութիւն եւ կարգաւորութիւն:

Վարչութիւնը դիւանին կազմութեան սկզբունքը ընդունելէ յետոյ ջանաց կազմակերպել պաշտօնէութիւնը: Նկատի առնելով դիւանի հանգամանքները, իր տեսակէտով յարմար դատուեցաւ հոն քարտուղարութեան կոչել մէկը որ քիչ շատ ծանօթ ըլլար ոչ միայն ազգային կեանքի, այլ նաեւ բոլոր հայկական կեանքին անցեալ եւ ներկայ անցուդարձերուն, ազգին պատմութեան ու գրականութեան: Այս տեսակէտով յարմարագոյն նկատուեցաւ Պ. Արշակ Ալպոյաճեան, որ հայերէն բաժինը պիտի ստանձնէր:

Իսկ ֆրանսերէն թուղթերու խմբագրութիւնը՝ նախ Պատրիարքարանի ֆրանսերէնի քարտուղար Պ. Ա. Նաւարեանի յանձնուեցաւ, սակայն յետոյ յատուկ պաշտօնեայ մը առնել հարկ դատուեցաւ եւ այս պաշտօնին կոչուեցաւ Տիրան պէյ Լուսարար, որ Դեկտեմբերի վերջերը ստանձնեց այս պաշտօնը:

Դիւանին կազմութենէն առաջ ֆրանսերէն թղթակցութեանց համար արդէն կար մեքենագրութեան վարժ օրիորդ մը՝ Օր. Մելինէ Պարտիզպանեան, որ Տեղեկատու Դիւանին կազմութենէն յետոյ հոն փոխադրուեցաւ:

Հոկտեմբեր ամսուան մէջ էր որ դիւանի համար հարկ դատուեցաւ ունենալ մէկ սենեկապան եւ մէկ ընթօրինակիչ: Ընթօրինակիչի պաշտօնին կոչուեցաւ Օր. Զապէլ Ծիրինեան, որ երբ Օր. Պարտիզպանեան հրաժարեցաւ, անոր տեղ բռնեց ու իր տեղը առնուեցաւ Պ. Թորոս Ազատեան:

Դիւանը իր իսկական կազմակերպութիւնը եւ գործունէութիւնը կը ստանար իրապէս Դեկտեմբերի սկիզբէն, որ ատեն էր որ արդէն Քաղ. Ժողովը յատուկ վարկ կը սահմանէր դիւանին, որ մինչեւ այն ատեն Պատրիարքարանի պիտոճէին կը մատակարարուէր:

Առաջին երեք ամիսներէն մին՝ Օգոստոսը, գրեթէ նախնական կազմակերպութեանց ժամանակամիջոց մը եղաւ: Դիւանին յատուկ տեղ մը գտնելու աշխատութիւնը բաւական ժամանակ առաւ: Վերջապէս կարելի եղաւ Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցիին շուրջը գտնել երկու յարմար սենեակներ, որոնց անհրաժեշտ նորոգութեանց, լուսաւորութեան եւ այլ պէտքերը լրացնելէ յետոյ պաշտօնէութիւնը հոն փոխադրուեցաւ եւ յաջորդ երկու ամիսներուն մէջ կազմակերպուեցան աշխատութիւնները:

Այդ աշխատութիւնները երկու մասի կը բաժնուին:

Ա. Ընթացիկ եւ առօրեայ գործեր, որոնք անյետաձգելի են, եւ

Բ. Մնայուն ու տեւական աշխատութիւններ, որոնք հաւաքումի եւ պրպտումներու կը կարօտին եւ մէկ օրէն միւսը երեւան չեն կրնար հանուիլ:

Դժբաղդաբար երկրին յարափո[փո]խ վիճակը եւ տեւական խաղաղութիւն մը հաստատուած չլլալը, շարունակ ամէն օր նորանոր տագնապներ ծագիլը, անոնց համար օրը օրին տեղեկութիւններ Համաձայնական իշխանութեանց հասցնելու անհրաժեշտութիւնը եւ միշտ անոնց ուշադրութեան զանազան ազգային եւ մասնաւոր խնդիրներ ներկայացնելու պէտքը, որոնք անյետաձգելի էին, մեծագոյն մասը գրաւեցին դիւանին աշխատութեանց, որ եթէ շարունակ Համաձայնական իշխանութեանց մօտ անարդարութեանց, ոճիրներու եւ ապօրինութեանց դէմ գրաւոր բողոքներ խմբագրելու հարկադրուած չլլար, ապահովաբար այսօր աւելի շատ բան կարելի պիտի ըլլար ներկայացնել իբր մնայուն արդիւնք:

Այս առօրեայ ընթացիկ գործերու կարգին պէտք է յիշել թէ բաւական կարեւոր տեղ մը կը գրաւեն թարգմանութիւնները այն բոլոր նամակներուն, որոնք Պատրիարքարանը կը ստանայ գաւառներէն եւ որոնք կը պարունակեն այնպիսի տեղեկութիւններ, որ կապ ունին երկրին քաղաքական կացութեան եւ ապահովութեան հարցին հետ:

Այս թղթակցութիւնները սովորաբար մատնանիշ կ'ընեն թուրք կառավարութեան եւ ժողովուրդին՝ հայ ազգի բեկորներուն նկատմամբ բռնած դիրքը եւ գործադրած չարիքները: Այս տեղեկատուութիւնները, որոնցմով կը շահագրգռուին Դաշնակիցները, իրապէս իրենց օգուտը ունեցան տեղ տեղ չարիքը արգիլելու եւ երբեմն թուրք կառավարութենէն ստանալու համար հայ որբեր, հարեմներու մէջ բանտարկուած կիներ, բռնագրաւուած ազգային կալուածներ եւայլ[ն]: Այս տեղեկատուութիւնները, որոնք խմբագրուած եւ ցրու[ու]ած են բոլոր Դաշնակից ներկայացուցիչներուն, երկու գլխաւոր բաժանում ունին: Ա. Քաղաքական Տեղեկագիրներ՝ որոնց թիւը մինչեւ ցարդ հասած է 292ի եւ Բ. Հարստահարական եւ այլ Տեղեկա-

գիրներ՝ որոնց թիւը հասած է ցարդ 287ի:

Այս տեղեկատուութիւնները մեծ ուշադրութեամբ նկատի կ'առնուին մասնաւորապէս Անգլ. Դեսպանատան մէջ Հայ եւ Յոյն ազգերու խնդիրները քննելու համար կազմուած յանձնաժողովին (A.G.S.) մէջ, ուր իբր Պատրիարքարանի ներկայացուցիչ կարծեաց փոխանակութիւններ կը կատարենք նաեւ ընդի. կերպով ազգը շահագրգռող հարցերու մասին, շարթական նիստերու մէջ, որոնց կանոնաւորապէս ներկայ գտնուիլ պարտք համարած ենք: Տեղեկագրիս յարակից պիտի գտնէք այս ժողովին քառասուն եւ մէկ նիստերուն ատենագրութիւնները, որոնք որոշ գաղափար մը կրնան տալ այս ժողովին գործառնութեանց վրայ:

Քաղաքական ընթացիկ այս յարաբերութեանց կարգին պէտք է յիշել նաեւ Բարիզի Ազգ. Պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետական կառավարութեան եւ իր ներկայացուցիչներուն հետ Պատրիարքարանի յարաբերութիւնները, որոնք Տեղեկատու Դիւանի միջոցաւ կը կատարուին սովորաբար, մանաւանդ անոնք որոնք քաղաքական հանգամանք ունին:

Նոյնպէս դիւանին առօրեայ աշխատութեանց մէկ մասը կը կազմէ այն աշխատութիւնը, որ տալու պարտաւորուած են դիւանին պաշտօնեաները դիւանը դնելու համար այնպիսի վիճակի մը մէջ, որ անիկա կարենայ տալ Եւրոպական եւ Ազգային մարմիններու կողմէ պահանջուած վիճակագրական տեղեկութիւնները եւ անցեալի վերաբերեալ լուսաբանութիւնները:

Դժբաղդաբար այս մասին ասկէ առաջ Պատրիարքարանի մէջ յատուկ դիւան մը գոյութիւն չէ ունեցած, ինչ որ շատ դիւրին էր այն ատեն եւ կրնար լայն ու յաջող ժամանակներու մէջ մեծ կատարելութեան հասած ըլլալ, տարիներու ընթացքին ամէն թեմի յատուկ մանրամասն տեղեկութիւններ հաւաքելով եւ դասաւորելով:

Հիմա, ընդհակառակը, երբ ջարդեր եւ աւերներ պատահած են եւ բազմաթիւ վաւերագիրներ ու յիշատակարաններ ջնջուած են, հապճեպով պարտաւորուած ենք ձեռք բերել տեղեկութիւններ, որոնք արդէն ժամանակի ընթացքին մէջ կազմուած պէտք էին ըլլալ եւ չէին կազմուած դժբաղդաբար:

Միեւնոյն վիճակը ունի նաեւ Պատրիարքարանի *արշիւր*, որ շարունակ տեղահանուած ըլլալով խանգարուած է եւ խառնակ վիճակ մը ունի: Անոր կազմակերպութենէն Տեղեկատու Դիւանը կրնայ մեծապէս օգտուիլ: Այս նպատակաւ թէն որոշուած էր Պատրիարքարանի բոլոր թուղթերը ցուցակագրելու, դասաւորելու եւ անոնցմէ կազմելու թղթածրարներ, մասնաւորապէս այն խնդիրներու համար, որոնք այժմէական պատմական կամ

ազգային տեսակետով կարեւորութիւն մը ունին. սակայն Քաղ. Ժողովի այս որոշումը դեռ անգործադրելի կը մնայ, որովհետեւ այս գործին համար յատուկ պաշտօնեայ մը պետք էր եւ դեռ չէ անուանուած: Ասով հանդերձ, իբր առօրեայ եւ ընթացիկ գործ՝ Տեղեկատու Դիւանի մէջ միշտ ջանքեր կ'ըլլան ամփոփելու եւ դասաւորելու վաւերագրեր եւ փաստեր: Անոնք կը ներկայացնեն հոլմ ատաղձներ, որոնք կրնան օգտագործուիլ ապագային մաս առ մաս:

Գաղափար մը տալու համար թէ ի՛նչպէս ամէն բան նորէն եւ ոչինչէն կը ստեղծուի՝ ըսենք թէ Պատրիարքարանի մէջ նոյնիսկ պաշտօնական հրատարակութեանց դասաւորուած հաւաքածոյ մը չկար, բացի Ազգ. Ժողովի Ատենագրութեանց հաւաքածոյէ մը:

Այս պակասը լրացնելու մտադրութեամբ արդէն ասկէ անկէ Պատրիարքարանի դիւանէն եւ մասնաւորներէ հաւաքելով կազմած ու դասաւորած ենք Պատրիարքարանի եւ ազգային այլ մարմիններու կողմէ տպագրել բոլոր տեղեկագիրները, ինչպէս Քաղ. Եւ Կրօնական Ժողովներու, Տեսուչ Խորհուրդներու եւ հոգաբարձութեանց համարատուութիւնները, Ազգ. Ժողովի կողմէ կազմուած օրէնքները եւ կանոնագիրները, վարչական հրահանգները, ընկերութեանց կանոնագիրքերը եւ տեղեկագիրները, ազգային եւ մասնաւոր վարժարաններու ծրագիրները եւ տարեկան տեղեկագիրները, վիճակագրական տեղեկութիւններ, նպաստամատոյց մարմիններու համարատուութիւններ եւայլն, որոնք իրենց մէջ կը պարունակեն շատ հետաքրքրական տեղեկութիւններ եւ ծանօթութիւններ: Անոնց մէջ կան կատարուած աշխատութիւններ, որոնք յետոյ փոխանակ աւելի ընդարձակուելու եւ կատարելագործուելու, ուրիշներ նորէն ծայրէն սկսած են, առանց անդրադառնալու կատարուած նախորդ աշխատութեան վրայ:

Այս հաւաքման պահուն իսկ տեսնուեցան, օրինակի համար, ձեռնարկներ, որոնք այսօր իսկ իբր ստիպողական եւ անհրաժեշտ կը փնտռուին, կամ նորէն ընել կը ծրագրուին, մինչ արդէն մասամբ կատարուած են եւ այսօր միայն զանոնք լրացնել պիտի բաւէր:

Ճիշդ այս մտածումով կը կարծենք եւ գրեթէ վստահաբար կը հաւատանք թէ Պատրիարքարանի թուղթերուն մէջ ապահովաբար գոյութիւն ունին նաեւ նոյնքան շահագրգռական եւ արժէքաւոր աշխատութիւններ, որոնցմէ կարելի է օգուտ քաղել, եթէ անոնք հաւաքուին եւ դասաւորուին, եւ որ այսօր անօգուտ կերպով կը մնան նկուղներու մէջ ձեռագիր եւ օր մը թերեւս փճանալու դատապարտուած վիճակի մէջ:

Եթէ դիւանին տրամադրութեան տակ գտնուէին պատրաստ ճոխ

աղբիւրներ, բնական է որ անելի կը դիւրանա[յին] գործերը, մինչդեռ ինչպէս տեսնուեցաւ, դիւանին մէջ թէ՛ աղբիւրները հաւաքելու եւ թէ՛ զանոնք օգտագործելու կրկին աշխատութիւնները ի միասին կը կատարուին:

Մասնաւորապէս, այս տեսակէտով դիւանին համար նպաստաւոր պատեհութիւն մը եղան երկու հայ բանասէրներու եւ գլխաւոր մատենահաւաքներու գիրքերուն շատ ճոխ մէկ մթերքին իբր ականդ դիւանիս տրամադրուած ըլլալը:

Այսպէս, այսօր Հրանդ Էֆենտի Ասատուրի գիրքերուն մէկ մասը եւ Տիար Թեղիկի ճոխ մատենադարանը (մօտաւորապէս 7000 օրինակ) մեր դիւանին մէջ կը գտնուին իբր ականդ եւ այդ գիրքերէն, որոնք կը ներկայացնեն ընտրեալագոյն հաւաքածոները, այսօր դիւանին պաշտօնէութիւնը կ'օգտուի իր աշխատութեանց մէջ, եւ գոնէ գիրքի համար ասդին անդին դիմումներ ընելու հարկէն ազատ կը մնայ:

Տեղեկատու Դիւանի մէջ կատարուած բոլոր այս առօրեայ աշխատութեանց բուն դիտումը՝ որքան ընթացիկ գործերը նոյնքան ազգային ընդհանուր եւ մասնաւոր շահերուն հետապնդութիւնն ու հայ ազգին շահերը պաշտպանելու հարցն է:

Այս մասին դրուած աշխատութիւնները, որոնք մասնաւորութիւններէ վեր կը բարձրանան, ունին մնայուն հանգամանք եւ միայն օրուան նշանակութիւն չունին:

Այս կարգի գործերու մէջ իմ տեսակէտովս առաջին կարգի կարեւորութիւն ունի[ն] գաւառներու *վիճակագրական պատմական նկարագիրները*, որոնք դիւանիս կազմութեան օրէն մեր ուշադրութեան գլխաւոր առարկան եղան:

Այս տեսակէտով հետամուտ եղանք 1878–80 թուականներուն Ներսէս Վարժապետեան Պատրիարքի օրով վարչութեան կողմէ գաւառները դրկուած քննիչներու տեղեկագիրները, ինչպէս նաեւ 1913ին Բարենորոգմանց առթիւ Պատրիարքարանի հրահանգով առաջնորդարաններու կազմած վիճակագրութիւնները հաւաքել եւ դասաւորել եւ անոնց կցել որքան կարելի է զանազան տեղեր տեսնուած այս կարգի տեղեկութիւնները:

Նոյնպէս դիւանին կազմութենէն քիչ յետոյ բոլոր գաւառական առաջնորդութեանց տպագրեալ տախտակներ եւ հարցարաններ դրկուեցան. այս հարցումներուն պատասխանեցին շատ մը թեմեր, որոնք դիւրութիւն ունէին:

Այս տեղեկութիւնները՝ միանալով նախորդ տեղեկութիւններուն, կը կազմեն բաւական ճոխ ատաղձ մը:

Այս կերպով իւրաքանչիւր Առաջնորդութեան մէջ բնակող հայեր[ու] պատմական անցեալին եւ հոն հաստատուելուն վրայ ընդհանուր տեղեկութիւններ, ինչպէս նաեւ Առաջնորդութեան թեմագրութեան, այսինքն երբեմնի եւ այսօրուան ընդարձակութեան վրայ ծանօթութիւններ, բնակչութեան թիւին ըստ զանազան թուականներու եւ ըստ զանազան աղբիւրներու ունեցած ելեւէջներուն վրայ գաղափար կ'ունենանք:

Այս կարգին կը ծանօթանանք բնակչութեան քաղաքակրթական վիճակին, իրենց եկեղեցիներու եւ դպրոցներու թուին ու վիճակին, տեղահանութեան -այդ առաջադրութեան- մէջ գործադրութեան եղանակին, այս առթիւ ժողովուրդին կրած նիւթական կորուստին, թուրք կառավարութեան կողմէ հայոց տնտեսական փնացման համար ձեռք առնուած միջոցներուն, *Էմիսքը Մէթրութէի* (Լքեալ Գոյքեր) կազմակերպութեան գործունէութեան եւ մասնաւորապէս անձի եւ ստացուածքի կորուստներուն, բռնի կրօնափոխութեանց քանակին, երկիրը թրքացնելու եւ իսլամացնելու համար կառավարութեան ձեռք առած միջոցներուն, ինչպէս նաեւ Չինադադարէն յետոյ դարձեալ հայոց ցոյց տուած կենսունակութեան, իրենց հարստութիւնները՝ ինչպէս եկեղեցիները, դպրոցները եւ կրթական եւ Աղքատախնամ մարմինները վերակազմելու համար ցոյց տուած ջանքերուն:

Իւրաքանչիւր առաջնորդութեան պիտի կցուի նաեւ թեմին քարտէսն ըստ եկեղեցական թեմագրութեան:

Այս տեսակ աշխատութիւն մը շահեկան վաւերագիր մը պիտի ըլլայ եւ գեղեցիկ առաջնորդ մը բոլոր անոնց որոնք հայոց վիճակով կը շահագրգռուին եւ կը հետաքրքրուին:

Այս աշխատութիւնը՝ թէեւ շատ դժուար իրագործելի եւ թերեւս շատ երկար ժամանակի կարօտ, արդէն Տեղեկատու Դիւանը ձեռնարկած է:

Դիւանին մէջ, ո՛չ միայն այս մասին անհրաժեշտ համարուած տեղեկութիւնները կը հաւաքուին եւ իւրաքանչիւր Վիճակի պատկանող գիրերը մէկ մէկ *տօսիլէ* կը կազմեն, այլ նոյնիսկ այդ աղբիւրները կը վերամշակուին:

Առայժմ բաւականաչափ տեղեկութիւններ ձեռք բերուած են Գապթեմունիի, Իզմիրի, Պալքէսիի եւ Պանտրմայի, Պրուսայի, Նիկոմիդիոյ, Ակնայ, Արաբկիրի, Գոնիայի, Զէօթահիայի, Ռօտոսթոյի, Մարգուանի առաջնորդութեանց վրայ:

Այս հում ատաղձներէն Գապթեմունիի վերաբերեալները վերամշակուած են եւ մօտ օրէն կ'աւարտին Պրուսայի, Պալքէսի-Պանտրմայի եւ Նիկոմիդիոյ երեք դրացի եւ անցեալին մէջ յաճախ յարակից Վիճակներուն նիւթերուն վերամշակումը:

Ծրագրում էր այս երեք վիճակներու մասին գրուածը մէկ հատորի մէջ ամփոփուած հրատարակել, որոշ գաղափար մը տալու համար այս գործին կարելորութեան վրայ:

Այս գործը ժամանակի ընթացքին մէջ հետզհետէ կատարելագործուելով կրնայ ստանալ առաջնակարգ կարելորութիւն մը:

Միեւնոյն ատեն այն ծրագրին իրագործումը գեղեցիկ առիթ մը կրնայ ըլլալ *քրօպականտի* անսուտ վկայագիրներու վրայ երեւան հանելով այնպիսի իրողութիւններ, որոնք անձանօթ կը մնան շատերու կամ փաստերու չգոյութեան պատճառով ուրացումի առարկայ կ'ըլլան:

Տեղեկատու Դիւանը ասկէ զատ աչքի առջեւ ունի կարգ մը ուրիշ հրատարակութիւններ, զանազան նպատակներով եւ առաջադրութիւններով, որոնցմէ ոմանք արդէն երեւան հանուած են եւ այլք հետզհետէ երեւան պիտի գա[ն]:

Ա. Օտարներու Հայաստանի մասին տնտեսական շահագրգռութիւնը արթնցնելու տեսակէտով ամենաշահեկան աշխատութիւն մը կրցանք երեւան հանել բազմագրութեամբ 50–60 օրինակի վերածելով այս գեղեցիկ աշխատութիւնը, զոր գիւղատնտեսական միութիւնը՝ մասնաւորապէս Տիար Կ. Նուրեանի աշխատութեամբ պատրաստած էր, Հայաստանի մասին Զօր. Հարպըրտի յանձնարարութեան վրայ:

Այդ աշխատութիւնը, որ խիստ խնամեալ եւ խղճամիտ գործ մըն էր եւ վեր կը հանէր Հայաստանի արժէքը տնտեսապէս, անոր հողային կազմը, ջրագրութիւնը, բուսական, կենդանական եւ հանքային հարստութիւնը, թէեւ կ'արժէր որ տպագրուէր, սակայն իբր տպագրական ծախք 800–900 Լ.Օ. պահանջուած ըլլալով, բազմագրուեցաւ եւ կարելոր հաստատութեանց եւ անձերու բաժնուեցաւ:

Բ. Հայ ցեղին ընդունակութիւնները եւ կարողութիւնները ներկայացնելու համար, անհրաժեշտ է ցոյց տալ թէ իրապէս հայն Արեւելքի մէջ քաղաքակրթութեան ռահվիրայ մը եղած է. ուստի, Տեղեկատու Դիւանը ծրագրած է հրատարակել այս իրողութիւնը շեշտող կարգ մը տետրակներ: Արդէն տպագրուած է այս շարքին թիւ 1 հատորը, որ ցոյց կուտայ այն մոլեգին սէրը զոր հայը ունեցած է տպագրութեան արուեստին զարգացման եւ տարածման համար: Հոն կը տեսնուի թէ հայը ինչպէս իրեն բնականից բոլոր ցեղերը գրեթէ անխտիր կանխած է այդ արուեստը ընդգրկելու գործին մէջ:

Այս շարքին մէջ պիտի մտնեն հետզհետէ ուրիշ տետրակներ: Առ ձեռս ունինք պատրաստութեան մէջ հայ թատրոնին վրայ ուսումնասիրութիւն մը մասնագէտէ մը պատրաստուած եւ դեռ ծրագրական վիճակի մէջ կը

մնան կարգ մը աշխատություններ, որոնք հետզհետեւ լոյս պիտի տեսնեն:

Գ. Հայկական կոտորածներու վերաբերեալ վաւերագիրներ:

Անհաւատալի վայրագությունը կատարուած ջարդերուն եւ կոտորածներուն, տեղահանութեան, թալանի եւայլն պէս արարքներու շատ մը եւրոպացւոց համար առեղծուած մը կը համարուի: Ուստի հարկ է հրատարակութեամբ անոնց ծանօթացնել գործադրուած խժոժությունները:

Այս շարքին առաջին տետրակը՝ Կեսարիոյ Պատերազմական Ատեանի գործունէութեան մասին, գրուած Մարգպետի կողմէ, եւ Տիարպէքիի ջարդին մանրամասն նկարագիրը՝ 3–4 ականատես անձերու գրուածներէն քաղուած, արդէն հրատարակուած են: Իսկ ձեռագիր վիճակի մէջ պատրաստ է տպագրութեան համար «*Գողգոթա Թորահայ Հոգեւորականութեան Աղէտակի 1915 Տարիին*» խորագրով երեք հատորներէ բաղկացեալ աշխատությունը զոր Պատրիարքարանի յանձնարարութեամբ պատրաստած է ծանօթ բանասէր Պ. Թէոդիկ:

Այս աշխատությունը՝ որուն պատրաստութեան մէջ պզտիկ բաժին մըն ալ Տեղեկատու Դիւանը ունի, իր աղբիւրները եւ ծանօթությունները տրամադրած ըլլալով հեղինակին, կատարուեցաւ Հայկական Հանրապետութեան Բարիգի պատուիրակութեան պետ Պ. Աւետիս Ահարոնեանի յատուկ յանձնարարութեամբ եւ կը ներկայացնէ շատ գեղեցիկ աշխատություն մը: Անիկա պիտի զարդարուի բազմաթիւ նահատակ կղերականներու պատկեր[ներ]ով:

Անիկա կուտայ նաեւ ծանօթություն, շատ համառօտ կերպով, իւրաքանչիւր գաւառի մէջ կատարուած կոտորածներուն վրայ եւ երեւան կը հանէ կսկծալի մանրամասնություններ այն չարչարանքներուն մասին, որոնց ենթարկուեցան յատկապէս հայ կղերականները: Այս հատորին հրատարակությունը կրնայ մեծապէս օգտակար ըլլալ իբր բրօսականտի միջոց մը:

Ջարդերու եւ տարագրութեանց մասին ուրիշ այս կարգի աշխատություններ կարելի է հրատարակել վասնզի այս մասին բաւական առատ տեղեկություններ գոյություն ունին եւ հետզհետեւ նոր տեղեկություններ երեւան կուգան ամէն օր:

Ասոնց հետզհետեւ հրատարակությունը ժամանակի եւ պիւտճէի խնդիր մըն է սոսկ:

Դ. Հայ ցեղին յարաբերությունները իր բնակակից ցեղերուն հետ:

Հայաստանի բնակչութեան ցեղային կազմը խնդրոյ առարկայ ըլլալով եւրոպացւոց կողմէ, Տեղեկատու Դիւանէն պիտի հրատարակուին կարգ մը գրքոյկներ, որոնք պիտի նկրտին ցոյց տալու հայոց հայեացքը բնա-

կակիցներու մասին եւ անոնց մեր ցեղին հետ ունեցած ցեղային ազգագրական առնչութիւնները:

Ասոնց մէջ առաջին տեղը քիւրտերը գրաւած ըլլալով, այս շարքին Ա. հատորը պիտի կազմէ քիւրտ եւ հայ յարաբերութեանց վրայ խօսող գրքոյկ մը, որուն պատրաստութեան ձեռնարկուած է:

Այս շարքին մէջ կրնան հրատարակուիլ նաեւ հայերու²²⁷, ասորիներու, նեստորականներու, եգիտիներու, գրգըլպաշներու, աւշարներու, լազերու եւ այլ ժողովուրդներու հետ հայոց ունեցած առնչութեան վրայ տեղեկութիւններ:

Ահա Տեղեկատու Դիւանին մինչեւ ցարդ կատարած աշխատութիւնները, որոնք իբր նախաքայլերը այս դիւանին, որ նոր կը կազմակերպուի եւ որուն պաշտօնէութիւնը իսկ դեռ լրացած չէ, կը կարծենք թէ արհամարհելի չէ: Սակայն ասով չենք ուզեր ըսել թէ անիկա անթերի ու կատարեալ գործ մը երեւան հանած է:

Տեղեկատու Դիւանին գործառնութեանց ընդարձակումը կրնայ անսահման ծաւալ եւ բեղմնաւոր ու արդիւնաւէտ աշխատութեանց համար ճամբայ բանալ, եթէ աւելի մեծ վարկ մը կարելի ըլլայ տրամադրել:

Դիւանի սահմանուած չափաւոր վարկով ինչ որ կարելի է գործադրուած է, ինչպէս պիտի տեսնուի յարակից հաշուեցուցակներէն²²⁸:

Տեղեկատու Դիւանին պարտականութեանց շարքին մէջ համարուած է բանաւոր *բրօպակսանոր* եւ օտար շրջանակներու հետ անձնական յարաբերութիւններով հայոց համակիր հոսանք մը կամ մթնոլորտ մը ստեղծելու ջանադրութիւնը, որ ինչպէս յայտնի է ոչ նուազ կարեւոր դեր մը կատարելու սահմանուած է:

Դժբաղդաբար նշանաւոր դէմքեր ընդունելութիւններով եւ համակրական արտայայտութիւններով պատուելու եւ անոնց մէջ հանդէպ հայոց համակիր տրամադրութիւն մը ստեղծելու համար սահմանուած վարկը այնքան չնչին է (50 L.O.), որ շատ վերապահութեամբ շարժիլ հարկ է, եւ այս ութը ամսուան ընթացքին մէջ միայն Պրքաթընի²²⁹ հացկերոյթ մը տալով բաւականացանք. թէ[եւ] ուրիշ այս տեսակ առիթներ ալ կրնա[յին]

²²⁷ Կը խորհինք թէ Դաւիթեան ըսել ուզած է *յոյներու*:

²²⁸ Հաշուեցուցակները որոշած ենք չկցել այս նկարագրական համարատուութեան:

²²⁹ Ակնարկութիւն Վերապատուելի Հարօլտ Պրքաթընի (Harold Jocelyn Buxton, 1880–1976), որ Կովկասի մէջ հայոց եւ այլոց բարեսիրական ծառայութիւններ մատուցելու նպատակով կ'անցնէր Պոլսէն:

ստեղծուիլ:

Այս մասին արդի վարչությունը փափաքելի էր որ ուրիշ կարգադրություն մը ընէր:

Նախորդ Քաղաքական Ժողովին կողմէ Տեղեկատու Դիւանին պատասխանատու-վարիչ նշանակուած եմ եւ իմ կողմէս այս շատ օգտակար դիւանին հաստատութեան ու կազմակերպութեան որքան կարելի է աշխատած եմ: Արդ, հիմա որ իմ պաշտօնս կ'աւարտի, իմ ութ ամսուան փորձառութիւնն ինչ որ կը թելադրէ անիկա կը փութամ ներկայացնել նորընտիր վարչութեանց, յուսալով որ իմ փորձառութենէս պիտի փափաքի[ն] օգտուիլ ան[ոնք], աւելի արդիւնաւոր գործունէութիւն մը առաջ բերելու համար դիւանին մէջ:

Արդէն վերը ցոյց տուի թէ անհրաժեշտ է Պատրիարքարանի թուղթերուն դասաւորումը, որ արդէն որոշուած էր: Այս դասաւորումը աւարտելէ յետոյ հարկ է որ Տեղեկատու Դիւանի մէջ կանոնաւորապէս դասաւորուին Հայկական Խնդրոյն հետ առնչութիւն ունեցող բոլոր վաւերագիրները, որոնք պէտք է առաջիկային հրատարակութեան տրուին, հանրութեան սեփականութիւնը ընելու համար այն ինչ պաշտօնական մարմիններ 40 տարիներէ ի վեր կատարած են ժողովրդեան անունով եւ անոր շահուն համար: Ասիկա էական անհրաժեշտութիւն մ'է:

Նոյնպէս, Տեղեկատու Դիւանին մէջ այսօր ամփոփուած են այնպիսի թանկագին վաւերագիրներ, տպեալ ու անտիպ, որոնք անփոխարինելի ու անգտանելի են երբ կորսուին: Դիւանը կը գտնուի այնպիսի տեղ մը, որ կարելի չէ երաշխաւորել հրդեհի դէմ, ուստի անհրաժեշտ ու շատ ստիպողական է որ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ յարակից պահարանին մէջ, որ անկիզելի է եւ ուր կը պահուին Բերայի Թաղ. Խորհուրդին տոմարները, նոյնպէս մէկ երկու դարակներ շինուին նաեւ Տեղեկատու Դիւանին համար, հոն պահելու այն վաւերագիրները, որոնք միայն մէկ օրինակ են եւ անփոխարինելի:

Նոյնպէս Տեղեկատու Դիւանը կը կարօտի մի քանի ներքին շինութիւններու, պահարան եւայլն, որոնք պէտք չէ խնայուին եթէ կ'ուզուի աւելի կանոնաւորութիւն եւ կարգաւորութիւն ստեղծել, եւ աւելի դիւրացնել մեքենական մասը այն աշխատութիւններուն, որոնք անհրաժեշտ են գործ երեւան հանելու համար:

Ժամանակը ցոյց պիտի տայ թէ Տեղեկատու Դիւանին հետզհետէ աւելի կարգաւորուած եւ կանոնաւորուած վիճակի մը մէջ դրուիլը շատ անգամ պիտի դիւրացնէ Ազգ. Վարչութեան գործը, զանազան խնդիրներու նախընթացին համար տալով շատ անհրաժեշտ տեղեկութիւններ:

Խորապէս համոզուած եմ թէ առաջիկային եթէ հետզհետէ հոն կեդրոնանան բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները, այն ատեն շատ աւելի շօշափելի կերպով երեւան պիտի գայ այս դիւանին օգտակարութիւնը, որուն հաստատութիւնը նախորդ Քաղ. Ժողովի ամենէն նշանակելի գործերէն մէկը մնալու սահմանուած է:

Այն համոզումով թէ այս դիւանին պէս օգտակար հիմնարկութիւն մը նորընտիր Քաղ. Ժողովին կողմէն ալ լուրջ ուշադրութեան առարկայ ըլլալէ չպիտի դադրի,

Մնամ Ամենապատիւ Սրբազնութեանդ

Խոնարհ որդի

Տօր. Գ. Դաւիթեան

ՊՏԴ, տրցակ 6, Գ11–Գ27, հայերէն ձեռագիր

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻԻԱՆ

Տ.Դ. Կազմուած է Քաղ. Ժողովի յարաբերական յանձնախումբի անդամներէն միոյն անմիջական հակակշիռն եւ պատասխանատուութեան տակ:

Յարաբերական յանձնախումբի այս անդամը պիտի վարէ Դիւանը Քաղաքական Ժողովին եւ յանձնախումբէն տրուած ուղղութեան ու թելադրութեանց եւ օրուան անմիջական պահանջներուն համաձայն: Ինքն է որ Դիւանի պաշտօնէութեան միջոցաւ գործադրութեան պիտի դնէ տրուած հրահանգներն ու որոշումները. եւ իրմէ զատ վարչութեան եւ յանձնախումբի անդամներէն ոչ ոք իրաւունք պիտի ունենայ ուղղակի միջամտել Տ.Դ.ի աշխատութեանց: Ամէն դիտողութիւն պէտք է ըլլայ միայն լիազօր վարիչին, որ պարտաւոր է Դիւանին աշխատութեանց տեղեակ պահել ժողովը:

Տ.Դ.ի մէջ պիտի կեդրոնանան, Հայաստանի եւ Հայկական դատի վերաբերեալ հին թէ նոր ամէն կարգի վիճակագրութիւններն, այսինքն այլազան բնակչութեան, տնտեսական, կրթական, հողային եւ այլ բոլոր վիճակագրութիւններն, Հայ հալածանքներու, Զարդերու, Տեղահանութիւններու վերաբերեալ բոլոր դրուագներն ու պատմութիւնները: Կողոպտուած Ազգային թէ անհատական, շարժուն թէ անշարժ գոյքերու մասին վիճակագրական պատկերներ,

-Մասնաւորապէս վերջին տեղահանութեանց միջոցին գործուած չարագործութեանց մասնակից գլխաւոր յան[ց]ապարտ թուրքերու մասին

կարելիին չափ լիակատար տեղեկություններ, կենսագրական ծանօթություններ եւ յան[ցապարտութեան] մասին քաղուած վաւերաթուղթեր եւ վկայութիւններ, -Իսլամացած երկսեռ Հայութեան եւ յափշտակուած որբերու մասին վիճակագրութիւններ, հետաքրքրաշարժ պարագաներու վաւերական պատմութիւններն ու առարկաներու պատկերները եւ թուականները, Հին թէ նոր Ազգային զանազան կազմակերպութեանց, կուսակցութեանց, ինչպէս եւ անկախ միութիւններու ու ընկերութեանց մասին տեղեկություններ, -Ազգային, կրթական գործունէութեան մասին վիճակագրական տեղեկություններ, -Ազգային հարստութեանց որակը եւ քանակը պատկերացնող ցանկեր,- Մեր Ազգային դատին ինչպէս նաեւ Հայերու նկարագրին եւ այլին մասին Եւրոպացիներու կողմէ գրուածքներ, խօսուածներ եւ արտայայտութիւններ: -Հայերու վերաբերեալ թուրքերու պաշտօնական եւ անպաշտօն գրուածքներու մասին համառօտ ծանօթություններ, եւ մեր դատին հանդէպ իրենց բռնած պաշտօնական թէ անպաշտօն դիրքը, -Տեղեկություններ կառավարական շրջանակներու մէջ մեզի հանդէպ անցած դար[ձ]ածներու մասին: -Հայ թէ օտար մամուլին մեր մասին հաղորդած տեղեկութեանց կեդրոնացումը, -Տեղեկութեանց եւ վիճակագրութեանց այս մթերքէն մեր դատի մասին լիաբուռն օգտուելու միջոցները որոնել:

Բրորականտ ամէն կարելի միջոցներով, հոս թէ արտասահման, - Օգտակար յարաբերություններ մշակելու ջանալ -Ազգային զանազան միութիւններն, ընկերակցություններն եւ անհատներն Ազգային դատին եւ ընդհանուր շահերուն ծառայեցնելու համար հարկ տեսնուած թելադրություններ ընել, ի հարկին օգնելով անոնց նիւթապէս ու բարոյապէս: Եւ ըստ կարելոյն անկախ ու անջատ շարժումները չէզոքացնել:

Տ.Դ.ը պիտի ունենայ Դիւանապետ մը, եւ պետք եղածին չափ Թարգմանիչներ, Մեքենագիրներ, Քարտուղար եւ մէկ Մենեկապան:

Տ.Դ.ի աշխատությունները վարելու եւ կանոնաւորելու համար Դիւանի ներքին կանոնագիր մը պիտի պատրաստուի:

Տ.Դ.ի պաշտօնէութիւնը կ'ընտրուի լիազօր Վարիչին կողմանէ, հաւանութեամբ յարաբերական յանձնախումբի անդամներուն, եւ կը ներկայացուի Քաղ. Ժողովին ի վաւերացումն:

Տ.Դ.ի պաշտօնէութեան, տպագրական, բրօքականտի, դիւանական եւ այլ ծախքերը կը մատակարարուին հաւանութեամբ լիազօր Վարիչին, որ պարտաւոր է Դիւանի ամսական բոլոր ծախքերու հաշիւները իրենց վաւերաթուղթերով միասին ներկայացնել Քաղ. Ժողովի ի վաւերացումն:

Տ.Դ.ի լիազօր վարիչը, սահմանուած պիտոճէն աւելի ծախք ընելու

արտօնուած չէ. արտասովոր վարկերու համար, Բաղ. Ժողովի հաւանութիւնը անհրաժեշտ է:

ՊՏԴ, տրցակ 6, Գ28–Գ29, հայերէն մէքենագիր

Յաւելում 2.

Փարիզ, 28 Յունվար 1919

Ազնուաշուք

Տքթ. Գրիգոր Էֆէնտի Դաւիթեան

Ատենապետ Ազգ. Վարչութեան Բաղաք. Ժողովոյ

Շարաթէ մը ի վեր հոս ենք եւ ժողովներուն կը մասնակցինք, թէւ անոնք իրենց վերջանական ձեւը դեռ չեն ստացած, քանի որ տակաւին գալիքներ կան, գլխաւորաբար Կովկասի Հանրապետութեան ներկայացուցիչները: Մեր ժամանումին մասին ֆրանս. դեսպանատան միջոցով զարնում հեռագիրը հարկաւ իր ժամանակին ստացած կ'ըլլաք: Մինչեւ հիմա չկրցանք մեր նամակներուն անհամբերութեամբ սպասողներուն գոհացում տալ, որովհետեւ մէկ կողմէն այստեղէն նմակ գրելը դիրքին բան չէ, միւս կողմէն մեր գործերը դեռ կայուն վիճակ մը չեն առած:

Դժուարութիւններէն առաջինը կապ ունի փոստային երթելակի անկանոնութեան եւ մանաւանդ գրաքննութեան հետ, այնպէս որ մենք առ այժմ ստիպում ենք պատեհ առիթներու սպասել եւ ճամբորդներու միջոցով դրկել մեր կարելոր նամակները: Երկրորդ պատճառը նոյնքան արգելափոք պարագայ մըն է. մեր խնդիրը տակաւին Հաշտութեան Համաժողովի մասնախումբերուն մէջ կ'ուսումնասիրուի եւ վերջնական ձեւակերպումը չէ ստացած: Այս իսկ պատճառով մենք շատ աշխատանք ունինք: Ըսենք միայն որ այստեղ գտած մեր աշխատակիցները բոլորն ալ համամիտ են գլխաւոր կէտին շուրջ. այսինքն միացեալ եւ անկախ Հայաստանի մը կազմութիւնը անհրաժեշտ եւ կենսական կը նկատեն: Կան հարկաւ կարգ մը կնճռոտութիւններ, որոնք գլխաւորաբար դաշնակից մեծ պետութիւններու մրցակցութենէն կ'առաջանան:

Առ այժմ ամենէն կարելոր խնդիրներէն մէկը Հաշտութեան Համաժողովին մէջ հայ ներկայացուցչի մը տեղ տրուած չըլլալն է: Այս մասին ամէն կարգի աշխատանք եղած է եւ դեռ կը շարունակէ թափուիլ: Հայկական կարելոր գաղութներէ բողոքի հեռագիրներ կուգան մեր պատուիրակութեան նախագահին, որ հարկաւ ատոնցմով բարոյապէս աւելի կը զօրանայ եւ նոր դիմումներու առիթ կը ստանայ: Այս պարագան նկատի ունենալով՝ վերջին ժողովին մէջ փափաք յայտնուեցաւ որ Պոլսէն ալ նոյնիմաստ հեռագիր մը գայ: Մեր վրայ պարտք դրուեցաւ գրել ձեզ: Հարկաւ տեղուոյդ պայմաններուն համաձայն պատշաճը կը տնօրինէք: Այս մասին աւելի որոշ

գաղափար մը տալու համար՝ կը ներփակենք եկած հեռագիրներէն մէկուն պատճէնը:

Կը յուսանք որ այդտեղի գործերը կանոնաւորութեամբ առաջ կ'ընթանան եւ դուք նախկինէն աւելի դիւրութիւններ կը վայելէք այժմ: Ձեր կողմէ ալ մանրամասն տեղեկութիւններու կը սպասենք անհամբեր:

Մնամ աղօթարար
Եղիշէ Արքայ. Դուրեան
Արք. Տէր Յակոբեան

Յ.Գ. *Ազատամարտ* օրաթերթին դրամ դրկել կ'ուզուի եղեր: Փափաք յայտնուեցաւ որ այդ դրամը մեզի յանձնեն եւ մենք ալ գրենք ձեզի որ այդտեղ վճարէք: Թէեւ մենք անմիջական պէտք մը չունէինք, սակայն նկատելով որ դրկուելիք գումարը մեծ բան մը չէ եւ առաջարկուած ձեւը երկուստեք դիւրութիւն մըն է, համաձայնեցանք եւ ստացանք *երեք հազար* (3000) ֆրանք, որ կը հաճիք այդտեղ վճարել *Ազատամարտի* խմբագրութեան:

Ա. Տ. Յակոբեան

ՊՏԴ, տրցակ 1, թղթապանակ 1-M150_2-I, 2688-2689, հայերէն ձեռագիր

*

Փարիզ, 7 Փետր. 1919

Ազնուաշն'ը

Տքթ. Գրիգոր Էֆէնտի Դաւիթեան

Ատենապետ Ազգ. Վարչութեան Քաղաք. Ժողովոյ

Կ. Պոլիս

Կը հաստատենք Յունվ. 28 թիւ մեր նամակը, որով շօշափած էինք նաեւ Հաշտութեան Խորհրդաժողովին մէջ հայերուս ներկայացուցիչ չունենալուն խնդիրը: Այս մասին պատուիրակութեան նախագահին կողմէ բողոքի գրութիւններ դրկուած էին Համաձայնական մեծ պետութիւններուն: Վերջերս նախագահ Ուիլսոնէն ստացուած է նամակ մը, որուն բովանդակութիւնը մօտաւորապէս հետեւեալն է.- Խորհրդաժողովին մէջ հայերոյ ներկայացուցիչ չունիք, որովհետեւ ազգերու ընտանիքին մաս չէք կազմեր *տակաւին*: Մեծ համակրութիւն կայ հայկական դատին համար եւ կրնաք վստահ ըլլալ որ ձեր դատը պիտի պաշտպանուի այնպէս, ինչպէս

պիտի ըլլար՝ եթէ ներկայացուցիչ մը ունենայիք:

Մասնաւոր կերպով առնուած տեղեկութիւնները վերջին օրերս մեզ աւելի յուսալից ըրած են, քան էինք մեր անցեալ գրութեան թուականին: Ամերիկացիները կարգած են յատուկ մասնախումբ մը, որ մեր Պատուիրակութեան հետ յարաբերութիւն պահելու պաշտօնը ունի եւ որ ամէն կարգի ծանօթութիւններ ու բացատրութիւններ պիտի ստանայ՝ հաղորդելու համար պէտք եղած տեղը: Նոյն տեսակի մասնախումբ մը որոշած են կազմել նաեւ անգլիացիները: Իմացուած է նաեւ որ Կիլիկիոյ նկատմամբ Ֆրանսայի ունեցած յաւակնութիւնները շատ նուազած են եւ հաւանական է որ միացեալ Հայաստանի կազմակերպութեան օժանդակելու (Assistance) գործը Ազգերու Դաշնակցութեան կողմէ յանձնուի Ամերիկայի, որուն աջակցութիւնը առժամեայ պիտի ըլլայ:

Համագումարը դեռ չէ բացուած, թէեւ Կովկասէն գալիք պատուիրակութեան նախագահը ժամանած է, սակայն միւս ընկերները եւ դեռ ուրիշներ չեն հասած, այնպէս որ այդ ժողովին բացումը պիտի ուշանայ քանի մը օր եւս: Վերջին շաբաթներու ընթացքին գլխաւոր աշխատանքի նիւթ կը կազմէր Memorandum-ի պատրաստութիւնը, որ արդէն աւարտած է եւ շուտով պիտի յանձնուի, որովհետեւ այլեւս չի կրնար ուշանալ: Այն յիշատակագրով կը յայտարարուի ու կը պատճառաբանուի հայ ժողովուրդի պահանջը, որ է ունենալ միացեալ եւ անկախ Հայաստան մը, որ իր մէջ պարունակէ Կովկասահայաստանը, եօթը հանահանգները (ինչ ինչ մասեր դուրս ձգուած) եւ Կիլիկիան: Այս երկրին տրուելիք օժանդակութիւնը պիտի ըլլայ այնպիսի ձեւով մը, որ պահպանուին անոր վեհապետական իրաւունքներն ու անկախութիւնը: Հայաստանը պիտի դրուի Ազգերու Դաշնակցութեան երաշխաւորութեան (garantie) տակ եւ Assistance-ը պիտի տւել առ առաւելն քսան տարի: Օժանդակութեան եղանակը պիտի որոշուի փոխադարձ համաձայնութեամբ: Պահանջուած է կարգ մը միջոցներու գործադրութիւնը, որուն հետեւանքով Պերլինի դաշնադրութենէն ի վեր Հայաստան բերուած իսլամ մուհանձիրները պիտի դարձուին իրենց եկած տեղերը: Կէտեր կան որբերու, այրիացածներու, իսլամացածներու, տարագրութեան եւ գրաւումներու հետեւանքով առաջացած վնասներու մասին: Այսքանը գրեցինք, որպէսզի ձեզի գաղափար մը տանք ամփոփումին մէջ եզրակացուած պահանջներուն մասին: Ինչպէս կը տեսնէք, այստեղէն մեզ հետ բերուած պահանջներուն համապատասխանող ոգով եւ ուղղութեամբ պատրաստուած է այս յիշատակագիրը, որ անմիջապէս պիտի յանձնուի տպագրութեան: Առաջին առթիւ ձեզի պիտի որկենք օրինակ մը այս փաստաթուղթէն:

Սպասելով ձեր նամակներուն եւ ողջոյններով՝

Եղիշէ Արքայ. Դուրեան
Աբր. Տէր Յակոբեան

ՊՏԴ, տրցակ 1, թղթապանակ 1-M150_2-L, 2686-2687, հայերէն ձեռագիր

Յաւելում Է.

Պատրիարքարան Հայոց
Տեղեկատու Դիւան

Կ. Պոլիս, 13 Ապրիլ 1921

Ամենապատիւ
Սրբազան Պատրիարք Հայր
Նախագահ Ազգային Կեդրոնական Վարչութեան

Ինչպէս ծանօթ է Ձեր Սրբազնութեան, Սէվրի Դաշնագրին համաձայն Թուրքիոյ մէջ պարտադիր զինուորագրութիւնը ջնջուելով, կամաւորական բանակի մը կազմութիւնը պարտադրուած էր: Այս վերջերս սակայն, Լոնտրայի մէջ հաւաքուած վեհաժողովին մէջ թուրք կառավարութեան կողմէ առաջարկ բերուած էր Թուրքիոյ մէջ պարտաւորիչ զինուորագրութիւնը վերահաստատելու մասին:

Աւելորդ է բացատրել Օսամնեան Կայսրութեան մէջ ապրելու ստիպուած քրիստոնէաներու համար պարտաւորիչ զինուորագրութեան մը վերահաստատման յառաջ բերելիք բոլոր յոռի հետեւանքները, ուստի բերանացի դիմումներ կատարեցինք Անգղիական Բարձր Գոմիսէրութեան մօտ, յունաց պատրիարքարանի պատուիրակներուն հետ միասին, այդպիսի հաւանականութեան մը առաջքը առնելու համար:

A[rmenian] G[reek] S[ection]ի այսօրուան ժողովին մէջ մեզի յայտարարուեցաւ թէ Լոնտրայէն ստացուած տեղեկութեան մը համաձայն, պարտաւորիչ զինուորագրութիւնը Թուրքիոյ մէջ վերահաստատելու մասին թուրք պատուիրակութեան ըրած առաջարկը մերժուած է:

* * *

Ատանայի մէջ երկու ամերիկացի տիկիններ, վստահելի աղբիւրէ լսած ըլլալով որ Հանրնի մէջ այս պահուս կը գտնուին 30ի չափ հայ որբեր ու ուրիշ կարգ մը ծերեր ու կիներ որոնք քիւրտերու կողմէ ազատուած են Հանրնի աղէտի պահուն, պատրաստակամութիւն յայտնած են անձամբ երթալ Հանրն ու օգնել այդ դժբաղդ հայերուն եթէ միլիիներու կողմէ իրենց պաշտպանութիւն ու դիւրութիւն ընծայուի:

Իսնդիրը Անգղ. Բարձր Գոմիսէրութեան ներկայացուած է որ իր կարգին հեռագրած է Հռոմի անգղ. դեսպանին որպէսզի թուրք պատուիրակութեան պետ Պէքիր Սամի Պէյի Հռոմէն անցնելու պարագայէն օգտուելով դիմում կատարէ անոր մօտ Էնկիւրիի քեմալական կառավա-

րութենէն բաղձացուած արտօնութիւնը ստանալու համար: Այդ դիմումը արդէն կատարուած է, Պէքիր Սամի համաձայն գտնուած ու Էնկիւրի հեռագրած է, որուն պատասխանին կը սպասուի եւ կը յուսացուի որ գոհացուցիչ ըլլայ:

Նոյնիմաստ դիմումներ կատարուած են նաեւ Ամերիկեան Բարձր Գոմիսերութեան կողմէ: Հաւանական է որ այս կրկին դիմումները իրենց բարերար ազդեցութիւնը կ'ունենան եւ ի մօտոյ այդ դժբաղդները Ատանա բերուելով կանոնաւոր խնամք կը վայելեն:

Որդիական ակնածանօք
Տօք. Դաւիթեան

ՊՏԴ, տրցակ 7, թղթապանակ M600, Յ731–Յ732, հայերէն ձեռագիր

Յաւելում Ը.

ՏՕԶԹ. ԿԷՅԹՍԻ ԻՍԿԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայկական հարցի մասին իմ յայտնած տեսութիւններուս անսպասելի կարեւորութիւն մը տրուեցաւ, տեսութիւններ՝ որոնք պարզուած էին ուսանողները լուսաբանող խօսուրդտուքի մը մէջ, որ երբեք սահմանուած չէր հրատարակութեան եւ որուն տեղեկագրութիւնը միտքերը շատ մոլորեցնելու բնոյթ կը կրէ: Պարտք կը նկատեմ ըսել թէ՝ այս տեսութիւնները իմ անձնական կարծիքներս են: Անոնք ոչ մէկ կերպով պաշտօնական չեն եւ իմ անձէս գատ ոչ որի պատասխանատուութիւն չեն բերեր:

Նախ ըսեմ թէ, ինձմէ գատ ոչ որ այնքան բաղձացող է տեսնել որ՝ անկախ Հայաստան մը հիմնուի: Գաւառներու մէջ իմ ճամբորդութիւնս՝ աւելցուց իմ սոսկումս այն անմարդկային վարմունքի մասին՝ որուն ենթարկուած էին Հայերը եւ չեմ կարծեր որ՝ կարելի ըլլայ որ մարդիկ թոյլ տան որ անոնք դեռ մնան այն կառավարութեան տակ՝ որ այդ տեսակ վայրագութիւններ թոյլատրած է: Խնդիրը միայն գիտնալն է թէ՝ ե՞րբ եւ ի՞նչպէս պիտի հիմնուի այդ անկախ կառավարութիւնը: Կը կարծեմ որ յարմար չէ ստեղծել յանկարծ Հայաստան մը եւ աս՝ գաւառներու մէջ թուրքերու եւ հայերու միջեւ առաջ եկած զգացումին պատճառով: Կիլիկիայի մէջ հայ զինուորներուն զինուիլը թուրք ժողովուրդին կարծել տուած է որ՝ Հայերը պիտի զինուին իրենց դէմ: Բարիզի Հայկական Պատուիրակութեան արտասովոր եւ ծայրայեղ պահանջումները կատեցուցած են թուրք ժողովուրդը եւ կարծել տուած են որ՝ այդ նահանգներու մէջ բնակող Թուրքերը Հայերու «քօնթօր»ին տակ պիտի դրուին:

Խնդիրը իրենց կարծիքին ճշդութեանը վրայ չէ: Ես կը յիշեմ միայն յայտնուած կարծիքը: Հետեւանքը ան է որ՝ թուրք ժողովուրդը լաւապէս զինուած է եւ չի գատուիր իր զենքէն, հակառակ զայն զինաթափ ընելու բոլոր փորձերուն²³⁰:

²³⁰ Կէլթսի գրութիւնը լոյս տեսած է նաեւ Պոլսոյ *Առաւօտ* թերթին 28 Ապրիլ 1919-ի համարով (Բ. տարի, թիւ 1), զայն թարգմանելով ֆրանսերէնով լոյս տեսնող *Sectateur d'Orient* թերթէն եւ լեզուական տարբերութիւններով: Յատկանշականն այն է, որ *Առաւօտ* զինաթափման վերաբերող այս նախադասութեան աստղանիշ մը աւելցնելով, թարգմանաբար տուած է նաև թերթին խմբագրական ծանօթութիւնը, ուր կ'ըսուի. «Հայ թերթերը պէտք չէ յուսահատ երեւան: Տոքթ. կէլթսի գաղափարները անձնական են: Անոնք չեն

Չեմ կարծեր որ՝ թուրք կառավարությունը կարող ըլլայ տէր մնալ ներկայ կացութեան եւ կարգը վերահաստատել այս քառսին մէջ: Նոյնպէս, իմ կարծիքս ան է որ՝ գորաւոր տէրութիւն մը պետք է ստանձնէ թուրք կայսրութեան կառավարչութիւնը, գոր պետք է վարէ բոլոր ժողովուրդներու շահուն համար, թուրքերուն՝ ինչպէս Զրիստոնեաներուն: Ես պիտի ուզէի յանձնարարել որ՝ դեռ անբոյն մնացած հայ տարագիրները գետեղուէին զանազան նահանգներու մէջ՝ ուր առիթ ունենային նոյնասեռ ժողովուրդ մը կազմել. պիտի ուզէի նաեւ յանձնարարել որ՝ Հայերու այդ նահանգներուն մէջ՝ որոնց հողեր պիտի տրուէին, օժանդակութիւն ընծայուէր իրենց՝ ստեղծելու համար վարժարաններ, զարգացնելու երկրագործութիւնը, վաճառականութիւնը եւ արհեստագործութիւնը, ինչպէս նաեւ ստանձնելու համար հոգատարութիւնը իրենց որբերուն եւ այրիներուն:

Պաշտպան տէրութիւնը իրաւունք պիտի ունենար այդ նահանգներուն մէջ գործադրելու ինքնավարութիւն մը, երբ իր կարծիքով այդ տեսակ վարչութեան մը ժամանակը յարմար գտնուէր: Այդ տէրութիւնը նոյն ատեն պիտի ջանար ամբողջ երկիրը բարգաւաճ դարձնել՝ ինչ որ կատարելապէս հնարաւոր է՝ իր նիւթական հարուստ աղբիւրներուն պատճառով: Ժամանակը եւ լաւ կառավարութիւն մը պիտի կրնային մեղմացնել թշնամութիւնը եւ խաղաղեցնել կիրքերը՝ որոնք ծաւալած են վտանգաւոր աստիճանով մը, եւ ինծի կը թուի որ՝ ամբողջ աշխարհի պարտականութիւնն է աշխատիլ հանդուրժող, համբերող եւ բարեկամեցողութեան ոգիի մը ուղղութիւնով բոլոր ցեղերու միջեւ, որովհետեւ անոնք պետք է մէկտեղ ապրին: Անհնար է խուսափիլ շփումէ: Եթէ երկիր մը կամ երկրամաս մը թողուէր յոռի վարչութեան մը կամ լուծի տակ, ատոր յոռի հետեւանքները պիտի զգացուէին բոլոր դրացիներէն եւ ամբողջ աշխարհի կողմէ: Եթէ կ'ուզենք ապահովել երկրի մը խաղաղութիւնը, պետք է ապահովենք ամենուն խաղաղութիւնը:

Բ. Ֆ. Կէլթս

«Ժամանակ», 16/29 Ապրիլ, թիւ 3507

կրնար ազդել եւրոպական եւ ամերիկեան շրջանակները, եւ մանաւանդ չեն կրնար փոխել այս խնդիրները կարգադրող Բարիզի դիւանագետներուն ընթացքը: Խաղաղութեան համաժողովը գիտէ, անշուշտ, թէ կան քանի մը նահանգներու մէջ մեծամասնութիւններ, բայց իրենց որոշումները չպիտի հիմնուին միայն այս մեծամասնութեան վրայ, այլ անոնք նկատողութեան պիտի առնեն ուրիշ տեսակետներ՝ արձակելու համար արդար եւ պատշաճ վճիռ մը»:

ՏՕԶԹ. ԿԷՅԹՍ ԿԸ ԲԱՑԱՏՐԷ

Չկայ մեկը որ ինծի չափ փափաքի անկախ Հայաստանի մը կազմութեան: Գաւառները կատարած ճամբորդութիւններս ուրիշ բանի չծառայեցին բայց միայն աւելցնել սոսկումս այն հակամարդկային ընթացքին հանդէպ որուն ենթարկուեցան Հայերը, եւ ես չեմ կարծեր որ աշխարհի համար այլեւս կարելի ըլլայ զանոնք ձգել ա՛յն կառավարութեան տակ թոյլ տուած է այսպիսի անգթութիւններ: Խնդիրը ա՛յն է միայն որ ե՛րբ եւ ի՞նչպէս պիտի պէտք է հաստատուի այս անկախ պետութիւնը:

Կը կարծեմ թէ յարմար չէ անկախ Հայաստան մը կազմել անմիջապէս, որովհետեւ գաւառները սաստիկ դառնութիւն յառաջ եկած է թուրքերուն եւ Հայերուն միջեւ: Կիլիկիոյ մէջ Հայ զինուորներուն սպառազինումը այն տպաւորութիւնը գործեց թուրք ժողովուրդին վրայ թէ Հայերը պիտի զինուին իրենց դէմ: Փարիզի հայկական ազգային պատուիրակութեան տարապայման պահանջները կատեցուցած են թուրք ժողովուրդը եւ այն հաւատքը գոյացուցած են թէ այդ շրջանակին մէջ բնակող թուրքերը Հայերու իշխանութեան պիտի ենթարկուին: Խնդիրը անոնց կարծիքներուն հիմնաւորութեան վրայ չէ. ես միայն եղած տպաւորութիւնը կ'արձանագրեմ: Եւ արդիւնքը ան է որ Թուրք ժողովուրդը ծանրօրէն սպառազինուած է, եւ իր զէնքին կառչած կը մնայ, հակառակ զինաթափութեան բոլոր փորձերուն:

Չեմ կարծեր որ թուրք կառավարութիւնը կարող ըլլայ այս կացութեան տէրը մնալ եւ այս քառսին մէջ կարգը հաստատել: Միեւնոյն ատեն կարծիքս է թէ զօրաւոր կառավարութիւն մը ամբողջ բնակչութեան, թուրք թէ քրիստոնէայ, օգտին համար, թուրք կայսրութեան կառավարութիւնը պարտի ստանձնել: Պիտի ուզէի թելադրել որ հոս ու հոն առանց բնակարանի մնացած հայ տարագրեալները հաւաքուին տեղ մը՝ ուր կարենան ունենալ համասեռ բնակչութիւն մը. պիտի ուզէի նաեւ յանձնարարել որ այդ տեղերու մէջ հաստատուին Հայեր որոնց տրուէին հողեր, եւ անոնց օգնել դպրոցներ բանալու, երկրագործութիւնը, առեւտուրը եւ ճարտարարուեստը զարգացնելու գործին մէջ, ինչպէս խնամել անոնց որբերն եւ այրիները:

Այս վայրերուն մէջ պաշտպան տէրութիւնը ուժը պիտի ունենար ինքնավարութիւն մը հաստատելու, երբ այդ տեսակ վարչութեան մը ժամանակը հասած համարէր: Մինչ այն, պաշտպան կառավարութիւնը պիտի ջանայ ամբողջ երկիրը բարեկարգել՝ ինչ որ կարելի է իր նախանիւթերու հարուստ աղբիւրներուն պատճառով: Ժամանակը եւ լաւ կառավարութիւն մը պիտի կրնան գրգռութիւնը մեղմացնել եւ խաղաղել կիրքերը

որոնք վտանգաւոր աստիճանի մը հասած են, եւ ինծի կը թուի թէ ամբողջ աշխարհի պարտականութիւնն է աշխատիլ ներողամիտ ոգիով, համբերութեամբ եւ բարեացակամութեամբ բոլոր ցեղերու համար, քանի որ անոնք միասին ապրելու պարտաւոր են: Իրարու հետ շփում չունենալ անկարելի է: Եթէ երկիր մը կամ անոր մէկ մասը ձգուի յոռի եւ հարստահարիչ վարչութեան մը ներքեւ, անոր գէշ հետեւանքները պիտի ազդեն իր բոլոր դրացիներուն եւ ամբողջ աշխարհի վրայ: Եթէ երկրի մը համար խաղաղութիւն ապահովել կ'ուզենք, պարտաւոր ենք ամենուն համար ապահովել զայն:

«Ճակատամարտ», 29 Ապրիլ 1919, թիւ 141/1962

Յաւելում Թ.

Ազգային Խնամատարութիւն
Լիազօր Պատուիրակութիւն
Կիլիկիա
հմր. 22

Ատանա, 17 Յունիս 1919

Ամենապատիւ
Տ.Տ. Չաւէն Արքեպիսկոպոս Եդիսեան
Պատրիարք Հայոց
Կ. Պոլիս

Սրբազան Հայր,

Կը հաստատեմ 3 Յունիս թուական եւ 14 համար նամակս:

Սրտակեղեք կոչեր կը հասնին Ձեյթունէն. երկու օր առաջ մասնաւոր պատուիրակութիւն մըն ալ հասաւ հոս եւ պաշտօնական դիմումներով ուշադրութիւն կը հրաւիրէ: Այս պատուիրակութիւնը ընդարձակ տեղեկագիր մը ներկայացուց, ուր ահա թէ ինչեր կը պարզուին:

Ներկայիս 1050 գէյթունցիներ հաւաքուած են Մարաշի մէջ, որոնց կեսէն ասելին երիտասարդներ կը կազմեն եւ օրէ օր նորեր կը հասնին: Դեռ բաւականաչափ գէյթունցիներ կան, ցրուած Պաղտատէն մինչեւ Փօր-Սաիտ: Ասոնց ընդամենը կը կարծուի թէ 2500ի կը հասնի:

Հերոս ժողովուրդի մը այս բեկորները յետին թշուառութեան մէջ կը տապալակին այժմ Մարաշի մէջ: Նպաստամատոյց ունէ հիմնարկութիւն գոյութիւն չունի. մինակ անգլ. իշխանութեան կողմէ մարդ գլուխ օրական կէս քիօ մեծերուն, եւ անոր ալ կէսը՝ պզտիկներուն, հաց կը տրուի: Ժողովուրդը կապուած է այս հացին միայն եւ ապրուստի ունէ միջոց գոյութիւն չունի: Ասկից գատ բնակութեան մասնաւոր վայրի չգոյութենէն՝ անոնք կ'ապրին եկեղեցիներուն մէջ իրարու վրայ դիզուած, եւ մերկ են գրեթէ առանց բացառութեան:

Աշխատանքի վարժ եւ ժրաջան այս ժողովուրդը չ'ուզէր ասելի երկար մնալ Մարաշ: Հոն չկայ ունէ աղբիւր եւ հիմնարկութիւն, ուր գոնէ աշխատելով ճարէին իրենց օրապահիկը: Այս բանը չէ մտածուած ունէ կողմէ. եւ յետոյ անոնք կ'ուզեն մեկնիլ օր առաջ իրենց արծուաբոյնը եւ յառաջիկայ 1-2 ամսուան մէջ հիմքը դնել յաջորդ տարուայ կեանքին: Շատ պարզ է որ չպիտի ուշանայ ձմեռը այդ վայրերուն մէջ եւ շուտով արդէն ձիւնով կը ծածկուին անոնց լեռները: Հոն անոնք շատ գործեր ունին ընելիք. բնակա-

րանի շինություն, ապրելու ամենատարրական միջոցներու հայթայթում, աշնանային վարուցանք, ասոնք պիտի ըլլան երկու կամ առ առաւելն երեք ամսուայ ընթացքին. հակառակ պարագային, յառաջիկայ տարին եւս կորսուած կը նկատուի եւ այսօրուան տխուր կացութիւնը կը շարունակուի տակաւին տարի մը: Անոնք կ'ուզեն օր առաջ մեկնիլ Չէյթուն:

Բայց այս ալ հնարաւոր չէ. տիրող անապահովութիւնը կը խրտչեցնէ զանոնք: Անշուշտ այս ժողովուրդը չէր որ պիտի վախնար իր հարեւաններէն, եթէ սակայն ունենար ինքնապաշտպանութեան տարրական միջոցներ: Թուրքերն ու քիւրտերը մինչեւ ակոսները զինուած, իսկ զէյթունցին փոքր զէնք մ'իսկ չունի: Ինչպէ՞ս կարելի է այս պայմաններուն տակ թողուլ որ երթան անոնք:

Սակայն անոնք որոշեր են ամէն գնով երթալ, եւ ահա թէ ներկայացող պատուիրակութեան անդամներէն մին ինչ կերպով կ'արտայայտուի. «Մենք քանի ամիս է մնացինք Մարաշ. ոչ ոք հետաքրքրուեցաւ մեզմով: Ներկայ խեղճութենէն զատ յառաջիկայ տարուան հեռապատկերը կը սարսափեցնէ մեզ: Չենք կրնար կենալ այլեւս. պէտք է եւ պիտի երթանք ամէն գնով, գիտնալով եւ գնահատելով հետեւանքները, որոնց համար ազգը իրաւունք չպիտի ունենայ մեզ պատասխանատու բռնելու»:

Դիմումներ եղած են Մարաշի անգլ. հրամանատար Մէյնըր Տէնսընի, որը առարկելով որ Չէյթունը իրենց գրաւման տակ չէ, մերժեր է որոշ թուով զինուոր տրամադրելու առաջարկը. բայց առանց այս անապահովութեան թողուլ որ անոնք երթան անխոհեմութիւն է եւ նոյնիսկ ոճրագործութիւն:

Նոյնինքն Չէյթունը աւերակոյտ մըն է ներկայիս, հազիւ թէ 4-5 տուներ կանգուն են կիսաւեր վիճակի մէջ: Ժողովուրդը երթալու պարագային մէջտեղ պիտի մնայ, թէեւ Չէյթունի զօրանոցը պիտի կրնայ ժամանակաւորապէս ծառայել անոնց իբր բնակատեղի, եթէ տրուի: Այնպէս որ զիւղերը վերաշինելու համար անհամեմատ աշխատանքի պէտք կայ:

Թողուլ զանոնք որ այսպէս մնան, կրնայ անպատեհութիւններու տեղի տալ. կամ այն է որ ամէն հաւանականութիւն աչք առած պիտի երթան – ինչպէս կը յայտարարեն – եւ անհամ դէպքեր պիտի պատահին անխուսափելիօրէն, եւ կամ անոնք պիտի ցրուին զանազան վայրեր, ինչ որ մեծ աղէտ մը պիտի ըլլայ ազգ[ային] տեսակէտով: Շատ դժուար եւ թերեւս անկարելի կ'ըլլայ վերջէն նորէն հաւաքել զանոնք իրենց բոյնին մէջ, ու այս մեծ կորուստ մը պիտի ըլլայ: Չէյթունի գոյութիւնը իր իսկ բնակիչներով բացարձակապէս անհրաժեշտ է այդ շրջանին մէջ:

Տնտեսական պայմաններէն զատ, քաղաքական պայմաններն են որ աւելի մտահոգիչ են: Բուռն պայքար եւ պրոպականդ կը մղուի, ինչպէս առ

հասարակ Կիլիկիոյ, նոյնպէս եւ առաւելապէս Մարաշի եւ Չէթունի շրջանին մէջ. եւ տրուած ըլլալով որ այդ շրջանի Համաձայնական իշխանութիւնն ալ թոյլ է եւ անբարեացակամ եւ նոյնինքն Չէթունի շրջանին մէջ գոյութիւն չունի, հասկնալի կ'ըլլայ անշուշտ որ ինչ համեմատութիւններ կ'առնեն այս օրինակ աշխատանքներ: Թուրք ժողովուրդը այս պրոպականդի ազդեցութեամբ գերագրգռուած, երբեք չի վարանիր յայտնաբերելու իր թաքուն նպատակները, եւ ահա՛ օր մ'ալ փողոցները, պատերուն վրայ հայութիւնը փակցուած կը տեսնէ սպառնական յայտարարութիւններ եւ որոշ անհատներու դէմ մահուան կամ աւելի ճիշդ «տէռօր»ի վճիռներ ու ազդարարութիւններ:

Թուրք ղեկավարները, ակնյայտնի եւ անվերապահ գործունէութեամբ մը, աւելի եւս կը հրահրեն խուժանի մեղսակցութիւնը: Այսպէս՝ 8 Յունիս թուականին Խարթապ գիւղին մէջ անունները ծանօթ անձնաւորութիւններէ կազմուած ժողով մը որոշում քուէարկեր է ապստամբիլ եւ ջարդել հայ ազգաբնակչութիւնը այն օրն իսկ երբ կը յայտարարուի Հայաստանի անկախութիւնը եւ Մարաշը իր շրջակայքով կը մտնէ հայկական տիրապետութեան տակ: Այս բանը իր ատենին իմացուած եւ տեղեկացուած է Մէճրը Տէնսընի, որը սակայն ոչ մէկ հետաքրքրութիւն ցոյց չի տար: մարաշի Քառասուն Մանուկ եկեղեցին յատկացուած է գէթունցիներու բնակութեան: Անոր անմիջապէս կից շէնքին մէջ ժամտարմաներ կը բնակին եղեր: Օր մը յանկարծ կը պարպեն այդ շէնքը եւ նոյն իրիկունը կը հրդեհեն զայն: Շէնքը, որ փայտաշէն է, անմիջապէս կը բռնկի եւ գերմարդկային ճիգերով միայն կարելի կ'ըլլայ առաջքն առնել հրդեհին, որը սակայն կը խանձէ եկեղեցիի պատերը եւ հազիւ կարելի կ'ըլլայ եկեղեցիէն դուրս հանել ժողովուրդը: Յայտնի է անշուշտ բուն նպատակը. եթէ կարելի ըլլայ, այրել վերապրող գէթունցիներն ալ, որոնք շատ երկար ատեններէ ի վեր աչքի փուշն են եղած թուրք կառավարութեան եւ խուժանին: Կարելի եւ յարմար դիմումներ պիտի ընեմ, որպէսզի հոնտեղի անգլ. իշխանութիւնը աւելի մեծ հետաքրքրութիւն ցոյց տայ եւ վերջ դնէ այս անտանելի դրութեան: Այս շրջանի մէջ առ հասարակ անգլ. շրջանակները լրջօրէն կը հետաքրքրուին մեզմով եւ շատ նպաստաւոր հանգամանք ունի անոնց քաղաքականութիւնը մեզ հանդէպ: Մարաշի Մէճրըին ընթացքը զուտ անհատական է ու դատապարտելի, որուն գոհ կ'երթայ արդէն իսկ անիրաւուած ժողովուրդի մը վերջին իրաւունքը: Հոս անգլիական intelligence officeին հետ շատ սերտ յարաբերութիւն ունին: Օֆիսի նախորդ պետը մեկնած եւ իմ բացակայութեան միջոցին նոր մը յաջորդած է անոր: Այս վերջինը մասնաւոր հետաքրքրութեամբ հարցուցած է զիս եւ յայտնած որ

Պոլսէն Ժէն. Տիտզէն մասնաւոր յանձնարարութիւններ կան իմ մասին: Վերադարձին անմիջապէս այցելեցի եւ սիրալիր եղաւ մեր տեսակցութիւնը: Դժբաղդաբար Մարաշը Հալէպին կապուած է, ապա թէ ոչ շատ դիւրին պիտի ըլլար կարգադրել Ձէյթունի խնդիրը: Նորէն ալ պիտի աշխատիմ եւ թերեւս երկու երեք օրէն մեկնիմ այդ շրջանը:

Երկու օր վերջ Մարաշի կաթոլիկներու Պօղոս վարդապետը տեղս պիտի հասնի: Վարդապետին հինէն ծանօթ եմ անձնապէս: Ինքը Մարաշի Ազգ. Միութեան անդամներէն է: Եթէ ան ալ հաստատէ ներկայացող պատուիրակութեան պարզած դրութիւնը, այն ատեն անմիջապէս կը մեկնիմ, հոն տեղւոյն վրայ կարգադրելու համար գործերը:

Յանուն զէյթունցիներուն ներկայացող պատուիրակութեան անդամները, Պ.Պ. Արամ Չօլագեան եւ Նազարէթ Ձէյթունցեան, Մարաշի մէջ կազմուած Ձէյթունցիներու Գաղթականաց Յանձնախումբին ատենապետ եւ ատենադպիրներն են: Առաջինը խմբապետն է զէյթունցիներու այն խումբին, որ պատերազմի ամբողջ տեւողութեան լեռները ապաստանած, բազմաթիւ կռիւներ մղեց եւ ի վերջոյ Հալէպի անգլ. իշխանութեան յանձնուեցաւ մեծ պատիւներով: Իսկ երկրորդը երկար ատեն Եգիպտոս ապրած եւ ազգային վարժարաններու մէջ ուսուցչութիւն ըրած պարոն մըն է վառվռուն ու անձնուէր:

Այսօր մօտ երկու ժամ տեւող խորհրդակցութիւն մը ունեցայ հոստելի intelligence officeի պետին հետ: Ձէյթունի կացութիւնն էր մեր խորհրդակցութեան առարկան: Որոշեցինք որ վաղն իսկ պաշտօնական դիմում մը պիտի կատարեն իրենց, իրենք ալ մասնաւոր թափօրով մը պիտի դրկեն գայն Չօրավար Ալլէմպիին:

Տեղւոյս ապահովութիւնն ալ օրէ օր կը վտանգուի. մանաւանդ վերջին 4-5 օրուայ ընթացքին շատ սուր հանգամանք ստացաւ: Թուրքերը երբեք չեն քաշուիր գրգռիչ յայտարարութիւններէ եւ ուղղակի ու բացէն պրոպականդ կը մղեն մեզի հակառակ: Մանաւանդ այսօր տեղւոյս տօնավաճառի օրն էր. կասկածեցանք եւ մասնաւոր մարդ դրկեցինք որպէսզի հետաքրքրուին, եւ թափօր ստացանք որ յայտնի անձնաւորութիւններ բացէ ի բաց կը թելադրեն գիւղացիներուն որ այժմէն իսկ պատրաստ ըլլան ապստամբելու եւ ջարդելու հայերը, երբ որ Կիլիկիան կը կցուի վերջնականապէս Հայաստանին: Եւ արդէն քանի մը օրէ ի վեր գրոյց կը շրջի թէ մօտ 250 արձակուած պահեստի թուրք սպաներ ցրուած են ամբողջ Կիլիկիոյ շրջանը՝ կազմակերպելու եւ ղեկավարելու համար այսպիսի շարժում մը:

Այս մասին կատարուած ռեւէ դիմում արդիւնք չի գտներ ֆրանսական

իշխանութեանց մօտ: Անոնք շատ սերտ, նոյնիսկ կարելի է ըսել եղբայրական յարաբերութեան մէջ են, ինչ որ կասկածներ կ'արթնցնէ մեր մէջ: Կամաւորներու ներկայութիւնը ոչ մէկ կերպով չի փոխեր դրութիւնը, որովհետեւ անոնք ալ գրկուած են իրենց բոլոր կարելիութիւններէն. նոյնիսկ անոնց փամփուշտները առնուած են իրենցմէ: Ի՞նչ իմաստ տալ է ինչպէ՛ս մեկնել:

Պէտք է լուրջ եւ ազդու դիմումներ կատարել հող ֆրանսական իշխանութեանց մօտ, վերջ տալու համար այս անորակելի ընթացքին, որ ուղղակի մեր գոյութեան կը սպառնայ. նոյնպէս եւ՝ անգլիական իշխանութեանց մօտ, որպէսզի գոնէ անոնք հակազդեն այս պարագային, ապա թէ ոչ ամբողջ Կիլիկիոյ կեանքը չուանէ մը կախուած կարելի է համարել եւ այդպէս ալ է:

Երանի թէ կարելի ըլլայ գիտակից պահել այս պարագաներուն Փարիզի մեր Պատուիրակութիւնը, որպէսզի միջոցներ ձեռք առնուէր երկիրը զինուորապէս գրաւելու եւ ապահովութեան տակ առնելու համար հայ ժողովուրդի կեանք ու գոյութիւնը նախքան պաշտօնական յայտարարութիւնը անկախ Հայաստանի՝ Կիլիկիայով կամ ոչ, որովհետեւ դրութիւնը նոյնն է ինչպէս հոս եւ Մարաշի շրջանը՝ նոյնպէս եւ ամբողջ երկրին մէջ, եւ հակառակ պարագային, յայտարարութեան երկրորդ օրն իսկ վերապրող հայութիւնն ալ գետին պիտի փռուի անխտիր:

Յայտնելով այս բոլոր կէտերը Ձերդ Սրբազնութեան լուրջ ուշադրութեան, կը մնամ

Մատչելով ի համբոյր Ս. Աշոյն Ձերոյ

Տքթ. Վ. Գ. Քաջբերունի

Լիազօր Պատուիրակ եւ Ընդհ. Քննիչ Ազգ. Խնամատարութեան ի Կիլիկիա

Յ.Գ.

Զէյթունի անունը միայն պիտի բաւէ շրջակայքի թուրք բնակչութեան՝ սուտ զրպարտութիւններ ընելու անոր մասին. շատ հաւանական կը գտնեմ այս բանը: Տեղի չտալու համար այդ զրպարտութեանց, ես առաջարկեցի intelligence officeին անգլիացի սպայի մը հրամանին տակ կազմել մասնաւոր ժանտարմըրի մը հայերէ եւ նոյնիսկ որոշ չափով ալ թուրքերէ, որ պիտի հսկէ Զէյթունին եւ շրջակայքին: Ընդունելի գտան այս առաջարկը եւ վաղուան պաշտօնական դիմումիս մէջ որոշեցինք շեշտել այս կէտը:

Նոյն

ՊՏԴ, տրցակ 5, թղթապանակ Զ, 2524-2523, հայերէն ձեռագիր

Յաւելում Ժ.

1 Օգոստոս 1919

Այս օրերս Պոլիս հասած Թուրքիոյ «մանտա»ներու միջազգային յանձնաժողովի ամերիկեան մասնաճիւղի անդամներէն Պ.Պ. Մօնկօմէրի [George E. Montgomery] եւ Մուր [Lawrence S. Moore] յանուն նոյն պատուիրակութեան երկու օր առաջ Ս. Պատրիարքին այցելելով հրաւիրեցին զինքն որ հայ յարանուանութեանց միւս երկու հոգեւոր պետերը եւ Տօքթ. Գրիգոր Էֆ. Դաւիթեան հետն ունենալով Ուրբաթ օրը ժամը 10ին ներկայանան նոյն պատուիրակութեան, որպէսզի լսուի հայ պաշտօնական շրջանակներու կարծիքը հայկական հարցի զանազան դրուագներու մասին: Նոյն ժամուն վերոյիշեալ անձնաւորութիւնք խմբովին ներկայանալով ամերիկեան դեսպանատունը, ընդունուեցան նոյն պատուիրակութեան անդամներէն Նախագահ Քրէյն [Charles K. Crane] եւ Քինկի [Henry Chrchill King], ինչպէս նաեւ Մօնկօմէրիի, Լայպայըրի [Albert H. Lybyer] եւ ... [Paul O. Toren] կողմէ: Հարցումներ կ'ուղղուէին Քինկի եւ Քրէյնի կողմէ, Մօնկօմէրի թարգմանի դերը կը կատարէր յաճախ, իսկ Լայպայըրը եւ ... [Paul O. Toren] կ'արձանագրէին:

Նախագահ Քրէյն խօսքը բանալով ըսաւ թէ «մեր զբաղած խնդիրներէն կարեւորներէն միոյն առջեւ կը գտնուինք, այն է հայկական հարցը, եւ աւելցուց թէ համոզուած ենք որ հայերը եւ թուրքերը այլեւս միասին նոյն երկրին մէջ չեն կրնար ապրիլ, եւ անհրաժեշտ է որ հայերուն համար երկրամաս մը սահմանուի: Այս մասին երէկ թուրք խմբակցութիւններու հետ տեսնուած միջոցին՝ անոնք յայտարարեցին թէ ի՞նչպէս կարելի է զատ հողամաս մը տալ հայերուն երկրի մը մէջ, ուր անոնք մեծամասնութիւն չեն կազմեր, եւ հարցուց թէ Հայաստան մը կազմուելու պարագային, զանազան կողմերու հայերը, ի մասնաւորի Անատոլիի հայերը պիտի յօժարի՞ն հոն խմբուիլ:

Պատրիարք Սրբազանը խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց անոնց այն համոզումին համար թէ հայ եւ թուրք տարրերը միեւնոյն հողամասին մէջ եւ միեւնոյն վարչութեան տակ չպիտի կրնան ապրիլ: Գալով հայ ժողովուրդին դէպի հայրենի երկիրը դառնալու խնդրին, կրնամ վստահացնել զՁեզ որ աշխարհի ամէն կողմ գտնուած հայութիւնը անհամբեր կազմ ու պատրաստ կը սպասէ իր հայրենի երկիրը դառնալու: Նոյնիսկ Պուլկարիա, Ռումանիա, Ռուսաստան եւ ուրիշ տեղեր երկար տարիներէ ի վեր գաղթած հայերը անհամբեր կը սպասեն երկիր դառնալու հրաւերին,

իսկ հայկական գաւառներէն տարագրուած հայերը՝ հակառակ այս հալածանքներուն եւ իրենց երկրին մէջ տիրող անապահովութեան, շատերը կը դառնան իրենց հայրենի երկիրը եւ մենք ենք որ զանազան միջոցներով զանոնք առայժմ արգիլելու կը ջանանք:

Յետոյ Տօքթ. Դաւիթեան Էֆ. խօսք առնելով ըսաւ թէ ներգաղթի հաւանականութիւնները մեր սկիզբէն յուսացածէն շատ աւելի համեմատութիւններ ստացած են. այսպէս՝ օրինակ՝ Պեսարապիոյ հայ գաղթականութիւնը, որ ամենէն հինն է եւ գրեթէ օտարաւալու վիճակին հասած էր, ներկայ պարագաներու մէջ հայրենասիրական զգացման զարթնում մը ունեցած է եւ յատկապէս պատուիրակութիւն մը դրկած է Կովկաս ներգաղթի խնդրոյն մասին կարգադրութիւններ ընելու համար: Նոյնպէս Պուլկարիոյ հայութիւնը, որ 30,000 հոգիէ կը բաղկանայ, արդէն պատրաստութիւններ տեսած է առաջին առթիւ դէպի մայր հայրենիք դառնալու: Սօֆիայի, Վառնայի եւ Փիլիպէի մէջ մեզի ծանօթ հարուստ ազգայիններ, որոնք գրեթէ տեղացի դարձած են, այսօր վաճառած իրենց կալուածներն ու գոյքերը, կը սպասեն վերադառնալ: Իսկ Անատօլի մէջի հայութիւնը, ինչպէս նաեւ Պոլսոյ եւ շրջակայից հայութիւնը, որոնք արդէն մեծ մասամբ կոտորակուած եւ իրենց հարստութեան մեծ մասը փճացած է, անոնք եւս այլեւս պատճառ մը չունին թուրքերուն հետ բնակակցելու եւ ամենքն ալ փափագող են ժամ առաջ հայրենի հողին վրայ վերաշինելու իրենց քանդուած օճախը:

Ազգապետ Էֆ. խօսք առնելով ըսաւ որ մենք հայերս գործնական մարդիկ ենք, կը սպասենք որ եթէ Հայաստանի մէջ ճշմարտապէս եւ լուրջ անկախ հայկական պետութիւն մը կազմուի, ամէն կողմէ հայերը հոն պիտի խուժեն, բայց եթէ կեղծ ու անուանական (make-shift) կարգադրութիւն մը ըլլայ, բնական է որ հայերը չպիտի ուզեն երթալ Հայաստան:

Տօքթ. Բինկ խօսք առնելով հարցունք թէ կը կարծե՞ք որ *մանտա*ի պէտք պիտի ունենաք: Ազգապետ Էֆ. պատասխանեց թէ անշուշտ, - թէպէտեւ ունինք շատ մը կարող անձնաւորութիւններ, բայց զանոնք համախմբելու եւ երկիր մը կառավարելու վարժեցնելու համար *մանտա*յի պէտք ունինք: Այս մասին Ս. Պատրիարք Հօր կարծիքը հարցունելով, Ն. Սրբազնութիւնը յայտնեց թէ հայերը 600 տարիներէ ի վեր ուրիշներու տիրապետութեան տակ ապրած ըլլալով, բնական է թէ կառավարելու վարժութիւնը կորսնցուցած են, բայց կառավարութիւն մը կազմակերպելու ամէն տեսակ տարրերը ունին: Գրեթէ ամէն երկիրներու մէջ պետական մարդիկ ունինք, համալսարաններէ շրջանաւարտներ, համալսարաններու ամէն ճիւղերու մէջ ուսանողներ եւայլն: Բայց մէկը պէտք է որ ասոնք ամէնը հաւաքէ եւ

գործի լծելով ժամանակ մը դեկավարէ: Ահա ասոր համար է որ մանտաթերի մը պէտք ունինք: Ասոր վրայ Տօթթ. Քինկ ըսաւ թէ մանտաթեր կառավարութեան մը պէտքի հարցը միայն նոր կառավարութիւնը կազմակերպելու եւ վարժեցնելու համար չէ, այլ պէտք պիտի ըլլայ որ ժամանակ մը այդ հսկողութիւնը շարունակուի, մինչեւ որ Հայաստանի մէջ ժողովուրդներու թուոյն հաւասարակշռութիւնը հաստատուի. այսինքն մէկ կողմէ թուրքերը մեկնելով, միւս կողմէ հայերը դէպի Հայաստան գալով, հայ ժողովուրդը իր մեծամասնութիւնը ապահովէ:

Ի պատասխանի Ս. Պատրիարքը ըսաւ թէ մեծամասնութեան խնդիրը թուրքերու կողմէ մեզի դէմ նետուած ամենէն յաճախուած փաստերէն մէկն է. մինչդեռ անոնք բոլորովին անիրաւ են այս կէտի մէջ, որովհետեւ նոյնիսկ պատերազմէն առաջ իրենք մեծամասնութիւն չէին կազմեր հայաբնակ գաւառներուն մէջ: Թուրքերը իրենց այս փաստը կը յենուն այն կէտին վրայ թէ հայերը մէկ կողմ եւ ամբողջ իսլամները միւս կողմն են, մինչդեռ իրապէս այդ երկրին մէջ իսլամ ըսուած ժողովուրդը կը բաղկանայ ոչ միայն թուրքերէ, այլ եւ քիւրտերէ, չերքէզներէ, եզգիտ[ի]ներէ, արաբներէ եւայլն: Այսպէս եթէ նկատի առնուի իրողութիւնը, հայերը միշտ մեծամասնութիւն կը կազմեն: Թուրքերը արդէն վերջէն եկած ժողովուրդ մ'են, եւ ինչպէս Պուկարիա, Սերայիա եւ այլ տէրութիւններու կազմուած պահուն եկուոր թուրք ժողովուրդը թողուցին այդ երկիրները եւ հեռացան, նոյնը պիտի հանդիպի Հայաստանի մէջ, ուրկէ պիտի հեռանան բոլոր թուրք պաշտօնէութիւնը եւ հարստահարիչ տարրը. այնպէս որ շատ քիչ մաս մը պիտի մնայ: Իսկ քիւրտ տարրը, որ տեղացի է եւ դարերէ ի վեր մեզի [հետ] ապրած, պիտի մնայ հոն եւ մեզի հետ շատ լաւ պիտի կենակցի: Անշուշտ նկատի առնելու չէ այն քիւրտերը, որոնք թուրք կրթութիւն ստացած եւ թուրք մտայնութեամբ տոգորուած են: Ասոր ապացոյցը տուին, վերջին պատերազմի շրջանին, եզգիտիները, որոնք քիւրտ ցեղին կը պատկանին եւ մեզի հետ միացան ու կռուեցան թուրքերուն դէմ, իսկ Տէրսիմի քիւրտերը, որ գրգռւալաշ են, Խարբերդի դաշտէն եւ այլ կողմերէն հազարաւոր հայեր ազատեցին ու պահպանեցին:

Անկէ յետոյ Տօթթ. Քինկ հարցուց թէ «վեց վիլայէթներու մէջ ի՞նչ է այժմ հայոց թիւը»: Տօթթ. Դաւիթեան պատասխանեց թէ մեր վերջին տեղեկութեանց համաձայն 150000ի մօտ հայեր կը գտնուին այժմ նոյն վիլայէթներուն մէջ, մէջը հաշուելով Տրապիզոնէն մաս մը եւ թիւրքերու ու քիւրտերու մօտ գտնուած որբերն ու կիները: 300000 հայ գաղթականներ Կովկաս կը գտնուին, 120000 1895ի ջարդէն փախած նախկին հայ գաղթականներ եւս կան հոն, որոնցմէ 8000էն աւելի կը գտնուին Սօխում, որոնք ջերմ

փափագ կը յայտնեն դառնալ Հայաստան: Միջազգետքի, Պաղեստինի եւ Սուրիոյ մէջ կը գտնուին այժմ 120,000ի չափ հայեր, մէջը հաշուելով որբեր եւ կիներ, որոնք կը գտնուին թուրք ու արաբ ընտանիքներու մօտ: Աւելցուց նաեւ թէ եթէ հայոց պատմութիւնը նկատի առնենք, պիտի տեսնենք որ հայերը իրենց հայրենի հողին ծայր աստիճան կապուած են, եւ հակառակ դարերէ ի վեր ջարդերու, հալածանքներու եւ տարագրութեան, միշտ կառչած մնացած են իրենց հայրենի հողին, եւ իբր օրինակ շատերու մէջէ հետեւեալ պարագան ցոյց տուաւ: 1895ի ջարդի միջոցին, երբ ժողովուրդը ահաբեկած իրենց տուները փակուած էին, Սեբաստիոյ ամերիկեան քօսիւլ Մր. Ճուէտ [Milo A. Jewett] առաջարկ ներկայացուցած է տեղւոյն հայերուն թէ՛ եթէ տրամադիր են Ամերիկա գաղթելու, ինք պատրաստ է ամէն տեսակ դիւրութիւններ տալու եւ զանոնք կառավարութեան ծախքով հոն տեղաւորելու, բաւական է որ գէթ 500ի մօտ ընտանիքներ յանձնառութիւն մը ստորագրեն իրենց գաղթելու տրամադրութիւնը յայտնող: Հակառակ տիրող ահաբեկումի ու թշուառութեան՝ տասը ընտանիք միայն արձանագրուած են, որով գործը վիժած է:

Տօքթ. Զինկ հարցում ուղղեց թէ իսլամացած հայերու թուոյն մասին որոշ վիճակագրութիւն մը ունի՞ք, որուն ի պատասխան Տօքթ. Դաւիթեան ըսաւ թէ կարելի չէ որոշ վիճակագրութիւն ունենալ, որովհետեւ՝ օրինակ՝ զինադադարին սկիզբը Կեսարիոյ մէջ ունէինք 7000ի մօտ հայեր, որոնք ամբողջն ալ իսլամացած էին եւ մէկ հատ հայ անուն կրող չկար հոն, բայց հետզհետէ երբ քիչ մը ապահովութիւն ունեցան, բաւական թուով վերադարձան իրենց մայրենի կրօնքին, բայց թուրքերուն սպառնալիքները վերսկսած ըլլալով, անոնցմէ մեծ թուով դէպի Ատանա եւ Պոլիս մեկնիլ ստիպուեցան, եւ արդարեւ ես ինքս ալ եթէ հոն գտնուած ըլլայի, պիտի վարանէի քրիստոնէայ ըլլալս յայտարարելու, մինչեւ որ իրերը իրենց բնականոն վիճակը ստանային: Գերապայծառը աւելցուց թէ շատեր չէին համարձակեր իրենց քրիստոնէութիւնը յայտարարել, որովհետեւ նոր ջարդերէ կը վախնան: Ազգապետ Էֆ. Խօսք առնելով ըսաւ թէ Հայաստան ըսելով Ամբողջական Հայաստանը պէտք է նկատի առնել եւ թիւի խնդիրը նկատողութեան առնուելու պարագային, Հայ Հանրապետութիւնն ալ միասին հաշուելու է, ուր մեկուկէս միլիոնէ աւելի հայեր կան, եւ ասով այսօր իսկ մեծամասնութիւնը հայոց կողմը կ'ըլլայ: Միւս կողմէ արդարութիւնը կը պահանջէ որ մեր նահատակուած մէկ միլիոն ժողովուրդն եւս հաշուի մէջ առնուի, որովհետեւ մեր թիւը պակսեցնելու եւ արուեստական մեծամասնութիւն ձեռք բերելու մտօք թուրքերը այս բարբարոսութիւնը ի գործ դրած են:

Յետոյ ոտքի ելանք եւ Ս. Պատրիարք Հայրը շնորհակալութիւն յայտնեց պատուիրակութեան, որ մեր հարցով զբաղելու բարութիւնը կ'ունենայ եւ երախտագիտութեամբ յիշեց Ամերիկայի համակրանքն ու օժանդակութիւնը

Տեսակցութիւնը տեւեց 40 վայրկեան: Այնուհետեւ հոգեւոր պետերը մեկնեցան:

ՊՏԴ, տրցակ 8, թղթապանակ Ը, Ը853–Ը858, հայերէն ձեռագիր

Յաւելում ԺԱ.

... Փրոֆ. Պէգնեան հաղորդեց Ծով[ակալ] Պրիսթոնի տուած իր մէկ այցելութիւնը ընկերակցութեամբ Պատ. Գրիգորեանի եւ Ծովակալին ըրած յայտարարութիւնները, որոնք ցոյց կու տային թէ հայկ. անկախութիւնը վտանգուած է արեւմտեան պետութեանց կայսերապաշտ քաղաքականութեան եւ աշխարհակալութեան ձգտումներուն հետեւանօք: Վերստին դիւանագիտութեան սեղանին վրայ եկած է Արեւելեան Խնդիրը եւ այն առժամեայ գրաւման կարգադրութիւնները, որ վերջերս ծանուցուեցան, վերջնական հանգամանք առնելու երեւոյթ ունին: Փրանսա մինչեւ Տիարպէրի եւ Սվլագ իր ձեռքը տարածելով, [իսկ] Անգլիա՝ մինչեւ Քիւրտիսթանի խորերը, Հայաստանի սահմանները խիստ կը սահմանափակուին: Ծով. Պրիսթոն յետոյ ցաւելով դիտել տուած է թէ Ամերիկայի հանրային կարծիքին մէջ հայերու նկատմամբ ցոյց տրուած համակրութեան հիմա հակազդեցութիւնը առաջ գալ սկսած է եւ ասոր պատճառը մամուլի դիւան[ն] է, որ սխալ ու չափա[զան]ցեալ լուրերով հանրային կարծիքին վրայ ներգործած է նախապէս, բայց երբ իր լուրերուն չափազանցութիւնը երեւան եկած է, հակազդեցութիւնը առաջ եկած է: Ծով. Պրիսթոնի կարծեօք Թուրքիոյ զանազան մասերուն վրայ առանձին առանձին մանտաներ դրուիլը նպաստաւոր չէ, այլ պէտք է մանտան ընդ[խանուր] ըլլայ եւ եթէ այս տեսակ կարգադրութիւն մը չըլլայ, հայերը պիտի վնասուին: Իր համոզումովը թուրք կառավարութիւնը ամբողջութեամբ պէտք է ջնջուի: Արեւելեան Խնդիրը սպառնալիք մը[ն է] յարատեւ Ազգերու Դաշնակցութեան դէմ եւ կրնայ նոյնիսկ զայն քայքայել:

Թուրքիան իր ամբողջութեան մէջ պահուելով նոր կազմուած կառավարութեան մէջ նկատելի գլխաւոր խնդիրները եւ կառավարութեան հիմն պէտք է ըլլայ.

- 1° Բաժանում պետութեան եւ կրօնի.
- 2° Խիստ ու անկաշառ արդարութիւն.
- 3° Տեղական շրջանակներու յատուկ օրէնքներ.
- 4° Ուսուցման միջազգայնացում:

Ծով. Պրիսթոն դիտել տուաւ թէ հայերու մէջ տիրող կուսակցական պայքարները եւ ցոյց տրուած զարմանալի մտայնութիւնն ալ շատ գէշ ազդած է: Ըսած է թէ հայ նախարարի մը երբ ցոյց կու տան իր հետեւած քաղաքականութեան աղետաբեր հետեւանքները եւ անկէ առաջ գալիք մարդկային կորուստները, նախարարը կը պատասխանէ թէ «մէկ միլիոն հայ մեռաւ, թող 100,000 եւս ջարդուի»:

Ծով. Պրիսթոլ նոյնպէս թուրքերու առաջ բերած Միլլի շարժումը նպաստաւոր կը մեկնէ: Ինքն համոզուած է թէ Թուրքիան պիտի բաժնուի, ինչ որ նպաստաւոր չի գտներ նոյնիսկ աշխարհի համար: Կը կարծէ թէ անգլիական եւ ֆրանսական շահերուն կ'ընդհարի ամերիկեան մանտան ստանձնելու խնդիրը եւ ասոր համար նպաստաւոր կը գտնէ որ միակ մանտայի մը տակ առնուած Թուրքիա յետոյ բաժնուի:

Նոյնպէս ինք համոզուած է [թէ] դիւանագիտութիւնը իր բոլոր էնթրիկներով եւ շահերու համաձայն կը գործէ: Անգլիա կը գործէ Կովկասի մէջ եւ Էնվէր փաշան կը գտնուի Կովկաս եւ նոյնիսկ կը քաջալերուի անգլիացիներէ:

Համազգային Խորհուրդի 8 Հոկտեմբեր 1919-ի նիստ
Համահաւաք Ա., էջ 93–94

Յաւելուած ԺԲ.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻԻՆ
ԱՏԱՆԱ

Ատանա, 30 Յուլիս 1919

Խիստ զաղտնի

Ամենապատիւ
Տ. Չաւէն Սրբ. Արքեպիսկոպոս
Պատրիարք Կ. Պոլսոյ
Ի Կ. Պոլիս

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր,

Օգտուելով Ատանայի Հայ Ազգային Միութեան Ատենադպիր Տիար Կարապետ Աբրահամեանի դէպի Պոլիս ճամբորդութենէն, պատիւ ունիմ եւ պարտք կը համրեմ ներկայ գրութիւնովս Ձեր Սրբազնութեան խորին ուշադրութեան ներկայացնելու Կիլիկիոյ ընդհանուր վիճակը, Ազգային-ներքին, տնտեսական, հանրային ապահովութեան եւ քաղաքական տեսակէտներով:

Ազգային-ներքին կեանքը` Հայ ժողովուրդին տարագրութենէ վերադարձի վաղորդայնին, ի հարկէ բնականոն վիճակ մը չի կրնար ստացած ըլլալ. սակայն, շնորհիւ ազգ.-եկեղեցական իշխանութեանց եւ զանազան ժողովրդային, ինչպէս նաեւ նպաստամատոյց, խնամատարական, բարեգործական, որբախնամ եւ բժշկական-առողջապահական հաստատութեանց, եւ այս ամենէն աւելի` շնորհիւ Հայ Ազգային Միութեան, որ այսօր ամբողջ Կիլիկիոյ հայութիւնը իրարու հետ կապակցութեան դնող եւ գրաւման զինուորական եւ քաղաքական իշխանութեանց հետ յանուն ազգին պաշտօնապէս յարաբերող միակ ազգային քաղաքական կազմակերպութիւնն է. շնորհիւ, կ'ըսեմ, այս բոլորին միացեալ եւ ներդաշնակ ջանքերուն եւ եռանդուն գործունէութեանը, օր ըստ օրէ ազգային-ներքին կացութիւնը բարուրդելու շաւղին մէջն է, եւ կը յուսանք որ, ներկայ ծանր վայրկեաններուն այնքան անհրաժեշտ եղող ազգային ընդհանուր համերաշխութեան պահպանմամբ, հետզհետէ աւելի գոհացուցիչ ներքին կեանք մը կ'ունենանք, ինչ որ նախաշաւիղը եւ կորիզը պիտի ըլլայ մօտաւոր ապագային ստեղծուելիք հայկական քաղաքական ազատ գոյավիճակին:

Իբրեւ Ազգ. Պատուիրակութեան Լիազօր Ներկայացուցիչ` ազգային

ներքին կեանքին մէջ իմ գլխաւոր մտահոգութիւնս է ազգային զանազան հաստատութեանց փոխ յարաբերութիւններուն ճշդումը եւ կանոնաւորութիւնը, անոնցմէ իւրաքանչիւրին նպաստի եւ այլ մարգերու մէջ աշխատութեանց յարմար եւ պատշաճաւոր համադրութիւնը, որպէս զի անոնց գործունէութիւնները իրար չխաչաձեւեն եւ ժամանակի, ճիգի ու դրամի զուր վատնում եւ անօգուտ ցրումում տեղի չունենայ: Այս անհրաժեշտ նպատակին հասնելու համար, ամենօրեայ խորհրդակցութեան եւ գործակցութեան մէջ եմ մասնաւորապէս Ատանայի, իբրեւ կեդրոնավայր ամբողջ Կիլիկիոյ, Ազգային Միութեան հետ: Գործերու կանոնաւորման եւ դասաւորման մէջ աւելի եւս յաջողելու համար, անհրաժեշտ կը նկատեմ եւ ըստ այնմ կը խնդրեմ Զերդ Սրբազնութենէն եւ Զեր Գերապատութեան միջոցաւ Կ. Պոլսոյ եւ առ հասարակ Ազգ. Պատրիարքարանի գիտակցութեամբ ու հրահանգներովը գործող խնամատարական եւ այլն բոլոր մարմիններէն որպէս զի իրենց յարաբերութիւնները եւ գործառնութիւնները ըստ կարելւոյն եւ նախընտրաբար Ամբողջ. Հայաստանի Պատուիրակութեան ներկայացուցչութեան եւ Ատանայի Հայ Ազգային Միութեան հետ, կամ գոնէ անոնց գիտութեամբը եւ վերին հսկողութեանը տակ կատարեն, փոխանակ իրենց ամբողջ գործին ղեկավարութիւնը եւ նիւթական մատակարարութիւնը յանձնելու իրենց կողմէ խրկուած եւ միմիայն իրենց առջեւ պատասխանատու ներկայացուցիչներու, որոնք իրենց այս լիազօրութեան բերմամբ իսկ՝ կրնան հակամէտ դառնալ ինքնագլուխ գործելու եւ այս կերպով խանգարելու գործերու փափաքուած ներդաշնակութիւնը: Կիլիկիոյ մէջ ազգ. քաղաքական վարչութիւնը, իր բոլոր ճիւղերով, պէտք է ամփոփուի ու կեդրոնանայ Պատուիրակութեան ներկայացուցչութեան եւ Ազգային Միութեան ձեռքերուն մէջ. եւ կարգապահութեան ու գործերու կանոնաւորութեան էական մէկ պահանջն է որ ազգային ամէն կարգի հաստատութիւններ եւ միութիւններ ենթարկուին անոնց իրաւասութեանը եւ վերին հսկողութեանը: Ասիկա ընդհանուր սկզբունք մըն է որուն վրայ կը ծանրանամ, առանց այս կամ այն ազգային մարմնոյն կամ հաստատութեան ցարդ ունեցած գործելակերպը քննադատելու ոեւէ դիտաւորութեան:

Տնտեսական վիճակ. - Զախտի փորձեմ տեղեկագրութեանս սուղ էջերուն մէջ մանրամասն գաղափար մը տալ ամբողջ Կիլիկիոյ մէջ (Մարաշի Սանճագն ալ միասին առնուած) տիրող թշուառութեան եւ տնտեսական անբաղձալի կացութեան վրայ: Կիլիկեան հայ լրագիրները օրը օրին կը պատկերացնեն տասնեակ հազարաւոր տարագրութենէ դարձողներու,

որբերու, այրիներու կիսամերկ ու սովամահ վիճակին եւ անոնց անմիջական կարիքներուն ահաւոր ծաւալը: Չանագան կողմերէ եկած նպաստները, բիւրաւոր անտուն անգործ թշուառներու պատսպարան եւ գործ հայթայթելու, ուտեստ, զգեստ եւ նպաստ բաշխելու, որբերն ու այրիները հոգալու, երկրին հայ տարրին արմատապէս քայքայուած տնտեսութիւնը վերականգնելու համար եղած ձեռնարկներն ու աշխատութիւնները,- մէջն ըլլալով նաեւ ֆրանսական, անգլիական իշխանութեանց այս նպատակներով յատկացուցած պետական նպաստները եւ ձեռք առած միջոցները, ինչպէս նաեւ ամերիկեան միսիօնարական հաստատութեանց մարդասիրական ջանքերն ու նպաստները,- կարիքին մեծութեան հանդէպ բոլորովին անբաւական են, այնպէս որ կացութիւնը միախորհիչ ըլլալէ շատ հեռու է: Եւ երբ կը մտածենք որ ամառնային բարեգութ եղանակը անցնելու վրայ է ու կը մօտենայ ձմեռը, պարզապէս կը սոսկանք այն աղիոգորմ պատկերին առաջեւ գոր պիտի ներկայացնէ կիլիկեան հայութիւնը խստաշունչ եղանակին: Հայկական թանկագին կեանքերու նոր հունձք մը կը սպառնայ՝ զգեստի, հացի, բնակարանի, ամէն կարգի նախնական պէտքերու պակասութեան, ինչպէս նաեւ թշուառութեան անբաժան ընկեր եւ հետեւանք հիւանդութեանց եւ համաճարակներու երեսէն: Ազգային Միութեան հետ միասին խղճամիտ ուսումնասիրութեամբ քննած ու հաշուած ենք որ, վերոյիշեալ ամէն կարգի անկանոն եւ պատահական նպաստներէն եւ նոյն իսկ զանազան հայկական հաստատութեանց կողմէ արդէն սահմանուած կանոնաւոր սխտէմայթք նպաստներէն բոլորովին անկախաբար, ամսական յաւելուածական առ նուազն 200,000 ֆրանքի կանոնաւոր, հաստատուն գումար մը հարկաւոր է՝ Կիլիկիոյ բազմադիմի կարիքներուն փոքր ի շատէ բաւարարութիւն տալու համար,- եւ այս իսկ դարձեալ չի նշանակեր կացութեան արմատական դարմանումը՝ որ միայն ազգային կառավարական հօգոր կազմի մը՝ մաղթենք մօտաւոր՝ հաստատութեամբը եւ պետական զանձէ պահանջին համապատասխան չափով գումարներու հայթայթումովը միայն կրնայ գլուխ հանուիլ: Այս երկու հարիւր հազար ֆրանքի կանոնաւոր ամսական գումարին պէտք ունինք, ոչ միայն վերոգրեալ զանազան կարգի կարիքներուն մեր կողմէ եւս մասամբ հասնելու համար, այլ եւ ի մէջ այլոց, ներկայ Հայկական Լեզեռնի զինուորներուն՝ ըլլայ արձակուրդով քաղաք իջած ժամանակ, ըլլայ իրենց բանակատեղիներուն մէջ՝ փոքր օգնութիւններ ընելու, արձակուած զինուորներուն ժամանակաւորապէս օգնելու եւ անոնց գործ հայթայթելու, զինուորներու պարագաներուն եւ ընտանիքներուն օգնելու եւ այս կերպով զինուորներուն մէջ վառ պահելու համար այն համոզումը թէ ազգը զիրենք չէ մոռցած եւ կը

շահագրգռուի ու կը մտահոգուի իրենց վիճակով եւ իրենց ցաւերով: Եթէ այս անհրաժեշտ հոգածութիւնը պակսի մեր կողմէ, Հայկական Լեզունը, որ արդէն իր սկզբնական թիւին գրեթէ մէկ երրորդին վերածուած է, բոլորովին բարոյալքուելու եւ ցրուելու վտանգին տակ կը գտնուի. իսկ թէ այս Հայկական Լեզունին գոյութեան պահպանումը եւ յարատեւ ներկայութիւնը Կիլիկիոյ մէջ, մինչեւ երկրին քաղաքական կացութեան վերջնական կարգադրութիւնը, որքան անհրաժեշտ եւ օգտակար է Կիլիկիոյ հայութեան ապահովութեան տեսակէտով ինչպէս նաեւ մեր քաղաքական իրաւունքներուն պաշտպանութեան համար իբրեւ կենդանի փաստ մը – այդ ամէնը քաջայայտ է Ձերդ Սրբազնութեան:

Այս 200,000 ֆրանքի նուազագոյն գումարին ամսէ ամիս կանոնաւորապէս պատուիրակութեան ներկայացուցչութեան տրամադրութեան տակ դրուիլը Էական պայման մըն է ըստ կարելոյն բաւարարութիւն տրուելու Կիլիկիոյ 150,000ի արդէն մօտեցող թշուառ հայութեան անմիջական կենսական պէտքերուն:

Ազգային Միութեան հետ համախորհուրդ, անհրաժեշտ նկատեցինք այս մասին թախանձագին դիմում ընել միանգամայն Ազգային Պատրիարքարանին, Ամբողջական Հայաստանի Փարիզի Պատուիրակութեան եւ Հայկական Հանրապետութեան կառավարութեանը: Լիայոյս ենք որ Ձեր Սրբազնութիւնը, բարեհաճելով հանդերձ իսկոյն բանակցութեան մէջ մտնել վերոյիշեալ երկու պաշտօնական մարմիններուն հետ, որպէս զի գո՛նէ Սեպտ.ի սկիզբէն սկսեալ ամսէ ամիս եւ կանոնաւորապէս վերոյիշեալ գումարը մեզի տրամադրուի, անոնց եւ Ազգ. Պատրիարքարանի կողմէ, իւրաքանչիւրն ստանձնելով իր բաժինը, ներկայիս թախանձագին կը խնդրենք Ձեր Սրբազնութենէն որ Օգոստոսի համար մեզի անմիջապէս տրամադրէ ինչ որ հնարաւոր է Պատրիարքարանի եւ իրեն հետ անմիջական կապ ունեցող ազգային մարմիններու պատրաստի հիմնադրամներէն: Կիլիկիոյ մեր ազգային կազմակերպութեան լրացումն ու կատարելագործումը, ազգային տնտեսական կեանքին բարելաւումը եւ ազգային ընդհանուր վերաշինութեան գործին կանոնաւոր եւ հաստատուն հիմերու վրայ գո՛նէ սկզբնաւորութիւնը, դժբաղդաբար վտանգի տակ գտնուող մեր Կիլիկեան Դատին մեր բաղձանքներուն համաձայն նուաճումին տեսակէտէն առաջնակարգ կարեւորութիւն ունի: Եթէ այս վերջին տեսակէտին հետ նկատի առնուի նաեւ կարիքներուն բազմազանութիւնը եւ այստեղ տիրող թշուառութեան ահաւոր անհունութիւնը, պիտի գնահատուի անշուշտ թէ մեր ներկայացուցած նիւթական այս նուազագոյն պահանջը իրապէս խիստ համեստ եւ չափաւոր է եւ անոր գոհացումը անհրաժեշտ:

Հակառակ պարագային, կը վախճանամ որ, ամէն օր ամէն կողմէ ներկայացուող խնդրանքներուն եւ պահանջներուն եւ ուրիշ ամէն կարգի բարդութիւններուն եւ դժուարութիւններուն առջեւ անկարողութեան մատնուած՝ Ազգային Միութեան անդամները՝ թէ՛ այստեղ եւ թէ Կիլիկիոյ միւս քաղաքներուն մէջ, չկրնան ընդերկար դիմանալ պատասխանատուութեան այն ահարկու բեռին որ կը ծանրանայ իրենց ուսերուն վրայ, եւ հակառակ այն անխոնջ անձնուիրութեան որով փարած են ազգային գործին, մի առ մի ստիպուին քաշուիլ իրենց ապերախտ եւ տաժանելի պաշտօններէն, ինչ որ այս դժբաղդ երկրին համար չարիքներուն մեծագոյնը պիտի ըլլար, ազգային գործերը կատարեալ անիշխանութեան մը մատնելով:

Ձեր բարձր ուշադրութիւնը կը հրաւիրենք նաեւ սա կէտին վրայ որ, մեր որբանոցներուն, արհեստանոցներուն, սովեալներուն եւ հիւանդանոցներուն, ինչպէս նաեւ մեր ազգային վարժարաններուն եւ զանազան կարգի բարեսիրական հաստատութիւններուն գրաւման իշխանութեանց կողմէ եղած կամ առաջարկուած նպաստները,- որոնք մեր վերոգրեալ հաշուէն դուրս կը մնան եւ գործնք ընդունելու դժբաղդ հարկին տակ կը գտնուինք,- հեռի անշահախնդիր եւ զուտ մարդասիրական նկատումներու արդիւնք ըլլալէ, կը ծառայեցուն քաղաքական շիլ նպատակներու եւ մեր ազգային ներքին գործերուն մէջ անհարկի միջամտութիւններու, կարծես ուզուելով մեզ գրկել նոյն իսկ ազգային ինքնուրոյնութեան եւ մեր ներքին գործերու ազատ վարչութեան եւ մատակարարութեան այն իրաւունքներէն եւ առանձնաշնորհումներէն զորս կը վայելէինք թրքական վարչութեան բնականոն շրջաններուն մէջ: Հետեւաբար պէտք է ամէնքս լաւ համոզուած ըլլանք թէ՛ որքան մեծ ըլլայ մեր ճիգը մեր կարիքներուն ազգային միջոցներով բաւարարութիւն տալուն մէջ, նոյնքան կորովի կերպով պիտի կրնանք պահպանել եւ նոյն իսկ ընդլայնել մեր ազգային վարչական իրաւունքները, եւ թէ, ընդհակառակը, նպաստի եւ օգնութեան գործին մէջէն մեր արդէն ստանձնած բաժնին մէջ ի յայտ եկած փոքրիկ տատամսում մը անխուսափելիօրէն տեղի պիտի տայ եւ իբրեւ պատրուակ պիտի գործածուի մեր գործերուն մէջ օտար միջամտութեան ընդլայնումին եւ ուղղակի կամ անուղղակի պիտի վնասէ մեր Կիլիկեան Դատին: Պարզ խօսելով, ինչպէս որ օտարին համար նպաստի եւ օգնութեան գործը քաղաքական նպատակներու կը ծառայէ, նոյնպէս մեր համանման գործունէութիւնը, բացի մեր ժողովուրդին գոյութեան պահպանման տեսակէտով իր անհրաժեշտութենէն, ունի եւ իր քաղաքական կողմը որ մերայնոց ուշադրութենէն պէտք չէ վրիպի երբեք:

Հանրային ապահովություն. - Հակառակ որ երկիրը աւելի քան եօթը ամիսներ է ի վեր Դաշնակից ուժերը գրաւում է եւ իր մէկ մասը (Ատանայի Վիլայէթ) ֆրանսական վարչութեան տակ կը գտնուի եւ մէկ մասն ալ (Մարաշի Սանճագը)՝ անգլիական վարչութեան տակ, ապահովութիւնը կը պակսի ամենուրեք: Այս բացատրութիւնը շատ մեղմ պիտի ըլլար երկրին վիճակը պատկերացնելու համար: Թուրքերը, որոնք թերեւս սկիզբները ընկճում էին եւ համակերպած յաղթումի իրենց ճակատագրին, երկար ամիսներու փորձառութեամբ տեսնելով եւ համոզուելով թէ յաղթումին եւ անոր գոհին, թուրք թշնամիին եւ Դաշնակիցներու կողքն ի վեր իր ազատութեանը համար արիւն թափող հայուն միջեւ գրեթէ վարմունքի տարբերութիւն չեն դնէր գրաւման իշխանութիւնները, հետզհետէ խելքի եկան ու քաջալերուած են եւ սկսած են նոր յոյսեր սնուցանել երկրին մէջ իրենց նախկին գերակշիռ դիրքը եւ հարստահարիչ առանձնաշնորհութիւնը վերստին ձեռք անցընելու: Եւ որովհետեւ ամբողջ Թուրքիոյ մէջ Դաշնակիցներու վերաբերումը դէպի թուրքերը շատ աւելի մեղմ եղաւ քան ինչ որ թուրքերը իրենք կը սպասէին, ամբողջ Թուրքիոյ մէջ վերաբարձուած յոյսերը՝ երկրին ամբողջականութիւնը պահպանելու (յոյսեր որ մենք տեսանք որ իրենց արտայայտութիւնը գտան նոյն իսկ Փարիզի Հաշտութեան Վեհաժողովին առջեւ՝ թուրք պատուիրակութեան պաշտօնական յիշատակագիրներուն մէջ), այդ յոյսերը, կ'ըսեմ, առիթ տուին որ ամէն տեղ իթթիհատական տարբերը եւ առ հասարակ մուր ռուժերը գլուխ վերցնեն եւ սահմանէ սահման անցնելով թուրք ժողովուրդին մէջ գրգռութիւն առաջ բերեն եւ գաղտնի ռուժեր կազմակերպեն: Ամբողջ Կիլիկիոյ մէջ յայտնի ջարդարարներէն բանտարկուածները (պատժուած ոչ որ կայ, կրնամ ըսել) մատի վրայ կը համրուին եւ թէ՛ ֆրանսական եւ թէ՛ անգլիական իշխանութիւնք գրեթէ կը ջղագրգռուին երբ հայերու կողմէ ջարդարարներու կամ չարագործներու ցանկեր կը մատուցուին, անոնց պատժումը խնդրելով: Ամենուրեք, Դաշնակից գրաւման ռուժերու առընթեր, թուրքական վարչութիւնը պահպանուած է իր բոլոր ճիւղերով, մէջն ըլլալով նաեւ ռստիկանութիւնը, որուն մէջ սակայն սակաւաթիւ հայեր ալ մտցում են, ինչպէս նաեւ օտար եւ հայ սպաներ ու ենթասպաներ: Ներկայ առժամայ գրաւման վարչութիւնը թուրքերու վերաբերմամբ կարելի է համեմատութեան դնել Եգիպտոսի մէջ Անգլիոյ կողմէ գործադրուած վարչական սիստէմին հետ: Թուրքերը չէին երագեր անգամ որ այսչափ մեղմ եւ նպաստաւոր վարմունքի մը պիտի արժանանային: Բայց թուրքերուն հոգեբանութիւնը Ձեզ քաջ ծանօթ ըլլալով, կրնաք մակաբերել որ անոնք, փոխանակ պարզապէս գոհ ըլլալու այս բարեացակամ վարմունքէն,

ընդհակառակը աւելի ամբարտաւան եւ պահանջկոտ դարձած են եւ հիմա արդէն բոլորովին մոռցած են թէ իրենք յաղթուածներ են:

Այս պատկերը ո՛չ թէ միայն Կիլիկիոյ, այլ կարելի է ըսել ամբողջ Թուրքիոյ համայնապատկերն է այս միջոցիս, մէջն ըլլալով նոյն իսկ մայրաքաղաքը. ա՛լ չեմ խօսիր չգրաւուած մասերուն վրայ ուր պատկերը շատ աւելի մութ ու սեւ գիծերով կը ներկայանայ եւ ուր իթթիհատական, համիլամական, համաթուրքական, քրդական, աշիրէթական եւ ասպատակային ու ապստամբական շարժումը բոլորովին մերկապարանոց ու սանձարձակ է: Այս ամէնը, կարելի է ըսել, վերագրելի է առ հասարակ բոլոր դաշնակից ազգերու Թուրքիոյ հանդէպ ունեցած ընդհանուր վերաբերումին, հետեւանք թերեւս արեւելքի ազգերու, մանաւանդ թուրքերու հոգեբանութեան եւ անոնց հետ վարուելու կերպին մասին անոնց յաւիտեական տգիտութեան...

Չիրադ է իցէ, երկիրը բացարձակ անապահովութեան մէջ է: Չինահաւաքութիւնը նոյնչափ գաւեշտական ձեւ մը առած է ո՛րչափ պիտի ըլլար եթէ նախկին թուրք կառավարութեան ձեռքով կատարուէր: Հաստատապէս գիտենք որ թուրքերը իրենց զէնքերուն հարիւրին մէկ ոչինչ տոկոսը յանձնած են իշխանութիւններուն, թէ ամբողջ երկրին մէջ ամենուրեք զէնքի ու զինամթերքի թաքստոցներ ունին, եւ այդ զէնքերը ի հարկին մեզի դէմ գործածելու, քրիստոնէից ընդհանուր ջարդ կազմակերպելու համար ունին գաղտնի դաւադրական կազմակերպութիւն: Չինեալ հրոսակներ երկրին ամէն կողմը կը վիստան: Լրագիրներէ ամէն օր կը տեղեկանանք արդէն մասնակի յարձակումներու եւ սպանութիւններու դէպքերուն: Իրերու այս վիճակին մէջ հայերը իրենց գիւղերէն դուրս չեն կրնար ելլալ իրենց արտերը վարելու կամ անոնց հունձքը քաղելու համար: Երկրին մէջ այս կերպով կատարեալ պաշարման վիճակ մ'է որ կը տիրէ հայերուն համար: Նոյն իսկ քաղաքներուն մէջ ապահովութիւնը խաբուսիկ է. Դաշնակից զօրքերը անտարակոյս կրնան զսպել խռովութիւնները, բայց անոնց պատահելէն եւ ո՛վ գիտէ քանի՜ անմեղներ զոհուելէ վերջ...:

Այս ըլլալով հանրային անդորրութեան տեսակէտով Կիլիկիոյ վիճակը, որ, ինչպէս ըսինք, աւելի կամ նուազ կը համապատասխանէ ամբողջ Թուրքիոյ կացութեան, - Ազգ. Պատրիարքարանը, իմ համեստ կարծիքովս, այս մասին կրնայ կորովի դիմումներ ընել Դաշնակից Պետութիւններուն ընդհանրապէս, իսկ Կիլիկիոյ մէջ տիրող անապահովութեան մասին՝ Փրանսայի եւ Անգլիոյ՝ մասնաւորապէս, մատնանշելով թուրքական էթնիկները եւ շարժումները եւ ծանրանալով քրիստոնէայ դատին պաշտպանութեան պէտքին վրայ:

Կիլիկիոյ քաղաքական կացութիւնը.- Ասիկա ամենէն փափուկ կէտն է, ինչպէս նաեւ ամենէն կենսականը՝ մեր ազգային արդար ակնկալութիւններուն տեսակէտէն: Այստեղ, Կիլիկիոյ մէջ թէւէ գրաւման անգլիական եւ ֆրանսական զօրքեր կան, բայց քաղաքական վարչութիւնը ֆրանսացւոց ձեռքն է: Չնայելով որ ֆրանսացիք այս տեղ մտած են նախապէս Հայկական Լեզնոնի հայ զօրքերով, հետզհետէ ջանացած են այդ հայ զօրքերուն թիւը մէյմէկ պատրուակով նուազեցնել, անոնց մէջ զինուորականութենէ արձակման պահանջը զանազան դարձուածքներով իրենք ստեղծելով՝ յաջողած են անոնց թիւը սկզբնական թիւին մօտաւորապէս 1/3ին իջեցնել ու ժամանակէ մ'ի վեր 4 հայկական գումարտակներու (bataillon) բեկորները հեռացնելով քաղաքներէն՝ գրեթէ արգելափակած են Այրան, Գուրթուրգ եւ Արապլար կոչուած տեղերը, ու անոնց տեղ բերած են հետզհետէ ալճերիացի եւ ֆրանսացի զօրքեր: Կրնայ երեւակայուիլ թէ ինչպիսի ծանր դժգոհութիւններ ծնունդ առած են հայ լեզնոնականներու շարքերուն մէջ՝ այս դարձուածքներու երեսէն, ու մենք այժմ մնացեալ ցանցառ թիւը պահպանելու, զանոնք շարքերուն մէջ մնալ եւ յարատեւել համոզելու համար ահագին դժուարութիւններ կը կրենք: Այսպէս, երկրին մէջ հայկական զինուորական տարրը անշքացնելով ու մեկուսացնելով, ֆրանսական վարչութիւնը մասնաւորապէս ջանացած է երկրին քաղաքական կացութիւնը գերծ կացուցանել որոշ հայկական նկարագրէ: Այս երկրի մասին ֆրանսական մտածելակերպը հետեւեալ կերպով կրնայ պատկերացուիլ.- Կիլիկիա թշնամիէն գրաւուած հողամաս մըն է (ո՛չ թէ հայկական բնաշխարհ մը). ան ունի խառն ազգաբնակչութիւն – թուրք, հայ, յոյն, չերքէզ, քիւրտ, արապ, սուրիացի եւ այլն. հետեւաբար ան պէտք է կառավարուի (ու կը կառավարուի) բոլոր ցեղերը միեւնոյն հաւասարութեան վրայ բռնելով եւ անոնցմէ ո՛չ մէկուն ընծայելով մասնաւոր քաղաքական իրաւունք կամ առանձնաշնորհեալ դիրք: Մարդ ի գուր կը փնտռէ վարուելակերպի հիմնական տարբերութիւն մը երեկուան թշնամի, քաղաքակրթութեան անընդունակ թուրքին, կիսավայրենի քիւրտին, աւազակաբարոյ չերքէզին եւ Դաշնակիցներու կողքին իր ազատութեան համար կռուող եւ այս երկրին վրայ պատմական անժխտելի իրաւունքներ ունեցող քրիստոնէայ եւ քաղաքակիրթ հայ ժողովուրդին միջեւ: Յոյները, որոնք աննշան թիւ մը կը կազմեն եւ որոնք սակայն ինքնաբուռն եւ սիրայօժար կը ճանչնան ու կ'ընդունին մեր իրաւունքները այս երկրին վրայ, թուրքին եւ հայուն համահաւասար չափով -եթէ ոչ աւելի- կը նպաստաւորուին ֆրանսական իշխանութիւններէն: Արաբները, չերքէզները, մանաւանդ սուրիացիները, ամէնքն ալ աննշան փոքրամասնութիւններ այս երկրին

մէջ, մասնաւորապէս կը քաջալերուին ու կը նպաստաւորուին՝ միշտ երկրին հայկական հանգամանքը քողարկելու եւ աստիճանաբար նուազեցնելու դիտաւորութեամբ: Վարչական պաշտօնէութեան մէջ կ'առնուին ամէն ազգէ անհատներ առանց ոեւէ չափանիշի. ոստիկանութեան մէջ հազիւ 1/10 կը կազմեն հայերը, թուրքերը կը կազմեն ջախջախիչ մեծամասնութիւնը, յետոյ կուգան արաբները, չերքէզները, ուրիշ ցեղերը: Երկիրը կառավարելու այս ձեւը - դիւրին է գուշակել- կը ձգտի հայկական յաւակնութիւնները ի սպառ չեզոքացնելու եւ ֆրանսական վարչութիւնը յաւերժացնելու երկրին մէջ: Ոչ ոքի համար գաղտնիք է արդարեւ որ Ֆրանսան կը ձգտի Կիլիկիոյ նկատմամբ արժեցնել 1916ի անկո-ֆրանգո-ռուսական գաղտնի համաձայնութեան իրեն ընծայած «իրաւունք»ները, իբրեւ ֆրանսական ազդեցութեան շրջանակ, առանց ոեւէ վերապահութեան: Ասկէ զատ, ինչպէս լրագիրներէն, մասնաւորապէս Temps լրագրի վերջին հրատարակութիւններէն գիտէք, Ֆրանսա կը յաւակնի «պատմական իրաւունքներ» ունենալ այս երկրին մէջ: Իրողութիւնը այն է որ ֆրանսացիք ոեւէ տրամադրութիւն չունին հրաժարելու այս հարուստ, արգաւանդ եւ գեղեցիկ երկրին վրայ իրենց փայփայած ցանկութիւններէն: Իրենց նպատակին մէջ յաջողելու համար, կաշառքով, խոստումով, ի հարկին սպառնալիքով՝ սուրիացիներէն, արաբներէն, թուրքերէն եւ այլն ստորագրութիւններ կը հաւաքեն, գոհունակութեան եւ երախտագիտութեան հեռագիրներ կ'արուեստակեն՝ հաստատող թէ երկրին ժողովուրդը ֆրանսական թելարկութեան ջերմօրէն բաղձացող է: Ասոր վրայ աւելցուցէք հայ-կաթողիկէները եւ ի նպաստ իրենց դարձնելու մասնաւոր աշխատութիւնները, Հայ Ազգային Միութեան վարկն ու ազդեցութիւնը կոտրելու եւ հայոց ներքին համերաշխութիւնը խանգարելու եւ ջլատելու համար, ո՛չ միայն հայ յարանուանութեանց առաջնորդներուն հետ, այլ նոյն իսկ հասարակութեան պարզ անհատներու հետ առանձին յարաբերութիւններ հաստատելու՝ դժբաղդաբար երբեմն յաջող՝ փորձերը, եւ մէյմէկ պատրուակով եւ ի մասնաւորի նպաստներ ընձեռնելու պատրուակին տակ՝ ազգային ամէն կարգի հաստատութեանց ներքին գործերուն միջամտելու յամառ եւ յարատեւ ջանքերը, ու կացութեան պատկերը ամբողջացուցած կ'ըլլաք:

Ազգ. Պատուիրակութիւնը, Պատրիարքարանը, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը պէտք է իրագեկ ըլլան այս ծանր կացութեան, Կիլիկիոյ մէջ մեր նուիրական եւ դարաւոր իրաւունքներուն դէմ սպառնացող այս մեծ վտանգին, եւ ըստ այնմ իրենց գերագոյն ջանքերը պէտք է նուիրեն անոր առաջքը առնելու համար, ամէն միջոց ի գործ դնելով

որ Կիլիկիան, իբրեւ լրացուցիչ եւ անբաժանելի մաս Ամբողջական Հայաստանի, անվրէպ կցուի եւ միանայ անոր, միակ անշահախնդիր պետութեան մը ժամանակաւոր հովանւոյն եւ աջակցութեանը տակ: Այդ պետութիւնը ոչ մէկ պարագայի տակ պետք է ըլլայ Ֆրանսան, այլ միայն Ամերիկայի Միացեալ Նահանգները: Տարբեր լուծում մը ո՛չ մէկ կիլիկեցիի, կրնամ ըսել ո՛չ մէկ հայու համար կրնայ ընդունելի ըլլալ երբեք, զի այդ պիտի նշանակէր Կիլիկիոյ հայութեան կորուստը եւ կամ ինչ որ նոյնն է՝ Կիլիկիոյ կորուստը հայութեան համար: Արդարեւ, բացի կոտորածի, աւարառութիւններու անմիջական վտանգէն որ, ինչպէս վերը ջանացի բացատրել, կախուած է Կիլիկիոյ հայութեան գլխուն՝ գրաւման իշխանութեանց աչքին առջեւ տեղի ունեցող թուրքական էնթրիկներուն եւ պատրաստութիւններուն երեսէն, կայ երկրորդ եւ աւելի սարսափելի վտանգ մը. անմիջապէս որ վերջնականապէս որոշուի ֆրանսական թեւարկութիւնը Կիլիկիոյ վրայ, կիլիկեցիին մէջ ծայր աստիճանին հասած դժգոհութիւնը պիտի վերածուի յուսահատութեան, յուսահատութիւն մը որուն հետեւանքները անհաշուելի պիտի ըլլան եւ որ պիտի արտայայտուի անխուսափելիօրէն դիմադրութիւններու, ըմբոստութիւններու եւ կամ զանգուածային գաղթի ձեւին տակ՝ ամէնքն ալ աղիտաբեր հայկական գերագոյն շահերու տեսակէտէն:

Քաղաքական այս մտայլ կացութեան եւ վերահաս վտանգներուն խորապէս գիտակից՝ Պատուիրակութեան ներկայացուցչութիւն եւ Ազգ. Միութիւն վերջին ծայր զգուշութեամբ կը շարժին, մէկ կողմէ ջանալով մինչեւ վերջ ուղիղ (correct) եւ հաշտ ընթացք ունենալ ֆրանսական վարչական շրջանակներու հետ, եւ միւս կողմէ պաշտպանելով, որքան հնար է, ազգային իրաւունքները եւ չառնելով քայլ մը որ զանոնք վտանգելու բնոյթն ունենար: Այս անօրինակ եւ աննախընթաց կերպով ծանր կացութեան մէջ, կը կարծենք իրաւունք ունենալ սպասելու որ ազգային վերին իշխանութիւնները,- Պատուիրակութիւն, Պատրիարքարան, Հայկական Հանրապետութիւն,- մեզի զօրավիզ եւ սատարող հանդիսանան եւ ի մասնաւորի փութան մեր տրամադրութեան տակ դնել ամսական 200,000 ֆրանքի այն անհրաժեշտ պիւտճէն որ ներկայ հանգամանքներուն մէջ բացայայտ է թէ իրօք ամենանուագագոյնն է:

Ամերիկեան Քննիչ Յանձնախումբին Կիլիկիա կատարած այցելութեան մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ շատ մը իրողութիւններ որ գլխաւոր հիմունքները կը կազմեն մեր տեղեկագրին այսքան յոռետես տրամադրութիւններուն,- այս բոլորը անձամբ կը տեղեկացնէ Ձերդ Սրբազնութեան Ատանայի Հայ Ազգային Միութեան ատենադպիր Տիար կարապետ Աբրահամեան:

Խնդրելով որ այս տեղեկագրին մէկ պատճէնը կարելի եղածին չափ շուտով եւ ամենաապահով միջոցով շնորհ ընէք հասցնելու Ազգ. Պատուիրակութեան նախագահ Ն. Վ. Պօղոս Նուպարի ձեռքը եւ երկրորդ օրինակ մըն ալ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարին ձեռքը, նոյնպէս գաղտնի, որդիական խորին յարգանաց հաւաստեօք մատչիմ ի համբոյր Ս. Աջոյդ,

Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան
Կիլիկիոյ Լիագօր Ներկայացուցիչ
Մ. Տամատեան

ՊՏԴ, տրցակ 6, թղթապանակ Անանուն2, Ը519–Ը536, հայերէն ձեռագիր

Յաւելուած ԺԳ.

[Նոյեմբեր 1919]

Մր. Ճէրարտ

Նախագահ Հայկական Անկախութեան Ամերիկեան Զոմիթէի

Նիւ-Եօրք

Օգտուելով այն պատեհութենէն որ Պատ. Գրիգորեանի Ձեր կողմերը գալը կ'ընծայէ, եւ վստահ Ձեր նախագահութեան ներքեւ գտնուող քօմիթէին հայասէր զգացումներուն, որոնց ապացոյցները միշտ տեսած ենք, կը փութանք Օսմ. Կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող հայոց անձկալից ու տագնապալի կացութիւնը Ձեզի պարզել:

Դուք որ այնքան մեծ եռանդով մը եւ ոգեւորութեամբ մը կը հետաքրքրուիք Հայ ազգին վիճակովը եւ անոր տառապանքներուն եւ ցաւերուն վերջ մը դնելու համար այնքան սիրով մը եւ անսահման ազնուութեամբ մը կ'աշխատիք, անշուշտ պիտի հաճիք նկատի առնել նաեւ մեր այս տողերը, որոնք ուրիշ նպատակ չունին եթէ ոչ իրազեկ ընելու այն կացութեան, որուն մէջ կը գտնուին այս միջոցիս թրքական իշխանութեան տակ գտնուած հայերը:

Հոն պիտի տեսնաք թէ հայերը, որոնք իրենց տառապանքները վերջացած կը կարծէին զինադադարի կնքուած օրը, այսօր, մէկ տարի յետոյ, կը գտնուին յուսահատական դրութեան մը մէջ եւ շրջապատուած՝ դարձեալ այն թշնամիներէն, որոնք իր բնաջնջումը ծրագրած էին եւ այսօր թէեւ պարտուած՝ դեռ չեն հրաժարած իրենց այս վայրագ ծրագիրը իրագործելու փափաքէն:

Հայերը թէեւ դեռ կը պահեն իրենց կորովը եւ կը մաքառին բոլոր այն դաւերուն դէմ, որոնք կը սարքուին հնձելու համար իրենց կեանքերը, սակայն զիս եւ խորհրդականներս կը տագնապեցնէ սա գաղափարը թէ ի վերջոյ ֆիզիքական անողոր զայմաններու՝ սովի, անօթութեան եւ անսուաղութեան յաղթել կարելի չպիտի ըլլայ միայն բարոյական կորովով, եւ յուսահատութիւնը ընդհանուր եւ աղէտը անդարմանելի պիտի ըլլայ:

Բոլոր բարեկամեցողութիւնները, բոլոր քաջալերութիւնները եւ նիւթական ու բարոյական աջակցութիւնները շատ անբաւական են պահպանելու համար ֆիզիքական գոյութիւնը Հայ ժողովուրդին, որ այնքան տառապած էր արդէն պատերազմի ընթացքին եւ այսօր դեռ չէ կրցած ապահովել նոյնիսկ իր ամէնէն տարրական իրաւունքները:

Անիկա կ'ապրի դեռ վախի ու սարսափի ռէժիմի մը տակ, ամէն օր

անախորժ անակնկալներու անձուկը ունենալով իր մտքին մէջ:

Մէկ խօսքով, այսօր Հայ ժողովուրդը, որ զինադադարէն անմիջապէս յետոյ պահ մը յայտարարուած էր թէ իր տառապանքի շրջանը վերջացած էր, կը գտնուի աւելի քան երբեք տագնապալի վիճակի մէջ: Այս կացութեան գլխաւոր պատճառն է յապաղիլը վերջնական հաշտութեան, որ վերստին ոգեւորեց թուրք տարրը եւ անոր ժամանակ տուաւ նոր մեքենայութիւններ եւ հնարքներ մտածելու, օգտուելու համար Յաղթական Պետութեանց համոզումի եւ կարծիքներու տարբերութիւններէն: Այս դրութիւնը անցեալին մէջ թուրք դիւանագիտութեան կողմէ երկար ատեն փորձուած եւ յաջող արդիւնքներ տուած ըլլալով, անոնք ռեւէ անպատեհութիւն չտեսան դարձեալ նոյն մեթոտին յարելու եւ զիրար խաչաձեւող եւ իրարու հակառակորդ շահեր ստեղծելու:

Պալքանեան Պատերազմէն յետոյ, ինչպէս յայտնի է, հակառակ եւրոպական դիւանագիտութեան ազդարարութեանց եւ արհամարհելով Լոնտոնի դեսպանաժողովին որոշումը, Միտիա-Էնոս գիծը անցան Օսմ. բանակները:²³¹ Եւրոպա ինք իր մէջ անհամաձայն՝ չկրցաւ յարգել տալ իր կարգադրութիւնը եւ թուրքերը մնացին Թրակիոյ մէջ: Նոյն բանը յաջողած էր ընել Սուլթան Ապտիլ Համիտ, որ 1895 Մայիս 11ին հանդիսաւորապէս յանձն առնելէ յետոյ Հայկական Նահանգներու մէջ ծրագրեալ բարեկարգումները գործադրել, դրժեց իր խոստումը եւ անհամաձայն մեծ պետութիւնները չկրցան զենքի ոյժով կամ հաւաքական ռեւէ գործողութեամբ մը հարկադրել խոստմնազանց Սուլթանը՝ գործադրելու իր հանդիսաւոր խոստումը:

Այս պարագաները չափազանց խրախուսիչ էին նորէն փորձելու համար այդ հին խաղը, միշտ վստահելով պետութեանց անհամաձայնութեան վրայ:

Մասնաւորապէս թուրք կառավարող տարրերու մէջ վերջին անգամ սա համոզումն ալ մուտք գործած է թէ եւրոպացի զինուորը ձանձրացած է

²³¹ 30 Մայիս 1913-ին Լոնտոնի մէջ ստորագրուած դաշնագրով վերջ գտած Պալքանեան Ա. Պատերազմին հետեւանքով թուրքերը հարկադրուած էին ընդունիլ թէ Միտիա-Էնոս գիծէն արեւմուտք ինկած պալքանեան հողամասերը, որոնք էր երբեմն կը գտնուէին իրենց տիրապետութեան ներքեւ, կը պատկանին իրենց բնիկ տէրերուն, բայց օգտուելով պալքանեան ինչպէս նաեւ մեծ տէրութիւններու հակադիր շահերու բախման իրողութենէն, 20 Յուլիս 1913-ին անցնելով գիծէն յարձակած էին Պուլկարիոյ վրայ եւ շարունակած իրենց յառաջխաղացքը:

պատերազմեն եւ եւրոպական կառավարութիւնք կը վախճան որ Պոլշէիկ շարժումը կը տարածուի նաեւ իրենց բանակներուն մէջ, ուստի երբեք չպիտի ուզեն որ Թուրքիոյ դէմ զենք գործածելով պատերազմի վերսկսին, մանաւանդ որ տնտեսապէս ալ կը գտնուին չափազանց ծանրաբեռնուած եւ հոգածու են ժամ առաջ պատերազմական ծախքերը գեղչելու:

Հետեւաբար կը մտածեն թէ վեհաժողովին որոշումներուն դէմ անաստելու համար Եւրոպան կատարուած իրողութեան մը առջեւ դնելը եւ զենքի ոյժով երկիրը պաշտպանելու սպառնալիքը բաւական պիտի ըլլայ յեղաշրջելու վեհաժողովին որոշումը:

Այս մտայնութեան արգասիքը ըլլալ կը թուի Մուսթաֆա Բէմալ փաշայի, Բուֆ պէյի եւ այլոց այն ձեռնարկը, որով կը ջանան ստեղծել «Ազգային Շարժում»ի մը դիմակին տակ ծածկուած ըմբոստական շարժում մը, որ իբր թէ նպատակ դրած է Թուրքիայէն անբաժան պահել բոլոր այն հողամասերը, որոնք զինադադարին կնքուած օրը անոր իշխանութեան տակ կը գտնուէին: Այս կերպով անոնք ընդդիմանալ կը կարծեն Թուրքիոյ հաւանական բաժանման եւ թրքական հողերու վրայ նոր պետութիւններու կազմութեան:

Շարժումը աւելորդ է ըսել թէ Իթթիհատական է: Ինչպէս որ Էտիրնէի խնդիրը գեղեցիկ պատրուակ մը ծառայած էր 1913 Յունուար 10ին Քեամիլ փաշայի դահլիճը տապալելու²³² եւ Իթթիհատը վերստին իշխանութեան բերելու՝ ժողովրդական զինուորականի մը՝ Մահմուտ Շէֆքետ փաշայի գլխաւորութեամբ, նոյնն նաեւ հիմա կը փորձուի Իզմիրի գրաւումը պատրուակ բռնելով: Եւ Իթթիհատը յաջողեցաւ իրապէս հակառակորդ կուսակցութենէ մը կազմուած դահլիճը տապալել եւ մասամբ իր ազդեցութիւնը զգալի ընել կառավարական գործերու մէջ:

Միլի շարժումը ուրեմն իսկ եւ իսկ Իթթիհատական շարժում մըն է եւ խոր քննութիւն մը ցոյց պիտի տայ թէ Իթթիհատի կողմէ ընդգրկուած ուղղութիւնը կը շարունակէ կատարելապէս:

Այսպէս, այս շարժումը սկսելէ անմիջապէս յետոյ սկսան մասնակի սպանութիւնները հայերու, մասնաւորապէս այնպիսի դէմքերու, որոնք

²³² «Էտիրնէի խնդիր»ը ականարկութիւն է Օսմանեան Կայսրութեան համար, այլ հողատարածքներու շարքին, Էտիրնէի կամ Ադրիանապոլսի կորուստին ի նպաստ Պուլկարիոյ, երբ հակաթթիհատական վարչապետ Քեամիլ համակերպած էր խաղաղութեան վերահաստատման պայմաններու: Խորքին մէջ Քեամիլի դահլիճը տապալած էր 23 Յունուարին, երբ Էմվեր զինու ուժով ներխուժած էր վարչապետարան եւ պարտադրած Քեամիլի հրաժարականը:

հայ որբեր ու առեւանգեալ հայ աղջիկներ եւ կիներ թուրք հարեմներէ ազատելու գործին մէջ եռանդ ցոյց տուած էին, կամ հայ ջարդարարներու դատապարտութիւնը դիւրացնելու համար փաստեր հայթայթած էին:

Բոլոր անոնք որ ջարդարարներու եւ կոդոպտիչներու դէմ բողոք կը բառնային, սպառնալիքներու առարկայ կ'ըլլային, ինչպէս նաեւ ջարդարարներու դէմ դատարանի առջեւ վկայութիւն տալու յօժարողները:

Միլի շարժումը, որ նախ վեց նահանգներու մէջ աւելի տարածուած էր եւ Փոքր Ասիոյ վրայ ազդեցութիւն չունէր, պատերազմի միջոցին Հայկական Խնդիրը արմատէն լուծելու համար գործադրուած ջարդերուն հետեւանօք Հայաստանը առանց Հայու մնացած ըլլալէն օգտուելու համար ամէն բան ըրաւ, որպէսզի ներգաղթը տեղի չունենայ: Կովկաս գտնուող հազարաւոր գաղթականներ, որոնք տրամադիր են դառնալու իրենց օճախները, արգիլուեցան զենքի ոյժով, մինչ միւս կողմէ ռուս բանակներու առջեւէն խոյս տալով Փոքր Ասիա ապաստանող թուրքերը եւ քիւրտերը, ինչպէս նաեւ Ռումելիէն բերուած գաղթականները ամէն օգնութիւն եւ աջակցութիւն ստացան եւ դեռ կը ստանան տեղաւորուելու համար Հայաստան:

Միլի կազմակերպութիւնները ոչ միայն չեն թողուր ներգաղթը, այլ [նաեւ] չորս տարի ամէն չարչարանքի ու ամէն անձկութեան տոկալով ինքզինքնին կերպով մը ապրեցնող այն սակաւաթիւ հայերը որոնք կը գտնուին այս սահմաններուն մէջ, բոլորովին ջնջելու եւ հայոց հետք իսկ չձգելու համար Հայաստանի մէջ, ձեռք առած են այնպիսի միջոցներ, որոնց նպատակը շատ թափանցիկ է:

Անոնք գրկած են բացարձակապէս այդ խեղճերը ատրաքին հաղորդակցութիւններէ: Թոյլ չեն տար որ ռեւէ դրամական օգնութիւն հասնի անոնց եւ ոչ ալ իրենք կ'օգնեն:

Ամերիկացի միսիոնարները Տիարալէքիի կուսակալութեան քրտաբնակ շրջանակներու մէջ իրենց գոյութիւնը կերպով մը քաշքշող հայերու դրամական օգնութիւն հասցնելու բարի դիտաւորութեամբ այդ կողմերը շրջագայութեան կ'երթան: Կառավարութիւնը ռստիկան զօրքերու միջոցաւ լուր կը հասցնէ քիւրտ պէկերու եւ աղաներու թէ իրենց քով գտնուած հայերը արգելափակեն եւ չթողուն որ Ամերիկացի միսիոնարները զանոնք տեսնան:

Պշիքի մէջ խեղճ հայ պառաւ կին մը յանդգնած ըլլալուն համար վերջին Օգոստոսի անկէ անցնող Միս Նորթի հետ նոյնիսկ քուրտերէն երկու բառ փոխանակել, մէկ երկու օր յետոյ անձանօթի մը կողմէ աղբիւր գացած աստեն գնդակահար սպաննուեցաւ:

Երզնկայի մէջ, փլատակներու մէջ ապրող 50–60 հայ այրի կիներ եւ մանուկներ,- երբեմնի ծաղկեալ հայութեան վերջին մնացորդը,- նոյնպէս ամենախիստ հսկողութեան տակ կը պահուին եւ անոնց արգիլուած է յարաբերութեան մտնել այն տեղ[էն] անցնող օտարականներու հետ:

Չուիցերիական Բարեկամ Հայերու Ընկերակցութեան միախոնարութիւնը Սըվազ գտնուող իր որբանոցը Երզնկա փոխադրելու մտքով Օգոստոսի վերջերը Երզնկա կը դրկէ երկու միախոնարներ՝ Սր. ... եւ Պատ. ..., որոնք պաշտօն ունէին խնդրելու որ արտօնէ գիրենք կատարելու այդ փոխադրութիւնը եւ միանգամայն իմացնելու համար թէ իրենք մտադիր են բանալու նաեւ ամէն ազգի համար հիւանդանոց մը: Միութեսարքֆը այս առաջարկին կը պատասխանէ խիստ կոշտութեամբ թէ ո՛չ որբանոցի պէտք ունին եւ [ոչ] ալ հիւանդանոցի, եւ թէ կառավարութիւնը ինքն ի վիճակի է նայելու որբերը եւ հիւանդները: Մասնաւորապէս կը յայտարարէ թէ բնաւ չի կրնար թոյլատրել որ հայ որբեր բերուին Երզնկա: Եւ կը յանձնարարէ նոյնիսկ հետեւեալ օրը մեկնիլ քաղաքէն: Միախոնարները ամէն ջանք կ'ընեն գոնէ դրամական օգնութիւն մը ընելու համար հայերու հետ յարաբերութեան մէջ մտնել, սակայն ասիկա կարելի չ'ըլլար եւ ձեռնունայն կը դառնան:

Նոյնպէս կառավարութիւնը Խարբերդի մէջ ապրող հայերը, որոնց թիւը բարեբաղդաբար բաւական մեծ է, գրկելու համար արտաքին օժանդակութենէ, Ամերիկայի համար նամակ առնել դադրեցուց, վասնզի Խարբերդի եւ շրջականերու մէջ առհասարակ չկայ տուն մը որ գոնէ մէկը չունենայ Ամերիկա գաղթած: Արդ, օգտուելով նամակներու երթելէկէն, ջարդէն ու կոտորածէն ազատուած հայերը նամակներ գրելով իրենց ազգականներուն՝ նիւթական օգնութիւններ կը խնդրէին եւ կը ստանային, ինչ որ մեծագոյն չափով մը կը նպաստէր իրենց օրապահիկը ապահովելու եւ իրենց ֆիզիքական գոյութիւնը ապահովելու համար:

Այս աղբիւրը ցամքեցնելու եւ նիւթական օգնութենէ զրկելու համար, աւելի յարմար միջոց մը չկար եթէ ոչ արգիլել թղթակցութիւնները, ինչ որ գործադրեց թուրք կառավարութիւնը:

Արդ, այս հայերը առանց արտաքին օժանդակութեան ի՞նչպէս պիտի ապրին, երբ մանաւանդ ազատութիւնը անոնց կը զլացուի, որով կը դառնան հարկադրեալ մուրացիկներ: Մինչդեռ մենք ապահով ենք թէ եթէ զինադադարէն յետոյ կարելի եղած ըլլար ստեղծելու բնականոն վիճակ մը Անատօլի մէջ եւ տրուած ըլլար աշխատելու ազատութիւնը հայերուն, այսօր շատ մը գաւառներ երբեք կարօտ չպիտի ըլլային արտաքին աջակցութեան եւ իրենց որբերը, այրիները իրենք պիտի խնամէին եւ վերականգ-

նեին իրենց քանդուած օճախները: Այն ատեն շատ մը հայեր փրկուած պիտի ըլլային այն նուաստութենէն որ այսօր պարտադրուած են կրել, ձեռք կարկառելու հարկադրուած զգալով ինքզինքնին, քանի որ իրենց ձեռքը, ոտքը կաշկանդուած է եւ չեն վայելեր աշխատելու, իրենց օրապահիկը հայթայթելու միջոցները:

Ասիկա մասնաւոր քաղաքականութիւն մըն է, որ ի գործ կը դնեն թուրքերը, թոյլ չտալու համար որ հայերը տնտեսապէս գոնէ անկախ ըլլան եւ նիւթապէս բարգաւաճին: Եւ ասոր համար դրապէս բուռն ջանքեր կ'ընեն երկրին մէկ ծայրէն մինչեւ միւսը: Բոլոր հայերու դէմ պայքար հռչակուած է: Սպառնալիքներու առարկայ կ'ըլլան բոլոր այն իսլամները, որոնք քրիստոնեաներու կամ հայերու հետ առեւտուր կ'ընեն կամ իրենց արտը ու այգին անոնց ձեռքով մշակել կու տան:

Հայ վաճառորդներ, որոնք քաղաքներէն ապրանք առնելով գիւղերը կ'երթան եւ մանրավաճառութեամբ ապրուստ մը ապահովելու կ'աշխատին եւ հողատէրեր, որոնք իրենց արտը կամ այգին անձամբ մշակելու յանդգնութիւնը կ'ունենան՝ յաճախ կը սպաննուին:

Այնպէս որ այսօր բոլոր Փոքր Ասիոյ բնակիչ հայերը բանտարկուած են իրենց տուներուն մէջ: Ոչ ոք կը համարձակի իր գիւղին շրջանակէն դուրս, դէպի իր արտը ու այգին երթալ, կամ մերձակայ գիւղը երթելու ելլալու արտը մը հայթայթելու համար:

Ասոր անմիջական հետեւանքը յայտնի է թէ ի՞նչ է: Անօթութիւն, անսուադութիւն եւ կոտորած: Սպիտակ ջարդը իր աւերը կը գործէ եւ առաջիկայ ձմեռուան եղանակին տոսկալի պիտի ըլլայ վիճակը այդ խեղճերուն, որոնք համաճարակներու ու անօթութեան զոհերը ըլլալու սահմանուած են:

Միլիին, որուն անունովը խօսողները կը հաւաստեն թէ ծրագրած է անիկա ամէն գնով դիմադրել Օսմ. երկիրներու ամբողջութենէն մատ մը չբաժնելու, կարծողներ կան թէ ծրագրած է նաեւ Երեւանի Հանրապետութեան կողմէն յարձակման մը պահուն կամ Համաձայնական բանակներու առաջացման պարագային ջարդել բոլոր քրիստոնեաները:

Կերպով մը քրիստոնեաները իր ձեռքին մէջ պատանդ կը պահէ իր կամքը հարկադրելու համար Եւրոպայի:

Այս կարծիքը որքան անհաւատալի, սակայն իրական ըլլալը որոշապէս կ'երեւայ, վասնզի տիրող անապահովութեան եւ աշխատելու ազատութիւնը գոյութիւն չունենալուն համար երբ հայերը հազիւ տեղաւորուած վերստին գաղթել կը փորձեն, անոնց դէմ արգելքներ կը հանուին: Այսպէս, Կեսարիոյ հայերէն մաս մը երբ իր բոլոր գոյքերը եւ ստացուածքները

ծախելով Կիլիկիա կը գաղթէին, վար դրուեցան Նիյտէի մէջ եւ բռնի ոստիկանական ոյժով վերադարձուեցան կրկին Կեսարիա: Յետոյ ստուգուեցաւ թէ նախարարական խորհուրդի որոշումով հայոց գաղթը արգիլուած է եւ այս կարգադրութիւնն ալ ընդհանուր հանգամանք ունի:

Իթթիհատական մտայնութեան յաղթանակին ամէնէն գլխաւոր ապացոյցները կրնան համարուիլ նաեւ հայ ջարդարարներու բանտերէն ազատ արձակումը եւ բոլոր ջարդարարներուն հրապարակ գալը վերստին, եւ դեռ բանտ մնացողներուն արձակման համար ալ ջանքեր թափուիլը:

Հայ որբերը իսլամացնելու եւ զանոնք չվերադարձնելու համար կառավարութեան հանած դժուարութիւններէն շատ բացորոշ են թէ 1915–1918 շրջանին մէջ Իթթիհատական կառավարութեան կողմէ գործադրուած ջանքերը հայերը բռնի իսլամացնելու համար բնաւ անգոսնուած եւ դատապարտելի նկատուած չեն արդի վարիչներուն կողմէ, որոնք զինադադարէն անմիջապէս յետոյ Համաձայնական իշխանութիւնները խաբելու համար ամէն կողմ որբերը վերադարձնելու համար շրջաբերական ցրուեցին, սակայն ձեռքի տակ շարունակ կը հրահանգէին,- ինչպէս դիպուածով ձեռք անցուած հրամանագրի մը մէջ տեսնուած է,- որ ամէն ձեռնարկ ըլլայ ու ամէն դժուարութիւն հանուի այդ որբերը չտալու համար:

Թուրք մտայնութեան մէջ տեղ գտած մէկ հարցն ալ սա է թէ մեծամասնութիւնները նկատի պիտի առնուին. ուստի կը ջանան այնպէս մը ցոյց տալ թէ հայերը եւ յոյները ոչ մէկ տեղ մեծամասնութիւն են: Այս կերպով կ'ուզեն օգտուիլ իրենց գործադրած ոճիրի հետեւանքներէն եւ ժառանգորդ հանդիսանալ գոհին:

Այս մտայնութեամբ է որ ինչպէս Իզմիրի կուսակալութեան մէջ Յոյներու կոտորած ըսելով անոնց թիւը նուագեցնելու, նոյնպէս Կիլիկիոյ մէջ հայերու թիւը պակսեցնելու համար զանոնք կ'ա'մ ջարդելով, կ'ա'մ արհաւիրքի ենթարկելով փախցնելու համար ամէն ձեռնարկ կ'ընեն:

Ատանայի մերձակայ Շէլիս-Մուրատ գիւղին մէջ դեռ վերջերս, այսինքն Հոկտ. 14ին պատահած հայերու կոտորածը եւ Կիլիկիոյ զանազան շրջանակներու մէջ չէթէներու սփռած ահուսարսափը յայտնի ապացոյցներ են թէ ինչ նպատակ կը հետապնդեն Միլլի շարժման վարիչները եւ ինչ միտքեր կը սնուցանեն:

Այս կացութեան անսահման երկարաձգումը Հայոց բնաջնջումի գործը դիւրացնելէ զատ ուրիշ ոեւէ օգուտ չի կրնար ունենալ:

Համաձայնութիւնը հակառակ զինադադարի բացորոշ տրամադրութեանց իր գրաւման տակ գտնուած երկիրներու մէջ իսկ թուրքերու կողմէ կատարուած զրգրութեանց, անկարգութեանց եւ ոճիրներուն երկայ-

նամտութեամբ կը համբերէ, եւ բացարձակապէս անտարբերութեամբ կը դիտէ թրքական տիրապետութեան ենթարկուած հողաբաժիններու խռով-եալ վիճակը:

Ասիկա չափազանց քաջալերական պարագայ մըն է թրքաց համար, որ ինքզինքնին ազատ զգալով կ'ուզեն իրենց վաղեմի ծրագիրը իրագործել՝ քրիստոնեաները ջնջել անոնց պահանջներէն նաեւ ազատելու համար: Եւ այս նպատակին իրապէս պիտի հասնին, եթէ առաջիկայ ձմեռ արմատա-կան դարման մը չըլլայ եւ թուրքերը ազատ ձգուին իրենց ուզածը ընելու:

Մասնաւորապէս ուշագրաւ է ջարդէ եւ տարագրութենէ ազատուող-ներու ողբալի վիճակը: Ամերիկեան նպաստամատոյց մարմիններու, ինչ-պէս նաեւ ֆրանսական] եւ անգլ[իական] կառավարութեանց կողմէ եղած օժանդակութիւնները եթէ մեծ դեր կը կատարեն, սակայն պէտքը անհուն է, կարօտութիւնը՝ անսահման, մանաւանդ անոր համար որ գործելու ատակ ձեռքերն ալ կաշկանդուած եւ մուրացիկ դառնալու ստիպուած են:

Չինադադարի կնքուելէն յետոյ ընդհանուր համոզումը սա էր թէ առ առաւելն մինչեւ վեց ամիս ընդի. հաշտութիւնը պիտի ողջունէինք, եւ այն ատեն կարելի պիտի ըլլար հանրային խնամքի կարօտ որբերու, այրիներու, գաղթականներու խնամատարութիւնը պետական միջոցներով հայթայթել եւ վնասուց հատուցման ձեւով շատ մը ընտանիքներու նիւթական վիճակը վերականգնել եւ հանրային խնամատարութեան անհրաժեշտութենէն ազատ կացուցանել:

Ասոր համար ազգը կարճ ժամանակամիջոցին համար աւելի յարմար միջոց մը չգտաւ եթէ ոչ դիմել ժամանակաւոր միջոցներու՝ թէ՛ հասոյթներու եւ թէ՛ տնտեսութեան համար: Ուստի մտածուեցաւ հանգանակութեամբ դիմաւորել անհրաժեշտ ծախքերը, զորս ընել պէտք պիտի ըլլար կարօտ-եալներու համար: Այդ անհրաժեշտ ծախքերը կիսադարմաններ միայն կրնային ըլլալ եւ կրնային միայն մասամբ ամոքել վիճակը այդ դժբաղդներուն, սակայն անյետաձգելի էին:

Այսպէս, եթէ կարելի չէր տարագրեալները դարձնելով իրենց հայրե-նիքը իրենց տուններուն մէջ գետեղել, վնասներն ալ հատուցանելով, գէթ աշխատուեցաւ զանոնք համախմբել եւ որքան որ կարելի է իրենց հայրենիքը դարձնել կամ ապահով վայրեր հաւաքել:

Եթէ բոլոր իսլամներու քով մնացած եւ անապատները թափառող որ-բերը կարելի չեղաւ հաւաքել եւ զանոնք որբանոցներու մէջ պատսպարել, սակայն որքանը որ կարելի էր՝ անոնք պատսպարելու գործին մէջ պէտք չէր թերանալ: Եւ հայերը ըրին ինչ որ կրնային ընել այս նպատակով:

Առեւանգեալ աղջիկները եւ կիները ազատելու համար ալ վարանիլ

ոճիր մը պիտի ըլլար եւ այդ ոճիրը չպիտի ուզէինք որ գործէինք ազգովին. ուստի այս մասին ալ աշխատութիւններ տարուեցան:

Այս օր Կ. Պոլսոյ մէջ կազմուած Ազգ. Խնամատարութիւնը պարտաւորուած է հայթայթելու ամսական մօտաւորապէս նուազագոյն 50,000 ռսկի, խնամելու համար իր մատակարարութեան յանձնուած որբերը, տարագիրները եւ գաւառի կարօտեալները:²³³

Հակառակ անոր որ հանրային նպաստով այս ծախքերը հոգալու համար որոշուած առաւելագոյն ժամանակամիջոցը վեց ամիս կ'ենթադրուէր, սակայն Կ. Պոլիս տեղական միջոցներով կրցաւ մէկ տարի ամբողջ, եթէ ոչ կատարեալ կերպով, գոնէ մասնակի կերպով հոգալ կարօտեալներու, որբերու, այրիներու եւ ամէն կարգի հազարաւոր տառապեալներու մէկ մասին պէտքերը:

Սակայն շատ կը վախճամ որ ասկէ յետոյ կարելի չպիտի ըլլայ հոգալ այդ ծախքերը, որոնք օրէ օր աւելի աճելու վրայ են: Հանգանակութեամբ, ողորմութիւններ հաւաքելով կարելի չէ կառավարել այսպիսի մեծ գործ մը:

Աղէտը մասնաւոր քաղաքի մը կամ նոյնիսկ մասնաւոր գաւառի մը մէջ սահմանափակուած չէ: Անիկա համատարած է եւ բոլոր այն տեղերը ուր հայեր կը բնակէին ազդուած են այդ աղէտէն աւելի կամ նուազ մեծ չափով մը:

Նկատի առնելով աղէտեալներու անհաշուելի մեծութիւնը, կորուստներու անսահման չափը, իրենց բոլոր ինչքերէն, տուներէն եւ ստացուածքներէն զրկուած ընտանիքներու, բոլորովին անպաշտպան որբերու մեծ թիւը, շուտով կարելի է համոզուիլ թէ զանոնք պատասպարել, խնամել եւ հոգալ իրապէս վեր է հայ ազգին կարողութենէն, քանի որ այս ազգին գոնէ կէսը օգնութեան կը կարօտի եւ նպաստով ապրելու պարտաւորուած է արդի պայմաններուն բերմամբ, որչափ ատեն որ խաղաղ ու անդորր վիճակ մը չէ ապահովուած գաւառներու մէջ:

²³³ Այս պարբերութենէն ետք, սեւագիր բնագրէն ջնջուած է այս հատուածը.- «... ըստ հետեւեալ ցուցակի.

Կ. Պոլսոյ մէջ Ազգ. Խնամատարութեան կապուած որբանոցներու ամսական ծախք	13516.30
Կ. Պոլսոյ մէջ պատասպարուած տարագիրներու ծախս	4585.-
Վարչական ծախսեր	1758.-
Գաւառ դրկուած նպաստներ	24440.-
Քննիչներու ամսական	330.-
	44629.30

Այդ պետքերը իրենց նուազագույն ձեւին մէջ դեռ մեզի համար այնքան ծանր, շատ անելի ծանր ու ճնշիչ պիտի դառնան մերձաւոր ձմեռուան եղանակին, եւ՝ տիրող կացութեան բերմամբ՝ աշխատող եւ հանրութեան վրայ բեռ ըլլալէ դադրողներու վերստին իբր գաղթական կամ իբր անգործ նպաստի կարօտ դառնալէն յետոյ:

Եւ մեր ըրածը տակաւին շատ մեծ բան մը չպիտի ըլլայ, զի դեռ իսլամներու տուններուն մէջ կը տուայտին բազմաթիւ հայ տղաք եւ աղջիկներ եւ Արաբիոյ անապատներու մէջ կը թափառին մերկ, անօթի ու թշուառ հայրու զաւակներ, որոնք թէ՛ հաւաքելու եւ թէ՛ պատասպարելու միջոցներէն զուրկ ենք:

Առանց շատ հեռուները երթալու, կը բաւէ յիշել թէ ինչ որ ալ ըլլայ նիւթական վիճակը ազգին չվնասուած մասին, կարելի չէ որ անիկա կարենայ կանոնաւորապէս ամսական վճարումներով հոգալ վնասուած մեծամասնութեան մը պետքերը անսահման ու անվախճան ժամանակամիջոցի մը համար:

Սր. Բիկզի տուած տեղեկութեանց համաձայն, Խարբերդի եւ շրջականերու մէջ 4–5000 որբեր կը մնան դեռ թուրքերու եւ քիւրտերու մօտ: Ասոնք տրամադիր են արձակելու զանոնք, պարզապէս թերեւնալու համար կերակրելու հոգէ, որ հիմա ճնշիչ եղած է, մինչ առաջ այնքան ծանր չէր: Սր. Բիկզ իրեն եղած աղաչանքներուն՝ որ ստանձնէ իր խնամած 4000 որբերու շարքին մէջ այս թշուառ որբերու մէկ մասը, պատասխանած է թէ որոշուած գումարը լեցուած է եւ մէկ դրամ իսկ անելի տրամադրելու արտօնուած չէ:

Խարբերդի մէջ տեսնուած երեւոյթը միայն տեղական հանգամանք չունի, այլ՝ գրեթէ բոլոր ներքին զաւառներու մէջ նոյն վիճակը կայ:

Այսպէս, ստոյգ տեղեկութեանց համաձայն, Մալաթիոյ շրջանակին մէջ, նոյն պայմաններուն տակ կը գտնուին 6–7000 որբեր, եւ միայն քաղաքին մէջ հնարաւորութիւն կայ մէկ օրէն 1000է անելի որբեր հաւաքելու: Տիարապէքիի մէջ կը տեղեկացնեն թէ մի քանի հարիւր տղաք փողոցները կը թափառին եւ զանոնք հաւաքող ձեռք մը գոյութիւն չունի:

Խնամատարութեան Վերին Միջազետքի պատուիրակ Տոքթ. Քէթենճեան, որ անձամբ շրջած է այդ շրջանակը, կը հաւաստէ թէ Ուրֆայի, Մարտինի եւ անոնց շրջականերուն մէջ անելի քան 40,000 հայ որբեր, աղջիկներ եւ կիներ կան, որոնք իրենց ազատագրումին կը սպասեն ականդտ:

Իսկ Կիլիկիոյ պատուիրակը՝ Տոք. Քաջբերունի, կը հաւաստէ թէ լեռնային Կիլիկիոյ ամբողջ վերապրող հայութիւնը վերջնականօրէն փճանալու եւ կամ ցրուելու վտանգին ենթակայ է: Այնթապի մէջ 2000 եւ Մարաշի մէջ 1000էն անելի դեռահաս կիներ կան թուրքերէ առնուած, անոք և

անօգնական, իսկ հազարաւոր անտէրունչ որբեր՝ Մարաշ, Հանըն, Չէյթուն, Եւայն, Եւ որոնք լքուած են իրենց բախտին:

Վերջապէս, կիլիկիոյ այս լեռներուն վրայ [կայ] ամբողջ ժողովուրդ մը, որ բացարձակապէս գուրկ է կեանքի ամենատարական պէտքերէ:

Վերոյիշեալ որբերու համագումարը կարող է լեցնել հայկական խոշոր նահանգ մը: Եթէ ձեռնարկ չըլլայ զանոնք ձմեռէն առաջ հաւաքելու Եւ զանոնք ամփոփելու հայ ձեռքերու խնամքին տակ, անոնք վերջնականապէս կորսուած պէտք է նկատել:

Նիւթական միջոցներու չգոյութիւնը այսպէս պատճառ կ'ըլլայ մեզի համար այսքան թանկագին կեանքերու իրենց յափշտակիչներու ճիրաններուն մէջ տառապելուն Եւ անոնց անդարձ կորսուելուն:

Այս աղէխարշ երեւոյթին առջեւ շուարած, ես եւ իմ խորհրդականներս մատնուած ենք մեծ մտահոգութեան Եւ կը մտածենք ոեւէ բաւարար լուծում մը այս անել կացութենէն փրկուելու համար:

Դժբաղդաբար տակաւին ճանչցուած չըլլալով պաշտօնապէս Հայկական պետութիւնը Եւ հռչակուած չըլլալով հայոց անկախութիւնը, անկարելի է դիմել մեզի այս բացառիկ կացութեան թելադրած միջոցներէն ամէնէն նախնականին՝ փոխառութեան:

Մարդասէր Ամերիկա եթէ քաղաքական պատճառներով Եւ դիւանագիտական նկատումներով չի կրնար փութացնել լուծումը թրքական հարցին, արդեօք չի՞ կրնար գոնէ իր զինակիցներուն վրայ ազդեցութիւն բանեցնել, որ հայթայթուին հայ ազգին նիւթական միջոցներ իր կարօտեալները, որբերը, գաղթականները Եւ այրիները խնամելու Եւ պատսպարելու համար: Կը կարծենք թէ Համաձայնութեան պետութեանց համար ամենադիւրին բան մըն է գումար մը տրամադրել մարդկային Եւ քաղաքակրթական բոլոր օրէնքները ոտնակոխ ընելով թուրքերու կողմէ կատարուած վայրագութեանց զոհերուն փրկութեան համար, զայն յետոյ թուրք պետութենէն զանձելու պայմանով, որեւէ եղանակով մը, քանի որ արդէն սկզբունքով ընդունուած է վնասուց հատուցման Եւ քանդումներու վերաշինութեան սկզբունքը:

Եթէ ասիկա կարելի չպիտի ըլլայ Եւ Թուրքիոյ հաշտութիւնը պիտի յապաղի դեռ երկար ատեն, ապահովաբար աղէտալի պիտի ըլլա[ն] հետեւանքները մեզի համար, որ ուժին վրայ իրաւունքը յաղթական հանդիսացած կարծած մէկ պահերնուս, դարձեալ անոր բացարձակ տիրապետութեան տակ կը հիւծինք ու կը սպառինք:

Իրաւունքին Եւ արդարութեան հռչակուած յաղթանակէն յետոյ կը կարծէինք թէ անոր ախոյեան հանդիսանալու համար իր գերագոյն

գոհողությամբը ու անհամեմատ գոհաբերությամբ նշանաւոր հանդիսացած հայ ազգը չպիտի ձգուէր այսպէս անպաշտպան ու լքուած, եւ անգամ մըն ալ անիկա գոհը չպիտի ըլլար անյագ վայրագութեան, ոտնահարուած իրաւունքին, արհամարհուած արդարութեան, եւ մոռցուած քաղաքակրթութեան:

Այսօր խոր յուսախաբութեան մատնուած, կու գանք Ձեր միջոցաւ դիտել տալ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի եւ մարդկութեան թէ տակաւին անարդարութիւնը, բռնութիւնը, եւ բիրտ ոյժը կը տիրապետեն Արեւելքի մէջ, թէ հազարաւոր որբեր, այրիներ եւ տարագրեալներ կը տառապին ո՛չ միայն անլուր տառապանքով մը, այլ [նաեւ] շնորհիւ անտարբերութեան քաղաքակիրթ պետութեանց, դատապարտուած են անխուսափելի կորստեան եւ ահարկու սպանդի մը, որուն պատասխանատուն ապահովաբար այս անգամ չպիտի ըլլայ այնքան թրքական վայրագութիւնը եւ իսլամական մոլեռանդութիւնը, որքան եւրոպական քաղաքակրթութիւնը եւ քրիստոնէական մարդասիրութիւնը, որ անկարեկիր ականատեսի մը դերէն անդին անցնիլ չ'ուզեր:

Խնդրելով որ Ձեր կողմէն ընէք ինչ որ յարմար կը դատէք, փրկելու համար իմ թշուառ հօտիս սովամահ կորսուելու դատապարտուած մնացորդները, կը ներկայացնեմ իմ խորին յարգանքներս ու հիացումս Ձեր անխոնջ աշխատութեանց համար, որ կը նուիրէք Հայ ազգին արդար դատին պաշտպանութեան համար:

Անկեղծ երախտագիտութեան զգացումներով,

Մնամ աղօթարար
Պատրիարք Հայոց

ՊՏԴ, տրցակ 11, թղթապանակ Ատենագրութիւնք..., 1722–1733, հայերէն ձեռագիր

Յաւելուած ԺԴ.

920 Broadway, New York City, U.S.A.

Feb. 13, 1920

Սրբազան Զաւէն Արքեպիսկոպոս,

Սրբազան Հայր.-

Ձեզի ասկէ առաջ գրելու էի, բայց կը ցաւիմ որ այս պարտականութիւնս զանց ըրի ոմանք պատճառներով:

Ձեր սրբազնութեան նամակը որ ուղղուած էր Սր. Ճէրարտին՝ թարգմանելով, թէ հայերէն բնագիրը եւ թէ անոր թարգմանութիւնը յանձնեցի իրեն: Եւ հոս գալէս ի վեր իմ ժամանակիս մեծ մասը կուտամ մեր ազգային խնդրոյն: Բայց դժբաղդաբար մեր այս խնդիրը հոս շատ աննպաստ վիճակի մը մէջ գտայ: Հայերուն մէջ համերաշխութիւն ցաւալի կերպով կը պակսի: Գարտաշեանի խումբը Սիվապեանի խումբին հետ յարաբերութիւն չունի, ընդհակառակը իրարու դէմ են: Երեւանի ներկայացուցիչներն եւ Նուպար փաշայի նուիրակները իրարու հետ չեն խորհրդակցիր. իրարմէ տարբեր պիւրոներ ունին եւ իրարմէ տարբեր ուղղութեամբ կը գործեն: Դաշնակցականներ ուրիշ կուսակցութիւններէն տարբեր *փրօկրամ*, տարբեր Կարմիր Իսաչի կազմակերպութիւն, տարբեր եկեղեցի եւն. ունին: Այսպէս ազգային առաջնորդներուն մէջ ցաւալի անհամաձայնութիւն կը տիրէ:

Մանտայի մասին ալ գաղափարներ շատ աննպաստ վիճակի մէջ են: Ոմանք – Գարտաշեան եւ դաշնակցականներ – ամերիկեան մանտայէն յոյսերնին կտրած ըլլալով, Ամերիկեան Կողմիտէի միջոցաւ կը գոհանան *Սէնայէն* հետեւեալ արտօնութիւնները ձեռք բերել. այսինքն, Հանրապետութեան ճանչցուիլը, 4-5 տարուան համար Ամերիկայէն քանի մը միլիոն տօլար օգնութիւն եւ քանի մը վաշտ նաւային զօրք առնել, եւ ասով իրենք կը յուսան Հանրապետութիւնը յաջողցունել եւ մինչեւ Միջերկրական Հայոց պատկանող երկիրները գրաւել: Ճէրարտի Գօմիթէն ալ ճիշդ այս նպատակին կը ջանան: Միւս կողմանէ Փրօֆ. Յակոբեաբ եւ ռամկավարներ այս բաները բանաւոր չտեսնելով, նոյն նպատակին համար իրենց հետ չեն գործակցիր:

Հոս ուրիշ բան մը իմ ուշադրութիւնս գրաւեց:

Որուն հետ որ տեսնուեցայ – թէ հայ թէ ամերիկացի – բոլորն ալ *մանտայի* մասին յոյսերնին կտրած էին: «Ամերիկեան տէրութիւն Հայկական *Մանտան* չպիտի ստանձնէ» կ'ըսեն: Եւ բոլոր Հայեր Միացեալ մանտային

(joint mandate) դեմ կը խօսին: «Ամերիկան թիւրքի մանտան ստանձնելու չէ» կ'ըսեն, եւ քանի որ Մր. Մօրկէնթալ եւ Տօգ. Պարթըն եւ քանի մը միսիօնարներ joint mandateի խօսքը կ'ընեն, շատ կծու լեզուով անոնց դեմ արտայայտուած են:

Ամերիկացիներէն, մանաւանդ սէնաթօրներէն շատեր Հայերուն մէջ տեսնուած այս խտրութիւնները տեսնելով Հայկական Խնդիրէն պաղեր են:

Առաջին անգամ ջանացի [որ] Հայերուն մէջէն այս խտրութիւններ վերցուն: Երկու կողմէն բարեկամներու հետ տեսնուելով, իրենց մէջը համաձայնութիւն եւ հասկացողութիւն յառաջ բերելու ջանացի. բայց դժբաղդաբար մինչեւ հիմա չաջողեցայ:

Քանի մը օր առաջ հոս Պօսթօն եկայ, այստեղի բարեկամները տեսնելու: Հոս ալ նոյն անհամաձայնութիւնը կը գտնուի: Պիտի ջանամ որ գոնէ հոս, եթէ կարելի է, տարբեր դասակարգերուն մէջ համաձայնութիւն մը յառաջ գայ: Չեմ գիտեր որչափ յաջողութիւն պիտի գտնենք:

Բուն մեր դատին գալով, խնդիրը այսօր հետեւեալ վիճակի մէջ է.-

Ամերիկացիներ – Մենա եւ նախագահ – այսօր League of Nations եւ Treatyի խնդրով կը զբաղին: Այս օրերս անիկա լուծելու կը ջանան: Եւ կ'երեւայ թէ մօտերս անիկա պիտի լուծեն: Անիկա լուծելէն առաջ մեր խնդրոյ մասին բան մը ընել չեն ուզեր: Շատ յոյս կայ որ Ամերիկա League of Nationsի մէջ պիտի մտնէ:

Երբ որ այս գործը լմննայ եւ Ամերիկա անոր մէջը մտնէ, այն ատեն ժամանակ պիտի գայ մեր խնդրոյն: Այս մասին դժուարութիւններ հետեւեալներն են.- 1. Ամերիկեան առաջնորդներ, այսինքն *սէնաթօրներ* եւ շատ մը հարուստներ մեր խնդրոյն հետ շահագրգռուած չեն: Չեն ուզեր Արեւելեան խնդիրներուն մէջ մտնել: 2. Ընդհանուր ժողովուրդին մեծամասնութիւնը մեր խնդրոյ մասին շատ տոգէտ են: 3. Ազգը իրենց մէջ շատ կարելոր տնտեսական եւն. խնդիրներ ունին:

Միւս կողմանէ կան բաւական նշանաւոր մարդիկներ. մանաւանդ եկեղեցիներ մեր դատին մէջ բաւական interested են:

Հետեւաբար մեր անմիջական պարտականութիւնը այս է. թէ մենք Հայերս, այսինքն այս երկրին Հայերը, բոլորը միանալով մէկ կարող եւ գործօն յանձնախումբ մը ընտրելու են: Այս յանձնախումբը ամերիկեան առաջնորդներու մէջէն Friends of Armenia անունով ուրիշ մէկ committee մը կազմելու են, եւ կարող մէկ ամերիկացի առաջնորդ մը գտնելով անոր առաջնորդութեան տակ անմիջապէս գործի սկսելու են: Այս օրերս կարելոր անձերը տեսնելով, նեղ շրջանի մէջ գլիւկներուն առջեւ մեր դատը

պարզելով եւ պէտք եղած պատրաստութիւնները տեսնելով, մեծ campaign-ի համար պատրաստ գտնուելու են: Երբ որ League of Nation-ի խնդիրը լուծուելով Ամերիկա անոր մէջը մտնէ, անմիջապէս ընդարձակ campaign մը ընելով ամերիկեան public-ին առջեւը մեր դատը դնելու են:

Ես կը յուսամ թէ այսպիսի campaign մը պիտի յաջողի եւ ամերիկեան public՝ Մենայէն գործադրութիւն պիտի պահանջէ, եւ ամերիկեան կառավարութիւն մեր դատը պաշտպանելու պիտի սկսի:

Գալ շարքա՞ հոս Ազգային Միութիւն այս մասին ժողով մը պիտի ունենայ եւ ձեռնարկ մը պիտի ընէ: Կը յուսամ թէ կը յաջողին:

Իրաւ է որ պարագաներ մեզի շատ աննպաստ կը շարժին, բայց յուսահատ ըլլալու չենք, այլ մեր ձեռքէն եկածը ընելու ենք:

Յաջողութիւն Աստուծմէ:

Կ'աղաչեմ իմ յարգանքներս տուէք Տօգ. Դաւիթեանին եւ ուրիշ բարեկամներուն, եւ Միջարանուանական Միութեան յարգելի անդամներուն:

Համբուրելով ձեր սրբազնութեան ձեռքերը

Կը մնամ Ձերդ

Յ. Գ. Գրիգորեան

ՊՏԴ, տուի 1, թղթապանակ 2-Լ, 2679–2685, հայերէն ձեռագիր

Օգտագործուած Գիրքերու Ցանկ

- Johnson, Clarence R., *Constantinople Today; or, The Pathfinder Survey of Constantinople*, New York, 1922:
- Tchalkhouchian, Gr., *Le Livre Rouge*. Imprimerie Veradzenount, Paris, 1919:
- Yeghiayan, Vartkes, Compiler. *British Reports on Ethnic Cleansing in Anatolia, 1919–1922: The Armenian-Greek Section*. Glendale, CA, 2007:
- Լազեան Գաբրիէլ, Հայաստան Եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Տպգր. «Նոր Աստղ», Գահիրէ, 1946 :
- Լէօ, Հայոց Հարցի Վաւերագրերը, տպ. Ն. Աղանեանց, Թիֆլիս, 1915:
- Սարուխան Ա[ռաքել], *Աղեքսանդր Մանթաշեանց մեծ վաճառականն եւ բարեգործը. յիշողութիւններ իր մահուան 20ամեակի առթիւ*, Ազգային Մատենադարան, հատոր ՃԼԱ, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1931:
- Վրացեան Ս[իմոն], Հայաստանի Հանրապետութիւն, հրատ. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.-ի, Փարիզ, 1928:
- [Տէր-Եղիայեան] Զաւէն Արքեպս., *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ*, հրատ. Թ. 7 Մտաւորական սպասարկութեանց գրասենեակի, տպ. Նոր Աստղ, Գահիրէ, 1947:
- 75 Years of Service, the Howard Karagheusian Commemorative Corporation, [Mayreni Publishing], New York, 1996:
- Dr. Caleb Frank Gates President of Robert College 1903–1932: *An Appreciation*, Հրատարակութիւն Ռոպերթ Գոլէճի, Պոլիս, 1932:
- The Post-WWI Rise of Turkish Nationalism and Resumption of Geniocidal Policies. A Collection of Prime Sources Documenting the Treatment of Armenians and Greeks in Turkey*, compiled and translated by Vatche Ghazarian, Mayreni Publishing, Portsmouth-Rhode Island, 2023:
- Ազգային Խնամատարութիւն – Ընդհանուր Տեղեկագիր – Առաջին Վեցամեակայ 1919 Մայիս 1-31 Հոկտեմբեր 1919, Տպագր. Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1920:
- Եօթնամեակ Տեղեկագիր Հոգաբարձութեան Ա. Փ. Ազգային Հիւանդանոցի Եւտի-Գուլէ 1907–1912 Եւ 1913, Տպագր. Օ. Արզումանեան, Կոստանդնուպոլիս, 1914:
- Կանոնադրութիւն Ազգային Ժողովի, Տպ. «Շանթ», Կ. Պոլիս, 1914:
- Համահայկական Խորհրդակցութիւններ (1912–1920ԹԹ.). *Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու*, պտսխ. Խմբ. Ամատունի Վիրաբյան, հրատ.

Հայաստանի Ազգային Արխիվի, Երեւան 2004:

Համահաւաք ստեղծագրութիւններ Թուրքիոյ հայոց ազգային երեսփոխանական ժողովի, համագումար ազգային ժողովի եւ համազգային խորհուրդի (1919–1922), խմբ. եւ ծանօթ.՝ Վաչէ Ղազարեան, Գիրք Ա., Ատենագրութիւններ, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 2021:

Համահաւաք ստեղծագրութիւններ Թուրքիոյ հայոց ազգային երեսփոխանական ժողովի, համագումար ազգային ժողովի եւ համազգային խորհուրդի (1919–1922), խմբ. եւ ծանօթ.՝ Վաչէ Ղազարեան, Գիրք Բ., Յաւելուած եւ Ցանկեր, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 2021:

Համառօտ Տեղեկագիր Արեւմտահայ Երկրորդ Համագումարի Եւ Կազմակերպիչ Կօմիտէի Հաշիւը 1919 Երեւան, հրատ. Արեւմտահայ Գործադիր Մարմնի, Թիֆլիս, 1919:

Հայ Բժշկական Միութիւն Դ. Տեղեկագիր, պատրաստուած ստենապետ [կարդալ՝ ստենադպիր- Վ.Ղ.] Տօրթ. Եդ. Շահպազէ, կարդացուած Թրդ տարեշրջանի սկիզբը 4 Յունուար 1920ին, տպ. Ֆ. Ճարեան, 1920:

Հայ Բժշկութեան Տուած Զոհերը – Յուցակագրուած Վաւերական Փաստերով, «Կիլիկիա» գրատուն, Պոլիս, 1919:

Հայ Հանրագիտակ, Գիրք Դ., խմբագրեց Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեան Պարտիզակցի, տպ. Պուքրէշ, 1939:

Մամուլի Մէջ Տպուած Եւ Անտիպ Երկեր Ու Նամակներ Վահան Թէքէեանէն, հաւաքեց եւ ծանօթագրեց Դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէյրութ, 1987:

Պատմութիւն Եւրոկիոյ Հայոց. տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկութիւններով, համադրուած Արշակ Ալայօյանէանէ, հրատ. Նիւ-Եորքի Եւրոկիոյ Կրթասիրաց Միութեան, տպ. Նոր Աստղ, Գահիրէ, 1952:

Պողոս Նուբար Փաշա. Վալերագրեր, կազմող՝ Էմմա Հովսէփյան, Երեւան, 2001:

Յանկ

- Arnold Davis, 129, 151, 152
 Barton James, *տես նաև Պասյոթըն*, 161
 Dérindjé, 122
 Gerard James, 112, 115
 Gracey Douglas, 133
 Haskell William, *տես նաև Հէսթէլ*, 126
 Heck Lewis, 77, 82
 Huntington George, *տես նաև Հրնթինկթըն*, 44
 Lybyer Albert, 89
 Montgomery George, 89
 Pichon, 53
 Ravndal, 87
 Wardrop Oliver, 133
 Wilson Woodrow, *տես նաև Վիլսոն*, 40, 41, 47
 Արիկեան, 46, 64
 ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ, 43, 96, 118, 136
 ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ, 46, 50, 69, 98, 105, 107, 113, 126, 127, 136, 155, 157
Ալեքսանտրէթ, 93
 Ալի Քեմալ, 108
Ակն, 55
 Ահարոնեան Աւետիս, 37, 73, 88, 105, 128
Ամասիա, 47
 ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ, 47, 56, 68, 82, 84, 98
Ամերիկա, 41, 87, 105, 119, 123, 137, 145, 146, 147, 155
 ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՊԱՏԱՄԱՏՈՅՑ, 43, 56, 74, 77, 87, 119, 152, 161
Այնթապ, 160
Անատոլու, 64
Անգրիա, 123
Առնաուտ, 92
Ատաքազար, 56
Ատանա, 70, 138, 140, 160
 Արարատեան Հանրապետութիւն, 149
 Բագրատունի Զօր. Յակոբ, 101, 103, 106, 108
Բարիզ, 33, 41, 47, 49, 55, 56, 59, 63, 69, 75, 76, 77, 82, 83, 87, 92, 93, 95, 97, 98, 99, 100, 101, 105, 111, 113, 126, 130, 146, 150, 155, 157
 Բարսեղեան Արմենակ, 54
Բերա, 35, 62
 Բիթ Ուիլիլմ, 76
Գաղատիա, 130
 Խաչատուրեան Գարեգին Վրդ., 161
Գոնիա, 39, 56, 87, 109
Գում-Գաբու, 62
 Գրիգորեան Վեր. Յովհաննէս, 147
 Դաւիթեան Նուպար, 122
 Դուրեան Եղիշէ Արք., 33, 48, 53, 55, 64, 107
Եալօլիս, 35, 52
Եոզկաթ, 101, 130
Երեւան, 84, 110, 132, 133, 156
 Երեւանի Հանրապետութիւն, 128
Եւրոպա, 76, 102, 122, 151
Եօզկաթ, 52, 56, 78
Զէյթուն, 160

- Հմիռնիա*, 62, 95, 96, 108, 109, 133, 134
Էրզրում, 75
 Էքարտ Փրանց, 107
 Թալաթ Մեհմետ, 149
 Թերզիպաշեան Աւետիս, 127
 Թէքէեան Վահան, 131, 132, 155
 Թումանեան, 84
Թրքահայաստան, 110
Իզմիր, 88, 96, 134
Իզմիր, 84, 87
 Իպրանոսեան Մարութ, 61, 70
 Խալասեան Մկրտիչ, 130
 Խալիլ Մենթեշ, 37
 Խալիլոն Խանըմ, 92
 Խաչատուրեան Աստուածատուր, 132
Խարբեղ, 40, 52, 56, 70, 87, 144
 Խոսրովեան Հմայեակ, 67
Կարին, 93, 104, 109, 117, 149
Կեսարիա, 39, 52, 56, 125, 138
 Կէլթա Քալէպ, 40, 48, 71, 73, 76, 77, 79, 81, 82, 86, 87, 109, 113
Կիլիկիա, 39, 91, 93, 102, 111, 114, 127, 138, 140, 144, 149, 158, 159, 160
Կովկաս, 56, 75, 87, 90, 104, 105, 110, 122, 125
Կովկասահայաստան, 156
 Կուրօ Հենրի, 159
 Կօրկանօֆ Գաբրիէլ, 86
Հալէպ, 50, 51, 53
 Համամնեան Յակոբ, 67
 Համիտ (Ապտիւ Համիտ Բ.), 140
 Հայ Հանրապետութիւն, 110, 155
Հայաստան, 41, 46, 62, 71, 73, 75, 81, 84, 89, 90, 93, 98, 100, 104, 105, 110, 116, 118, 149, 150
 Հայկական Հանրապետութիւն, 131
 Հերեան Ռուբէն, 152
 Հէսթլ Ուիլիըմ, *տես նաև Haskell*, 119
 Հրնթինկըն Ճորն, *տես նաև Huntington*, 40
Ղալաթիա, 105
 Ճէնիգեան Յակոբոս, 76
 Ճէնագեան Օննիկ, 69
Մալաթիա, 36, 52, 56, 70, 102
 Մանթաշէֆ Լեւոն, 48
 Մանթաշօֆ Լեւոն, 33
 Մանկունի Վահրամ Եպսկ., 47
Մարաշ, 159, 160
Մարզուան, 87
Մարտին, 46, 73
 Մարտիրոսեան Ն. Պ., 114
 Մերկերեան, Գաբրիէլ, 48
 Մերկերեան, Չարմայր, 48, 49
 Մըսըրը, *տես նաև Մարլը*, 49
 Միջերկրական, 93
 Մուշ, 93
 Մուստաֆա Բեմալ, 109, 117
 Մուստաֆա Բեմալ, 101, 115, 134, 137, 140, 141, 142
 Մարլը, *տես նաև Մըսըրը*, 49, 55, 64
Նիյոն, 138
Նիսիպիւն, 153
 Նորատունկեան Գաբրիէլ, 88
 Նուպար Պօղոս, 114, 115, 131, 157
Շէլիս-Մուրատ, 140
 Շերիֆ Մեհմետ, 57, 93
Ուրֆա, 73, 153, 160
 Չալխուշեան Գրիգոր, 63
 Չայեան Տիգրան, 151, 157
Պաթում, 104
Պալքան, 76
Պադուստ, 59
 Պապաջանեան Միքայէլ, 89

- Պարթըն Ճէյմս, *տես նաև Barton*, 114
 Պարսկահայաստան, 47
 Պեսարասիա, 84
 Պէրոպ, 111
 Պիլի, 75, 149
 Պոլլարիա, 70, 71, 96
 Պրիթօլ Սարք, 91, 119
 Պրուսա, 35, 56, 62, 87, 88, 96, 125
 Պողազլեան, 65, 78
 Ռէուֆ Հիւսէին, 109
 Ռոսոֆ, 63
 Ռումանիա, 84, 96
 Սաիտ Հալիմ, 37
 Սամսոն, 47, 56, 87, 101, 109
 Սայեան Գրիգոր, 64, 71, 73
 Մէքաստիս, 39, 52, 56, 70, 87, 137, 141
 Մել Ծով, 138
 Մինապեան, Գրիգոր, 49
 Միսակ Ֆէրիտ, 79
 Միւլէյման Նազիֆ, 59
 Մուրիս, 89, 118, 159
 Վան, 75, 84, 93, 104, 149
 Վենիզելոս Էլէֆթերիոս, 133
 Վիլսոն Վուտրօ, *տես նաև Wilson*, 87
 Վօշպըրն Ճորն, 39
 Տանկաստան, 102
 Տամատ Ֆէրիտ, 36, 95, 108, 109, 117
 Տամատեան Միհրան, 130
 Տարէնտէ, 93
 Տենիքին Անթոն, 110
 տ'Էսթրէլ Ֆրանշէ, 90
 Տէր Ստեփանեան Նշան, 131
 Տէր-Ստեփանեան Նշան, 155
 Տիարպէլքիր, 58, 70, 88
 Տիգրանակերտ, 93, 125
 Տիւրիկ, 93
 Տրապիզոն, 59, 161
 Րէուֆ, *տես նաև Ռէուֆ*, 110, 117
 Րիկա Հենրի, 144
 Փարիզ, 77
 Փափագեան Վահան, 37
 Բազանովա, 113
 Բայալօֆ Ռաֆաէլ, 63
 Բաջրերունի Վ. Գ., 114, 144
 Բէթէնէնեան Միրզա, 144
 Բէմալ Մեհմէտ, 78
 Բիլիս, 160
 Բիւրտիպեան, 94, 100, 139
 Բիւրտիստան, 94
 Օհան Վարդապետ, 151
 Օվանք, 55, 64
 Ֆրանսա, 90
 Ֆրու Ռապրոթ, 91

